



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

355

891.99

U-42

98

355

ՄՐՐԿԻ ՍՈՒՐԵԼ



Дозвол. ценз. Тифлисъ, 12-го Сентября 1903 г.

ССМ

891.99

U-42

21 JUN 2005

19 NOV 2010
4.4.56265 Կարգավոր

Ա. ԱՐՄՈՆԵԱՆ


ՄՐՐԿԻ ՍՈՒՐԵԼ

3921



355

ТИФЛИСЪ.
Скоропечатня М. Мартиросанца, Пушкинская ул., д. Кредитн. Общ.
1903.



5.02.2013

18979

ДАЧИИ ДІПЛОМ



3565-2902

ՄՐՊԿԻ ՍՈՒՐԲԸ

I

Առաւոտ էր. Գայլատուայ լճակը դեռ
չէր ազատուել վաղորդեան մշտշից, որ մի
փոքր բարձրացած ջրի մակերևոյթից՝ թա-
փանցիկ ամպի պէս հանդարտ կանգնել էր
վերևում. նա կարծես դժուարութեամբ էր բա-
ժանւում իր յեղյեղուանկողնից, ուր անց
էր կացրել գիշերը լճակի գրկում։ Գարնա-
նային առաւոտեան շողերով ողողուած վճիտ
լճակը դրաւիչ նազանքով ծփծփում էր հան-
դարտ, ծոյլ-ծոյլ շոյում էր իր կանաչազարդ-
ափերը, նման քնից նոր արթնցած գեղեց-
կուհու, որ կիսամերկ պառկած՝ ձգձգում,
յօրանջում է մեղմիւ և պշրանքով ցնցում,
փուռում է իր հարուստ վարսերը։ Թեթե զե-
փիւռն անցնում էր ջրի մակերևոյթով, ա-
եակները իրար էին գիպչում և միենոյն

անկողնում կողք-կողքի պառկած չարաճճիր
մանուկների պէս ասես քչիչում էին իրար
ականջում, բաներ պատմում և ապա միա-
համուռ քրքջոց բարձրացնում: Ալեալների
շարժումից ջրերի մակերևոյթի վրայ ան-
թիւ, մանր պապղուն օզակներ էին կազմում,
որոնք փրփրուն կնծիոնների պէս փայլիլում
էին և խաղում արեի գրաւիչ շողերի երե-
սին:

Սպիտակ ձկնկուլները, վայրենի մէծ ու
փոքր բագերը և այլ ջրային թռչունների
մէծ բաղմութիւն երամներով խաղում էին
ջրերի վրայ, յուղում ալիքները, իրանց աշ-
ուաւոտեան որսն էին անում, ոուր ճիշերով
ինդակցութիւն յայտնելով ծագող արեին:
Կարմրախայտ ձկները բաղմաթիւ վտանե-
րով խաղում էին ափերի մօտ, երբեմն եր-
բեմն իրանց վարդադոյն թեկերը ցոյց տա-
լով արեին կամ նրանցից մէկն ու մէկը
արագած էր վեր ջրի մակերևոյթից, կար-
ծես ձկնկուլների ճաշակը գրգռելու համար
մի վայրկեան պապղում, ոսկեզօծում էր
արեի շողերի առաջ, ապա նորէն ծածկում
ջրերի վճիտ ծոցում:

Էջի կենարոնում մշուշի միջից սկին էր

առվիս կղզին, մութ ու անձև զանգուած,
որ կարծես լողում էր ջրերի մէջ, իսկ նրա
գէմ ու գէմը, ցամաքի մի կտոր, երկարա-
ցած բազուկի պէս ձգուած մինչեւ լծի խոր-
քը, կարծես աշխատում էր բռնել, գուրս
քաշել ջրերի մէջ մնացած իր եղբօրը՝ կղզին,
բայց ալիքները չեին թռչուն, նրանք յուզ-
ում ու խաղում էին երկաի մէջ, ասես հեղ-
նելով նրանց անօդուտ ճիգերը: Հեռու, ա-
րեկբում Մասիաը սպիտակափառ գլուխը
բարձրացրած՝ իր չորս կողմի բլուրների և
սարերի կատարների վրայից ասես աշխա-
տում էր լճակին նայել, իր պատկերը տես-
նել նրա վճիտ ջրերում, բայց իր անզօրու-
թեան մէջ գլուխը քաշ էր ձգել, մոայլուել
ինչպէս մի վշտացած ծեր իշխան, որ առա-
ջին անգամն է զգում զօրութեան թռւա-
նալլը: Բարդողեան լեռներն իրանց ալեսր
մօր փէշերից բըռնած մանուկների պէս իրար
հրհրելով ձգւում, գալիս էին հիւսիսից.
Նրանց առաջապահները՝ Ալնակայ սարերը
արգէն գրաւել էին լճակի հիւսիսային ափե-
րը և ոսները կախած ջրերի մէջ կարծես
գոհութեամբ յըպտում էին իրանց այս յա-
ջողութեան համար և չարաճճի կերպով ա-

լիքների հետ խաղալով՝ հեգնում էին յետ
մնացած ընկերներին։ Աւելի հեռու, հարա-
ւում։ Սուկաւէտ ու Զրաբաշխ լեռները տրի-
բութեամբ դիսում էին լիճն ու իր արջա-
կայքը և կարծես գժգոհ էին, որ իրանց քոյ-
րերի պէս չեն կարող գրկել, գուրգուրել այդ-
յեղյեղուկ գեղեցկուհուն, որի դալար մար-
մինը աղեղի պէս կրացած, փարել էր շր-
ջապատի լեռներին, կանաչազարդ ափերի մէջ
նազելով հեռում էր մերթ մէկին, մերթ միւ-
նազելով 0դը լի էր ցօղազարդ ու
ծաղկաւէտ մարդագետիններից բարձրացող
նուրբ անուշահոտութեամբ, ողջ արջակայքը
կարծես բուրմունք էր արտաշնչում։ Սյդ-
ժամին և՛ ծովակը և՛ Մատիսի թիկունքից
բարձրացող արել և՛ ծաղկազարդ լեռներն
ու ձորերը գեղեցիկ էին իրանց վաղոր-
դեան մշուշով, որ նուրբ քօղի պէս թափան-
ցիկ ծալքերով սքօղում էր ամեն ինչ։

Օրուայ այդ ժամին Ա..., դիւղից մի
երիտասարդ գուրս եկաւ և հանդարտ քայ-
լում էր գաշտերով դէպի լճակը։ Նա բարձ-
րահասակ էր և գեղատեսիլ, գլխարկը ճա-
կատի վրայ իջեցրած, շուրջը չէր նայում։
Կատի վրայ իջեցրած, շուրջը չէր նայում։

պարանքով։ Նա հասաւ լճին, անցաւ դէպի
թերակղին, առաջացաւ մինչև ծայրը,
բարձրացաւ աւերակ վանքի քարերի վրայ և
հայեացքն ուղղեց դէպի հեռու, դէպի շրջա-
պատի լեռները։ Յետոյ նրան գրաւեցին զոյգ
հաւալումները, որոնք փառահեղորէն լողում
էին կապոյտ ջրերի վրայ իրար գուրգուրե-
լով քնքոյց հպումնվ։

Երանի՛ ձեզ, մրմնջացին նրա շր-
թունկները։

Թոշոնները մի վայրկեան նայեցին այս
մարդուն, նա անշարժ նստած էր, ուստի
շարունակեցին իրանց որսը։ Նրանց բաց վար-
դագոյն փետումները փայլվում էին արեկ
շողերի տակ և իրանց ցցունքազարդ գլուխ-
ներն անդադար ներս էին թաղում ջրերի
մէջ, տափակ, լայն կացով բոնումէին ձկնե-
րը, ապա բարձրացնում դէպի վեր իրանց
պարանցը, պահում ուղղահայեաց, ձուկն
ընկնում էր կոկորդի տակի լայն, գեղնաւուն
պարկի մէջ, և կրկին թաղում էին գլուխ-
ները ջրերի մէջ։ Նրանցից հեռու բագերի
երամները օրօրում էին ալիքների վրայ կամ
իսպառ կորչում էին ջրերի տակ՝ մի այլ տե-
ղում խմբով յայտնուելու համար։

Երիտասարդը շարունակում էր նայել,
և կարծես ձանձրացած այս բոլորից, նստած
տեղում երեսի վրայ ընկաւ ու նայում էր
հէնց իր առաջը ծփծփացող ալիքներին, ուր
ձկներն ահագին բազմութեամբ հաւաքուած՝
իրար սղմում, հրհրում էին քարերի մօտ.
Երիտասարդը մի խիճ առաւ, ձգեց նրանց
վտառի մէջ, կենդանիները ցրիւ եկան և
կորան ջրի խորքում.

Դուք էլ ձանձրալի էք, գնացէք, դար-
ձեալ մրմնջաց երիտասարդը:

Արել բարձրացաւ, մշուշը վերացաւ, տ-
ռաւօտեան հովել խաղաղուեցին. լճի մակերեսոյ-
թը հարթ հաւասար ապակու պէս այժմ պլո-
պլզում էր ակնախտիղ վայլով, արեկ շողերն
առես էլ չէին ներս թափանցում, այլ անդ-
րագառնում էին և բեկըեկում մթնոլորդի
մէջ ոսկեգոյն խուրձերով:

Երիտասարդը նայում էր և չը կարողա-
ցաւ նկատել, թէ ինչպէս մի ապարիքաւոր
կին, որ դիւդից նոյն ժամին դուրս դալով
քայլ առ քայլ հետեւել էր նրան, հասել էր
նոյն թերակղզուն, անցել էր հինաւուրց վահ-
քի աւերակներից և այժմ մի փոքր հեռու-

կանգնած՝ ուշի ուշով հետեւում էր նրան,
նայում էր նրա շարժումներին ծայրայեղ
դուշութեամբ: Կինը երևի արտասաւում էր,
նա բարձրացրեց իր դոգնոցը աչքերը
սրբելու, այդ շարժումը խրանեցրեց հաւա-
լուսներին, նրանք մի անախորժ ճիչ արձա-
կելով իրանց լայն թևերը զարկեցին ջրի
մակերեսոյթին, մի քանի անգամ ժափ ա-
ռան և բարձրացան օդի մէջ: Նրանց հա-
նած աղմուկից վախեցած բազերն էլ իրար
անցան, կոկուացին, ձկնկուլներն էլ միւս
կողմից խառնուեցին, ճշացին և ամենքը,
կարծես խօսք մէկ արած, թռան գէսլի Բա-
յազէտի շամբուաները:

Երիտասարդը ցնցուեց, գլուխը բարձ-
րացրեց, շուրջը նայեց և տեսաւ ապրիքաւոր
կնոջը և սորի կանգնած լուռ նայում էր
մոայլ, վշտոտ հայեացքով:

—Ասօ, քե մեռնեմ, զնւակա, դառնուկս,
ինչ է պատահել, եղները գոմնում մնացին,
արօրը դրանը, ինչու ես մօրդ ողջողջ թա-
ղում, քեզ ինչ է եղել. երեսիդ նայեցի,
սպաւնը բալա, և յետեկցդ ընկած եկայց:

Երիտասարդը շարունակում էր նայել.
մօրը միենայն ցաւոտ հայեացքով, ապա ա-

ուաջացաւ դէպի նա, ձեռքն ուսին գրեց-
մայրն արցունքոտ աղաչական աչքերը նրան
դարձրեց.

— Տուն գնա, մայրիկ, ես կը դամ, կը
դամ, ասաց Ասօն և հեռացաւ գնաց դէպի
հեռաւոր ափերը, հեռաւոր լեռները:

Մայրը կանգնած՝ նայում էր նրա յե-
տեից երկար ժամանակ, երբ որդին ծած-
կուեց, գոգնոցով աչքերը սրբեց, մտաւ ա-
ւերակ եկեղեցին, ծունկ չոքեց մամռապատ-
քարերի վրայ և աղօթում էր, աղօթում իր
որդու համար, որ չարից աղատ մնայ:

Ճաշ էր արդէն, երբ նա աղօթքը վեր-
ջացրեց և երերալով ու վշշալով տուն դար-
ձաւ չարդուած:

II

Ա... գիւղում ոչ ոք չիմացաւ, թէ ին-
չու յանկարծ սուս կացաւ Ասօն: Գիւղի ա-
մենից սիրուն, ամենից սրտոտ, ամենից ու-
րախ այդ տղամարդը, աղջիկների սիրոյ,
երազների գողարիկառարկան, «Զանդիւ-
մի» վիճակախաղի մշտական հերոսը յանկարծ
մուայլուեց ու լոեց: Ասօն մնջեց՝ ինչպէս

կարկաչիւն աղբիւրը խեղառուած երաշտից,
ինչպէս սազարթում երգող փոքրիկ թռչու-
նը, որ ամպերի տակ յանկարծ նշմարում է
բաղէի ստուերը: Այսպէս լոեց Ասօն:

Նա տիսուր էր, նա դարդ ունէր: Յա-
ւեր կան, որ հսկայ սարն էլ տանել չի կա-
րող, ջահիլ, գալար: սիրտն ինչ անի. երբ հո-
գին մումուռ է լալիս ու կրծքի տակ փո-
թորիկ կայ, ձեռքն ինչու գործի, ինչպէս
գործի: Գիշերն ամբողջ Ասօն անկողնում իր
բարձը ճմռեց, կուրծքը չանգուեց, շրթունք-
ները կրծոտեց, միմնջաց, տնքաց, լուսաբա-
ցին վերկացաւ, թողեց եղներն ու արօրը,
պատից կախած թողեց կաշուէ խարազանը
և հաստ քղանը, վշտոտ հայեացք ձգեց այդ-
բոլորի վրայ և լուռ գուրս եկաւ դռնից:
Մայրը հասկացաւ, որ որդին մեծ ցաւ ունի,
ողջ գիշերը հետեւել էր նրա տնկոցին:

— Ասօ, որդի, վար ու ցանքը, արան ու արօ-
րը մնացին, ցաւդինչ է, որդի ջան, հիւանդես:

— Չեմ կարող, մայրիկ, աշխատանքը
ձեռքիցս վայր է ընկնում: Եւ նա գուրս
գնաց. բայց մայրն ինչպէս համբերէր. գուրս
եկաւ յետեւից ու քայլեց կախացուկ, իմանա-
լու համար թէ ուր է գնում որդին: Ասօն

վանքի աւերակներում մօրը ճամսապարհ դրեց
և ինքը անորոշ մոլար հայեացքով դնաց թա-
փառելու դաշտերի և ձորերի խուլ հեռա-
ւորութեան մէջ եւ մայրը՝ խեղճ նունու-
ֆարը, ցաւած սրտով տուն եկաւ, նստեց
սրահում, աչքերը յառեց դրանը, մինչեւ երե-
կոյ որդուն էր սպասում, իսկ նա չը կար ու-
չը կար, ասաց կը դամ, մայրը հաւատաց,
բայց չեկաւ եւ նունուֆարը նստած մտա-
ծում է հազար ու մի սև բաներ և անցեա-
լից շատ յուշեր ու պատկերներ մէկիկ մէկիկ
եկան ներկայացան նրա աչքին. նրանք ա-
մենքն էլ խօսում են իր անից, իր օջաղից, և
շարքն այնքան երկար է, որ հասնում է մին-
չև իր ամուսնութեան առաջին տարիները,
մինչեւ իր հարսնութիւնը ի՞նչ օրեր էին:

Լաւ է յիշում նունուֆարը, նա նոր տ-
մուսնացել է Մուլադի հետ. օջաղը շէն է,
բաղդը ժապտում է, նա ջահիլ, սիրուն կին
է, ցանք ու արտ ունին, լուծ ու եղ ունին:
Յետոյ վրայ են հասնում նոր՝ աւելի երջանիկ
օրեր, նունուֆարը մայր է, երկու դողմուկ
երեխաների մայր, նախ ծնուեց Գրքօն, եր-
կու տարի յետոյ աշխարհ եկաւ Ասօն, իր
թառլան Ասօն: Մեծացան, հօրը թե ու թիւ-

կունք դարձան: Ա՛հ, երբ երեկօները իր
զոյդ զաւակները զոյդ արծիւների պէս եղ-
ների մէջին թառած դաշտից տուն էին դա-
միս, երբ նրանց ձայնը հնչւում էր դրան ա-
ռաջ, ի՞նչ էին զգում հայրն ու մայրը: Լաւ
էր է՛ք... շէն, պայծառ օջաղ, ժրաջան գըլ-
խաւորը՝ բարի աշխատաւոր ամուսինը կեն-
դանի, սրդիներն՝ աննման: Հեռու են այդ-
բոլորը, երազի պէս են գալիս անցնում նրա
աչքի առաջով:

Յիշում է ինչպէս հիմա. նունուֆարն
Ասօն էր շատ սիրում, հայրը՝ Գրքօն: Մեծն
աւելի աշխատաէր, հօրն աւելի հնազանդ-
էր, իսկ Ասօն, դէ նա ուրիշ բան էր: Նա
կարծես արծւի ճուտ լինէր, կարծես այս
աշխարհում, այս երկնքի տակ, սևաւոր, ցա-
ւոս գիւղում ճնուած չը լինէր, նա գեղե-
ցիկ էր և սիրում էր, որ ամեն բան լաւ,
գեղեցիկ, դրաւիչ լինի, որ աշխարհում գէշ
բան չը լինի: Ա՛լս նրա գլխարկը, այն միշտ
թեք դրած գլխարկը, որ այնպէս սաղում էր
նրա լայն երեսին, մազի այն փունջը, սի-
րուն, գալարուն փունջը, որ կախուած էր ճա-
կատի վրայ աջ կողմից:

Փոքը ժամանակ, նունուֆարը լաւ յիւ-

շում է, նա Ասօին տանում էր հետք դաշտ,
երբ ինքը գնում էր բանջար քաղելու։ Ասօն
հեռանում էր խմբից, ծածկում խոտերի
մէջ և յետոյ վերադառնում ուրախ ուրախ
կանչելով, մի հազւագիւտ ծաղիկ ձեռքին
բերում էր մօքը ցոյց տալիս։

— Տես, տես, մայրիկ, որքան գեղեցիկ է,
ծմակում դտայ, բարձր տեղ է՛, հեռուից
տեսայ, չանգուելով բարձրացայ և քաղեցի,
էլի կ'երթամ, թէ դանեմ, կը բերեմ։ Եւ
երեխան կարմրած, հեալով նորէն վազում
էր, ծածկում խոտերի մէջ, նոր ծաղիկներ
հաւաքում և դարձեալ ճշալով ուրախ ու-
րախ մօքը բերում։ Խոկ թիթեռները, ախ
նա որքան էր սիրում, ինչպէս էր ընկնում
նրանց յետելից, մանաւանդ՝ երբ թիթեռը գոյշ
նըզդոյն էին ու նախշուն։ Քանի քանի ան-
դամ լաց է եղել, երբ երկար չարչարուելուց
յետոյ չի կարողացել բռնել ցանկացած սի-
րուն թիթեռը։

Հապա ամպերը... Ասօի մշտական սիրոյ,
հիացմնենքի այդ առարկաները։ Մայրը քաղ-
հան է անում, խոկ փոքրիկ Ասօն պառկել է
խոտերի մէջ, ձեռքերը դլսի տակ դրած
անյագ նայում է դէպի երկինք, ուշադիր,

բորբոքուած աչքերով, ամպերի խաղին է հե-
տեռում, նրանց զանազան ձևերը գիտում։
Այդ երկնային խաղը յափշտակում է նրա
մանկական ոգին, Ասօն տեսնում է նրանց
ցրիւ գալը պատառապատառ, տեսնում է
նրանց պարը, պտոյտները, հետեռում է նը-
րանցից իւրաքանչիւրի ամենաքնքոյշ, ամե-
նանուրը գալարներին, երազում է կարծես
և ապա վազում է մօք մօտ։

— Մայրիկ, մայրիկ, տես այն ամպը,
որքան սիրուն է, տես, նա գնում է դէպի
Մասիս, մայրիկ ինչու բոլոր ամպերը դէպի
Մասիս են գնում։

Խեղճ մայրը չի հասկանում, թէ իր
փոքրիկն ինչ է գտել ամպերի մէջ, բայց ան-
որոշ կերպով զգում է, որ դա լաւ բան է,
ապա բռնում է իր զաւակի սիրուն գլուխը
և խանգաղատանկով սղմում է իր բազուկ-
ների մէջ, սղմում է մայրական տաք, սիրա-
լիր կրծքին։

— Ա'խ, արծիւ բալա։

Նունուֆարն ինչպէս մոռանայ, մի օր,
ախ, հազար երանի էր էն օրին, Ասօն հա-
զիւ տաստամներկուտարեկան՝ եղները տա-
րել էր արածացնելու լճի ափերին, ինքը

նստել էր մի քարի վրայ, աչքերը յառել
ջրերին ամբողջ ժամերով, իսկ եղները ա-
զատ, արձակ ձգուած՝ մտել, տրորել էին
հարեան թուսօի արտը։ Դեռ ճաշ չ'եղած՝
մէկ էլ տեսաւ թուսօն ինքը եղներն առաջն
արած եկաւ գոռգոռալով, իսկ նրա յետեից
գալիս էր Ասօն դլուխը քաշ և այտերն ու-
ռեցրած, սիրտը լցուած։ Հայրը՝ Մուրադը
զայրացած որդու այս անհոգութեան համար՝
յանդիմանել սկսեց.

— Ախր ինչու ես թողել եղները հարեա-
նի արտը տրորեն։

Երեխան լուռ էր, դլուխը քաշ ձգած։

— Զէ քեզ եմ հարցնում, կրկնեց հայրն
աւելի զայրացած նրա յամառ լռութեամբ։

— Ես... ես... լճին էի նայում... ձկները
խաղում էին... էլ չեմ անի, ասաց երեխան,
հեկեկաց և դլուխը ծածկեց մօր փէշերի մէջ։

Հարեւանը ժպտաց՝ գոհ այդ բացատր-
րութեամբ, հայրն աւելի խոժոռուեց երե-
խայի այս տարօրինակ պատասխանի վրայ,
նա զայրացաւ, որ որդին դաշտէ գնում փո-
խանակ եղներին հսկելու, նստում, նայում
է, թէ ձկներն ինչպէս են խաղում, ալիք-
ներն ինչպէս են իրար հրհրում։ բայց մայ-

րը... դէ ինչ անէր, իր տղան այնպէս էր,
սիրուն էր ու սիրուն բանով գրաւառում էր.
Նա դրկեց իր արտասուող զաւակին, համ-
բուրեց թաց աչքերը.

— Օօ, թառլան բալա, քեզանից ինչ պի-
տի գուրս գայ։

Տարիներ անցան Գրքօն և Ասօն հասած
տղամարդիկ գարձան։ Հայրն ասում էր, թէ
երկսին մի անգամից պիտի պսակել և մի
օրում հարսանիք անել։ Գրքօին նշան դրին,
բայց Ասօն ոչ ոքի չհաւանեց, սիրուն չեն,
ասում էր։ Հայրը փորձեց ստիպել իր ուզած
աղջկայ հետ նշանել. իզուր, Ասօն բացէ ի
բաց մերժեց։ Ճար չը կար, պէտք էր Գրքօին
հարսանիք անել Գիւլնազի Շողերի հետ-
թայց բաղդն այլ կերպ էր անօրինել. հար-
սանիքից մի քանի շաբաթ առաջ Գրքօն մի
քանի ընկերներով Բայզէտի շամբուտների
մէջ կինծ որսալու էր գնացել, նոյն երեկո-
յեան ընկերները նրա անկենդան դին բերին
տուն, կատաղի կինծը գնդակից ազատուած՝
իր փախստի ժամանակ ժանիքով հարուածել
էր Գրքօին և փորը պատռել և տեղն ու տեղը
մահացրել։ Ի՞նչ օր էր, Տէր Աստուած. իսկդ
ծնողների գլխին ասես երկնքից քար ընկաւ.



բաղդի առաջին հարուածն էր այդ Մուրա-
դի ընտանիքին. բայց ինչ հարուած. ով կա-
րող էր տանել. Մուրադը նրանից յետոյ եր-
կար չ'ապրեց, և նունուֆարը մնաց իր մի
համբիկ Ասօի և իր տաս տարեկան աղջկայ՝
Շուշիկի հետ Յաւը մեծ էր, բայց էլի, գե-
Ասօն մենակ մի ընտանիք արժէր, նա մենակ
մի ամբողջ տուն կը լցնէր, մայրն իր ցաւն
Աստծուն յանձնեց և չը տրանջաց. Ասօին ա-
զերսեց, որ իր մեռած եղբօր նշանածը չը
թողնի իր հօր օջապից դուրս դնայ. Գրքօին
բաժին չեղաւ, թող ինքն առնիւ. Ասօն մի
փոքր մտածեց մօր առաջարկութեան վրայ
և համաձայնեց:

Էլի լաւ էր, նունուֆարը Ասօի պէս հա-
սած ու նշանուած որդիունէր, փոքրիկ Շու-
շիկն ունէր, այսքանով էլ գոհ էր Աստու-
ծուց. բաղդն ումն է միշտ ժպտացել, ով ցա-
ւեր, սեեր չի տեսել, ովէ այս փուչ աշխար-
հում կատարեալ երջանիկ. Բայց այժմ այս
ինչ է պատահում, բաղդն այսքանն էլ շատ
է համարում: Ի՞նչ ունի Ասօն, որ այս քա-
նի օր է մոռայլուել է ու սգւորել: Նունուֆա-
րը հեկեկաց, գոգնոցը գէպի աչքերը տա-
րաւ: Դուռը ճռճռալով բացուեց, ներս եկաւ

մի փոքրիկ աղջիկն էր, դաշտից էր
դախիս և փոքրիկ գոգնոցի մէջ բանջար էր
բերում:

—Մայրիկ, Ասօին տեսայ, վազեցի հա-
սայ, վրաս չը նայեց, թողեց գնաց, մայրիկ
չորս կողմից ինձ ասացին, թէ եղբայրդ քեզ
չի սիրում:

—Օօֆ Շուշիկ ջան, բոլորը գնացին, բո-
լորը թողին ինձ սգաւոր ու անտէր, մէկ
դու մնացիր, բալաս, քո խեղճ մօրը միսի-
թարելու: Նունուֆարը գրկեց փոքրիկ աղ-
ջկան, որ նայում էր արտասուող մօրը և
չէր հասկանում, թէ ինչ կայ, ինչու է ար-
տասուում: ապա ինքն էլ սկսեց լալ:

—Մայրիկ, երբ կը գայ Ասօն. Ես նրա
համար այսօր այնքան սիրել ու զոխ եմ
բերել:

—Կը գայ, կը գայ աղջիկս. Աստուած
ողորմած է, կը գայ:

Երեկոյ էր, արել թեքուեց դէպի հո-
րիզոնը, մայրն սպասում էր, Ասօն չը կար ու
չը կար:

Դաշտը դատարկուեց, մարդիկ յետ ե-
կան, մառախուղն իջաւ, բայց Ասօն չը կար
դեռ, մայրն ինքը հոգաց եղները, կերա-

կուր տուեց, գոմիլ մաքրեց և նստեց էլլի
սպասեց։ Շուշիկի հետ կծկուած սրահի
թմբի վրայ նա աչքերը յառել էր բակի դը-
րանը։ Վերջապէս ոտնաձայն լսուեց, մայրը
վեր կացաւ ընդ առաջ վազեց։ Ասօն էր...
գարձեալ տիսուր, գարձեալ մոայլուած։
Մեծ, սիրուն աչքերի վրայ թախիծը ծով էր
կապել, գեղեցիկ, առնացի ճակատի վրայ
կնճիռները կախուել էին ինչպէս մուժ ամ-
պեր։ Մայրը վախեցած՝ նայում էր և կար-
ծէս էլ չէր ճանաչում իր զաւակին։ այնքան
փոխուել, մաշուել էր նա այս կարճ ժամա-
նակում։

—Ասօ, քե մեռնեմ, ինչ ունես։

—Գարդունեմ մայրիկ, գարդ ծովի չափ։

—Յաւդ տանեմ Ասօ, որդի, ծով գար-
դը ինձ տուր, ախ, ջահէլ ջիւան քո արեին
թող մուժ ամպը հով չանի, գալար կեան-
քիդ հոսոս ծաղկին թող ցուրտ հովը չ
դիպչի։

—Չէ, քեզ չեմ տայ գարդս մայրիկ, մի
քիչ կը տամ սարին-քարին, մի քիչ կը տամ
սև ժայռերին, դիժ գետակին աղերս կա-
նեմ, մի քիչ էլ նա հետք տանի, թէ ծով
գարդիցս էլի մնայ, էն էլ սրտումս խոր կը

թաղեմ, որ աշխարհում մարդ չիմանայ,
գարդս մեծ է, մայրիկ շատ մեծ, թէ որ
յանկարծ «խալին» իմանայ... ախ չեմ կա-
րող, գարդը լաւ է քանց ամօթը։

—Հեյրան լինիմ քեզ Ասօ ջան, թող
աշխարհում մարդ չիմանայ, գարդդ մենակ
խեղճ մօրդ տուր, շատ չեմ պահի լոյս աշ-
խարհում, չոր գլխիս հետ շուտ կը թաղեմ
հողի տակ, մի մեծ, ծանրքար էլ վրաս քա-
շիր, ես ու գարդդ ջուխտ քրոջ պէս լուռ
կը քնենք փոսի մէջ, էլ աշխարհում մարդ-
չիմանայ, գարդդ մենակ խեղճ մօրդ տուր։

—Չէ, չէ, մայրիկ, գուն էլ խեղճ ես,
սարերն են մեծ, ձորերն են լայն ու խո-
րունի, մեր գիժ գետն էլ գիտես որքան
ուժեղ է, թող որ այնաեղ թաղեմ գարդս.
քամիների հետ կը վազեմ ձորերում, փո-
թորկի հետ ժայռերի կատարներին կ'ոռնամ,
գիժ գետակի մոնչիւնի հետ ես ցաւխս եր-
զը կասեմ և ամեն տեղ պատառ-պատառ իմ
ծով գարդը կը փռեմ, թող իմ մայրը չը տան-
ջուի սրտիս խոր-խոր ցաւերով։ Հանդիսան
մայրիկ, թող ինձ հանդիսան գարդիս հետ-

—Ա՛խ, քե մեռնեմ, էդ ինչ գարդ է,
ինչ ամօթ, Ասօ ջան, որ սեաւոր մէրդ էլ

պէտք է չիմանայ: Օ՞ֆ, օ՞ֆ, Աստուած, մէջք
եմ կոստել, ծամ սիպտակել, որ սեն իմ
զաւկից հեռու մնայ, օջաղի ծիլ ծաղիկը շը^{թումի}, ինչ ես անում կապուտոր Տէր: Ա-
սօ, Ասօ, մեջք է մէրդ, կամ ցաւդ տուր,
կամ գերեզման, դաշտ ու ձորերն ինչ ես
թափառում:

— Դաշտն ինձ կը փրկի, մայրիկ, դարդու
եմ ցանում ձորերովը մէկ, ախ, սարերածու-
րեր, ջան ձորեր, ողորմած ձորեր, այնտեղ
բաց է մայրիկ, շատ բաց ու արձակ: լիք-լիք
կրծքով շունչ եմ առնում և քամիների թեե-
րի վրայ վազվզում, բաց ճակատս այրուած
կուրծքս ծովին եմ տալիս, այնպէս լաւ է,
այնպէս հանդիսա, այնտեղ այնքան բան եմ
մոռանում, իսկ ինչքան շատ բան է պէտք
ինձ մոռանալ:

Նունուգարի ջուխտ աչքերից ջուխտ
կաթիլներ կախուեցին և չորացած պառա-
պյուերն ակօսեցին վերից վար. բայց մայրա-
կան տաք արցունքը շը կարողացաւ մարել
զաւակի սրտի կրակը: Սիրով մայրը տան-
ջուած որդու սրտի դարդը չիմացաւ: Զա-
հիլ-ջիւան սրտի ցաւը Ա.... գիւղն էլ չիմացաւ:
Ասօն դարդ ուներ, դարդ ծովի չափ:

III

Գիւղը գաղտնիք չի սիրում, մութ բա-
նից վախենում է: Գիշերը, երբ սե խաւարն
իջնում է, պատում արարաշխարհ, երբ աչքն
ու գլուխն էլ չեն հաշտում իրար հետ, այն-
քան բաներ կան գիւղում, դաշտերում, սա-
րերում, որոնք ցերեկը ոչինչ են, նոյն իսկ
սիրուն, գրաւիչ բաներ են, մթնում դառ-
նում են սարսափելի: Մենաւոր ծառը թեեր
ու գլուխ է ստանում և բռունցք է ցոյց տա-
լիս ուշացած ճամբորդին, սարի կատարին
չար աչքեր են պլազում, ժայռը դալարում
է, օրօրւում, մացառները հաջում են, թըմ-
բերը՝ տներում, փոսերը՝ հետում, տերեները
փափսում են չար բաներ, առօւներն օձերի
պէս քսսում են. վիշապները բազմանում,
գեերը լցնում են շրջակայքը և ողջ բնութիւ-
նը գառնում է հազար բերանով, հազար աչ-
քերով, հազար ճիրաններով մի հրէշ, որ խեղ-
տել, լափել է ուզում ուշացած ճամբորդին:
Գիւղը մութ բան չի սիրում, դաղտ-
նիքն էլ մութ գիշեր է, հողի է հանում,
փոյթ չէ նոյն իսկ, թէ դա մի հատիկ սըր-

տում թաղուած ծածուկ վիշտ է: Ինչ կարեք կայ գաղտնիքի, թող ամեն բան պարզ, աշկարայ լինի, արեի պէս պայծառ, սրտերի խորքի խաւարն էլ լաւ չի: Ա... գիւղը տեսաւ Ասօին, ուշի ուշով նայեց նրա ճակատի կնճիռներին, նրա աչքերի մէջ փայլող վշտին, տեսաւ այդ տանջուած գէմքը, այդ ծանր թախիծը և ինքը գիւղն էլ յօնքերը կախեց, աչքերը մուայլեց, երեկ Ասօն մի խորհրդաւոր բան ունէր, մի ծածուկ բան, որ գուցէ նոյնքան ահաւոր է նոյնքան անհաճոյ, գիւղի համար, որքան մութ գիշերներին սարերում ձորերում գալարուող ստուերները: Թող ամեն բան պարզ լինի, խորհրդաւոր գաղտնիքն ինչ պէտք է, մութից, մուայլեց միայն չար բան է ծնում: Քանի՞ քանի՞ գիակներ են արիւնաշաղախ փոռել մութ ձորերում ուշ գիշերին. Քանի՞ ու բաներ են պատահել սրտերում թագնուած գաղտնիքներից:

Ասօն ինչ ունի, Ա... գիւղը պէտք է իւ մանայ:

Ասօն լուռ է, մօրն էլ չի ասում իր գարդը, տէրտէրին էլ չի ասում, բայց պէտք է իմանալ, պէտք է որոնել, քրքրել, ծագումը պէտք է գտնել, մութ բանի վրայ մի

ճրագ վառել, մի շող ցալացնել: Երեխ մի պատճառ կայ, խօմ Ասօն չէր կարող հէնց այնպէս, առանց պատճառի սեւասրել, լոել, քարանալ: Կամ չար է պատահել, կամ վախեցել է, կամ ով գիտէ, ինչ է: Թէ չէ ինչու է գիւահարի պէս աչքերը չուած, մազերը խառնակ թափառում գաշտերում, վազում գետի հետ, հօտաղներին փախեցնում: Հարց ու փորձ արին, գէս ու գէն ընկան պառաւներն եկան, գնացին, նունուֆարի հետ փսփսացին, Պլուխներն օրօրեցին, աղջիկներն էլ իրար մէջ հազար ու մի պատմութիւններ սարքեցին, քչփչացին, նրա նշանածի՝ նողերի անուն էլ մէջ ընկաւ, երկու անգամ նշանուած աղջիկ, ով գիտէ... բայց այդ բոլորից բան չը գուրս եկաւ:

Ա... գիւղը չիմացաւ Ասօի դարդը, նրա սրտի գաղտնիքը:

Բայց գիւղը գաղտնիք չի սիրում, նա գաղտնիքից փախենում է, նա մութ բանից գոզում է, մի բան պէտք էր անել, մի բան պէտք էր հնարել: Սիրուն «բօյ ու բռւսաթով» տղամարդ է Ասօն, Ա... գիւղի պարծանիքն է, աչքն է, երբ յայտնուում է, ողջ նրան են նայում, մօրը երանի տալիս, մա-

տովի իրար ցոյց տալիս, դէ երբ մի ամբողջ գիւղ աչքը անկած՝ մի հատ թիկունքի, մի հատ ճակատի, մի հատ երեսի նայի, դրանից բարի բան չի դուրս գայց Աչքն ինչ առես չի անի. Ասօին աչքով են տուել, Ասօն գժուել է:

Գիւղը հանգստացաւ, էլ դաշտնիք չկար, այսպէս լաւ էր, ինչ փոյթ՝ թէ Ասօն մնաց էլի թափառական, սդաւոր ու մռայլ, որ նա շարունակում է վաղվզել գետի ընթացքով մազերը քամուն տուած, բաւական է, որ այժմ գիւղը գիտէ դաշտնիքը, Ասօին աչքով են տուել, նա գժուել է։ Դաշտնիքի վրայից խաւարը վերացաւ, բանը պարզ էր. աշկարայ, արևի պէս պայծառ։

Այսպէս լաւ էր։

Մի բան միայն մութ էր մնացել գիւղի համար, ոչ ոք չէր կարողանում բացատրել, թէ ինչո՞ւ Ասօն դաշտ գնալիս երբէք չի անցնում նիրինենց փողոցով, որ ամենայարմար և ամենակտրուկ ճանապարհն է գիւղից դուրս գնալու։ Ինչո՞ւ է ընտրում խոտոր ճանապարհներ։ Առաջ խօմ նա այդպէս չէր, նա էլ ողջ գիւղի պէս այդ փողոցով էր անցնում, այժմ յանկարձ ինչ պատահեց։

Երկար մտածեցին, հազար ու մի ենթագրութիւններ արին, վերջ ի վերջոյ եկան այն եղբակացութեան, թէ այնտեղ՝ նիրինենց փողոցի վրայ է բնակուում տիրացու Դրիգորը, հոչակաւոր գրբացը, նա որ չարերը կապել, կաշկանդել գիտէ։ Դէ, Ասօին չարերը կապել, կաշկանդել են, որ այն կողմերից չ'անցնի, որ անցնի, ով գիտէ, կարող է փրկուել։ Հաւատացնում էին, որ եթէ Ասօն յանկարձ անցնի այդ փողոցով, տիրացուի զարմանալի սուրբ գրքերի թըլիսմը նրա վրայից չար աչքի զօրութիւնը կը հանի, բայց չարը կապել է, նա չի գնայ այն փողոցով, անպատճառ հեռուից կ'երթայ։ Զօրով էլ տանել չի կարելի, դա Աստծուն դուր չի գայ։ Այս մութ բանն էլ պարզուեց. և գիւղը հանգստացաւ։ Կամաց-կամաց Ասօն իսպառ մոռացուեց, մարդիկ էլ նրանով չէին զբաղւում և արժէր միթէ. Ասօն մի խեղճ ու կրակ խենթ էր, կարծողներ կային նոյն խեկ, թէ գեերն էլ նրան խեղսում են ամիսը մի երկու անգամ, թէ նա ընկնում, փրփրում է, և հէնց այդ գեերի համար է չոլերն ընկել, փախչում է նրանցից, որ աղատուի, բայց գեերը հետեւում են։

Ասօի փոյթը չեր ամենեին, թէ ինչ է
մտածում իր մասին գիւղը, նա շարունակում
էր իր թափառական կեանքը և մօր բոլոր
հարց ու փորձերին տալիս էր խուսափողական
պատասխաններ։ Երբեմն նոյն իսկ կարծէք,
որպէս զիջողութիւն մօր թախանձանքներին
նա մի քանի օր իրար վրայ տանն էր մնում,
դործի էր կենում, բայց յետոյ նորից թող
նում էր ամեն բան և էլի թափառում, օրեւ
րով տուն չեր գալիս։

Կամաց-կամաց նա դաշտերի ինքնաւ-
դուխ պահապանը դարձաւ, մի երկու ան-
դամ մոլորուած անասուններ բերեց տէրե-
րին յանձնեց, այնպիսի լրջութեամբ և այն-
պիսի խրատներով ու խորհուրդներով, որ
գիւղացիք զարմացած մնացին. խենթի դործ
չեր։ Այդ քիչ է, երբ նա տեսնում էր դաշ-
տում մէկի ձեռքով կատարուած հարեանի
արտի զիանը, այնպէս էր զայրանում, կար-
ծէք սեփական արտը տրորելիս լինէին։ Հօ-
տազնելը հեռուից նրան տեսնելիս աւելի
զգոյշ էին պահում իրանց անասունները։
Բայց եթէ նա վրայ էր հասնում և մէկին
բռնում էր յանցանքի մէջ, մօտենում էր
լրջութեամբ, բռնում էր յանցաւորի ձեռ-

քից, ցոյց էր տալիս նրա կատարած շարիքը,
նայում էր աչքերի մէջ շեշտակի, ծակող հայ-
եացքով և ասում.

Սա վատ բան է, վատ բան, գէշ,
դարշելի բան է. աէրն արիւնքրտինք է թա-
փել, արիւնը սուրբ է, քրտինքը՝ թանկ։ Եւ
այդ բանը նա ասում էր այնպիսի համոզիչ,
ու ցաւոտ շեշտով, որ անկարելի էր նրա
հետ չը համաձայնիլ, նրա բոլբոքուած, լայն,
բացուած աչքերի մէջ մի բան կար, որից
ամենքը քաշում էին, ոչ ոք չեր կամենում
լսել նրա այդ յանդիմանութիւնը, ոչ ոք
չեր կամենում նայել նրա այդ տարօրինակ
աչքերի մէջ։

Ասօի համար գիւղացիք շարունակում
էին ասել, թէ խենթ է, բայց իրանք էլ ի-
րանց հոգու խորքերում անորոշ կերպով
զգում էին, թէ նա սովորական խենթ չէ,
մի անօրինակ, խորհրդաւոր բան ունի իր
հայեացքի, խօսքերի, վարմունքի ամբողջ ար-
տաքինի մէջ։ Ասօն դարձեալ սիրելի էր։

IV

Լճակի ափով այն աղջիկը մենակ էր
քայլում: Միջահասակ էր, հարուստ, լիքը
մարմարվ, մէկն այն գիւղացի աղջիկներից,
որոնք համարւում են գեղեցիկ իրանց կար-
միր այտերի, կոլոր գէմքի, մեծ աչքերի, եր-
կար մազերի համար: Եւ այդ աղջիկը հա-
մարեա վազում էր առանց յետ նայելու,
կարծես յետեն ընկած նրան հալածում էին:
Նա չէր ճշում, ձայն չէր հանում, բայց ար-
տառում էր կամացուկ, մի վայրկեան կանդ-
էր առնում: աչքերը սրբում իր փէշով և
կրկին շտապում: Երեք ուրիշ աղջիկներ, երեկ
ընկերուհիները նրան յետեից կանչում էին.
— Շողեր, Շողեր:

Աղջիկը շարունակում էր գնալ:
— Շողեր մի գնա մենակ, յետ արի. Ել
ոչինչ չենք ասի, արի:
Աղջիկը յետ չէր նայում: լալիս էր և
շտապում: Ընկերուհիները յուսահասուած
յետ գարձան դիմեցին դէպի դաշտը, իսկ
Շողերը շուտով ծածկուեց բլրի յետեում:
Նա բանջարաքաղի էր դուրս եկել ըն-

կերուհիների հետ, դէ, գնում էին, եկան,
համոզեցին, տարան. մայրն էլ յորդորեց, որ
գնայ, գուցէ դաշտում մի առ ժամանակ
մոռանայ իր ցաւը սրտակիցների զրջանում:
Բայց հակառակը գուրս եկաւ. հազիւ գիււ-
զից մի փոքր հեռացան, որ նրանք իրար
հետ փսփսալ սկսեցին.

— Աղջի Շողեր, ինչ նիհարել ես, ասաց
մէկը:

— Աղջի, ինչպէս գոյնդ ձգել ես, աւե-
լացրեց միւսը:

Այդ էլ անտանելի էր, բայց էլի համ-
բերեց, տարաւ. աշխատեց խօսքը փոխել,
երբ մէկ էլ երբորդը մօտեցաւ ու կամացուկ
հարցրեց.

— Շողեր, նշանածդ ինչի՞ է քեզ թող-
նում, խեղճ աղջիկ, ախ էդ տղամարդիկ:

Սա արդէն չափազանց էր. բիրտ ձեռ-
քով նրա ցաւստ վերքը շօշափեցին. Շողերն
էլ պատասխան չը գտաւ, կարմրեց, լեզուն
կարկամեց, գլուխը քաշ ձգեց և միայն կա-
րողացաւ ասել.

— Ձեզ ի՞նչ... հեկեկաց, արցունքը թա-
փուեց աչքերից և յետ դարձաւ:

Այժմ նա սգալով տուն է գնում անիւ-

ծելով այն վայրկեանը, երբ համաձայնեց դուրս դալ. դնում էր առաջուայ պէս տանը փակուելու իր ցաւն ու կոկիծը հայրենի յարկի տակ թագցնելու համար։ Նա շըրթունքները պինդ ողմել էր իրար վրայ, աչքերը գետին ձգել և քայլում էր անընդհատ առանց ուշք դարձնելու լճի, լեռների, դաշտերի վրայ, առանց լսելու բազմաթիւ ջրային թռչունների ճիշն ու աղմուկը իր փութկոտութեան մէջ ոռքից մաշիկի մէկը դուրս թռաւ աղջիկը կուցաւ վերցրեց և կրկին շարունակեց գնալ շտապ շտապ, կարծես վախենալով՝ թէ կը հասնեն և նոյն հարցը կը կրկնեն իր ականջին։

— ԱնողօրմԱստուած, ինչ եմ արելքեզ, մըմնջում էին նրա շրթունքները, մէկն այնապէս եղաւ, ու կապեցի, այս էլ... օօֆ։

Լացը դադարել էր, նա այժմ մտածում էր Քանի ժամանակ է չի տեսել Ասօին, ախ մէկ տեսնէր, մէկ երեսին նայէր, մէկ աչքերի մէջ նայէր, հարցնէր, թէ ինչո՞ւ այսպէս... ընկերուհիներն ասացին թէ Ասօն նրան թողնում է, թէ ուրիշին է սիրում, թէ նրա համար է սար ու ձոր ընկել, ինչո՞ւ... Մի տարի առաջ նողերն այս օրը երեակայել

անդամ չէր կարող, այն գժբաղդութիւնից, իր առաջին նշանածի մահից յետոյ էլի ամեն բան լաւ էր. ինչո՞ւ այժմ այսպէս, ինչո՞ւ... Ա՛խ այն օրերը, գիւղի աղջիկները ողջ Ասօի բաղդով էին զբաղուած, որքան յոյսեր կային, ախը ո՞զ նրան չէր ուզի. Գըրքօի մահից յետոյ երբ լուր տարածուեց, թէ եղբօր նշանածը Ասօն պիտի առնի, ոչ ոք չէր ուզում հաւատալ, ամենքը նախանձից ճաքում էին, ահա այդ նախանձի թոյնն է, որ ամենքը, իր ընկերուհիները թափում են նրա գլխին։ Ինչո՞ւ... ինչ է արել ինքը, ինչ մեղք ունի։ Մէկ անդամ արդէն ջահիլ-ջահիլ սկ կապեց, երեկ Աստուած էր կամեցել, ինքն ինչ անէր, որ առաջին նշանածը մուրազին չը հասաւ։ Ասում են, թէ նողերն ուրախացաւ, որ Գրքօն սպանուեց, ասում են, որ նա առաջ էլ հենց Ասօի վրայ էաջը ունեցել, ասում են հազար ու մի բաներ։

— Անողօրմներ, անաստուածներ, ո՞ր քարասիրու կարող էր ուրախանալ, որ խեղճ Գրքօն այնպէս պատառ-պատառ եղաւ. ինչ էք ուզում ինձանից, գու գատես Աստուած։

Աղջիկն ինքն իրան խօսում էր ու դընում։ Նա այժմ մօտ էր, թերակղղուն որի

վրայի հինաւուրց վանքի աւերակները արշտէն ծրագրում էին իրանց մասնապատքարերով։ Զը գնալ արդեօք այն քարերի մէջ, սուրբ տեղերում ուռած սիրտը դուրս թափել, աղօթել և լալ, պատմել ցաւերը Աստծուն, մտածեց աղջիկը։ Նա իր չորս կողմը նայեց, մարդ չը կար. ճանապարհը ծռեց և դիմեց դէպի թերակղղին, դէպի աւերակները։ Մի քիչ յետոյ նա կանդ առաւ. նրան թւաց, թէ հազի ձայն է լսում։ ուշագրութեամբ նայեց չորս կողմը. ոչ ոք Առաջացաւ և դարձեալ կանդ առաւ. այս անդամ նա իրօք նշմարեց մէկին լճի ափին, վլած պատի յետեւմ, մի քարի վրայ նրաւած էր. աղջիկը նայեց և կամացուկ ձեռքը տարաւ դէպի կուրծքը, սիրտը բռնեց յուղմունքից... Ասօն էր այնաեղ...։ Առաջի վայրկենին աղջիկը կամեցաւ փախչել, և նոյն իսկ մի քանի քայլ ձգեց յետ, բայց կրկին ուշքի եկաւ յուղմունքից, կանգնեց, նորէն նայեց։ Ասօն նստել էր, նայում էր չէր տեսնում, ապա ձեռք առաւ իր մեծ ձեռնափայտը և սկսեց մեղմիւ տաշել։ Աղջիկը կամացուկ մօտեցաւ յետեից, կանդ առաւ և նայում էր շնչակտուր։ Ասօն

Երբեմն-Երբեմն ծանր հոգոց հանելով՝ շարունակում էր տաշել գլուխը կախած, նողերը նայում էր յափշատկուած, վաղուց էր, որ չէր տեսել։ Որքան դեղեցիկ էր, Տէր Աստուած, և որքան տխուր միաժամանակ։ Մազերի մի փունջ աջ կողմից, գլխարկի տակից կախուել էր ճակատի վրայ. Ասօն սովորութիւն ունէր միշտ յետ յետ տանել ոյն, բայց այժմ սիրուն փունջը կախուել էր և մոռացուել կարծես։ Քանի, քանի անդամ իրանց քաղցր սիրոյ ժամերին Շողերն համբուրել է մազերի այդ ոլորը և իր ձեռքով յետ տարել ճակատից, փուել սիրուն գլխի վրայ կամ ցած բերել ծածկել նրանով աշքերը՝ նրան գուարծացնելու համար։ Էլի նա էր, նոյն Ասօն, նոյն թառլան Ասօն։ Նստած էր, որ կանդնէր յանկարծ՝ մի ծառ, թէ նայէր՝ մի աստուած. միայն այժմ աչքերը թախծապատ էին, ճակատի վրայ՝ յօնքերի արանքում մի կնճիռ կար, իսկ միրուքը՝ սեսաթի պէս միրուքը՝ անօրինակ ձեռվ աճել էր, երկարել։ Շողերը նայեց՝ կուրծքը շարունակ յուղմունքից բռնած, այտերը բոցավառ, ապա թաթերի վրայ մօտեցաւ և քնքութեամբ փարեց նրա պարանոցով.

—Ասօն

Ապշած երիտասարդը ցնցուեց, սովի
ելաւ և մեղմով յետ մղեց աղջկան՝ սովից
գլուխ նայելով։ Աղջիկը կոտրուեց, գլուխը
քաշ ձգեց, ասես ամաչելով իր արածից և
սովի ծայրով սկսեց փորել գետինը՝ աչքերը
մի կէտի յառած։

—Ազօթելու եկայ, այս քարերը լիղելու,
թրջելու իմ արցունքով, Ասօն, եկայ այս սրբի
սովը ցաւերս Աստծուն պատմելու, եկայ իմ
սրտի կոկիծն այստեղ թաղելու. այնտեղ էի,
ուրիշների հետ, տեսայ, որ էլ տեղ չ'ունեմ;
աշխարհում էլ տեղ չ'ունեմ։ ինչե՞ր ասացին,
միս որքան կ'ուզեի խուլ լինել, չը լսել, ինչե՞ր
են ասում իմ չորս կողմում։ Ասօն, Ասօն, մեզք
եմ ախր, ինչո՞ւ այսպէս... Երիտասարդը շա-
րունակում էր լուռ նայել աղջկան։

—Եսպեր, զուր եկար... և նա երեսը
ծածկեց, աւելի մուայլ, աւելի գունատ ու-
տիսուր, կարծես ամաչում էր նայել իր նշա-
նածին, մի առ ժամանակ այնպէս մնաց, ապա
կրկին նայեց։ Նստեց իր տեղում, քարի վրայ,
բռնեց աղջկայ ձեռքը, նստացրեց իր կողքին.

—Որ եկար, գէհ նստիր։

Չեռքն իր ձեռքում պահած՝ քնքուշու-

թեամբ նայում էր աղջկայ աչքերին, կարծես
աշխատում էր որոշել նրա. վշտի խորսոթիւնը։
Աղջիկը հնաղանդ՝ լուռ նայում էր, սպասե-
լով ինչ է լինելու։

—Երէկ նստած էի մեր գետակի ափին,
շարունակեց Ասօն, լուռ նայում էի ալիք-
ներին, ինչպէս այժմ նայում եմ այս լճին.
յանկարծ գու էլ միտս ընկար, պատկերվ-
եկաւ, ուզեց առաջս կանգնել, ես էլ էի
ուզում, որ մնայ, բայց չը մնաց, ես էլ չը
կարողացայ պահել և նա ալիքների պէս,
ալիքների հետ գնաց հեռացաւ։ Երկու չոր
տերե ձգեցի ջուրը, միատեղ ձգեցի, նոյն
տեղն ընկան, ջրի պտոյտը նրանց հետ խո-
ղաց, խաղաց, նրանք առ ժամանակ իրար
փարած՝ շրջաններ արին ջրերի վրայ, բայց
մէկ էլ յանկարծ մի չար ալիք վրայ հասու-
հեռու տեղերից և նրանց առաւ իրարից բա-
ժանեց։ Եւ գնացին այն տերենները զանազան
կողմեր, և ես լացեցի, լացեցի։ Դու լաց
եղել ես, Շնորհը։

Աղջիկը հեկեկաց։

—Հա, գու էլ ես լալիս, չը լինի թէ
գու էլ ես տերեններ ձգել գետի երեսին և
նրանք փախել են զանազան կողմեր, խեղճ։

— Ես տերեներ չեմձգել, Ես չոր տերելը
չեմ սիրում:

— Դու տերեներ չես ձգել, այդ լաւ է:
Այսաեղ՝ լճի ափի մացառներում անցեալները
ես մի բոյն տեսայ, թոշնի բոյն, զոյդ դեղձաւ
նիկներ իրանց լալկան ճմճոցով նստումէին
այնտեղ և դուրդուրում, այնպէս լաւ էր:
Ես աղօթում էի նրանց համար, ես ուզում
էի, որ նրանք միշտ այնտեղ մնան. մնան,
ես էլ նայեմ, ինչ շատ բան է, միայն նայեմ:
Դու խօմ սիրում ես նայել թռչուններին,
թիթեռներին, դաշտերին, սարերին: Ես էլ
նայում էի իմ թռչուններին, աշխարհի մէջ
շատ անդամ մեր բազգի համար նայելն էլ
մեծ բան է: Այսօր էլ եկայ՝ բունն աւերուած,
մացառը ջարդուած դտայ, թռչնիկներից
մէկը չը կար, միւսը վիրաւոր ու տիսուր կըծ-
կուել էր մի ճիւղի վրայ, և նրա շուրջը ման-
րիկ փետուրներ, որ քամին առնում, ցրում
էր լճի երեսին և ալիքները տանում էին
հեռու, հեռու ափերից: Սդաւոր թռչնիկն
ինձ նայեց, ապա թափ առաւ թռաւ, երեխ
անիծելով այս տեղերը, ուր այնքան ցաւ տե-
սաւ, ես մեկաւոր չէի, բայց ինձանից փախաւ:
Ի՞նչ կարող էի անել, նայեցի աւերակ բնին,

Նայեցի փետուրներին և լացեցի, լացեցի.
Դու թռչնի բոյն քանդել ես, նողեր:
— Զէ, չէ, Ասօ, ես բոյն չեմ քանդել,
ուրիշը քանդեց իմ հիւսած բոյնը, քանդեց
անողորմ կերպով և իմ խղճուկ փետուրները
քամուն տուեց աշխարհի չոշա կողմերում,
ինձ թռչնելով բնաւեր ու սդաւոր: Թոնդ, թոնդ
որ ես լամ իմ բունն ու փետուրները, Ասօ,
ինչո՞ւ այսպէս, ինչ է պատահել, օծֆ, բուժ-
դանակով ես մորթում ինձ. ինչ եմ արելքեղ, Աս-
կեկոցը խեղգեց կոկորդը, և արցունքը թա-
փուեց վերլսախն:

— Հա, իրաւունք ունիս, լաց, լաց: Դու
ոչ ոքի բուն չես քանդել, բայց քոնը քանդե-
ցին և փետուրներդ քամուն տուին: Երէկ
գիշեր ես էլի այնտեղ էի, գետի ափերում:
Ես սիրում եմ փախչող ալիքների ձայնը,
նրանք էլ ինձ պէս կ'ասես իրանց ցաւիցն
են փախչում, որ ազատուեն: Հեռու ձորից,
այ էն սարից էն կողմը մի երդէր լաւում:

«Էս լեռներում ճանապարհից քիչ հեռու,
«Մի եղջերու մրմնջում է, հառաջում,
«Ծանր ցաւից մի վիրաւոր եղջերու,
«Էս լեռներում, ճանապարհից քիչ հեռու»:

— Գիտես, Շնորհեր, Երդը ճշմարիտ էր սառւմ. նետը դիպաւ մի օր խեղճ ու կրակ եղջերուին, նա վիրաւոր ու արիւնաքամսարեւրն ընկաւ իր ցաւից, փախաւ՝ որ ազատուի մահաբեր նետից, բայց խեղճը չը դիտեր, թէ նետը ամեն տեղ ման է ածում վէրքի մէջ և ճար ու փրկութիւն չունի, հեծեծում է, լալիս է լեռների, ձորերի միայնութեան մէջ և քարերը տնքում են նրա ցաւից, Երբ Երդը լուեց, ես էլ լացեցի եղջերուի համար. աշխարհում կայ մէկը, որ ինձ համար լաց լինի, Շնորհ:

— Ախր ինչ ունիս, Ասօ՛, մատաղ, ինչու ես այսպէս խօսում:

— Պարդ տնիմ, Շնորհեր, Պարդ՝ ծովի չափ, թնձ ինձ իմ գարդով, տնան գարձեր չուտով և էլ ամեննեին մի արի. այծեամի պէս մենակ կը թափառեմ ձորերում և նրա արեան կաթիների պէս ցաւս կը փռեմ ամեն տեղը Գնա, Գնա Շողեր, քամու բերածը քամին կը տանի:

Աղջիկը ձեռքերը մեկնեց, փաթաթուեց նրա պարանոցով և ճակատը ողմեց նրա զէմքին:

— Ասօ ջան, մի ասա այդ, մեր սիրոյ

համար, ես էլ կը գամ քեզ հետ, սար ու ձոր ընկած քայլ առ քայլ կը վաղեմ քո յետեւից. թէ սարում մնաս, կողքդ կը նստեմ, թէ քարում պառկես, վրադ կը հակեմ, թէ արցունք թափես, թնդ որ ես սրբեմ, Ասօ ջան, մեր սիրոյ համար...

— Մէրը, Շնորհեր... խեղճ աղջիկ, Երդ ծառի վրայ թոշունի բոյն աւերես, նա էլ երբէք այնտեղ չի գայ բոյն գնելու։ Եւ Ասօն մեղմով հեռացրեց աղջկայ ձեռքերը, մի փոքր յետ քաշուեց և ձեռնափայտը տաշել սկսեց։

— Ասում են Ասօն խենթ է, չար աչք է դիպել չէ, դու խենթ չես, դու մոռանում, դու թողնում ես ինձ, դու անսիրտ ես։ Թնձ այդպէս լինի. Հին սեը կը դանեմ, նորից դլախ կը ձգեմ, եղբօրդ գերեզմանի վրայ կ'երթամ կը կծկուեմ, կը պատմեմ, կը պատմեմ իմ սե օրը։

— Գերեզման ես ուզում, հեռու մի գնա, Շնորհեր, իմ սրտում այժմ մի գերեզման կայ խոր ու սե. տես, ես տաշում եմ, տաշում անընդհատ, գագաղ եմ շինում նրա մէջ մի կեանք թաղելու համար։ Թնձ ինձ, Շնորհեր, տերևները շատ պտոյտ եկան ջրերի վրայ, չար ալիքն եկաւ հասաւ, ժամանակ է բա-

ժանուելու, թող դնան այժմ իւրաքանչիւրն
իր ճանապարհով ի՞նչ կարող ենք անել,
կեանքի ծովը լայն է, ալիքները բազմապիսի
Բնադր...

—Դու ինձ էլ չես սիրում...

—Չէ, չէ, նողեր, օծփ... պատախանեց

Ասօն սրանեղութեամբ, վերցրեց ձեռնաշ-
փայտը, սոքի կանգնեց և առանց յետ նա-
յելու հեռացաւ, գնաց Աղջիկը նայում էր նրա
յետելից, ապա մի բան մրմիջաց, գոգնոցով
աչքերը սրբեց և դառնալով նայում էր լճին.
Դարձեալ բաղերն օրօրւում էին ջրերի վրայ,
դարձեալ հաւալուսները լողում էին արեի
շողերով սղողուած, ամեն բան գեղեցիկ էր
շրջակայքում, բայց աղջիկը նստած, կամ
աւելի ճիշտ՝ ընկած էր ջարդուած, նայում
էր, բայց ոչինչ չէր տեսնում Աղօթքի մասին
էլ չէր մոտածում, ինչու աղօթել, ում աղօ-
թել. նա դլուխը բռնեց ձեռքերի մէջ, ուր
գնալ այժմ տունը դադարի է, ցուրտ, ըն-
կերուհիներն անսիրտ, նախանձոտ, մայրը
շարունակ վշշում է և սրբերի դուռը գնում:
ուր գնալ, ուր փախչել, ուր թագնուել:
Ալիքները դալիս՝ մեղմով զարկւում էին ա-
փերին թեթև ճղփիւնով, նրանց ցայտում

ները թրջում էին նողերի ոտները, և նա
շարունակում էր մնալ միենայն տեղում:

Աւերակներին նայեց, մնայլ ու սգաւոր
հինաւուրց քարերն իր սրտի պէս սե, իր
սրտի պէս վշտահար կանգնել էին ջրերի
ափին, նայում էին ալիքների մէջ և կարծես
լալիս էին նրանց ծոցում իրանց դարաւոր
ցաւը: Ամեն բան այստեղ համապտասխա-
նում էր նողերի սրտին, ամեն քար ասես
նրա հետ լալիս էր: Այս աւերակները, այս
կիսափուլ պատերը, այս խոնարհած կամար-
ները ամենքը միասին ասես մի մեծ սիրտ
լինէին նոյնպէս սե, նոյնպէս քանդուած,
սրպէս նողերի սիրտն էր: Եւ նա կուզէր
երկար, թէկուզ յաւիտեան մնալ այստեղ,
այս ծփծփան ալիքների մօտ, որոնք գալիս,
զարկւում էին աւերակների սոքին և կար-
ծես փափառում էին նրանց հետ այս խուզ
միայնութեան մէջ, ուր վշտահարը կարող է
խօսել իր սրտի հետ, ինչպէս մի ուրիշ ան-
ձի հետ, ուր արցունքը վկայ չ'ունի, ուր
վէրքը մղկտում, մնմուռում է աշխարհից հե-
ռու:

Աղջիկը շարունակում էր մնալ մի և
նոյն տեղում նստած, ծնկները բազուկների

մէջ և գլուխն օրօրում էր մեղմով։ Զոյդ
հաւալուսերը լողումէին փառահեղորէն արե-
ւի շողերի տակ ոսկեզօծ, կարծես լճի տէ-
րերը լինէին։

—Երանի ձեզ, անդարդ հաւքեր, եր-
կերը ձերն է, երկինքը ձերն է, թէ չար
աչք հասնի ձեղ ջրերի վրայ, անէծքով կը
փախչէք գէպի վերերը. աս, թէ ես էլ ձեղ
պէս թեւեր ունենայի, ձեղ հետ տարուէի
ջրերի երեսին կամ ձեղ հետ միասին երկն-
քում ճախրէի։

Հեռու, գէպի հիւսիս, ափերը քերե-
լով լճի վրայ օրօրուում էր մի փոքրիկ
ձկնորսական նաւակ՝ բաց արած սպիտակ
առագաստը, որ այնպէս նմանում էր ծի-
ծեռնակի զոյդ թեւերին։ Շողերն այն չէր
տեսնում և նաւակը կամաց կամաց դալիս
էր գէպի թերակղղին։

Հովը փշում էր հեռու ձորերից և Շողերի
ականջին հասցնում մի ուրախ երգի ձայն։
Ընկերուհիներն էին, որոնք երգում էին և
բանջար քաղում։ Նրանք երգում էին մատադ
սրտիյցիւրը, երգումէին սէր ու ինդութիւն,
վարդ ու գարուն, ծաղկազարդ ձորեր ու
սարեր։ Ծանօթ էր երգը, ինքը Շողերը քանի՛

անդամնոյն տեղերում, նրանց հետ երգել է,
նրանց հետ ցնծացել, իսկ այժմ..

—Երջանիկներ, մրմիջաց նա.

Երգի ձայնը մօտեցաւ, իւրեի ընկերուհին-
ները գալիս էին. նա վեր կացաւ, որ հեռանայ
նրանց չը հանդիպելու համար։ Ծանր էր էլի
մի անդամ տեսնել Երջանկութեամբ փայլող
այն գէմքերը։

Շողերը հազիւ մի քանի քայլ էր ձգել,
երբ իր յետեկց լսեց մի ձայն.

—Շողեր։

Աղջիկը յետ նայեց վախեցած... Ափի
մօտ կանգնած էր փոքրիկ ձկնորսական նա-
ւակը և նրա մէջ նստած էր իր հայրը, ձըկ-
նորս նավօն, որ դուրս էր եկել լճի զանա-
զան մասերում դրած ձկնորսական կողով-
ներն այցելելու, և այժմ յետ էր դնում
տուն։ Նա մի առոյդ, յազդանդամ ծերունի
էր, մանրիկ, եռանդուն աչքերով, որոնց
տեսսպաւթիւնն այնպէս որուել էր տարի-
ների ընթացքում լայնարձակ լճի վրա հե-
ռաւոր հորիզոնները և երկինքը գիտելուց-
նավօն ստաբորիկ էր, վարտիկը ծալած
մինչեւ ծնկները, ջլուտ բազուկները նոյն-
պէս մերկ էին մինչեւ արմունկները։ Նա

Հաղին ունէր մի հին արխալուզ ու մի կարձ
մաղէ աբայ, իսկ գլուխը կապած էր թաշ-
կինակով գլամարկի տեղ։ Արեից պյուտած ու
թխացած մորթին ոտների ուձեռների վրայ
պատած էր թաւ մազերով։ Հաստ ու ճեր-
մակ բեխերի տակ նրա շրթունքներն խաղառ
ծածկուել էին, իսկ դուրս ցցուած այտերը
և ուժեղ ծնօտը վկայում էին մի կոշտ ու
բիրտ բնաւորութիւն, որ մշակուել ու կազ-
մակերպուել է ազատ բնութեան ծոցում;
տարերքի հետ մղած կոխների մէջ Ամբողջ
Ա... գիւղում նա յայտնի էր որպէս սրտոտ,
անվախ, նայն իսկ անողորմ մարդ. ասում
էին, որ նա երբեք լաց չէ եղել և արցունքն
տաելով ատում է. հաւատացած էին նոյն-
պէս, որ նա զարհուրելի կերպով վրէժին-
դիր լինել գիտէ։ Ահա այս մարդն էր կանգ-
նած նաւակի մէջ թիակին յենուած իր հա-
սակի բոլոր բարձրութեամբ. նաւակը տարու-
բերում էր նրա ոտների տակ, միշտ-եռ
նազօն ըստ երեսյթին զարմացած՝ շարու-
նակում էր նայել աղջկան։ Հանդիպումն ան-
սպասելի էր և մէկի, և միւսի համար.
Շողերը շփոթուեց, մի վայրկեան կանդ առաւ-
քարացած, սաստիկ գունատուեց, ապա դը-

լուխը քաշ ձգեց ու մնաց յանցանքի մէջ
բոնուածի պէս։
— Շնդեր, ինչ ես անում այստեղ մե-
նակ, կրկնեց հայրը ափը ցատկելով և գէ-
պի աղջիկն առաջանալով։
— Ես... ես, ոչինչ, հայրիկ, բանջար
քաղելու էի եկել... յետոյ չը քաղեցի, տոն
եմ գնում...
— Տնին ես գնում, ինչու չը քաղեցիր,
լաւ եղանակ է. մենակ ես։
— Զէ, հայրիկ, ընկերներս այն կողմը
գնացին, ես չը հասայ, տոն եմ գնում։
— Բայց մենակ այստեղ, ճանապարհից
հեռու, Շնդեր ջան, լաւ չէ ախր։
— Ես գիտէի, որ գու այս տեղերը կը
լինես, սպասեցի չ'եկար, ես էլ գնում էի։
Աղջիկո ստումէր, բայց ոչ յաջող, որով-
հետեւ խօսակցութեան բոլոր ժամանակ նրա
ձայնը կերկերում էր, դէմքն՝ սկզբում գու-
նատ ներքին յուղմունքից, այժմ կարմրեց,
ճակատը քրանեց, այտերը վարդ գարձան-
Հայրը նայում էր ուշագրութեամբ, նա կար-
ծես զգում էր, որ աղջիկը խաբում է։ Մի
առ ժամանակ դէմ առ դէմ կանգնած՝ նր-
բանք լուռ մնացին։

Արի, ճողեր, արի, նստիր նաւակը,
ասաց վերջապէս հայրը. այսպէս աւելի շուտ
կը համենք:

Շողերը մօտեցաւ դվասկոր, ցած իջտ
նաւակի մէջ, հայրը բացեց սպիտակ առա-
գաստը, և նրանք ոլացան ջրերի վրայից գէ-
պի գիւղ, որ հեռու լուռնալանջի վրայ երե-
ւում էր իր տափաշակ աներով, որոնք այն-
պէս նմանում էին արևելով արած քարաթու-
թոշների: Խրճիթներից ծխի պտոյտը ոլոր մո-
լոր բարձրանում էր և լեռների վրայ վա-
ղանցուկ մութ ամպեր կազմում: գիւղից
վեր՝ կանաչ լեռնալանջի վրայ երեւում էին
մեծ ու փոքր անասուներ, իսկ վարում, գէ-
պի գաշտերը գնացող մեծ ճանապարհի վր-
այ երկու եղներ քաշում էին կանաչ խոտով
բարձած մի սայլ: Այս բոլորը գեղեցիկ էր,
ինչպէս և կապուտակ լիճը, և բոլորը ողու-
դուած էին գարնանային արևի պայծառ շու-
զերով, բայց և սրանցից ոչ մէկը չէր գրա-
ւում Շողերին, ոչ մէկի վրայ նրա վշտու
հայեացը չէր հանդսանում: Նա գիտէր,
որ հայրն իրան է նայում և գլուխը քաշ
ձգած աչքերը չէր հեռացնում ջրերից, ո-
րոնք կոհակներ կազմելով փախչում էին

նաւակի տակից: Շողերն այնքան տխուր էր,
նա այժմ գարձեալ այնպէս գունատ էր:

— Գիտես, Շողեր ջան, կողովները մէկիկ
մէկիկ նայեցի, յոյս ունիմ առատ ձուկ հանել.
կղզու շուրջը անթիւ են:

Աղջիկը գարձեալ լուռ էր, հայրը նայեց
խոռվուած ու շեշտակի.

— Շողեր:

Աղջիկը գլուխը չը բարձրացրեց և յահ-
կարծ բարձրածայն հեկեկաց, յորդ արցունք-
ները թափուեցին, և նա գլուխը թաղեց հօր
կլածքում: Նավօն այս անդամ սաստիկ շվու-
թուեց, ինչ անելը չիմանալով՝ գրկեց զաւա-
կի սիրուն գլուխը, ջերմութեամբ սեղմեց
կլածքին ու մնաց կարկամուած, վշտու հայ-
եացը նաւակի մի կէտին յառած: Աղջիկը
շարունակում էր հեկեկալ, հայրը յուզմունքից
խեղդուած՝ աշխատում էր ցոյց չը տալ իր
թուլութինը, լուռ էին, առանց խօսքերի
հասկանում էին իրար: Շողերը երբէք հօրը
չէր գանդատուել իր բախտից, ոչ առաջին
նշանածի մահից յետոյ և ոչ երկրորդի՝ Ասօի
այս անօրինակ վարմունքիցյետոյ. բայց հայրը
միշտ կարգացել էր նրա գէմքի թախիծը,
զգացել էր նրա խորը վիշտը և թագցրել էր

իր յուղմունքը։ Անդամ կինը՝ Գիւնազը նրա
ծնողական թուլութեանը ականատեսչէր եղել
երբէք։ Այժմ առաջին անդամն էր, որ հայրը
տեսաւ աղջկայ արցունքը, առաջին անդամ
զգաց, որ իր սիրտն էլ փշուր փշուր է եղել
և էլ չը դիմացաւ. ծեր, խատասիրտ նավօն
հեկեկաց երեխայի պէս։

—Ի՞նչ անեմ, զաւակս, որ ջուրն ընկնեմ;
Աստծու կամեցածի դէմ մենք հողեղիններս
ի՞նչ կարող ենք անել։

Հողերը շարունակում էր հեկեկալ, հօր
ծեր աչքերից քամւում էին արցունքներէ,
նաւակը պատում էր ջուրը, և սգաւոր
զոյգը տարւում էր ալիքների վրայով։ Կա-
պուտակ լիճը մեղմ ծփանքներով ժպտում
էր, հորիզոնը եղերող կանաչապատ ու ծաղ-
կաւետ լեռները կարծես ծիծաղում էին վր-
ձիս կոհակներին նայելիս, երկինքը ջինջ էր
ու ժպտում, մէկ այն հայրն ու աղջիկն էին
սգաւոր, որոնք տարւում էին նաւակի մէջ
խառնելով արցունքները կապոյտ ջրերին։

V

Գայլատուայ լճի հարաւային ծայրին ջր-
բերն անընդհատ խաղում են դէպի ափերը
և կարծր ժայռի կոկուած կատարից գահա-
վիժում են վար ու ներքեռում Զկնդետը
կազմում Գիշեր ու ցերեկ աղմուկ է այնտեղ.
Փրփրուն ալիքները կարծես անկման սարսա-
վով բռնուած՝ մոնչում են, երկնքի երեսին
շփում են կաթնային ամպեր, լաց ու կակա-
նով բաժանում են մայր լճից և գնում են
Զկնդետի կանաչապարդ ափերին պատմելու
իրանց աստանդական կեանքի կոկիծը։ Գայ-
լատուայ լճի ջրվէժն է այն, որ հին-հին
օրերից թափում է, թափում անընդհատ,
քաշում իր յետեկից լճի ձկնոտ ջրերը, իջ-
նում դէպի դաշտավայրը, բայց լիճն այն-
տեղ է միշտ, ծփծփան ու միրուն։

Այնտեղ՝ Զկնդետի ափին, ջրվէժից քիչ
ներքե ծերունի Գապէն իր ջրաղացն ունի-
չին է այդ ջրաղացը, այնքան հին, որ կար-
ծես ջրվէժի գահավիժմուելու առաջին օրում,
առաջին ալիքի հետ այնտեղ դուրս է ցցուել
գետնից Զկնդետի ափին իր ծերունի տիրոջ

Հետ և այն ժամանակից անխախտ մնացել։
Չորս ծռմուռած ու մաշուած պատերը կը-
րում են իրանց մէջքին թափթփած, ծակո-
տուած կտուրը, որի ծածկի եղեգները չորս
կողմրց կախկառուել, օրօրուում են, խշոշում
են քամիների առաջ, ասես սգում են իրանց
տակ ծռւարած շէնքի ծեր օրերը։ Ջրաղացը
մի «աչքանի» է, ճակատի պատի վրայ միայն
մի հատիկ նեղ լուսամուտ ունի, այն էլ
սարդի խիտ ոստայնով և ալիւրի սպիտակ
փոշիով ծածկուած։ Յետեռում ջրաղացը մի
նաւ ունի, ներսում մի զոյտ քար, իսկ ներ-
քեռում, շէնքի տակ մի ջրտուն, ուր անվերջ
շրփոցով գառնում է բաղմաթե փառը հա-
դառնում, իր գլխին թափուած ջրերը քըր-
քըրում, աղմկում և քարը պատեցնում։ Բու-
լորաձեւ քարի վրայ փայտեայ փոքրիկ լե-
զուակը՝ «չախչակը» անընդհատ շվկշվկաց-
նում է միակերպ ու ձանձրալի, ինչպէս ա-
մարային տօթ օրին միջատի բղզոց։

Ամննից տեղի հետաքրքիր է Գոպէի
ջրաղացի յետեկի մասը։ Այնտեղ է գործում
նաւը, փոքրիկ շէնքին անհամաչափ մի ահա-
գին նաւ, որ ջրերի առաջը փակող ամբար-
դակից գառիվայր իջնում է վիշապի պէս և

իր լայն կոկորդով ջրերի հսսանկքները գրր-
կում և փառի վրայ շպրտում ահագին թա-
փով։ Գոպէն չի յիշում, թէ այդ նաւը ովլ
և երբ է հաստատել այնտեղ. բայց նա
հպարտ է նրա հաստութեամբ, նրա խողո-
վակաձեւ անցքի լայնութեամի, ուր մարդ ի
հարկին կարող է ներս սողալ մաքրելու հա-
մար. նա հպարտ է ջրերի այդ անսպառ քա-
նակութեամբ, որ ջրվէժից իջնելով ալիք ալի-
քի հետ կըծում են իրար նաւի անցքի մէջ,
աղմկում, ճշում, կաղկանձում և իրար յե-
տեից փառի վրայ ընկնում պատառ պատառ։

Գոպէն ծանօթ է ջրաղացի յետեկի ամ-
բարդակի բարդ կազմութեան հետ. նա գի-
տէ ի հարկին շատացնել և քչացնել ջուրը.
իսկ երբ առուն վարարում է աշնանային և
դարնանային անձրեներից, երբ լճի ջուրը
բարձրանալով ջրվէժը գառնում է կատաղի
և սպառնում է ջրաղացին, նա գիտէ կապէլ
զանազան անցքեր, բանալ ամբարդակի կո-
ղերը, խոտոր ճանապարհներով ջուրը գուրս
թափել և իր ջրաղացն ու նաւն աղատել։
Բարձր առուի ամուր թմբերի մէջ ջուրը
միշտ ուռած՝ բարձրացած է, բայց այդ բո-
լորից Գոպէի նաւը վերցնում է այնքան, որ-

քան հարկաւոր է փառը դարձնելու համար, մնացած ջուրը առուի կողքի սահանաբաւոր բացուածքից՝ «սաւաղից» թափուում է վարչ լաւ չի լինիլ, եթէ այդ անցքը աւելի լայնանայ, այն ժամանակ բոլոր ջրերը նաւոն չը հասած՝ կը թափուեն այնտեղից և կ'երթան անօգուտ. լաւ չի լինիլ նոյնպէս, որ անցքն իսպառ փակուի, այն ժամանակ ջրերն աւելի կ'ուռեն, կը բարձրանան և ամբարդակն ու նաւը կը քշեն կը տանեն: Այդ բոլորի վրայ Գոպէն աշալուրջ կերպով հսկում է: Իր գիտութեամբ ու փորձառութեամբ հպարտ՝ Գոպէն օրը մի քանի անդամ գալիս է գիտելու ջրաղացի յետեւի ամբողջ կազմը, հանդարտ քայլուածքով գնում է մինչեւ աւելորդ ջրերի անցքը, մինչև «սաւաղի», դիտում է, թէ չի մեծացել արդեօք ջուրը, չի լայնանում արդեօք այդ անցքը, պինդ են եզրերը, ապա յետ է գալիս. նայում է նաւի երկու ականջները, որոնք խորը թաղուածեն ամբարդակի մէջ, մի վայրկեան կանդամում; լսում է ջրերի աղմուկը, կռանում նայում է ջրան մէջ որոտացող փառին և երբ ամեն բան դտնում է իր տեղում հաստատն, ժպտում է գոհութեամբ, մազոտ,

կոշտացած ձեռներով շոյում է ծեր սպիտակ միրուքը, թափ է տալիս վրայից ալրի փոշին և ուրախ սրտով գնում է իր բաղարջը պատրաստելու:

Գոպէն սիրում է իր ջրաղացը, իր նաւը, իր ահագին քարերը, սիրում է իր լայնաթե փառը, որ ջրտան մէջ դառնում է անդադար խելագարի պէս, զարկում է ալիքներին իր լայն թեերը գոռում գոչումով, բայց այդ ամենից աւելի նա սիրում է չախչակը, փայտէ այն փոքրիկ լեզուակը, որ անդադար ցատկրտում է պտտուող քարի վրայ և իր միակերպ չխմակոցով յայտնում է ծեր ջրաղացպանին, որ ամեն բան կարգին է: Գըսպէն իր միայնութեան ժամերին գիշերով թէ ցերեկով սիրում է նստել և նայել չախչակի ցատկրտոցին, լսել նրա միակերպ աղմուկը և հազար ու մի բաներ մտածել: Մանաւանդ ձմերային երկար գիշերները, երբ տերեազուրկ ուռիները հեծում են խաւարում չարագուշակ փսփսոցով, և դրսում քամին ոռնում է ջրաղացի պատերը ծեծելով՝ ասես ապաստան է խնդրում, երբ ձիւնը թափում է վերից, փակում ճանապարհները և Գոպէին կտրում գիւղից ու ողջ աշխարհից:

Այդ ժամանակ չախչակը, այդ շարժումն փայտէ լեզուակը Գսպէի համար անընդհատ երգող, ցատկող թռչուն է, մի ընկեր, մի խօսակից։ Չախչակը Գսպէի համար նաև մի դգաստ ազատարար է, նստած է Գսպէն, նայում է չախչակին, ականջ է գնում նրա միակերպ ձայնին և կամաց-կամաց նիրհում է. փայտէ լեզուակը շարունակում է ցատկրտել քարի վրայ, շարունակում է իր համաշափ, միակերպ ներդաշնակութեամբ օրօնել ծեր ջրաղացպանին, և նա քնում է, քը նում է խոր ու հանգիստ։

Եւ ինչո՞ւ չը քնէ. երբ չախչակն ազմըկւում է, երբ նա ցատկրտում է քարի վրայ, կը նշանակէ ամեն բան կարգին է, փառը ներքեում պտտում է շրփոյով, քարը վերեւում դառնում է հայ դառնում, ալիւրն աշղացւում։ Բայց ահա չախչակը լոեց, նա էլ չէ ցատկրտում, կամ չուրն է կարուել, կամ փառը ջարդուել, կամ փառն ու վերին քարն իրար հետ միացնող երկաթեայ ձոզն է դուրս թռել, ջրաղացն էլ չէ դործում, չախչակը լուռ է, նրա օրօն էլ չէ հնչւում քնած ջրաղացպանի ականջին, և նոյն վայրկենին ծերունին զարթնում է, չուած աչքերն ուղ-

զում չախչակին և ամեն բան հասկանում։ Չախչակը Գսպէի յուշարար աքաղաղն է, որ սակայն նրան զարթեցնում է ոչ թէ իր երգով, այլ իր լուռթեամբ։

Թանի տարիներ էր այնտեղ ծերունի Գսպէն. Ջրաղացի նաւից շատ ջուր էր անցել գնացել, և նրա գլխով շատ անցքեր կատարուել. Մաղերը վաղուց ծերմակել էին, ինչպէս իր աղացած ալիւրը, շատ չար ու բարի էր տեսել աշխարհում, հազար ու մի մարդ ընդունել և ճանապարհ գրել, նրանց պատմութիւնները, նրանց ցաւ ու հոգսերը լսել ինչպէս մի ժայռ, որի վրայ քամիները գալիս են գանգատուելու իրանց վշերը, փափալու իրանց գաղտնիքները, հանգիստ վնտրելու իրանց թափառական գլխին։ Այն ալեզարդ գլուխը որքան բան գիտէր, որքան փորձուած էր։ Գայլատուայ լիճն այնքան դար ու փոս չ'ունէր, Բարդողեան լեռներն այնքան խութ ու խոռոչ, որքան Գսպէն գաղտնիքներ ունէր. նա մի իմաստուն էր։

Ամեն առաւօտ զարթնում էր նա, ճըռուալով բաց անում ջրաղացի ցածրիկ դուռը, անցնում նրա յետել, բարձրանում ամ-

բարդակի վրայ, միքանի բուռ ջրով լուաց-
ւում, երեք անգամ խաչակնքում երեսը դէ-
պի աղօթարանը դարձրած, ապա դալիս էր
մի բաղարջ ձեռք առնում; դուրս գնում;
ջրաղացի առաջի թմբի վրայ նստում, ծեր
ծնուներով դանդաղովթեամբ ծամում էր
բաղարջը և նայում հեռուն, դէպի դիւզը
տանող ճանապարհը եւ երբ նշմարում էր
որևէ շարժուն ստուեր, ձեռքը ճակատին էր
գնում, աչքերի վրայ հովանի անում որոշե-
լու համար, թէ եկողն ով է, ցորեն է բերում
արդեօք:

Եւ այսպէս տարիներ:

Այն առաւօտ սակայն, ծերունի Գապէն
պարապ չէր. նա դիւզին չէր նայում, ցորենի
չէր սպասում, որովհետև ջրաղացի քարը
պէտք էր սրել: Նախորդ երեկոյ ջրաղացա-
ւորների հետ նա քարը շուռ տուեց և այժմ
հազիւ նախաճաշը վերջացրած՝ ծեր մէջքով
կուացել է մեծ քարի վրայ, հաստ մուրճով
թակում է հա թակում քարի կարծր երեսը
և փոքրիկ խորտ ու բորդեր պատրաստում,
որ գառնալիս հատիկները լաւ փշի. նա զար-
կում է և երգում:

«Ես սարերում, ճանապարհից քիչ հեռու
Մի եղջերու մրմնջում է, հառաչում
Ծանր ցաւից, մի վիրաւոր եղջերու
կս սարերում, ճանապարհից քիչ հեռու»:

— Բարի լոյս, Գապէ ամիւ:

Ծերունին երգն ընդհատեց և դլուխը
բարձրացրեց. նրա առաջ կանդնած էր Ասօն:
— Աստծու բարին, Ասօ, խէրով եկար,
լաւ միտղ բերիր Գապէին:

— Եդ դու ես երգում ամեն օր եղ-
ջերուի երգը էլի, լսում եմ էլ, Գապէ ամի,
սարի յետեկից լսում եմ. էս օր էլ լսեցի ու
եկայ. ասացի՝ գնամ տեսնեմ ինչ է անում
Գապէ ամին:

— Ե՞ն, որդի, դէ մենակ եմ չօլի մէջ,
ինձ համար մոմուում եմ. գիտես, որդի,
երբ մարդ երգում է, իր ձէնն իր ականջն
է ընկնում, թւում է, թէ էլ մենակ չի,
մօտը ուրիշ մարդ կայ, սիրու միսիթարւում
է: Մենակ եմ է է, Ասօ, դու էլ շուտշուտ
չես գալիս, որ խօսենք, սիրոս բացուի. թէ
ջրաղացաւոր կայ, հօ լաւ է, թէ չը կայ,
աշնանն ընկերները կորցրած, ուշացած կը-
ուունկի պէս կղզում եմ և մենակ թառում
այ էն թմբի վրայ. մենակութիւնը ցաւ բան է:

— Քեզնից աւելի մենակը կայ:
— Ինձանից մենակը թող դուշմանս չը
լինի:

— Ապա վիրաւոր եղջերուն:
— Հա, իրաւ է Ասօ, մարդու սիրա
մումում է. տես ինչ է ասում երդը. «Վիր
աւոր եղջերուն լեռներն ընկած մրմնջում
է, հառաջում». ախր էլի Աստծու արարածն
է, ցաւ է զգում; մեղք է. Է՞ս, որտորդու-
թիւնն անողորմ բան է:

Ասօն նստեց քարի վրայ, գլուխը քաշ
դցեց ու լուց:

— Գիտես, Ասօ, մեր պապերը զուր չեն
տաել, որ աշխարհում երեք տեսակի աններ-
րելի մեղաւորներ կան: Մէկ ձուկ բռնողնե-
րը, մեղք բան է, ինչ ուզում ես ասա, խեղճ
ձիներին հանում են ջրից, զցում գետնին
թրպրտալով, մինչեւ մեռնեն: Մէկ էլ քար
կտրողները, որ էն սիրուն քարտիները փրշ-
րում, ջարդում են. մէկ էլ կենք վերջա-
ցնողները, որ հաւքերի, անասունների, մարդ-
կանց ազիդ արևները խաւարեցնում, ջնջում
են իրանց շահի, չարութեան համար: Խօսւ-
քը մեր մէջը մնայ, որդի, հէնց սրա համար
է, որ իմ ու քո աներոջ նաւօի ջուրը մի աշ-

ոռւով չի գնում: Անողորմ մարդ է տնաքան-
դը, նա հօ մենակ ձուկ չի բռնում, ինչ
ձեռքն անցնի, կը խեղդի, իսկ և իսկ գա-
զանի պէս Ես հէշ չեմ մոռանայ, դեռ շատ
ջահիլ էինք, մի անդամ նրանց կատուն մի
փոքր կարագ էր կերել, փախել մտել ծալքի
տակ, նաւօն յետեն էր ընկել, գիտես ինչ
արաւ — վերցրեց շամփուրը դրաւ կատուի
մէջքի վրայ, ոլորեց, մազերը կաշեխառն
փաթաթուեցին երկաթին, անաստուածը
դուրս քաշեց շամփուրը, կատուին ծէրին
փաթաթած բարձրացրեց ու թափով գետին
զարկեց, խեղճ կենդանին ոչ տուեց, ոչ
առաւ, ճշաց ու սատկեց: Զէ, անողորմ մարդ
է նաւօն, Է՞ս, Տէրն իրան հետ աղջիկը լաւ
աղջիկ է, Շողերն իր թայը չունի: Հը, դու
այն ասա, ախազօք աղա, հարսանիքիդ ալիւ-
րը Երբ ենք աղում, տես, քարը սրում եմ:

— Հարսանիքիս ալիւրը... Երբ որ եղ-
շերուն կ'ընկնի արնաքամ, տառապած գլու-
խը կը գնի լեռնալանջին և աշխարհի գարդ
ու ցաւից կ'ազատուի:

Գապէն մուրճը զարկում էր քարին թր-
քը խկ, թրքիկ, նա կարծես չը հասկացաւ
կամ չը լսեց Ասօին:

—Գիտես, Ասօ, ողորմածհոգի հօրդ
հարսանիքի ալիւրն էլ էս քարերն են աղա-
ցել. ի՞նչ ժամանակ էր, ի՞նչ օրեր էին համ.
հաղար օղորմի քեզ, Մուրան, ախպէր չու-
նէի, Մուրադն ախպօրից լաւ էր. երբ Գլու-
քօին, քո մեծ ախպօրը էն սեր պատահեց,
խեղճ մարդի մէջքն ասես կոտրեցին. կը
դար, ժամերով կը նստէր այ էն թմբի վրայ,
կը նայէր հեռուն ու կ'ասէր. —ախպէր, էլ
չեմ ապրի, փալագը մէջքս ջարդեց, չեմ ապ-
րի. կ'ասէի՝ սիրոտ էն պահիր, ախպէր,
ախր Ասօն կայ, տղամարդ չէ մի Սիս-Մա-
սիս, Աստծու դէմ մի տրտնջալ էդքան, Ասօն
մենակ մի տուն է. —Հա, իրաւունք ունիս,
Գապէ ախպէր, ամա էլի սիրոս ասուն է՝ չեմ
ապրի, ջիգեարի մումուռը զուլում բան է:
Ասածն էլաւ, գնաց մարդն էլի, չապրեց ու
դաղեց, դաղեց ինձ. ի՞նչ ընկերներ էինք,
ինձանից շատ փոքր էր, բայց սրտակիցներ
էինք:

—Լաւ ընկերներ էիք... կրկնեց Ասօն
մէքենայաբար, կարծես չէր լսում: Գապէն
էլի մուրճով զարկեց ու շարունակեց.
—Հոգին տալիս ձեռքս բռնեց, աչքերիս
նայեց օղորմածը երկարերկար, ախպէր՝ աւ-

սաց, իմը չէլաւ, էս աշխարհից ես բան չը
հասկացայ, ամանաթիմ իմ Ասօն քեզ, աչքո-
վրան պահիր, հօ տեսնում ես, շուխ տղայ
է, աշխարհում չարը շատ է. մէկ էլ, աւ-
սաց, նողերը իմ հարսն է, թնդ իմ հարսն
էլ մնա, թնդ Ասօն առնիւ:

Վերջին խօսքերի վրայ Ասօն մի անհան-
գիստ շարժում արեց՝ կարծես մի անախորժ
միտք հեռացնելու իր գլխից, ձեռքը ճակա-
ռը տարաւ և աւելի մուայլուեց:

—Զօրանաս, որդի, շարունակեց Գապէն,
հօրդ վերջին սուրբ կամքը կատարեցիր, դէ
ես էլ աչքս ինչ վրադ պահեմ, Աստծու աշ-
քըն է վրադ, բօյ ու բուսաթիւնայելիս՝ խել-
քս դնում է, օղորմածին եմ յիշում: Ախ,
երանի թէ կենդանի լինէր, Ասօ, հարանի-
քըդ էլ տեսնէր դնէ, ու յետոյ թող Աս-
տծու կամքը լինէր: Է՞հ, ով է հասկանում
երկնքի բանը, երբեմն մենակ մնալիս նայում
եմ էս քարին, նա դառնում է, չորս կողմն
ալիւր փչում, ու ես մտածում եմ. ասում
եմ, Տէր-Աստուած, միենոյն քարը ալիւր
է աղում կնունքի համար, յետոյ հարսա-
նիքի, յետոյ էլ թաղման. ախր ինչո՞ւ հա-
մար է բոլորը, թէ կնունք կայ, էլ ի՞նչ թա-

Դում: թէ թաղում կայ, ել ի՞նչ կնունք,
ինչու էնքան սրուեր ցաւոտ, սկոտ, էնքան
հոգիներ դաղուած, մորմոքուած. իսկ քարը
դառնում է հա դառնում, օրերն անցնում
են իրար յետևից է՞հ, ով է հասկանում
երկնքի բանը: Բայց էլի փառք նրան:
— Հէջ էլ չէ, երանի թէ երբէք ծնուած
շը լինէինք:

Գապէն մուրճը վար դրեց, գլուխը բար-
ձրացրեց և իր թաւ, ծերմակ յօնքերի տա-
կից ուշադիր հայեացքով նայեց իր խօսակ-
ցին.

— Ասօ:

— Ի՞նչ է, Գապէ ամի՞:

— Ի՞նչ ունիս, որդի՞:

— Վիրաւոր եղջերուն ի՞նչ ունի՞:

— Վիրաւոր եղջերուն... կրկնեց Գապէն,
գլուխն օրօրեց, ձեռքը խառնեց թանձը
միրուքի մէջ, ապա մուրճն առաւ և շարու-
նակեց զարկել քարին:

Ասօն էլ լուռ էր երկար ժամանակ՝
— Գապէ ամի՞:

Ծերունին գլուխը բարձրացրեց:

— Գապէ ամի, դու որքան ծեր ես, տես
մազերդ, ի՞նչ ծերմակ են:

Զարմացած ծերունին նայում էր և կար-
ծես ոչինչ չէր հասկանում. ապա միրուքը
շոյեց՝ ասես համուսնացել էր համար, թէ ի՞նքն
իրաւ շատ ծեր է:

— Դու այդքան ծեր ես, Գապէ, և ասում
են՝ չես ամուսնացել երբէք:

— Հա, չեմ ամուսնացել երբէք:
— Ի՞նչու:

Գապէն գարձեալ լոեց, գլուխը կախեց,
մի բոպէ յետոյ ասաց.

— Ի՞նչ է պատահել քեզ, տղա, գիշերը
վատ երազ հօ չես տեսել:

— Երազ... չէ, տեսածս երազ չէր, ամի,
միս, բաց աչքով տեսայ, բաց աչքով:

— Ո՞ւմ, ի՞նչը:

— Իմ որսորդին, ամի, որի նետը պատիս
դիպաւ: Ասօի ձայնը դողաց, նա գլուխը քաշ
դցեց և նայում էր մի կէտի:

— Ասօ, ի՞նչ ունիս:

— Ոչինչ, ես ոչինչ չունիմ, հէնց այն-
պէս... ի՞նչու դու չես ամուսնացել:

— Չեմ ամուսնացել, ի՞նչ պէտք է քեզ
իմանալ՝ թէ ի՞նչու:

— Ես էլ չեմ ուզում ամուսնանալ, քո
օրինակին եմ հետևում:

Ասօ, Ասօ, այդ ինչ ասացիր, հօրդ
կտակը, Շողերը, մայրդ... քեզ ինչ է պա-
տահել, որդիւ:

—Ոչինչ, տեսնում ես, աշխարհում պա-
տահում է այնպէս, որ մարդիկ չեն ամուս-
նանում, օրինակ դուք:

—Ե՞ս, իմ ուրիշ եղաւ, որդի, ուրիշ
եղաւ, եաման բան էր: Գոպէն դուրս քա-
շեց գոտիկց ջիբուլը, լցրեց, վառեց և
ծխել սկսեց. մի քանի անդամ իրար վրայ
հաղաց ու շարունակեց. —եաման բան էր,
որդի, քոնն ուրիշ է. ինչ որ ինձ եղաւ, թող
Աստուած էլ ոչ մի ադամնրդու չը տայ եր-
բէք. վառեց սիրտս էէ, վառեց: Ամուսնա-
ցիր, որդի, նշանուած ես, ամուսնացիր, լաւ
բան չի լինի, խեղճ Շողեր, ջրատար նու-
նուֆար: Ասօ, ես տեսնում եմ, դու էլ չես
ուզում նշանածիդ, նայիր ծեր ալիքներիս,
հաւատա, որ լաւ բան չի դուրս դայ. ջահիլ
սիրտը երկու անդամ չի կարող փշուել,
այդ շատ է: Ես հօ լացեցի, քանի տարի
է, դեռ մղկլառում եմ: Ծերունին հեկեկաց,
ասես կրծքում կուտակուած մի հին ցաւ
քանդւում էր, և յորդ արցունքները թափ-
ւում էին ծերմակ միրուքի վրայից:

Ասօն նայում էր և ինքն իրան ասում
մեղմիւ.

—Նետը գիպաւ եղջերուին, խեղճը վա-
խաւ սարերն ընկաւ ու ամեն տեղ իր հետ
տարաւ մահացու վէրքը:

—Ասօ, տես արցունքներս. հուռւ, քա-
նի տարի է, խիղճս ուռած է ցաւով, սիրտս
լեցուն է արցունքով, այսքան տարի միայնու-
թեանս մէջ թափում, եմ թափում և չի
սպառում: Յաւիս վոսն այնքան խորն է,
որ ինչքան էլ քամեմ; Էլի շատ կը տանեմ
գերեզման. հին վիշտը ծեր, սե ագռաւի
պէս կրծքիս տակ նստած անողորմ կերպով
կացում, կրծքում է սիրտս և դեռ չի վերջա-
ցրել. դու վիրաւոր եղջերոն ես... օծք. իսկ
ես...

—Գոպէ ամի, ներիր ինձ, ես քեզ մօտ
եկայ ուռած սիրտս դուրս թափելու, իսկ
դու լալիս ես, ես քեզ ցաւեցրիւ:

—Թաղ լամ, զաւակս, վնաս չունի.
նայիր հեռուն, նայիր էն ջրվէժին, որ աղ-
մուկով թափում է լճից վար, մի օր այն
ջրերն իրանց փրփուրէ պատանի մէջ փա-
թաթած՝ մի աղջկայ գիտակ բերին դէպի իմ
ջրաղացը թաւալ-թաւալ, և այն աղջկիը ինձ

Եր պատկանում... իմ նշանածն էր...—նա
ձայնը ցածրացրեց.—իմ կինն էր, Ասօ. քո
հասակին էի, երբ սիրեցի նրան. օ, ի՞նչ
պէս սիրեցի. իմ սիրալ կալաւ նրան, ինչ
պէս պատուտակը ծառի բնին. նրան նայ-
ելիս հոգիս այնպէս էր բացւում, ինչպէս
ծաղկի կոկոն, որ փթթում է արեկ վազոր-
դեան առաջին շողերով. ես գիշեր ցերեկ
հետեւում էի նրան, լեռներում և դաշտերում
նրա կոխած տեղերից քայլում էի, ընկերը
վնարող այծեամի պէս խոտերն ու ծաղիկ-
ները հոտոտելով կարտանում էի նրան
դժոնել: Երբ հեռուից տեսնում էի նրան հը-
րեշտակային պատկերը դաշտերում, ձորե-
րում, շնչարդել հեռում էի բորբոքուած հայ-
եացքս դէպի նրան ուղղած և զայրանում էի,
որ բոլոր ծաղիկները, բոլոր խոտերը չեն թեք-
ւում դէպի նրա շարմաղ երեսը, ինչպէս
արեածաղիկը դէպի արելք: Նա կարծես
բռնած տանում էր իր ճեռների մէջ իմ սիր-
ուը, ինչպէս մանուկը տանում է թակարդով
բռնած թռչունը, ուղէր, կը ճղմէր, արիւնքամ
կ'անէր, ուղէր կը փայփայէր, կեանք կը տար-
եւ այն հրեշտակն իմն էր ամբողջապէս, իր
մտքերով, հոգով, մարմնով, իր ամբողջ կեան-

քով. նա իմն էր, ինչպէս իմն է այս
դժբաղգի, փշուած սիրուը, որ դեռ թրպը-
տում է չորացած կրծքիս տակ, նա իմն էր,
և ես նրան էի, և մենք Մրրկի սրբիաւած
ուխտեցինք մեր կապուած բաղզերը երբէք
չը բաժնել իրարից: Եւ այդքան երջանկու-
թիւնն անողորմ ձեռքով փշուեց... Հայ-
ըըս... օծֆ, գարձեալ օղորմի քեզ, խստա-
սիրտ մարդ. և հայրս արդելեց, հայրս չու-
զեց, առանց ինձ հարցնելու ուրիշ աղջիկ
ուզեց ինձ, և նոյն օրը նա, իմ կեանքը, իմ
հոգին էն ջրվէժից վար նետուեց, Ասօ. ա-
մօթ կար թագցնելու աշխարհից... Եւ այն
օրից, արդի, ես ուխտեցի այլևս երբէք չա-
մուսնանալ որեւէ ուրիշի հետ, կեանքս թա-
զել այս ջրաղացում, քաւել իմ մեղքը, որ
պատճառ եղայ նրա մահուան, և չամուսնա-
նալով՝ վրէժիսնդիր լինել հօրիցս նրա խստա-
սիրտ վարմնենքի համար Ուզում էի, որ նրա
սերունդը ջնջուիր ծես, այժմ ես ծեր եմ,
արդի, ծեր և մենակ աշխարհում. թէ գլու-
խը է ցաւում, մի խնամու ձեռք չը կայ,
որ ճակատա բռնի, թէ արցունքներ ունիմ,
տաք կուրծք չը կայ, որ այնուեղ լամ, թէ
հառաջում եմ, հարազատ ականջ չը կայ, որ

լսի. և մրմնջում եմ, հառաջում, ինչպէս վիշտաւոր եղջերուն լուռ միայնութեան մէջ. ես մենակ եմ և հազիւ կախուած կեանքից, ինչպէս աշնանը գեղնած միակ տերելը, որ դողդողում է իր սստի վրայ, կպչում է նըրան, որ էլի մի քանի օր պաշտպանուի ցրտաշունչ քամուց, ինչու եկայ աշխարհ, ինչու եմ դնում, չը գիտեմ: կեանքս անապատ եղաւ, սիրսս աւերակ, մահս էլ հեռու չի: Այս մենակութիւնը լաւ բան չի, որդի, դու էլ մեզը ես, նա էլ, այն խեղճ աղջիկը: Մի թողնիր Շողերին, զաւակա, չահիլ սիրոը մեծ ցաւ տանել չի կարող:

— Զահիլ սիրոը մեծ ցաւ տանել չի կարող, կրկնեց Ասօն մեքենայաբար, աչքերը դէպի անորոշ հեռուն ուղղած:

— Եւ դնում եմ տարին մի քանի անգամ Մըրկի սրբի խաչքարի թեհերից կախուում, լալիս, աղաչում եմ, որ ների իմ հօռը, ների ինձ Հա, որդի, հին ցաւ է, բայց գեռ խեղդում է ինձ. ինձ արդելեցին, դու հօ աղատ ես:

— Ես աղատ չեմ, Գսպէ ամի, սիրսս է բռնուած:

— Ի՞նչ է պատահել, Ասօն:

— Զես տեսնում, որ ես խենթ եմ, չէ ամենքն են ասում:

— Ասօ, այդ խենթութիւնը ես հասկանում եմ: ասա, որդի, ասա ինձ, ինչունիս, ինչ ցաւ է կրծումքո սիրոը:

— Սրտիս վրայ ծանր դարդ կայ, դարդ սարի պէս. լեռ ու դաշտին, սար ու քարին մասսաս տուի իմ դարդից, էլի չը պրծայ. վախ, ես վառւում, փոթոթւում եմ: մի ճար, մի հնար, Գսպէ ամի, ախր դու շատ ապրած, ցաւեր տեսած մարդ ես, ախր դու էլ ծովի չափ դարդ ես ունեցել, սրտի մըրմուռ, հոգու կրակ ես տեսել:

— Ախր ինչ ունիս, որդի:

— Օ՛, ես ամաչում եմ, եկայ քեզ առելու, էլի ամաչում եմ, գետինն եմ մըրմում: դարդն ամօթից լաւէ, Գսպէ ամի. Բայց մեռնում եմ, էլ չեմ կարող, ուժից վեր է. ես սիրում եմ մի ուրիշին, ես Շուղերին առնել չեմ կարող, չեմ կարող, չեմ կարող:

Գսպէն գլուխը քաշ ձգեց, չիբուխը գանդաղութեամբ դատարկեց գետին և նրա կութով հողը փորել սկսեց:

— Ես մարդով կնիկ եմ սիրում... գիտես

ում... Եիրինենց թագայ հալսին, Սառային.
ինչ անեմ, տեսայ, մի անդամ տեսայ, սիր-
տըս կպաւ։ Թող աչքս քոռանար, չը տես-
նէի. ասում էին սիրուն է, շատ սիրուն, ա-
մենքն էին ասում. ձորն իջայ գիշերով, աղ-
բըրի մօտ քարի յետև թագ կացայ, եկաւ
ջուր տանելու, երեսից կարմիր քօղը յետ-
գեց, լուացուեց. Տէր Աստուած, էն ինչ էր.
խելքս թռաւ, ստնելոս գողացին, գլուխս
շշմեց. էն ինչ երես էր, շարմաղ, թշերից
նուռ էր կաթում. ինչ աչքեր, ջուխտ աստ-
ղեր։ Փախայ, ամի, հաւատան, փախայ. ինձ
թռում էր, թէ այդ պատկերը յետևս ըն-
կած հալածում է. փախայ սարերն ընկայ վի-
րաւոր այծեամի պէս, բայց էլի չազատուե-
ցի։ Գիշերցերեկ այն պատկերն աչքիս ա-
ռաջն է, հալածում է ինձ, Գաղի ամի, հետ-
եւում է ինձ. այ, այժմ էլ եմ տեսնում,
փախչում եմ, գալիս է, ինչ անեմ, ո՞ր ջուրն
ընկնեմ։ Շողերն աչքիս հող ու մոխիր է
դարձել։ Ասում են՝ Ասօն խենթացել է, աչ-
քով են տուել. թէ խենթ եմ, Սառան է
խենթացրել, թէ աչքով են տուել, էլի Սա-
ռան է արել, նրա բոց աչքերը։ Ի՞նչ անեմ,
ախր մեղք եմ, ջիվան եմ։

Գաղին լուռ էր, նա շարունակում էր
գետինը քանդել առանց վեր նայելու։
— Ասա էէ, Գաղի ամի. էս չօլերում,
սարերում ես մենակ՝ դու մենակ, տես,
քո դուռն եմ եկել, ինչպէս կը դան սրբի
դուռը. տներ մուրազս, կամ առ հոգիս, էլ
չեմ կարով, մեղք եմ, այլում եմ, վառ-
ւում եմ։

Գաղին լուռ էր։
— Գու էլ ոչինչ չես ասում, դու, որ
աշխարհի բաները գիտես, դու էլ լուռ ես.
իմ ցաւը ծովի չափ է, ի՞նչ անեմ, դնամ
ջրերի տակ թաղեմ։

Գաղին լուռ էր. նա նորից պատրաս-
տեց շիբուխը, վառեց, մի քանի կում ծը-
խեց, նոյեց հեռուն մտազբաղ ու շուարած։

— Քեզնից բացի ոչ ոք չը գիտէ ցաւս
աշխարհում, դու էլ լուռ ես, օծհ, անողնբմ
Գաղի։ Ես գնամ, գնամ չօլերը։

Նա վերկացաւ։
— Լոմիր հրդի, ճամր ես փնդրում։
— Ճամր, ճամր։
— Մնա ինձ մօտ, ջրազացում։
— Քեզ մօտ ի՞նչ անեմ։
— Մնա ինձ մօտ ջրազացումի քանի օր։

Ասօն նորից ընկաւ քարի վրայ ինչպէս
արմատախիլ ծառ, ընկաւ ու գլուխը ձեռ-
քերի մէջ առաւ և բարձրաձայն հեկեկաց.
—Ա՛խ, սիրտս, սիրտս...

Գոպէն էլ սրբեց աչքերը, նորէն մուրճը
ձեռք առաւ, վերսկսեց ընդհատուած աշ-
խատանքը. նա էլ չէր երգում, միայն մուրճի
ձայնն էր լսում՝ թրը՛խկ, թրը՛խկ, թրը՛խկ...

VI

Այն գիշեր Ասօն չը կար. դա սարսա-
փի, ցաւի մի չար գիշեր եղաւ Նունուֆարի
համար. Առաջին անդամն էր պատահում որ-
դու գիշերային բացակայութիւնը. Սովորա-
բար նա գիշերները տուն էր գալիս և լուռ
անկողին մտնում. մայրը խաւարի մէջ մի
քանի անդամ վեր էր կենում, սողալով, շօ-
շափելով գտնում էր նրա անկողինը, լսում
էր շնչառութեան ձայնը, և երբ համոզում
էր, թէ նա այնտեղ է, յետ էր քաշում
հանդստացած:

Այսօր չ'եկաւ. նախրի գալուց յետոյ Նու-
նուֆարը քանի անդամ Շուշիկի հետ գուրս
գնաց, գաշտի ճանապարհին աչք տնկեց,

Ասօն չը կար ու չը կար: Ճարը կտրուած
յետ եկաւ, նստեց գուանը, նայեց աստղերին,
որոնք մէկիկ-մէկիկ փայլեցին երկնքում,
նայեց երկար ու մրմնջաց.

—Օ՛հ, անողնարմորդի, քեզ ի՞նչ եմարել:

Ապա ներս դնաց տուն, անկողնի վրայ
կծկուեց և անխուփ աչքերը՝ գուանը յառեց:

—Մայրիկ, եղբայրս ինչու չի գալիս,
ուրէ, հարցնում էր Շուշիկը:

—Կը դայ զաւակս, կը դայ, հանդիսա-
կաց:

Երեխան լուց և քնեց՝ գլուխը մօր
ծնկանը դրած: Զիթէ ճրագը պլալլաց, վա-
սուեց, մարեց, Նունուֆարը նորէն ձէթ ա-
ծեց, էլի շարունակեց նայել գուանը՝ լսու-
զութիւնը սրած, հոգին աղմկուած: Դրակից
մերթընդ-մերթ լսում էր մի ձայն, մի խըղ-
ճուկ մրմունջ. ախուր, ու բէխէր ձայն էր,
լաւ չէր, Նունուֆարը դուռը բացեց իմաւ-
նալու, թէ ի՞նչ էր. դրան առաջ կծկուած
էր մի անտէր թափառական կատու և ներս
մանել էր ուղում: Նունուֆարը նրան վեր-
ցրեց և ներս գցեց. «վարձք է» մտածեց, ով
գիտէ, թէ իմ որդին էլ այս ուշ գիշերին
մի դուռ չի բաղխում և ապաստան փընտ-

բուժմ։ Այժմ տան մէջ երեք էլին՝ ինքը, Շուշիկը և կատուն, այսպէս աւելի լաւ էր եւ մինչև լոյս պառաւը մնաց անքուն ու տանշուած, և մինչև լոյս որդին չեկաւ ու չ'եկաւ։

Լոյսը բացուեց և նունուֆարը հանգիստ չ'ունէր. սարի պէս իր զաւակն էր «աւարական ջրերը» խմել, դարձել խելառ, թափառական, մայրն ինչպէս մոռանար։ Գիւղն ասում է, թէ աչքով են տուել, խենթացել է, Շողերն ասել է, թէ էլ իրան չի ուզում, խենթացել է. Նունուֆարն այդքանով բաւականանալ չի կարող. նրան իր զաւակն է հարկաւոր, սարի նման իր զաւակը, Ա... գիւղի դարդն ու պարձանքը։ Սյն կապուտակից վերեւ հօ Աստուած կայ, նունուֆարը երբ խեթ նայեց, երբ յանցանք գործեց, որ այսպէս եղաւ, այսքան սեեր, ցաւեր մէկը սիւսի յետեկից. ինչու Զէ, նա այժմ կը խնդրի, կ'աղերսի, կ'աղօթի, գուցէ երկնքից մի ճար լինի։ Եւ նունուֆարն սկսեց աղօթել այնպէս, ինչպէս զգայուն մայրերը գիտեն աղօթել զաւակների և մանաւանդ ցաւագար կամ գժբաղդ զաւակների համար։ Նա սկսեց գիւղի ժամդից, մի ամբողջ շաբաթ

մենցերեկոյ նրա խոնաւ յատակի վրայ տրուրուեց, արտասուեց, Տիրամօր պատկերի առաջ մոմեր վառեց և կանգնած մնաց, սպասեց, որ բոլորը վառուի, ոչինչ չը մնայ։ Կիւրակի օրը աղքատներին հաց բաժանեց, տաքատաք հաց։ Նրանից յետոյ յաշորդ օրերում գիւմեց գէպի հեռաւոր ուխտատեղին երը, մէկիկւմէկիկի այցելեց չէն ու աւերականաքերը, եկեղեցիները, մատաղներ տարաւ, մորթեց, բաժանեց քաղցածներին։

Ուխտերն անզօր էին, սրբերը՝ խուլ, երկինքն՝ անողորմ, նունուֆարի զաւակը շարունակում էր մնալ թափառական։ Խեղձկինը՝ էլ սուրբ չէր ճանաչում, նա էլ աղօթելու տեղ չ'ունէր։ Բայց էլի ճար էր պէտք, ճար Ասօին փրկելու։ Նունուֆարը գնաց թիզ բանալ տուեց. նրան հաւատացրին, թէ գիւղում տարածուած լուրը ճիշտ է, թէ Ասօին աչքով են տուել։ Նունուֆարը թոննիրը վառեց, թէժ արեց, խմորի տասը գընդակիները շարեց կողքին և նստեց բոցերի առաջ։ Առաջին երեք գնդակը ձգուեցին բոցերի մէջ։ Արտեանուներն ու յօնքերը բոցերի մէջ։ Արտեանուներն ու յօնքերը խանձելով, պառաւը քրտնաթոր, հեալովնաւ յում էր բոցերի մէջ իր խեղճ լսողութիւնն

ուղղած և սպասում էր լսելու գնդակների
պայթիւնը։ Դեղին, կարմիր բոցերը խաղում
էին նրանց շուրջը, թափով լիզում էին, անց-
նում վրաներով, կրկին կռանում, դրկում,
իրանց գեղնաւուն ծոցի մէջ ծածկում։ Պա-
ռաւը նայում էր. գնդակները կամաց-կամաց
ուռչում, դիզանում էին. պառաւն այդ տես-
նում էր, բայց նա կ'ուզէր, որ մի ուրիշ աչք էլ
այդ նկատէր։

— Շուշիկ ջան, տես, այ, ուռան, այն-
պէս չէ։

— Հա, մայրիկ ջան, ուռան, հիմա կը
տրաքեն։

— Մատաղ լինիմ աչքերիդ, լաւ տեսար։

— Հա, հա, լաւ եմ տեսնում, այ, էն
մէկը, ամենից մեծը։

Ահա այն մէկը առանց աղմուկի, կա-
մացուկ վլաւ, չը տրաքեց. պառաւը ծընկ-
ներին տուեց։

— Շուշիկ ջան, դու ձայնը չը լսեցի՞ր։

— Չէ, մայրիկ, չը լսեցի, չը տրաքեց։

— Կուրանաս, չար աչք, տէրդ մեռնի։

Ահա երկորդը բարձրացաւ, բարձրա-
ցաւ, մօտ է պայթելու և ի՞նչպէս կը պայթի-
նունուֆարն այս անդամ նայում է յուսով,

անհամբերութեամբ. թօնրի գոյն այրում է
նրա գէմքը, քրտինքը ծորան-ծորան հոսում
է խորշոմած, խղճուկ այտերի վրայով, բայց
նրա փոյթը չէ. նա նայում է և կը նայի,
եթէ մինչև իսկ գէմքը բոց կտրի, միայն թէ
պայթի, բարձրաձայն պայթի, չար աչքը պատ-
ռուի. բայց գնդակը շարունակում է ուռչել
ու բարձրանալ, պառաւն ականջ է գնում.
ահա, ահա... հիմա կը տրաքի։

— Շուշիկ ջան, նայիր, նայիր, ի՞նչքան
ուռաւ։

Գնդակը կամացուկ բացուեց և նստեց
առանց աղմուկի։

— Զար աչք, կուրանաս, տէրդ մեռնի։

Նունուֆարը զայրացած՝ բոցերը շա-
տացրեց, վերցրեց մնացած բոլոր գնդակ-

ները, և մէկէն ածեց թօնրի մէջ, դար-

ձեալ կռացաւ կրակի վրայ։ Բոցերը բար-
ձրացան, ոլորուեցին, կրկին լիզեցին գըն-

դակները, իսկ պառաւը նայում էր հեալով՝
ամբողջապէս տեսողութիւն ու լսողութիւն

դարձած։ Գնդակներն ուռան, միթէ այս
բոլորից և ոչ մէկը պայթելու չէ, որ չար

բոլորից և ոչ մէկը պայթելու չէ, որ չար
բոլորից և ոչ մէկը պայթելու չէ, որ ամենից

պարկ տեղումն է, մօտ է տրաքուելու. պա-

ուաւը նայում է հէնց նրան, իմիւսները մուտքել է. յանկարծ նա պայթեց ահագին աղմուկով։ Նունուֆարը լայն շնչեց, երեսը խաչակնքեց։

— Փառք Քեզ, Ա'ստուած։

Պայթեց և՝ երկրորդը, երրորդը, և՝ միւսները մէկը մէկի յետեկից ճարճատեցին։ Նունուֆարի երեսը պարզուեց, նա դլուխու բարձրացրեց։

— Փառք Քեզ, Ա'ստուած, Դու ի՞նչ ցաւի ճար չ'ունիս։

Այժմ նա բոլորովին հանդիսան է. ուժգնդակ պայթեցին, այն էլ ի՞նչպիսի ճայնով. թէ չար աչք էր, թլիսիմն անցաւ։ Բայց էլի օրեր անցան և Նունուֆարի Ասօն նոյնն էր, չար աչքի ոյժը ծանրացած էր նրա գոլուխին, թախիծը չէր փարատում, գէմքի մը ռայլն աճում էր օր աւուր։ Նա այժմ նմանում էր մի ոգու, որ ով գիտէ ի՞նչ դժուխային ծրագրներով թափառում է աշխարհի վրայ, մուժ բաներ որոճում իր գլխում։ Աչք պատառող գնդակներն էլ չ'օդնեցին. Նունուֆարի ճարը կտրուած՝ էլի մի օր որուն դիմեց։

— Ասօ ջան, ոտքդ համբուրեմ, Ասօ

ջան, գլխովդ պտոյտ գամ, ինչու ես սկաւոր մօրդ սիրաը խորովում, ինչու ես սկըերում գլխիս. կամ տամար ինձ հէնց օրը ցերեկով ողջ-ողջ թաղիր մի փոսի մէջ, կամ տամար ինչ ունիս, ինչու ես քո լոյս արել սկայնում։

— Դարդ ունիմ, մէրիկ, դարդ ծովի չափ, գարդը լաւ է, քանց ամօթը։

Մայրը լոեց, գլուխը քաշ գցեց, լացեց, լացեց ցաւից ու զայրոյթից, որ չը գիտէ, թէ որդին ի՞նչ ունի։

Օրեր անցան, Նունուֆարը գարձեալ չը հանդստացաւ. նա այժմ կ'երթայ գրբացի մօտ, հաստ գրքեր ունի մարդը, միլուքն ու մազերը ճերմակել են գրի սկ ու սպիտակի վրայ. մի անդամ, ասում են, կորեկ է բարձրացրել սիւնը իր աղօթքի զօրութեամբ, մի ուրիշ անդամ տատղ է ցած բերել երկնքից և ներս տարել ջրհորի մէջ թաղել ինչե՛ր չը գիտէ տիրացու Մարտիրոսը։

Նունուֆարը լաւ յիշում է, թէ ի՞նչպէս երբ գեռ Ասօն ծծկեր երեխայ էր, վախեցել էր, Մարտիրոսը թուղթ գրեց, եռանցի ծալեց և ասաց, որ այրի, մոխիրը գցի

ջրի մէջ ու լողացնէ։ Գրբացի պատռէրը կա-
տարեց, և երեխան վրայ եկաւ։

Ճարն այնտեղ է, մէկէլ թաղում՝ Շիրի-
նենց նեղ փողոցի ծայրին, որտեղից Ասօն
երբէք չի անցնում այլևս։ Ճարն այնտեղ
է՝ տիրացու Մարտիրոսի այն նեղ բակում,
ուր մի հատիկ փշատի ծառ է բուսել, չոր,
պղնձուած հողի մէջ։ Ո՞վ է տեսել փշատի
ծառը մսիսիրների մէջ բուսնի անջուր, ան-
մշակ։ Տիրացուն է տնկել. ասում են տնկեց,
խաչակնքեց, մի հաստ գիրք առաւ, կարդաց,
կարդաց, և ծառն առանց ջրելու այրող մո-
խիրների մէջ կպաւ, արմատ գցեց։ Այժմ
մեծ ծառ է, ճիւղերը կախուել են ցած՝ խիտ
ստուերներ շինելով. այնտեղ այն խորհըր-
դաւոր ստուերումն է նստում տիրացուն,
այնտեղ է կարդում, այնտեղ է գրում, եր-
դում, ազօթում։ Այդ ծառը նրա տաճարն
է, նրա սեղանն է։ Երբ նա նստած է, հե-
ռուից կարելի է նրան տեսնել ամբողջա-
պէս. բայց երբ ոտքի է կանդնում, նրա
ալեղարդ, իմաստուն գլուխը ծածկում է
ճիւղերի մէջ, միայն ոտներն են երեսում,
կապայտ կտաւէ վարտիկը և լայն քօշերը։
Այսպէս կանգնած՝ տիրացուն նմանում

է մի սրբի, որի գլուխը թաղուած է ամպե-
րի մէջ, և միայն ոտներն են երկրի վրայ-
նա գնում, գալիս է, խօսում է ինքն իրան,
դէմքը չի երեսում, բայց ձայնը լսուում է. մի
զարմանալի ձայն, յստակ ու հնչուն, զարմա-
նալի խօսքեր, ինչեր է ասում, երկի մէկ
ինքը տիրացուն գիտէ այն, մէկ էլ Աստուած-
նունուֆարն այդ բոլորը տեսել է, այդ բո-
լորը գիտէ։ Ճարն այն փշատի ծառի տակին
է, ուր տիրացու Մարտիրոսը զարմանալի
բաներ է գրում, կարդում։ Այնտեղ պէտք
է գնալ, ամեն բան այնտեղ է։

Եւ նունուֆարը գնաց գէպի տիրա-
ցուն։ Քանի մօտենում էր սուրբ մարդու
գրանը, յուզմունքն այնքան աւելանում էր.
ինչ պիտի լինի, ինչ պիտի ասեն։ Ճար կը
լինի արգեօք։ Ահա նա հասաւ, կանդ ա-
ռաւ, միքանի անգամ բոլոր կրծքով շունչ
առաւ, ապա բռնեց գրան երկաթէ թակը
և շրը խկ, շրը խկ, երկու անգամ իր պա-
ռաւ ձեռքի բոլոր ուժով խփեց ու սպասեց։
Մէկը մօտեցաւ գրանը, նունուֆարի յուզ-
մունքը գագաթնակէտին հասաւ. եթէ յան-
կարծ տիրացուն լինի, ինքը սուրբ մարդը,
նունուֆարը կը շշկի, խօսք չի գտնի։ Դուռը



ճռռալով բացուեց. տիրացուի կինն է՝ թաշ
մամը:

— Բնարև, թամամմ բաջի:

— Աստծու բարին, նունուֆար խա-
թուն. հը, էլի ինչ կայ:

— Էլ ինչ ասեմ, գիտես էլի գլխիս ե-
կած սել. ձեր գուռն եմ եկել, ձեր օրհ-
նուած օջաղն եմ ընկել:

— Մեր գուռն ես եկել, խեղճ քուրիկ,
հողիս դուրս դայ քեզ համար, Աստուած
կրակիդ վրայ ջուր ածի:

Երկու կանայք իրար հասկանալով միա-
ժամանակ վշշացին:

— Տիրացուն...

— Տանը չի, քնուրիկ. Էհ, ինձ թաղես,
տիրացուն ինչ անի:

Նրանք խօսելով առաջացան բակում,
այն զարմանալի բակում, ուր խելքից, մըտ-
քից վեր բաներ են կատարում: Նունու-
ֆարը նայեց խորհրդաւոր վշատի ծառին,
նրա կապոյտ ու սպիտակ տերեներին, նրա
վշաւոր ճիւղերին, որոնք կարծես չար աչք
ծակելու համար լինէին շինուած: Ի՞նչքան
շատ բան կար այդ ծառի մէջ. նա կարող էր
փրկել նունուֆարի որդուն. նրա տակը շա-

րուած են այնպիսի գրքեր, այնպիսի գըր-
քեր: Դէ որ նրանք այսպիսի սե օրին էլ
աղամիրդուն չը համեն, նրա ցաւին դար-
ման չ'անեն, էլ ինչի են հարկաւոր. ախր
Աստծու հրամանով, Նրա սուրբ կամքով գը-
րուած բաներ են, Աստծու խօսքը կայ նրանց
մէջ: Այս մտքերը մի վայրկենում անցան
նունուֆարի գլխով, երբ թամամը խօ-
սում էր:

— Տիրացուն ինչ անի, ինձ թաղես, կըրկ-
նեց թամամը, երբ մօտեցան ծառին.— գիրն
ինչ անի, գրքերն ինչ անեն, թաղ Աստուած
հասնի. Ժամանակն է փուշ, ժամանակն է
վատ, տիրացուն որ ջուրն ընկնի:

Նունուֆարը կանգ առաւ սառած, աշ-
քերը խորհրդաւոր ծառին յառած, նա կար-
ծես էլ չէր լսում:

— Ինչի քար կտրեցիր, նունուֆար քու-
րիկ:

— Զեռքերս երկնքից գետնից կտրուեց,
քուրիկ. թէ ձեր օջաղից էլ փրկութիւն չը
կայ, թէ այն հաստ-հաստ գրքերն էլ բան
չեն ասում, թէ նրանց մէջ էլ ճարշգար-
ման չը կայ, ապա էլ ես ուր գնամ, որ ջուրն
ընկնեմ, որ քարին տամ գլուխս, ում ասեմ...

Նրա ձայնը խղուեց, խօսքը մնաց կիսատ, աչքերը ծածկեց գողնոցով ու հեկեկաց։
— Քուրիկ, լալով ճար չի լինի, այստեղ նայիր, մէկ տես։

Նունուֆարը աչքերը սրբեց ու նայեց։
Հարևան կտրում կանդնած էր Շիրինենց հարսը, չքնաղ Սառան։ Այնտեղ կտրանը ցուրեն էր փոած, և ջահիլ կինը կանդնած՝ պահում ճնճղուկներից, իր ձեռքի երկայն ձողը անդադար շարժում, վերև ներքեւ էր անում աներես թռչուններին հալածելու համար։ Նա չէր նկատում, որ իրան նայող կար, իր միայնութիւնից օգտուելով երեսի քօղլ յետ էր տարել և ագահաբար նայում էր հեռուն, դէպի Գայլատուայ լիճը, դէպի Սինակայ սարերը։ Նա կին չէր, այլ մի հրեշտակ, հարաւի մի փարթամ վարդ, որ գարնանային շողազարդ առաւօտին վթթել էր բուրաշատ վարդենու վրայ։ Սև երկայն մազերը բազմաթիւ հիւսերով փռուել էին գեղեցիկ թիկունքին, որի միայն մի մասն էր երեռում կարմիր քօղլ տակից։ այտերը կարմիր էին, ինչպէս նուան ջուրը, որ մատով գիպչիր, արիւն կը ցայտ էր. երկար արտեանունքները հովանի էին անում սև աչքերի վրայ. հասակը բարձր էր

ու ճկուն, ինչպէս մի մատաղ կաղնի։ Նա մի դիւթիչ արարած էր, որ բարձր կտրին, աշխարհից վեր կանգնած էր, ինչպէս մի յաւերժահարս և իր քնքոյշ կանացիութեան հմայքը սփռել էր չորս կողմը։

Նունուֆարը հիացած՝ նայում էր այդգեղեցիկ արարածին և ոչինչ չէր հասկանում իր խօսակցի վարմունքից։ Նա վաղուց էր լսել Շիրինենց հարսի՝ Սառայի գեղեցկութեան մասին, գեռ հարսանիքից առաջ խօսում էին, թէ Շիրինենք Բայազէդից մի աննման հարս են բերելու, բայց այժմ ինչ կապ կարող էր լինել նրա գեղեցկութեան և իր ծով ցաւի մէջ, թամամն ինչո՞ւ է ցոյց տալիս Սառային։

— Սրան սիրողը կը խենթանայ, ապա ինչ կը լինի, ասաց Թամամը։

— Ո՞վ է սիրել։

— Ո՞վ է սիրել... Թամամը դէմքը մօտեցրեց հարևանուհու գէմքին և աչքերի մէջ նայելով իր խօրաթափանց նայուածքով։ ասաց փափսուկով ու խեղդուած ձայնով։

— Ասօն...

— Անւս, սնւս, Թամամ, որդուդ արեին

սում, ինչ ասիր, իմ տղան ուրիշին է սիւրում, այն էլ մարդով կնի՞կ:

— Հա, նունուֆար քուրիկ, ապա դու չը գիտես, մարդով կնիկ, հէնց էս թառւլանին: Սար ու ձոր ընկնելուց առաջ ես տեսայ, Ասօն մեր փողոցումն էր թափառում ողջ գիշերներ: Ինչ աչքով տալ, ինչ բան, այ էս կտրան ջուխտ աչքերն են կպել նրան, էս ջուխտ բոցերն են նրա հոգին կը բակ գցել, սիրով գարդով լցրել: Ես էլի շատ բաներ եմ տեսել, էլի շատ բաներ գիտեմ, լուռ էի, ասացի մարդ է, ջահիլ է, կ'անցնի, բազդդ սե էր, բանն էսպէս եղաւ:

Նունուֆարը շարունակում էր նայել կը տրին: Ուսուան այնտեղ էր, հարուածն այնտեղից եկաւ, այն բարձր կտրից, այն սիրուն կանացի պատկերից. ապա կամաց կամաց նա թուլացաւ, երերաց և կանգնած տեղում՝ նստեց մէջքը տուած փշտափ ծառին:

— Մի քիչ ջուր:

Թամամը ջուր բերեց, պառաւը խմեց մի քանի կում, նայեց վեր, փշտափ ծառին, նայեց նրա տակ շարած դրբերին: Եւ այս սուրբ փայրերին այսքան մօտիկ, այս խորհրդաւոր դրբերից մի քանի քայլ միայն հեռու

կատարուել է այնքան մեղսաւոր գործ, մի տղամարդ, մի նշանուած տղամարդ սիրել է ուսիշի կնկան, հարազատ կնկան, որովհետեւ նրա այտերն աւելի կարմիր են, քան իր նշանածինը, որովհետեւ աչքերն աւելի մեծ են, հասակն աւելի բարձր է, մազերն աւելի երկար:

— Թամամը բաջի, տիրացուն... ախր նա ինչ ասաց... ապա էս գլքերը... էս ծառը... սուրբ բաները...

Թամամը լուռ էր:

— Քանդուես, աշխարհ, մումուսում էր նունուֆարը՝ ծնկներին տալով. Սոդում Գումոր գառնաս, Ասօն խալիս հարսն է սիրում, նրա համար է չոլերն ընկել, ինչ կ'ասեն, որ լոեն, ինչ կ'ասեն, վայ սեն ինձ տանի:

«Գարդը լաւ է, քանց ամօթը», այժմ միայն նա հասկացաւ իր որդու այս խորհրդաւոր խօսքերը, հասկացաւ, թէ ինչո՞ւ նա դերեկով այս կողմերից չի անցնում, իսկ գիշերները այստեղ է լուսացնում:

— Հա, գարդը լաւ է, քանց ամօթը:

Նունուֆարը ոտքի կանգնեց ջարդուած ու սգաւոր, գնումէր դէպի տուն: Նա շտապով անցաւ Շիրինենց փողոցից, կտրանը

Հը նայեց, որ չը տեսնի Սառային, իր հոգեւ հան հրեշտակին. շտապով, յանցաւորի պէս անցաւ գիւղամիջից, նրան թւում էր, որտեղ որ է հազար կողմից հազար բերան կը պոռան ու կ'ասեն. «ամօթ, նունուֆար, աւմօթ, տղադ մարդով կնիկ է սիրել, տղադ նշանածը թողնում է, ամօթ»։ Եւ նունուֆարը համարեա փախչում էր՝ իր ամօթը սեւ փական յարկի տակ թագցնելու։ Դարդը մեծ էր, և այդ դարդին մի ճար էր պէտք։

IIV

Այն ժամանակ, երբ մայրը սրբերի, դրբացների գուռն էր մաշում ու լացով լուսացնում գիշերները, երբ նա անդադար մը տածում էր մի ճար, մի հնար գտնել իր որդու դարդին և իրազեկ սարսափելի դադունիքին, դողում էր նրա բոլոր հետեանքների մասին մտածելիս, Ասօն՝ մոայլ ու անհանդիստ ինչպէս միշտ, ապրում էր Գապէի ջրաղացում։ Ծերունին նրան նպատակով պահեց իր մօտ, նա փորձուած մարդ էր և գիտէր, թէ ինչ ծանր է դարդոտ, յուսաւ հատ մարդուն մենակ լինել. ով գիտէ, դըլ-

խին ինչ չար կարող է բերել, մտածում էր նա, ջահէլի սիրող մեծ ցաւ տանել չի կարող, փուխը է և կը փշուի, սար կայ, որի կատարից հեշտ է նետուել անդունդը, լիճ կայ, որի տակ հազար գարդեր թաղել կարելի է։ Նա լաւ յիշում է, թէ այն սարսափելի գէպից յետոյ ինքը քանի՛քանի անգամ վորձեց վերջ տալ իր կեանքին, և միայն հօր և ընկերների, մանաւանդ Ասօն հըսկողութիւնը կարողացաւ նրան արգելել իր խելագար քայլն անելու։ Գապէն մտածում էր կամաց կամաց Ասօնն սովորեցնել աշխատանքի, ձեռքը տաքացնել. ցերեկները նա Ասօնն մերժ ուղարկում էր ջրի ամբարդակները գիտելու, մերժ սաւաղն ամրացնելու, մերժ նաւի առաջը մաքրելու, իսկ գիշերները ջրաղացի քարերի, չախչակի և նաւի ջրերի միակերպ աղմուկի տակ նա պատմում էր վշտոտ երիտասարդին հազար ու մի պատմութիւններ, հազար ու մի արկածներ, որոնք անցել էին իր ծեր գլխով. և գիտէր, շատ բան գիտէր ձերունի Գապէն աշխարհից, կեանքից, սրբերից, մարդկանց սրտերից։ Եւ Ասօն լուռմ էր լուռ ու մտածութ նայելով մի կէտի։

— Յիսուն երկու տարի էս ջրաղացումն եմ, որդի, ասում էր գիշերը Գոպէն, յիսուն երկու, ինչքան խէր ու շառ եմ տեսել, էս ճերմակ մազերից շատ: Որքան ջուր է անցել էս ջրտունի տակից, որքան պտոյտ է արել էս քարը, և նրանց հետ անցել է նաև իմ կեանքը, մի կորած, անօգուտ կեանք: Աչքս քո վրայ է, որդի, դու հօ գիտես, որ աշխարհում բացի քեզանից ոչ ոք չունիմ: Տուն ընտանիքի տէր եղիր և թռղ ինձանից յետոյ էլի ջուրը հոսի ջրտունից, էլի էս քարը պտոյտ դայ: Գիշերներ եմ ունեցել էլ, անքուն, սարսափի գիշերներ: Ուռիները քամիների հետ գրսում փսփսում էին՝ օրօրուելով խաւարի մէջ, և մի բու կար, մի անողորմ բայզուշ, գալիս էր նստում հէնց ջրաղացի յետեի մեծ ուռենու վրայ և՝ վրւ վրւ... մազերս էին դիզանում: Եւ մի գիշեր ճիշտ այսպէս նստած մտածում էի սև բաներ, նայում էի քարին ու չախչակին, և քունս չէր տանում: Գրսում քամին խաղում էր ուռիների հետ, և բայզուշը վույշույ առնում: Մէկ էլ՝ թրը՝ լսկի... դուռս թակեցին: Վեր թռայ տեղիցս, «՞վ է», ձայն տուի. պատասխան չը կայ. «՞վ է». գարձեալ պատաս-

խան չը կայ, բայց դուռը թակում են: Բայց չ'արի, մնացի կանգնած: Մէկ էլ դուռը արխ կալով բացուեց, տեսայ սպիտակ չարսաւի մէջ փաթաթուած մի կին, մի սարսափելի բան, որ ներս մտաւ, կանգնեց, ինձ նայեց վրշտոտ աչքերով: Նա էր, իմ նշանածը: Լեզուս չորացաւ, մազերս գիզացան, երեսիս վրայ ընկայ ու մնացել էի այնպէս մինչեւ լուսաբաց: Այսպէս էր, որդի, առաջին տարիները իր խեղդուելուց յետոյ նա ինձ հանգիստ չէր տալիս, գալիս էր գիշերները դուռս թակում, կամ յրտունի մէջ հեծեծում էր ջրերի հետ, ես դիւահարի պէս էի: Բայզուշն էլ հօ իր աեզումն էր ամեն գիշեր վճռվու անում: Ճարս կորած, մի օր հնար գտայ, անիծած թռչունին սպանեցի ու գիտակը տուի ջրերի բերանը, բայց էլի նա եկաւ, էլի հեծեծում էր ուռիների և ջրերի հետ: Փախայ ջրաղացից, չուկրն ընկայ քեզ պէս, որբերի դուռը չուցի, էլի փրկողը Մըրկի Սուրբն եղաւ, մեռնեմ նրա զօրութեանը:

— Մըրկի Սուրբը այդպէս հզօր է:

— Օօ, շատ է հզօր, որդի, շատ է զօրաւոր:

— Էն սարի մեծ խաչքարը:

— Հայ, Էն սարի մեծ խաչքարը, որի ծայւ
ըւն էլ կոտրուած է:

— Ինչու է կոտրուած, Գսպէ ամի, ով է
կոտրել, ախր սուրբ բան է, և ինչու է նա
սարի կատարին:

— Երկար պատմութիւն է այդ, որդի,
բայց լսիր պատմեմ: Դէ գուք ջահիլներդ էլ
այդպէս բաների շատ ականջ չէք դնում: Այն
խաչքարը երկար ժամանակ անտէր-անտիրա-
կան ընկած էր գիւղի առաջի ձորի մէջ,
որտեղից աղբիւրն է հոսում: Մի օր թան-
դուրակցի մի քիւրդ անցնելիս՝ տեսնում է
խաչքարը ու մոտածում, լաւ տաշած քար է,
արի գլուխը պոկեմ, տանեմ սեանքար շի-
նեմ: ասելն ու անելը մէկ է լինում: Դէ էդ
անօրէնների համար ինչ կայ, խաչը հօ նրանց
համար սուրբ չէ: Զարդում է խաչքարի վերի
մասը, շալակում է ու ճանապարհ ընկնում
տուն: Ճեղ համելով՝ կնիկ, ասում է, արի
տես ինչ սեան քար եմ բերել, բռնիր, մէջ-
քիցս իջեցնեմ: Կինը մօտենում է, բռնում,
քաշում, բայց քարը պոկ չի գալիս, հայ դէս,
հայ դէս, քարը կպած է մէջքին: Քրդի լե-
զուն բռնում է երկիւղից, էլ բան ասել չի
կարողանում կնկան. բայց մոտածում է, այ-

հայ, ասում է մոքում, կայ չը կայ էս սուրբ
քար էր, ես կոտրեցի, պատիժն ստացայ. և
իսկոյն յետ է գալիս քարը մէջքին, հաս-
նում է խաչքարին, ընկնում է երեսի վրայ,
լալիս, աղօթում, Էն սհաթին քարը մէջքից
ընկնում է ցած: Քիւրդը թողնում է գնում,
բայց էլ լեզուն չի բացւում, մնում է համր
մինչև մահ: Հայ քրիստոնեաներն իմանում
են, գալիս խաչը պատով, փառքով առ-
նում, տանում են ժամ ու այնտեղ պահում:
Մարդ չի իմանում, թէ գա ինչ սուրբ է,
մինչև աշխարհ է գալիս մի սուրբ մարդ, մի
գնաւոր: Ահա այս սուրբը մի անդամեկե-
ղեցի է գալիս լալով, գոռալով, մազերը փե-
տելով. «Էս ինչ ենք արել, ասում է, սուրբն
եկաւ երազիս ու յայտնեց, թէ իմ տեղն
այստեղ չէ, այլ էն սարի կատարն է, Էն
բարձր տեղը, որովհետեւ ես Մրրկի սուրբն
եմ, իմ տեղը բաց ու արձակ պիտի լինի,
ինչպէս արձակ է մրրկի տեղը երկնքում»:
Քրիստոնեաները ահով-գողով վերցնում են
սուրբ խաչքարը և մեծ գժուարութեամբ
բարձրացնում են սարի ամենաբարձր տեղը
անկելու: Այնտեղ սարի կատարին տեսնում
են նստած մի մեծ լայնաթե արծիւ. թըու-

Հունը տեսնում է եկողներին, բայց չի փախ-
չում, այլ սկսում է կտուցով ու ճանկերով
գետինը փորել՝ ասես խաչքարին տեղ պատ-
րաստելու համար։ Մարդիկ կանգնում են և
զարմացած նայում։ Իսկ արծիւը փորում է
հա փորում, ապա յանկարծ թափ է առ-
նում և վեր սրբանում, ամպերի մէջ պտոյտ-
ներ անում հէնց այն լերան կատարի վրայ։
Մարդիկ տնկում են խաչքարը, հաղիւ մի
փոքր հեռանում են, որ արծիւը ցած է սլա-
նում ամպերի միջից և նստում է խաչքարի
վրայ։ Ամենքը հասկանում են, որ դա Աստվա-
ծու հրամանով եղած բան է, որ այդ թըռ-
չունը եկել էր ցոյց տալու խաչքարի տեղը։
Այսպէս է եղել, որդի, որ խաչքարը բարձ-
րացել է այն սարի կատարը։

—Ապա ինչո՞ւ է նա մըրկի սուրբ, գու-
պէս ամի, ինչ գործ ունի սուրբը մըրկի հետ-
—Հէ որդի, դեռ ջահիլ ես: Մեր աշ-
խարհը հօ մըրկի, վոթորկի աշխարհ է եղել
միշտ, մըրկի երկնքից, մըրկի դետնքից, մերթ
մարդկանց երեսից, մերթ Աստուծոյ կամ-
քով. ինչե՞ր եմ տեսել հէնց իմ կեանքում,
ցաւե՞ր, ցաւե՞ր, իսկ մեր աշխարհի ամեն մի
ցաւը փոքրիկ քամու պէս չի եղել, այլ տնա-

քանդ մըրկիից Շատ հին ժամանակ, որդին,
մեղանից շատ տարիներ առաջ այս լեռնե-
րում մի խուլ այրի մէջ ապրում էր մի ծե-
րունի ճգնաւոր, մի սուրբ, անարատ, առ-
տուծապաշտ մարդ, որ գիշեր ու ցերեկ
ազօթում էր աշխարհի համար։ Մի օր մեր
աշխարհի վրայ զարկեց մրրիկը. մեր լեռնե-
րը ողջ ծածկուեցին անօրէններով, աւազակ-
ներով, մարդակերպ գաղաններով։ Հայ-քրիս-
տոնեան ոտի տակ գնաց, ճիլուեց ու լո-
ղում էր արեան մէջ. էլ սրբութիւն, օրէնք,
պատիւ, հաւատ չը մնաց. Ուղիղ մէջքերը ողջ
ծոռւեցին ծանր բեռի տակ, մարմինների ոս-
կորները ցաւով ճարճատեցին, հառաչանք-
ներն ու ողբերը երկինք բարձրացան, տուն,
բնակութիւն աւերակ դարձան, մենաւոր փա-
պարները, սարերի կատարները, խուլ ծը-
մակներն ու ձորերը, լեռների բոլոր այրերը
լցուեցին փախստականներով։ Նրանց յետեւից
հասան անօրէնները հազարներով, կուտակ-
հասան անօրէնները հազարներով, կուտակ-
կուտակ գիտակները գիտուեցին, սար ու ձոր
տնկաց նրանց ոճիրներից, ծառերը սդւորան
իրանց ծծած արիւնից, գետերն ու աղբիւր-
ները կուտ—կարմիր կտրեցին, և գլորում էին
արեան կոհակներ։ Երկիրը պղծուեց. ճգնա-

ւորը իր սուրբ աղօթքների համար էլ տեղ
չուներ, նա դուրս եկաւ այրից, տեսաւ թէ ինչ
է կատարւում իր շուրջը, լսեց հնչուող հառա-
շանքները, աչքով տեսաւ իր ոտքերի տակ
փռուած շարանշարան դիակները, հեկեկաց,
լաց եղաւ սրտի խորքերից, մոխիր ցանեց դրւ-
խին, ապա հեռացաւ արիւնոտ տեղերից,
բարձրացաւ էլ աւելի վեր՝ դէպի լեռները, մի
ահագին ժայռ գլորեց, մի հատիկ մուրճ ճա-
րեց, մենամենակ տաշեց, տաշեց և մի ահա-
գին խաչքար պատրաստեց ու տնկեց այն-
տեղ, ուր անօրէնների պիղծ ոտքերը դեռ
էին հասել: «Այժմքեզ աւելի մօտ եմ, եր-
կինք, ճաց նա. — թէ վարից չը լսեցիր իմ
աղօթքը, դոնէ այստեղից լսիր, տես ինչ է
կատարւում իմ հօտի հետ»: Եւ վազեցին ե-
կան նրա մօտ բոլոր կենդանի մնացածները,
եկան ու թափուեցին խաչի պատուանդանի
տակ՝ ինչպէս մաղալ տուած ոչխարներ: Ծե-
րունի ճգնաւորը նայեց այդ ողորմելի հա-
լածականներին, սիրաը ցաւով լցուեց, կա-
խուեց խաչքարի թեերից և ուխտեց մնալ
աղօթքը շրթունքին, գիշեր թէ ցերեկ, մին-
չե երկինքը աղատէ աշխարհը այդ արիւ-
նոտ միրկից, մինչե իր հօտի մնացած մա-

որ փրկուի: Եւ աղօթում էր նա երկար-եր-
կար աշխարհի համար, իր հօտի համար, հայ
քրիստոնէի համար, իսկ բազմութիւնը նրա
սուքերի տակ աղաղակում ու լալիս էր: Եր-
կինքն այդ էլ չը լսեց, երեխ մեղքերը շատ
էին մեծ, անօրէնները այնտեղ էլ հասան,
բռնեցին բոլորին, մարդ, կին, երեխայ և
մեկիկ-մեկիկ ցած գլորեցին ժայռի կատա-
րից, իսկ ճգնաւորին էլ խաչի տակ սպանեցին
և անթաղ թողեցին: Թուչունները եկան պը-
տոյտ-պտոյտ արին նրա դիակի շուրջը, չը
կերան. գաղաններն եկան չորս կողմը շարուե-
ցին, չը կերան, քամինները զով փչեցին, սուրբ
գիակը մնաց անջնաս երկար օրեր, շաբաթ-
ներ, և գիշերները հեռուից սարի կատա-
րին երևում էր լոյսի մի դունդ, որ ցած-
րանում, բարձրանում էր նրա վրայ: Այնքան
մնաց այսպէս, մինչև որ երկիրը խաղա-
ղուեց, և այն ժամանակ նրա մարմինը յան-
կարծ անյայտացաւ, ասում են, որ երկինք
բարձրացաւ:

Եւ այնուհետև ամեն անդամ մրրկոտ
գիշերներին, երբ մեծ ծառերը ճոնչում են
քամու թափի տակ, լեռներն իրանց այրերով
տնկում են բնութեան ցաւից, երբ երկիրը

դողում է սարսափով բռնուած, կամ արիւնի փոթորիկ է զարկում մեր աշխարհի վըրայ, այն ժամանակ սուրբը սպիտակ զգեստներով յայտնուամ է մուժ ամպերի վրայ, սլանում է երկնքով, գալիս, վար է իջնում այն լեռան կատարին, ուր խաչքարն է Այնտեղ նա կախուում է խաչքարի թեւերից, էլի լավիս է աշխարհի համար, աղերսում է, որ մրիկն անցնի, որ խաղաղութիւնը վերջապէս թագաւորի երկրի վրայ։

Ահա, որդի, այսպէս հզօր է Մըրկի սուրբը, մեռնեմ նրա զօրութեանը, վերջացրեց Գսպէն՝ երկիւղածութեամբ խաչակընքելով։

Ասօն լսեց այդ պատմութիւնը հետաքըրբութեամբ, յափշտակուած։ Գսպէն վերջացրեց, բայց նա երկար ժամանակ լուռ էր, նայում էր ջրաղացի քարին, և կարծես տարուած էր ծանր մտածմունքով։

— Գսպէ ամի, դու ինչքան բան դիտես. դու ասում ես, որ արիւնը երկնքին դուր է գալիս։

— Ե՞ս... ես չեմ ասում այդ, մեղայ Աստծու, ես ինչպէս կ'ասեմ։

— Հապա ասացիր, քանի սուրբը կեն-

դանի էր, երկինքը նրա ազօթքը չէր լսում, հէնց որ սպանեցին, արիւնը թափուեց, այնուհետեւ լսում է. որեմն երկինքն սպասում էր, որ անմեղին սպանեն...

Հարցը ծանր էր, Գսպէն կարկամուեց, նա երբէք այդպիսի բան չէր մտածել, բայց տեսաւ, որ խօսակիցն իրաւունք ունի այդպիսի եղրակացութիւն հանելու իր պատմածից. սակայն նա համոզուած էր, որ երկինքը արիւն չի սիրում, ախր նա ինչպէս կարող էր արիւն, անմեղ, սուրբ արիւն սիրել, այդպիսի կարծիքի դէմ նրա հոգին ըմբոստանում էր։

— Զէ, չէ, ես այդ չեմ ասում, ճշաց նա յանցաւորի յուսահատ աղաղակով. երկինքը... դէ ես ինչ իմանամ, ես մի մեղաւոր մահականացու եմ, որդի, ինչպէս հասկանամ երկնքի բանը, դէ սուրբը որ սպանում է, հալլաթ երկինքն է ուզում, ուրիշ ովկ կարող է ուզել, սպանում է, դէ արիւնը ի հարկէ թափում է, արդար արիւն է, ես ինչ իմանամ. սրբերի ազօթքն էլ, բարեխօսութիւնն էլ Աստուած լսում է...

«Վուշվու, վուշվու...» բուի ձայնը հընչուեց դրսում. Գսպէն լոեց, սպրտնեց ու

Նայեց Ասօին. Երկսով էր առ ժամանակ լուռ
մնացին:

— Ասօ, սա ի՞նչ բան է... ասաց Գոպէն
դողալով.—այն չի կարող լինել, այնպէս չէ,
Ասօ, ես նրան սպանել եմ:

— Ո՞ւմը:

— Այն բուխն, հին բայդուշին, որ...

— Վուշվու, վուշվու:

— Օօ, ճիշտ այսպէս էր, Ասօ, ճիշտ այս-
պէս. ի՞նչ է լինելու:

— Ոչինչ, ամի, ի՞նչ կարող է լինել. այն
սպանել ես, այս մէկը նոր է յայտնուում,
թռչուն է էլի:

— Թռչուն է է:

— Հա, ուրիշ ի՞նչ:

— Զը գիտեմ, բայդուշը չեմ սկրում,
բանից չեմ վախենում, բայց այդ բայդուշը...
թող Աստուած ինձ ազատի նրանից... դու-
ռը լաւ փակել ես, Ասօ:

— Փակել եմ, ամի, պինդ եմ փակել:

Գոպէն չէր հանդստանում և սարսա-
փած հայեցքը դռնից չէր հեռացնում, իսկ
բուն դրսում շարունակում էր վուշվու կան-
չել, և ուռեները փափում էին քամիների
հետ։ Ասօն փաղուց քնել էր արդէն. փառը

դառնում էր հա դառնում, ջրերը ջրտան
մէջ ազմկում ու վշրում էին, չաշխակը մի-
ակերպ չաշխացնում էր, այդ բոլորը միա-
խառնուելով կազմում էին մի նիրհեցնող երդ
գիշերային ընդհանուր լուսութեան մէջ, բայց
Գոպէն աչք փակել չէր կարողանում, նրան
թռում էր, թէ դուռը հիմայ կը բացուի ինքն
իրան, և շեմքի վրայ կը յայտնուի հին օրերի
սպիտակ ուրուականը։ Անցաւ այդ անախորժ-
գիշերը, լուսաբացը մօտ էր, Գոպէն նայեց
պատի փոքրիկ անցքից, տեսաւ լուսոյ ա-
ռաջին շառաւիղները, Ասօին քնած թողեց և
գուրս եկաւ, ջրաղացի յետեն անցաւ, նա
տղում էր տեսնել այս չարագուշակ բուխն,
իր աչքով տեսնել համոզուելու համար, թէ
նոյնը չէ, որ ինքն սպանել է շատ տարի
առաջ։ Թափառեց ուռիների տակ, ծեր աշ-
քերով մէկիկ-մէկիկ նայեց ծառերի ճիւղե-
րին, ոչինչ չը կար, բուն անյայտացել էր։

VIII

Վատ, մի շատ վատ գիշեր էր, որ անց-
կացրեց Գոպէն։ Լոյսը, արևի ծաղումը նրա
համար այս առաւօտ առանձնապէս գրաւիչ

Եր: Նա նստած էր ջրաղացի դրանը թմբի վրայ, աղահութեամբ շնչում էր վաղորդեան թարմ օդը և կարծես միաժամանակ վայեւ լում էր լոյսը, շողողուն, կենդանարար լոյսը, որ ցրում է այնքան սև մտքեր, հալածում այնքան մուայլ ստուերներ: Գսպէն սկսեց նայել հեռուն՝ իմանալու համար, թէ ոչ ոք չի գալիս գիւղից. նա սաստիկ ուղում էր, Ասօից բացի, մի նոր մարդու հետ զբուցել այսօր: Հեռու ճանապարհի վրայ մի քանի ստուերներ շարժուեցին, Գսպէն ոտի կանդնեց, ձեռքով հովանի արեց ծեր աչքերի վրայ և նայում էր: Եկողները ցորեն բերողներ չեին երևում, որովհետեւ ոչ սայլ ունէին և ոչ բարձած գրաստներ, մի խումբ ձիաւորներ էին, որ գալիս էին սրարշաւ: Խումբը մօտենում էր. իսկ Գսպէն շարունակում էր նայել ուշադրութեամբ, հետաքրքրուած: Զիաւորները շատ մօտեցան, նրանք հեռու չեն ջրաղացից: Առջեկց գնում է մի բարձրահասակ, ալեզարդ ծերունի, նրա տակ կատաղաբար խաղում է մի սպիտակ ձի. կեռ սուրը ձախ կողքին, թիկունքին հրացան, կապոյտ մահուգից կարծ ջուբան երկու կողմից բացուած առաւօտեան հովի առաջ, և երկար,

սպիտակ միրուքը, որ վէհօրէն հողմահարւում է ձիու քայլուածքի հետ, այս բոլորը նրան նմանեցնում են մի լեռնական իշխանի, որ իր հետեօրդներով որսի է դուրս եկել: Ծերունու կողքից գնումէ մի պատանի մօտասնեվեց տարեկան, բարեձև ու թիկնաւէտ, լայնագէմ ու սևաչեայ, առաջինի որդին լինի կարծես և զինակիրը միաժամանակ: Այս զոյգի յետևից խառն ի խուռն գալիս են վեց-եօթ ուրիշ ձիաւորներ, նոյնպէս զինուած, նոյնպէս առնացի շարժումներով: Երեսում էր՝ նրանք հեռուվից էին գալիս, ձիերը յոզնած էին, թամբերի շուրջը ժապաւէնի ձեռով ինչպէս և կրծքերի վրայ նրանց մորթին ծածկուած էր քրածինքով: Խումբը հասաւ ջրաղացին և կանգ առաւ:

— Բարի լոյս, ծերունի, բացականչեց դլսաւորը, կանգնեցնելով իր փրփրած ձին:

— Աստուծոյ բարին, բարեկամներ:

— Հիւր կ'ուղես:

— Հիւրն Ասծուն է:

— Սոված ենք և պահանջող չենք, սուրը Կարապետի ուխտաւորներ ենք, ծերունի. հեռու տեղից ենք գալիս, Դըղլը-բաշի երկրից, դէ ձեր իւշ-Քիլիոէն էլ կը համբուրենք,

Եթէ գլուխներս ուսներիս մնայ. ձեր երկիրը
հարամիների բուն է, քանի փորձանքից ա-
ղատուեցինք, ովստաւորներ ենք, էլի հան-
դիստ չեն թողնում:

—Ով և լինիք, բարի էք եկել, Աստու-
ած ովստաներդ ընդունելի անի:

—Մեր ովստը...

—Հա, ձեր ովստը, ամենքի ուխտը, բու-
լոր հայ քրիստոնեաների ովստը. ցած իշեք.
Ես էլ ջրաղաց ունիմ մի աչքանի, նաւն էլ է
մեկ, բայց ջուրը շատ է, փառը դառնում է
ու լաւ է դառնում, թափով, աղմուկով, լը-
սում էք ձայնը. երեսուն կուռիկ ալիւրից՝ մեկ
կուռիկն իմն է, քարի չորս կողմի փոշին էլ
հետը. թոնիր էլ կայ, կրակ էլ կայ, ծեր աշ-
քերս էլ գեռ բան տեսնում են, բաղարչն ա-
ռատ կանեմ:

—Ցած իշեք, հրամայեց դվիստորը:

Զիաւորներն իջան, իրարից կապեցին
ձիերը և դէպի ջրաղացն առաջացան: Ծե-
րունին ներս մտաւ, զարթեցրեց Ասօին, խմոր
հունցեց, թոնիրը վառեց և թխել սկսեց:
Կոլոր, փափլիկ բաղարչները մէկիկ-մէկիկ
հանում էր, թոնիրի շուրջը փոռում: Ապա նա
վերկացաւ, բերեց մի ահագին մաթը աթ,

պատի դարեկից ցած բերեց մի մեծ կտոր
կարագ, դրեց ամանի մէջ, տաք բաղարչնե-
րը կոտորեց և կարագի վրայ ածեց, իւղը մի
վայրկեանում հալուեց և հացի կտորների
հետ շաղախուեց.

—«Ճմուռը» պատաստ է, բացականչեց
Գոպէն՝ դառնալով դէպի ճանապարհորդնե-
րը: Վերջիններս շուրջանակի բազմեցին մեծ
մաթրաթի առաջ և ուտել սկսեցին: Ծերու-
նին նստած հեռու՝ նայում էր նրանց դէմ-
քերին. Ասօն իր անկիւնում նստած՝ լուսմ
էր, բայց նոյնպէս ուշադրութեամբ դիտում
էր: Լսում էր միայն չախչակի չխչսկոցը և
ջրերի միակերպ շառացը ջրաղացի տակից:

Մաթրաթը շուտով դատարկուեց:

—Շէն մնա ջրաղացդ, ծերուկ, ասաց
խմբապետը՝ սրբելով բեխերն ու իւղոտ մատ-
ները:

—Աստուած ձեր ովստն ընդունելի անի:

—Մեր ովստը, հա, թէ ողջառողջ կա-
րողանանք ս. կարապետի դուռը թակել:

—Ովստաւորի վրայ Աստուածու հովա-
նին կայ:

—Կայ, բայց երէկքիչ մնաց արեան բան
անէինք:

—Անպիտանները կը տանէին, թէ չը
հասնէինք, վրայ բերեց խմբից մի ուրիշը.
նամարդ չներ, երեխայ էին գտել:

—Անպատճառ կը տանէին, շարունա-
կեց խմբապետը, բայց ի՞նչպէս փախան, նը-
րանք հաստատ հաւասացած էին, թէ կ'սպա-
նենք, և երեխ շատ ուրախացան, որ այդ-
պէս աժան պրծան:

—Ողորմելինները պիտի կարծեն, թէ
գնդակները վրիպեցին, շարունակեց առա-
ջն ձայնը. թող գնան մատաղ լինին ո. կա-
րապետին, որի սիրուն չը կամեցանք արիւն
թափել և դիտմամբ մեր հրացանները գը-
լուխներից բարձր էինք կրակում:

Ծերունին լսում էր ուշադրութեամբ և
զարմացած էր:

—Յարեկամներ, ասաց նա, երեսում է
դուք կուփ էք բոնուել սարերում, դուք հօ-
ուխտաւորներ եք, այդ ինչու այդպէս:

—Ուխտաւոր ենք ի հարկէ, բայց որ էս
երկիրը լիքն է հարամիններով, սար ու քար
դաշն դարձած մարդ են ուտում: Մի փոք-
րիկ երեխայ էր, երեխ ձեր դիւղից, եղներ
էր պահում լճի ափին, մենք հասանք հէնց
այն ժամին, երբ աւաղակների մի խումբ եղ-

ներն առաջ արած տանում էր, իսկ երեխան
կանգնած՝ աղիողորմ լալիս էր:

—Յետոյ, հարցրեց ծերունին հետաքըլ-
քըրուած:

—Դէ յետոյ, ինչ յետոյ, ի հարկէ չը
թողինք, վերջացրեց խմբապետը: Գոպէն մի
փոքր ժամանակ մնաց մտածկոտ, ապա գլ-
ուխն օրօրելով ասաց.

—Է՞հ, էսօր չը տարան, էգուց կը տա-
նեն. մեր բանը դադելն է, նրանցը տանելն
է. ինչ անենք, ճակատագիր է. ինչ որ վերե-
ւից գրուած է, մենք փոխել չենք կարող.
մենք տէր ու տիրական չ'ունենք, իսկ ան-
տէր մարդու ձեռը ծոցը, վիզը ծուռ կը
լինի. մենք խեղճ ենք, շատ խեղճ, անտէ-
լութիւնը մեր ճակատագիրն է:

—Հա, իրաւունք ունիս, ծերուկ, ճա-
կատագիրը ճշմարիտ բան է, աշխարհում մէ-
կը միւսի ճակատագիրն է. տես, այն լիճը՝
ջրվէժին, ջրվէժը՝ այս ջրաղացին, բաղէն՝
լորին, ցինը՝ բաղէին, մենք էլ, գէհ, մենք՝
էլ ճակատագիր ունենք, բայց և ճակատա-
գիր ենք ուրիշների. աշխարհում ճակատներ
քան, որոնց վրայի գիրը կ'ասես մեր ձեռ-
քան, որոնց վրայի գիրը կ'ասես մեր ձեռ-
կով է գրուած և մեր ձեռքով էլ կարող է

յնջուել, այսպէս, ծերուկ, ճակատագրեր շատ
կան աշխարհում, շատ, ինչ կ'ասես...

— Չեմ հասկանում, բարեկամ, ասած գ-
լու չէ, ճակատագիրը երկնքից է գրւում,
Դուք ինչպէս կարող եք ճակատագիր լինել?
— Ի՞նչ կայ չը հասկանալու, մենք ու-
րիշի ճակատագիր ենք դարձեալ երկնքի հը-
րամանով:

— Բայց ում ճակատագիրն եք դուք?
— Նրանց, որոնք ճակատագիր եղան մի
ուրիշի:

— Դարձեալ չեմ հասկանում:

— Չես հասկանում, մի մարդ կար աշ-
խարհում, այն իմ եղբայրն եր, նա էլ եր
մի օր ուխտաւոր այս կողմերում, բայց նը-
րանից այժմ մնացել են մի քանի մատներ,
մէկ էլ այս երեխան՝ նրա որդին. Մուշօ,
ցոյց տուր մատները Մուշօն այն պատանին
էր. նա քանդեց իր զգեստի կոճակները
կրծքի վրայ, այնտեղից դուրս քաշեց մի
փաթթոց, բացեց ծակքերը և ծերունու առջե-
դրեց մի ցուցամատ և մի բութ մատ ու ու-
չորացած, որոնց նայելը դժուար էր:

— Հօրս մատներն են, ասաց պատանին,
նրանք սպանեցին այս կողմերում, մենք

ուստ ենք գնումիմանալու ո. Կարապետից,
թէ ուր է այն ձեռքը, որ կտրեց այս մատ-
ները:

— Մենք մնան ենք գալիս գտնելու նը-
րանց, որոնց ճակատագիրը մենք ենք, շա-
րունակեց խմբապետը: Է՞հ, ծերունի, աշ-
խարհը մի զարմանալի բան է գարձել. երե-
խան դաշտում լալիս է, մի ողջ առողջ մար-
դուց յանկարծ մնում է միայն երկու մատ,
գիշերներն աւելի խաւար են, ձմեռն աւելի
ցուրտ, քամիներն աւելի ուժեղ ու աւերիչ,
մըրիկները յաճախ:

— Հա, մըրիկ, մըրիկ, օֆ, օֆ:

— ... տների կտուրներին բուերը երգ
են ասում, իսկ մեռելները գերեզմաններից
դուրս սողալով՝ վազվզումեն. մահն ու կեան-
քը կարծես իրար են խառնուել, էլ մարդ-
զանազանել չի կարողանում: այ օրինակ, դու-
ինքդ փորձուած մարդ ես, այնքան չար ու
բարի տեսած, կարող ես ասել, այս բոպէին
կենդանի ես, թէ մեռած:

Գոպէն պատասխանի փոխարէն երե-
խայի պէս աչքերը թարթելով՝ բերանը բաց
նայում էր և լսում:

— Դու չես պատասխանում, որովհետեւ

Հես կարող, կեանքը մահից զանազանել այժմ
շատ դժուար է. մենք մեր ճանապարհին
այնքան մարդիկ տեսանք, որոնցից և ոչ մեկը
չը կարողացաւ այս հարցին պատասխանել,
ոչ ոք չը կարողացաւ կեանքը մահից զատել,
այն աստիճան այդ երկուսն այժմ խառնու-
ած են իրար. գերեզմանների վրայ տակա-
ւին շրջողները կասես մեռածներ լինեն,
մինչդեռ, գերեզմանների մէջ պառկածները
դուրս են ընկում և վազվում. ով է կեն-
դանին, ով է մեռածը, ինչպէս հասկանալ,
ինչպէս իմանալ: Ծանր հարց է, այնպէս չէ,
մանաւանդ որ բուերն էլ այնքան վուշվույ
են անում կտուրների վրայ: Մենք էլ գերեզ-
մանների վրայ շրջողներ եղանք, ասացինք՝
գնանք մեծ սրբերին հարցնելու, կենդանի
ենք մենք, թէ մեռած. այսպէս գնում ենք
ո. Կարապետ, մենք ուխտաւորներ ենք: Ե-
լք, զաւակներս, ճանապարհներս երկար է.
շնորհակալ ենք, ծերուկ, ջրաղացդ շէն մնայ:

Պատանին վերստին խնամքով փաթա-
թեց մատները, ինչպէս մի նուիրական նըշ-
խարք ծոցում գրեց, ուխտաւորները վեր կա-
ցան, շնորհակալ եղան և դուրս գալով՝ ձի-
երը նստեցին, առաջ սլացան:

Գսպէն կանգնած էր ջրաղացի գրանք,
երկար նայում էր ճամբորդներին. ապա երբ
ծածկուեցին բլբների յետևում, եկաւ, նըս-
տեց ջրաղացի դրանը թմբի վրայ և խորը
մտածմունքի մէջ լնկղմուեց: Այնքան տարի
նա ջրաղացպան էր, այնքան օտարականներ,
ուխտաւորներ, ճամբորդներ էր տեսել իր
դրանը, խօսել էր շատերի հետ հազար ու
մի բաներ, բայց ոչ ոք այսպիսի բաներ չէր
ասել, ոչ ոք այնպէս չէր շփոթել նրան տա-
րօրինակ հարցերով. «մենք էլ ճակատագիր
ենք». ինչ էին նշանակում այս խօսքերը, ին-
չու համար էին այն մատները, ինչ մարդիկ
էին, ինչեր ասացին սրբերի, բուերի մասին,
մի գուցէ աւազակներ լինեն անիծածները,
երկի, երեկի... մումում էր Գոպէն, երբ նրա
առաջ կանգնեց Ասօն: Ծերունին նրան տես-
նելով՝ զարմացաւ, կարծես նրա գոյութիւնն
անգամ մոռացել էր ջրաղացում; այն աստիւ-
ճան տարուած էր իր մտքերով, անծանօթ
ուխտաւորների գործած տպաւորութիւնն այն
աստիճան շփոթել, խոսվել էր նրա հոգին:
— Գոպէ ամի, հը՛, ինչ կ'ասես:

Ծերունին գլուխը բարձրացրեց և կար-
ճես առանց հասկանալու նայում էր Ասօն:

— ի՞նչ կ'ասես, մննը կենդանի ենք, թէ
մեռած։

Գոպէն շարունակում էր նայել, ապա
գլուխը քաշ գցեց՝ անպատասխան թողնելով
Ասօի հարցը, յետոյ դանդաղովժեամբ դուրս
քաշեց չիբուխը, լցրեց մանրած թիւթիւնով,
վառեց և արագարագ ծիսել սկսեց։ Ծուխը
բարձրանում էր քուլայքուլայ և կարծես իր
հետ տանում էր նաև Գոպէի սև մտքերը։
Լուռ էին։

— Ես միշտ գիտեմ, որ բուի ձայնը լաւ
չէ, ասաց ինքն իրան Գոպէն։

— Ո՞ւմ համար լաւ չէ, մեռածների, թէ
կենդանիների։

Գոպէն դարձեալ նայեց նրան զարմա-
ցած երեխայի պէս։

— Նրանցից մի բան մնաց քեզ մօտ։

Մտածելու հերթն Ասօին էր։ Գոպէն
վերկացաւ, ներս գնաց, ջրաղացի ոտքը բար-
ձըրացրեց, իսկ Ասօն դեռ երկար ժամանակ
նստած թմբի վրայ՝ նայում էր իր ոտների
տակից հոսող ջրերին, լսում էր ջրատան աղ-
մուկը և մտածում էր ճամբորդների և ճա-
կատագրի մասին, ապա նրա մտքերն այլ
ուղղութիւն ընդունեցին, իր սեփական կեան-

քը ներկայացաւ իր աչքին, յիշեց Սառային,
իրան դերով, խենթացնող Սառային, յիշեց
նողերին, այն դժբաղդ, խեղճ աղջկան, յիշեց
մօրը, փոքրիկ նուշիկին, և ինքն էլ չ'իմա-
նալով՝ ինչու, սիրտը կրկին լցուեց, իրան
զգաց խորապէս թշուառ, աւելի թշուառ,
քան երբեկից։

— Երջանի՛կ մարդիկ... Բացականչու-
թիւնը ուխտաւորների մասին էր։

IX

Այն օրն ամբողջ Գոպէն ու Ասօն մի
հատ բառ չը փոխանակեցին իրար հետ.
Գոպէն ջրաղացի թմբի վրայ մնաց, իսկ
Ասօն ջրաղացի յետեւում ուռիների տակ
թափառում էր։ Օտարական ուխտաւորների
խօսակցութիւնը նրա ամբողջ էութիւնը ցըն-
ցել, տակն ու վրայ էր արել, ճակատագիր,
կեանք, մահ, ուխտ, սուրբ այլեւ մի վայր-
կեան նրա գլխից չէին հեռանում։ Եւ ա-
ռաջին անդամ ամիսներից յետոյ այդ բոլո-
րի հետ նաև իր սեփական կեանքը բոլոր
մանրամասնութեամբ դալիս անցնում էր իր
աչքի առաջից։ Ասօն փորփրումէր այդ կեան-

քի մութ խորշերը և զարմանում էր, որ այդ ինքնաքննութիւնը միայն այժմ է կատարում։ Ինչքան մութ բան կար, որ հարկաւոր էր պարզել։

Կեանիքը մահից էլ զանազանել չի լինում, մտածում էր Ասօն. — և ճշմարիտ, կենդանի եմ ես, թէ մեռած. ախր կենդանութիւնը մի բանի նման պիտի լինի, մի բանի հարկաւոր պիտի դայ, ես ումն եմ հարկաւոր, սա ինչ կեանիք է, ինչու թափառում եմ գաշտերում, ինչ ունիմ այս ջրազացում, ինչու չեմ աշխատում այլես, ինչ պատահեց ինձ հետ, որ չար սատանան մըտաւ ինձ... Սառան, Շիրինենց Սառան գեղեցիկ է, շատ գեղեցիկ, բայց ինձ ինչ, նա այնուամենայնիւ Շիրինենց հարսն է, խաչ ու աւետարանով պսակուած. չէ որ շատշատերը գեղեցիկ ձի, եզներ ունին, ում ինչ, ով կը տայ ուրիշին այդ բոլորը։ Եւ Շողերը, ինչ զն աղջիկ, երկու անդամ ուե՛... չէ, մեղք է, գէշ բան է, գեղեցիկն եմ սիրում, միշտ գեղեցիկը փնդրեցի, և այժմ ինչ եմ անում, Տէր Աստուած, գէշ բան եմ գործում, մեղք եմ անում, մեռելի ստուերի պէս թափառում եմ, սար ու ձոր ման եմ ածում

իմ ձանձրալի, անպէտք գոյութիւնը։ Ի՞նչ անեմ, ի՞նչ, որ ջուրն ընկնեմ, երբ սիրում եմ. օ, անիծուած սիրտ, ով դրեց քո մէջ այդ անիրաւ բոցը, որ այրում, փոթոթում է ինձ, սիրտ, սիրտ, մոխիր գառնաս դու։ Ո՞ւր գնալ, ի՞նչ անել, ի՞նչպէս ազատուել այս բոցերից. ծովը նետուեմ, Մըրկի սրբի ոտքից վար գլորուեմ, թէ... Նա յիշեց մօրը, ինչ զն կին... որքան տանջուեց, այսքան դարդ միայն մի կնոջ սրտին, միայն նրա համար, որ նա մայր է, քնքոյշ, սիրող, բարի մայր. Քիչ կան դարդումներ, քիչ կան լացողներ. «Երեխան դաշտում լալիս է, բուերը կտուր ներին վուշվու են կանչում, մեռելները գերեզմաններից դուրս են սողում», այսքանը բաւական չէ։ Նա, այն խեղճ պառաւն ինչու լայ, գէշ բան է, գէշ բան. սիրտ, սիրտ, մոխիր գառնաս դու։

Ասօն նստեց, գլուխը ձեռների մէջ առաւ և դառն-դառն հեկեկաց. նա լալիս էր երկար-երկար, արցունքները թափւում էին, հեծկլտանքը բարձրանում, ապա մի վայր կեան խաղաղում, լրում էր, յետոյ նորէն կուրծքը քանդուում էր, հեկեկոցը սաստկանում, և արցունքները հոսում էին։ Նրա

յաղթ թիկունքը, նրա առնացի ուսերը ցընցում էին խորին հեծկտանքների հետ, և նա ձեռներով տրորում էր կուրծքը՝ կարծես ներսի կրակը մարելու համար:

«Վհւ-վրւ, վհւ-վրւ, վհւ-վրւ... վերըստին լսուեց բուի չարագուշակ վայիւնը. Ասօն ակամայ ցնցուեց, նա յիշեց ուխտաւորի խօսքերը՝ բուերը վուշու են անում կտուրների վրայ, մենք դնում ենք սրբերին հարցնելու, կենդանին ենք, թէ մեռած»: Եւ գնացին, գնացին, մրմնջում էին նրա շրթունքները. ախ, հազար երանի ձեղ, որ կարող էք գնալ, որ հաւատում էք և այն այնպէս խորը, որ մահ աչք առած, անցնում էք հարամիների, մարդասպաների միջով, վաթաթուել էք ձեր հաւատին և գնում էք... ես ուր գնամ, որ սրբի ոտքը, և որը կարող է ինձ մի ճար անել, երբ ինքս հաստատ դիտեմ; որ մեռած եմ, մեռած... Երեխան դաշտում լալիս է, ես մեռած եմ. բուերը վոյշ-վոյշ են անում, ես մեռած եմ: մեռելները գիշերները մոնչում են, ես մեռած եմ, սրանք բոլորը իմ թաղման երդն են ասում, լալիս են, որ ես մեռած եմ: Ապա նա յիշեց Գսպէի սարսափելի պատ-

մութիւնը, յիշեց այն աղջկայ գիակը, նա մի փոքր մնաց մտածման մէջ, Գսպէի հօր և իր հօր վարմունքի մէջ նա նմանութիւն գտաւ, այն տարբերութեամբ միայն, որ նրա հայրը կենդանութեան ժամանակ է որդուն գժբաղդացրել, իսկ իր հայրը մահից յետոյ, չէ որ ինքը հօր վերջին կամքը կտարարեց. սիրալ հօր ուխտ հարցնել կարող էր, ինչու յիմարացաւ, ինչու արեց այդ. նրան ասացին, օ, ամենքը, ամենքը, որ հօր վերջին կամքը չը կտարարող իր ամբողջ կեանքում ինչ գործ բռնի, իսկը տանել չի կարող, և նա գործեց սխալը: Տէր Աստուած, բայց միթէ այդ յանցանքն այնքան ծանր է, որ ամեն բան այնպէս վերջանայ, ինչպէս Գրապէի հետ, մտածում էր նա սարսափով.— միթէ Շողերն էլ... Նա ձեռքով մի անհանգիստ շարժում արեց՝ ասես անախորժ միտքը հեռացնելու համար ու լռեց, ոտքի կանգնեց: Ուռիներն օրօրուում էին նրա գըլ-խի վրայ, հատհատ գեղնած տերեները մի վայրկեան գողդողում, վուփուում էին օդի մէջ, ապա վայր էին ընկնում ու ծածկում ճանապարհը. Ասօն հանդարտութեամբ ու վշտով քայլում էր այդ տերեների վրայ և

մտածում էր սեւ բաներ։ Այժմ նա յիշեց այն դպյակ տերևները, որ մի օր նա իր և Շողեւրի բազգը որոշելու համար առաւ և դցեց գետի մէջ. տերևները պատյառապատյատ արին ու բաժանուեցին. նա կրկին կռացաւ, վերցըրեց երկու բարակ, գեղնած տերևներ, դցեց ջրի երեսին, նայեց, և նրանք փախան իւարից զանազան կողմեր...

Երբ նա յետ եկաւ ջրազայ, ճաշ էր արդէն. կամացուկ ներս մտաւ և մնաց քարացած։ Գոպէն նստած էր պատի տակ՝ ցուրենով լի մի ջոււալի վրայ, աչքերը յառել էր չախչակին և անշարժացել ինչպէս մեռել։ Ալիւրի ճերմակ փոշին հաստ շերտով նստել էր նրա ծեր գլխի ու միրուքի վրայ, բեռնաւորել էր յօնքերն ու արտեւանունքները, խսպառ պատել էր զգեստները. երեսում էր, որ նա վաղուց է այդտեղ նստած առանց մի թեթև շարժում անելու։ Ասօն նայում էր, և նրան թւում էր, թէ իր առաջ մի խորհրդաւոր արարած է նստած, մի ոդի, որ ջրերից դուրս դալով գիտում է, թէ ինչ է կատարւում իրանից վեր, այս աղմկալի ջրազայում։ Ասօն կամացուկ մօտեցաւ, ձեռքը նրա ուսին դրեց։

— Գոպէ ամի, այ Գոպէ ամի։
Ծերունին իր ալրոտ թերթերունքները
դէպի նա դարձրեց, նայում էր և կարծես
ոչինչ չէր հասկանում։

— Հիւանդ ես։

— Զէ, մեռած եմ, նր անք ասացին։

Ասօն մնաց մտածմունքի մէջ. իրանց երկսի հոգեկան վիճակների մէջ սոսկալի նմանութիւն կար։ Լուռ քաշուեց մի կողմ, նստեց քիչ հեռու և ծերունու պէս աչքերը յառեց չախչակին։ Եւ քարը դառնում էր հա դառնում՝ ալիւրը փչելով իր չորս կողմը, ջրտան մէջ, ներքեւում ջրերը վերից վար գահավիժուելով՝ փշուում էին ոռնաւ լով ու հեծեծալով, բուն շարունակում էր գրսում վույշույ անել, իսկ նրանք նստած էին ալիւրով ճերմակած, ինչպէս մարմարէ երկու արձաններ, նստած էին կարծես մի գերագոյն հսկումն կատարելու համար։

Լուռ էին. ժամեր անցան։

Յանկարծվուում մի սայլ ճռնչաց, մի ձայն կանչում էր.

— Գոպէ ամի, այ Գոպէ ամի։

Գոպէն ցնցուեց, աչքերը թարթեց,

Հուրջը նայեց կարծես իմանալու համար,
թէ ուր է ինքը, ինչ ձայն է լսում:
—Գոպէ ամի, ուր ես, չես լսում:
Ծերունին այս անդամ ոտքի կանգնեց,
կամացուկ առաջացաւ դէպի դուռը և դուրս
եկաւ. Շիրինենց Պետօն էր, իր եղբօր հետ
ցորեն էր բերել աղալու:
—Բարի երեկոյ. վահ, անաշէն, ինչու
ձայն չես տալիս, մեռայ կանչելով, ասացի՝
մի բան է պատահել հալեսրին:

—Բարի եկար. չէ, որդի, ծերութիւնը
հանաք չի անում, քարերի գոռգոռոցն էլ
մի կողմից չէր թողնում լսեմ, ինչ անեմ,
բարով դու էլ ծերանաս:

—Ծերանալու ժամանակ կ'ունենամ,
Գոպէ ամի, դու այն ասա, որ էսօր ամբաւ
ըսն աւելել ենք, հաւերին էլ կուտ չը թու-
զինք. էլած չէլածը հաւաքել, քո դուռն
եմ բերել. դէ գարուն է, դիտես էլի, ցու-
րեն չի ճարւում. նորի հոտ ենք առել, կալ
ու կուտը հեռու չէ: Էս մէկ անդամին էլ
մեղ եօլա տար, մինչև տեսնենք՝ Աստուած
ինչ է հասցնում: Հաց շատ ունէինք էէ,
ամա հարսանիքս հացի մէջքը կոտրեց, դէ
մի դեղ կերաւ, հաց կը դիմանայ:

Գոպէն անշարժ կանգնած՝ նայում էր,
թէ ինչպէս Պետօն ջուալները ցած է բե-
րում եղբօր հետ:

—Վահ, ինչ ես քար կտրել մնացել,
ասես ուրախ չես, որ ցորեն եմ բերել, մի
մօտեցիր, տնաշէն, ձեռքդ դցիր, քօմագ արա,
ջուալները ցած բերենք սայլից. հալից ընկէլ
ես, ինչ է:

—Հա, իրաւ ասացիր, Պետօ, իսպառ
հալից ընկած եմ: ծերութիւնը, դէ ինչ
ասեմ, ծերութեան տէրը մեռնի, էլ ոյժ չի
մնացել, ասաց ծերունին, մօտեցաւ ջուալ-
ներին և միւնոյն ժամանակ գաղտագողի
հայեցք էր դցում ջրաղացի դրանը: Նա
անհանդիսատ էր, այս վայրկեանին նրան
զբաղեցնողը Պետօի և Ասօի հանդիպելն էր,
որից նա ոչինչ բարի բան չէր սպասում.
Ասօն յանդուդն էր ու կատաղի, այդ նա
լաւ դիտէր:

—Ի՞նչ կայ, ինչ չը կայ դիւղում, Պե-
տօ, հարցը ծերունին՝ մի բան ասած լի-
նելու համար:

—Ե՞հ, ինչ ասեմ, Գոպէ ամի, պա-
տասխանեց Պետօն՝ ջուալները ցած բերելով.
շատ էլ լաւ բան չը կայ. երեկ գեղի երեք

կողմում երեք հաւ օրը ցերեկով աքլորի
պէս կանչել են, սա խսի լաւ բան չէ: Սն-
ցեալ օրը աւազակները քշում էին դաշտից
Յովէի եղները, և Կարապետի ուխտաւոր-
ներ են վրայ հասել, խլել են, յետ տուել,
լաւ մարդիկ են եղել, Աստուած իրանց ուխ-
տը կատարի, բայց արի տես, որ նրանց
գնդակից մէկը վիրաւորուել է, վայ թէ մեռ-
նի, մէջտեղ մենք վնասուենք. արդէն էս
քանի օրը քրդերի «բըսագ»-ի *) ձէնը մեղ
հասաւ, Աստուած վերջը բարի անի:

— Հա, էդ լաւ չէ, որ նրանք «բըսագ»
են անում:

— Էդ էլ մի կողմ մնայ, ամենից հե-
տաքրքիրը դեռ չը դիտես, Ապրօն է եկել:

— Առւրբ Կարապետի վալնդը:

— Հա, բայց իմանաս ինչ հալի, ի-

*) Քրդերը խիստ քինախնդիր ժողովուրդ են:
Երբ նրանք սպանում են մէկին, սովորաբար ա-
սում են՝ «բըսագ», որ նշանակում է՝ «սպասիր».
այս սպաննալիքից յետոյ նրանք սովորաբար ան-
պատճառ վրէժինդիր են լինում, թէկուզ դէքքից
յետոյ տարիներ անցած լինեն. ահա եթէ ինչու
«քրդի բըսագ» նշանակում է անխուսափելի վը-
րէժինդրութիւն:

սպառ գժուել է տնաքանդը, օյին բան է,
ուսին գցել է մի երկար կտաւ, պատանս
է, ասում է, աշխարհը վերջանալու վրայ է,
ասում է, ամենքդ էլ պատան առեզ ու
գերեզման վորեցէք: Ամեն շաբաթ իրիկուն
գնում է գերեզմանոցը ու մի տեղ վորում
է վորում, ասում է՝ գերեզման եմ շինում.
գիշերներն էլ մի էնալիսի բան է անում, որ
ամենքին զարզանդ է բոնում, տնաքանդը
կանդնում է գեղամէջը և քանի ձէն ունի
գոռում է՝ «զուլում, զուլում»... չները ոռ-
նում են նրա հետ, ու մի վատ բան է գուրս
գալիս: Մեր պառաւներին էլ, հօ գիտես,
գալիս: Հարկաւոր, առաւօտից իրիկուն թա-
փուած են տիրացու Գրիգորի դուռը, էլ գիր
բանալ, էլ թուզդ գրել տալ, գեղը տակն
ու վրայ է եղել:

Պետօի պատմածները Գսպէն այս ան-
գամ լսեց ծայրայեղ ուշագրութեամբ. իր
ջրաղացում վերջին ժամանակ կատարուած
գէպքերը, բուի կանչելը, ուխտաւորների
յայտնուելը նա կապում էր գիւղում պա-
տահածների հետ: Ծերունին մտաղբաղ՝ մատ-
ներով խառնում էր իր երկար միրուքը,
կարծես պատրաստում էր մի բան ասելու,

Երբ նրա ուշադրութիւնը դարձաւ դէպի ջը-
րազացի դուռը, ուր այդ վայրկենին յայտ-
նուեց Ասօն և դիտում էր նորեկներին:
— Տօ, էնտեղ էլի մարդ ես ունեցել,
շարունակեց Պետօն.— ո՞վ է... վա, Ասօն է.
քարի իրիկուն, Ասօն, ինչ լաւ էլաւ, չը լինի
էդ լաւ է, ես եկել եմ հարսանիքիդ ալիւրն աղալու,
սեցրածն աղալու, դու էլ հարսանիքիս պակ-
մար, էդ հօ միւնոյնն է, բաղարջ կը թիւնք,
դիշերը լաւ կ'անցնի: Այ տղա, դու սայլլքշի,
դնա, դարձաւ նա եղբօրը, երբ բոլոր ջուալ-
ները ցած բերին ու տեղաւորեցին:
— Զուրն առատ է, փառը լաւ է դառ-
նում. Գսպէ ամի, է՛ւ, դու այն ասա, նո-
քաթ կ'այ, թէ չէ:
— կ'այ, կ'այ, մրդի, քեղ համար նօբաթ
միշտ կը լինի:
— Հապա Ասօն ցորենը...
— Ասօն ցորեն չի բերել, եկել էր իմա-
նալու՝ նօբաթ կ'այ, թէ չէ, պահեցի մօտս
էսօր. մենակ եմ է՛ւ, մենակութիւնը եաման
բան է, սիրտս շատ է նեղում. դիտես,
կութիւնն ինձ տանջում է. առաջ, ջահիլ

ժամանակներս էսպէս չէր, չախչակն ու քա-
րը ինձ ընկերներ էին, հիմայ էլ չեմ կարու-
ղանում մենակ մնալ, մարդի, ընկերի, խօ-
սակցի կարօտ եմ քաշում, կ'ասես թէ դի-
շերներն էլ շատ են երկարացել, խաւարը
շատ է խստացել, էլ լաւ չի իմ չորս կողմը:
— Ասօն, հը՛, ինչ կ'ասես, հարսանիքդ
երբ ենք ուտում, ասաց Պետօն:
Պատասխանի փոխարէն Ասօն նայեց
նրան երկար-երկար: Պետօն զարմանալով
նկատեց, որ այդ հայեցքը սովորական չէ,
որ նրա աչքերի մէջ մի սոսկալի թունոտ բան
կայ, արտայայտութիւնը կատաղի է. նկա-
տեց այդ և ինքն էլ չ'իմանալով թէ ինչու,
սարսուեց, գլուխը քաշ գցեց, մինչդեռ Ասօն
շարունակում էր նայել, կարծես ճաշակելով
իր պատճառած անհանգստութեան հաճոյքը:
Բնազդը Պետօին լաւ բան չէր ասում, բայց
նա յիշեց, որ դիւղում ամենքը Ասօին դիժ
են համարում, և նրա այդ սոսկալի հա-
յեացքը փորձեց բացատրել նրա խենթու-
թեամբ:

Լուռ էին Գսպէն դիտում էր այդ յամի
տեսարանը, նա զգում էր, որ իր ջրաղացում
դէշ բան է պատրաստում, զգում էր, որ

Պետօն առանց իմանալու՝ կանգնած է մե
կատաղի թշնամու հանդէպ. երկու երիտա-
սարդները հակառակորդներ էին, մէկը գի-
տակցական և ահաւոր իր հազիւ զսպուած
կրքով, և միւսը անգիտակից ու անհանգիստ
ընդհանուր լուութեան տակ թագնուած
խորհրդաւորութեամբ: Ել խօսել չէր լինում:
Ասօի հայեացքը ամեն բան վշացրեց: Գոպէն
աւելի փորձուած էր. նա դարձաւ Պետօին:

—Հարսանիքը մի կնդմ թող, Պետօ, վեր
կաց, ցորենդ ածենք աղալու:

—Հա, լաւ ես ասում, պատասխանեց
Պետօն՝ ուրախացած այս միջամտութեամբ.
—Խօսքով ընկայ, մոռացայ:

Նրանք վեր կացան, մի ջուալ դատար-
կեցին քարի վրայ կախուած տախտակէ ա-
մանի մէջ, որի վարի փոքրիկ անցքից ցորե-
նըն սկսեց մաղուել քարի մէջ, որ դառնալով
վշում էր չորս կողմը սպիտակ ալիւրը: Գըս-
պէն ու Պետօն կանգնած նայում էին այդ
տեսարանին:

—Լաւ է աղում, ասաց Պետօն:
—Հա, լաւ է աղում, վրայ բերեց Գըս-
պէն. —Երկու օր առաջ սրել եմ, առաջին
սուրն արդէն անցել է, քարն էլ աւաղ չի տայ:

Զախչակը չխչխկում էր, քարը դառ-
նում էր, ալիւրը դուրս թափւում, և նրանք
շարունակում էին դեռ երկար կանգնած
մնալ միենոյն տեղում: Երբ մէկ էլ յետ նա-
յեցին, Ասօին իր տեղում չը դտան, նա
դուրս էր դնացել. Գոպէն անհանգիստ կեր-
պով շուրջը նայեց. Պետօն դարձաւ նրան.
պով շուրջը նայեց.

—Գոպէ ամի, ինչ է պատահել Մու-
րադի տղին, գիւղում լաւ բան չեն ասում:
—Է՞հ, որդի, ինչ ասեմ, չար աչքի տէրը
մեռնի, ասում են՝ աչքով են տուել:

—Հա, ասում են՝ չար աչք է. գիտես,
հէնց գիշեր ցերեկ սար ու ձոր է թափա-
ռում, ձեռքը գործից պազել է իսպառ,
մեղք, մեղք ջիւանին, նշանածն էլ սկա-
ւորել է, մէրն էլ մեռաւ սրբերի շեմքը մա-
շելով. էէ, Գոպէ ամի, նվ կարող է իմա-
նալ Աստծու բանը, մարդու գործը որ մի
անգամ ձախ գնաց, էլ ուղղել չի լինի: Մու-
րադի օջաղի աստղը մի անգամից կ'ասես
թեքուեց, էն մէկ տղան էնպէս էլաւ, էս
էլ... ինչ ասեմ, մարդ բան չի հասկանում.
էլ... ինչ ասեմ, մարդ բան չի հասկանում.
տեսամ՝ ինչպէս նայեց ինձ. մարդ վախե-
նում է հէրօրհնածի աչքերին նայել:

—Հա, լաւ չի, լաւ չի, կրկնեց Գոպէն:

գլուխն օրօրելով.—տեսնեսէլի ուր գնաց.
դիտես ինչ կայ, Պետօ, նրա հարսանիքի
մասին դու շատ մի խօսիր, չարանում է,
երբ պատկուելու անուն ես տալիս:

—Դէ տնաշէն, ինչ իմանամ, ասացի
չահիլ է, մի քիչ սիրոն ուրախացնեմ:
—Գնամ տեսնեմ՝ էլի ուր գնաց, ասաց
Գոպէն և դուրս գալով կանչեց.
—Ասօ. Ասօ:

Զայն չը կար:

—Ասօ, այ Ասօ:

Դարձեալ ձայն չը կար:

—Էլի գնաց. մռմռաց վշտացած ծերու-
նին, ջրաղացի չորս կողմը պտոյտ արեց,
պրպտեց: Ծեր աչքերով ուշի ուշով նայեց
և յուսահատ յետ եկաւ, իր տեղում նստեց:
Ասօն չը կար:

X

Ջրաղացից դուրս գալով Ասօն ուռիների
տակից նախ դանդաղ, ապա աւելի և աւելի
արագ քայլում էր առուի երկարութեամբ:
Նա կարծես փախչում էր ջրաղացից: Պե-
տօի գալուց առաջ իր միայնութեան խո-

հերը նրա հոգում մի մեղմութիւն էին ա-
ռաջ բերել, որ եթէ էլի մի փոքր աճէր,
կարող էր նրա համար վրկարար լինել: Ուխ-
տաւորների խօսակցութիւնը, նրանց պատ-
մածները բուժիչ բալզամի պէս իջան նրա
սրտի վէրքերի վրայ և մի փոքր սփոփե-
ցին. Ասօն այնուհետեւ իր գիւղից, իր շըր-
ջապատից դուրս ակսեց աւելի հեռուն նա-
յել, աւելի հեռուն մտածել և զգալ: Աս-
ուայի չքնաղ պատկերը եթէ նրա աչքից
խապառ չանյայտացաւ, գոնէ այնքան հե-
ռացաւ, որ հազիւ երկում էր մշուշի միջից,
Ասօն աւելի հանգստութեամբ էր գիտում
այդ միգապատ պատկերը և նոյն խակ աշ-
խատում էր խապառ դուրս վանել իր գըլ-
խից: Եւ նա ծրագրեր էր կաղմում իր ա-
պագայի մասին, երբ յանկարծ անսպասելի
կերպով ջրաղացում լոյս ընկաւ Սառայի
բաղդատոր ամուսինը՝ Պետօն, և դրանով
ամեն բան տակն ու վրայ եղաւ: Ասօի
անգիտակից ախոյեանի այսպէս յանկարծա-
կի յայտնուելը նրա տակաւին լաւ չը գո-
յուած վէրքը բաց արեց բոլոր լայնու-
թեամբ ու խորութեամբ: Պետօն կարծես
գիտմամբ եկել էր այս մենաւոր անկիւնը

Ասօի առաջը փռելու իր երջանկութիւնը, առանց գիտակցելու, որ թիթեռնիկի պէս ինքը խաղում է բոցերի հետ եւ արդարեւ, խանդոտութիւնն ինչպէս մի շղթայազերծ կատաղի դաղան Ասօի մխացող հոգում գլուխ բարձրացրեց, և աւերածի, չարութեան անյաղթեի տենչը նրա սիրու բռնեց և դարձրեց մի բորբոքուած խարոյիշ նա մի անդուսպ պահանջ զգաց այդ ժամին անպատճառ մի անսովոր բան անել, որից տուժողը Պետօն լինի, մի բան քանդել, մի բան ջարդել, ֆասել, տրորել ի հաշիւ Պետօիւ Եւ նա վազում էր՝ բուռնցքները սղմած, հեռով, աչքերը խաւարի մէջ կատաղաբար լայն բացած, փախչում էր առանց իմանալու, թէ ինչ է անելու, բայց հաստատ վճռած մի բան անել, մի չար, մի վատ բան։ Կարելի էր կարծել, թէ նա փախչում է մէկի ձեռքից, կամ հալածում է մէկին խաւարի մէջ. իր խելադար ընթացքի մէջ նա մի քանի անդամ փայր ընկաւ երեսի վրայ, կրկին վերկացաւ անէծքի մռմռոցով, մի փայրկեան կանդ առաւ, լսեց իր անունը հեռուից, մի բան ասց ատամների արանքից և կրկին վազեց։ Նա փախչում էր ջրաղացից, նրա աղմուկից,

չախչակի ձայնից. նա ուզում էր կտրուել այդ բոլորից՝ միայնութեան և խաւարի մէջ մի անասելի բան մտածելու, մի սարսափելի բան որոշելու համար։ Վազում էր, գլխում աղմուկ ու մտքերի ժխոր, զայրոյթով կրծուածում էր շրթունքները՝ կարծես պատժելու համար մի չար բան մտածելու իր անկարուղութիւնը։

Ահա նա հասաւ սաւաղին ու կանդ առաւ. ջրերն աղմուկով ցած էին թափուում ու գնում դէպի հեռուն, դէպի խաւար հարթութիւնը։ Ասօն նայում էր, և յանկարծ կռացաւ, երկու ձեռներով կախուեց և ջրերի թումբը պահող երկու ցից դուրս քաշեց ու յետ փախաւ յանցաւորի պէս։ Նրա յետեկից սաւաղը լայնանում էր կամաց-կամաց, ջրերըն աղմուկով կրծում էին թումբը և աւելի ու աւելի լայն հոսանքներով տարւում դէպի դաշտավայրը, իսկ Ասօն յետ էր փախչում դէպի ջրաղաց։ Պետօն արգէնքնել էր, իսկ Գսպէն նստած՝ սպասում էր։

—Եկա՞ր, ո՞րդի, որքան կանչեցի. ուր գնացիր, տնաշէն, դուրսը մուժ է, ժամը չար, լսւ չէ շատ հեռանալ ջրաղացից։

—Հեռու չէի, ձայնդ էլ լսեցի, ուր պիւ

տի գնայի, ման էի դալիս ջրաղացի յեւ-
տեռում:

Ասօն նստեց ջրաղացի անկիւնում, մերթ
նայում էր քարին, մերթ Պետօին. վերջինս
ասես բոլորովին մոռացել էր նրան և զբա-
ղուած էր իր գործով. նա մերթ ընդ մերթ
վեր էր կենում, մօտենում քարին, ալիւրը
հաւաքում, կուռիկով լցնում ջուալը, ապա
կրկին ցորեն աւելացնում քարի վրայ կա-
խուած տախտակէ ամանի—դեօլչագի մէջ,
իսկ քարը դառնում էր թափով, և չախչակը
ցատկրառում էր չխչխկացնելով։ Շատ դիշեր
անցաւ, Գսպէն կամաց-կամաց ննջեց իր նըս-
տած տեղում չախչակի ներդաշնակութեան
տակ, Պետօն էլ հոգաց ինչ որ պէտք էր, նոյն-
պէս նիրհեց. Ասօն մնաց անքուն, անշարժ սիւ-
ենոյն տեղում։ Նա մտածում էր և շատ,
շատ բան ունէր մտածելու։ Ահա մի քանի
օր է, որ նա ապրում է արագութեամբ, դիշ-
պուածներ են յաջորդում իրար, որոնք ասես
ճակատագրական ուժով դալիս են աղմկելու
նրա առանց այն էլ սարսափելի գոյութիւնը։
Այն ուխտաւորները... այս Պետօն... Պեռ
այս առաւօտ նա մտածում էր դլուխ առնել
կորչել այս կողմերից և ուխտաւորների պէս

գնալ սրբերին հարցնելու՝ կենդանի է ինքը,
թէ մեռած, մտածում էր որևէ կերպով վերջ
տալ իր անտանելի կացութեանը։ Այս առա-
ւօտ նա խորապէս զգաց, որ իր անձնական
դարդից աւելի խոշորը կայ, աւելի լայն ու
խորը, քան ամենամեծ ծովը, զգաց և մտա-
ծում էր այդ ծովի մէջ նետուել, և յան-
կարծ... Պետօն, որ կարծես չար սատանայի
պէս եկաւ, իր նոր ճանապարհի վրայ ցցուեց։
Այս հրտեղից և ինչու լոյս ընկաւ սա. Ասօն
նրան այժմ ատում է իր հոգու բոլոր զօրու-
թեամբ և միաժամանակ իր զգացմունքը
գտնում է ամօթալի, իր հոգու խորքում
կարմրումէ. ինչ մեղաւոր է Պետօն, որ Սա-
ռան՝ նրա կինը գեղեցիկ է. ինչ մեղաւոր է
այս քնող մարդը, որ Ասօն սիրտը կպել է
նրա օրինաւոր կնոջը։ Ասօն լաւ գիտէ, որ
իր արածը վատ բան է, որ Պետօն բնաւ
մեղք չունի, բայց գիտէ և այն, որ ինքն
ատում է նրան մինչև այն աստիճան, որ քիչ
է մնում վերկենայ, նրա կոկորդը սղմի կա-
տաղաբար ու խեղդի։ Քիչ առաջ որեւէ ձեռով
իր զայրոյթն ու ատելութիւնն արտայայտած
վնելու համար նա քանդեց սաւաղը, որ ջրեւ-
րը հօսեն, գնան, ջրաղացը կանդ առնի, և

Պետօի ալիւրը չ'աղացուի, բայց այժմ ամաշում է իր արածի համար, այն աստիճան տղայամիտ, այն աստիճան խղճուկ է թւում նրան իր արածը: «Ալիւրը չ'աղացուի», մըրմնջաց նա, և կծու ժպիտը ցաւագնօրէն ծռմռեց նրա շրթունքները:

Ասօն կրկին նայեց քնած Պետօին, որ այժմ հակառակի պէս սկսեց խիստ անախորժ կերպով խռոացնել. նա էլ աւելի զայրացաւ, նրան թւաց, որ ոչ ոք աշխարհում այդպէս չի խռոացնում; որ միայն Պետօն է ընդունակ այդպիսի զզուելի ձայնելր հանել, այտերը փուրսի պէս ուռյնել, շըրթունքները վերեւներքեւ անել և քթով խոզի պէս փնչացնել: Այդ բոլորը վատ, շատ վատ, նոյնիսկ գարշելի թւաց Ասօին. Գոպէն էլ էր խռոացնում, նոյն իսկ բարձրածայն, ուժգին, բայց նա այնպէս զզուելի չէր թւում, այս Պետօն ուրիշ բան էր, Ասօն նայում էր և կատաղում; ինքն իրան զայրանում էր, որ նայեց, բայց մի վայրկեանյետոյ նորէն նաշյում էր:

—Մեղայ Քեղ, Աստուած, նահլաթքեղ, չար սատանայ, ասաց նա կամացուկ, նկատելով՝ որ իր զայրոյթն ընդունում է շատ

վտանգաւոր կերպարանք, և իր գլխից սոսկալի մտքեր են անցնում: Մի վայրկեան նա այնպէս էր տարուած՝ իր ատելի ախոյեանի դէմքը, բարձր ու ցածր անող կուրծքը դեռևով, որ անդիտակցաբար վիզը ձգուել էր առաջ, ձեռքերի մատներ բաց ու խուփ էին անում ջղաձդաբար, ինչպէս որսը նկատող արծիւը, որ պատրաստում է իր ճիրանները: Ա՛խ, թէ այս խոզի պէս փնչացնող մարդը յանկարծ չքանար, Սառան աղատ կը լինէր, մնացածը հեշտ էր, այնուհետև ինչ ուղում է թնդիլինի:

Եւ ինչ, դժուար է աղատուել այս աշելի արարածից. բաւական է վեր կենալ, երկու ձեռքով սղմնել կոկորդը, մի քանի բուզ պէ պահել: Այն, խեզդել, խեզդել, մտածում էր նա ծնկների վրայ ընկած ու հեալով. և այն բեխերը, որ բարձր ու ցածր են անում այն բարձր, ինչ վատ են, ինչ գարշելի: Պետօնաղար, ինչ վատ են, ինչ գարշելի: Պետօն վատ մարդ է, վատ մարդ, մտածում էր նա, բայց թէ ինչու, այդ որոշակի ասել չէր նա, բայց թէ ինչու, այդ որոշակի ասել չէր նա, բայց թէ աշխարհից չքանայ, իր համարդ է և եթէ աշխարհից չքանայ, մար շատ կը լինի: Եւ նա նայում էր մար շատ լաւ կը լինի: Եւ նա նայում էր բորբոքուած, կատաղի աչքերով, հեռում էր

անընդհատ, սրտի զարկի ձայնը լսում էր, վզի երակները լցուել, բարձրացել էին, ամբողջ մարմնով դողդողում էր և որսին մարադ մտած կատուի պէս աւելի ու աւելի ձգւում էր դէպի քնած Պետօն, ատամներն իրար սղմած ու սպառնալի:

Յանկարծ չախակի ձայնը կտրուեց, նա էլ չէր ցատկրում, քարը կանդ առաւ, ջրադաշը լռեց, և նոյն վայրկենին Գոպէն ու Պետօն զարթնեցին:

—Ի՞նչ պատահեց, բացադանչեցին նըրանք միաժամանակ աչքերը տրորելով:

—Զուրը կտրուեց, քարը կանդ առաւ, պատասխանեց Ասօն սաստիկ յուղուած և Դողալով յանցանքի մէջ բռնուածի պէս:

—Հա, հա, ջուրը կտրուեց, երեխ սաւաղն է, ինչ օրով էի պնդացրել, էլի քանդուեց, տրտնջաց Գոպէն մտաղբաղ:

—Դու հանդիստ մնա, Գոպէ ամի, պատասխանեց Պետօն ոտքի կանգնելով. —Ես ու Ասօն կ'երթանք հոգալու: Վերկաց, Ասօն, քանի ուշ չէ, շարունակեց Պետօն. գնանք, թէ չէ յետոյ շատ դժուար կը լինի առաջը փակել: Պետօն շտապով դուրս թռաւ:

Ասօն շարունակում էր նստած մնալ

միւնոյն տեղում՝ անհանգստութեան, հոգեկան ներքին խոռվութեան նշաններ ցոյց տալով:

—Ասօ, այ Ասօ, լսուեց Պետօի ձայնը ջրաղացի յետելից. —շնուտ արի, տնաշէն, սաւալը տարաւ, տարաւ բոլորը:

—Ասօ, որդի, հիւանդ հօ չէս, ես երթամ, եթէ այդպէս է, ասաց Գոպէն՝ ուշադրութեամբ նրան նայելով: Պատասխանի փոխարէն Ասօն արագութեամբ ոտքի կանդնեց ու դուրս թռաւ: Երկու ախոյեանները կորան խաւարի մէջ, ճանապարհն անցընում էր ուռիների տակով, հեռուից լսում էր սաւաղի ջրերի ձայնը, իսկ ջրաղացի առուն դատարկում էր արագութեամբ: Այս անդամ խաւարի մէջ ծառերին գիպչելով, թմբերին ընդհարուելով՝ նրանք վաղում էին հեկին, Պետօն առաջից և Ասօն նրա յետելից, առանց խօսելու, առանց աղմուկի: Մի քանի անդամ մթութեան մէջ մուկի: Մի քանի անդամ մթութեան մէջ մուկի:

ջրերի կոհակները աւերած էին առաջ բերում ամեն վայրկեան։ Երկու երիտասարդները կանդնած՝ նայում էին շուարած, չ'իմանալով ինչ ձեռնարկել։

—Ի՞նչ անել, հարցրեց Պետօն մտաղբազ և քրտնաթոր ճակատը սրբելով։

—Չը գիտեմ, պատասխանեց Ասօն առանց մտածելու։

—Թէ ծառի ճիւղեր լինեին, հեշտ կը լինէր փակել։

—Հա, բայց ինչով ճիւղեր կոտորենք։

—Ասօ, յետ վաղիր շուտով, Գսպէն մի բան կ'ունենայ, առ և բեր, մինչեւ ես այս տեղից այնտեղից միքանիքարեր հաւաքեմ։

—Ի՞նչ կարող է ունենալ։

—Ի՞նչ, ով դիտէ, ջրաղացի տէր է, տընաշէն, ուրագ, կացին…

—Կացին… կրկնեց Ասօն վարանոտ ձեռվ, կացին…

—Հապա, կացին, շնոր վաղիր, քո հօրն օղորմի։

—Սնւր է։

—Ճօ, ինչ հարց ու փորձի ժամանակ է, տնաշէն, վաղիր, չես տեսնում, որ էլ առուի մէջ ջուր չը մնաց։

—Գնամ բերեմ; Համ... լաւ ես ասում, գնամ, հա, գնամ։

Եւ Ասօն յանկարծական վճռականութեամբ կորաւ ծառերի տակ իշխող թանձր խաւարի մէջ, միայն մի առժամանակ դեռ լսում էր նրա շտապ ունաձայնը, որ նոյն պէս շուտով խլացաւ։ Ջրաղացում Գսպէն զարմացաւ, տեսնելով մինչեւ որ աստիճան Ասօն գունատ է ու յուղուած, և երբ վերանաս կացինը խլեց ու դուրս թռաւ, մի յանշնս կարծական միտք ծերունուն քարացրեց։ Քիչ յետոյ Ասօն դարձեալ սաւաղի վրայ էր՝ փայլուն գործիքը ձեռքին։

—Բերի՞ր, Ասօ։

—Հա, բերի... սուր է... ահա...

—Դէ ճիւղեր կոտորիր, իսկ ես քարեր կը հաւաքեմ։

Ասօն հնաղանդուեց լոռութեամբ։ Նրա տենդոտ և ուժեր հարուածների տակ իսկոյն ընկան մի քանի մատաղ ծառեր, որ նա կացինը գոտին խրեց և ճիւղերի խուրձերը կացինը գոտին խրեց և ճիւղերի խուրձերը քաշ տուեց, ջրին մօտեցրեց։ Պետօն մտաւ ջուրը՝ թմբերին յենուած, ընկերը տալիս էր նրան ճիւղերի խուրձեր, և նա տեղաւորում նրան ճիւղերի խուրձեր, և նա տեղաւորում

Էր ոտներով ու քարեր գցում վրան։ Գործը
լաւ էր ընթանում, միայն Ասօն խիստ տա-
րօրինակ էր, նա երբեմն անշարժ կանդնած
էր մնում, երբ ընկերը քար կամ ճիւղ էր
ուղում, երբեմն առանց ուշը դարձնելու
խուրձը կռացած Պետօի գլխին էր գցում։
— Ի՞նչ ես անում, Ասօ։

— Ե՞ս... ճշմարիտ, լաւ չեղաւ... այ,
կացինը խրել եմ գօտիս... դիտես, ինչպէս
առւր էր... մը հարուածով, հա, մը հարուա-
ծով... քեզ չեմ տեսնում, աչքերիս ա-
ռաջ չի միմնում, այլ մուժ է, շատ մուժն
է, այնպէս չեմ... Պետօ, դու լաւ տեսնո՞ւմ
ես...»

— Ճիւղեր տուր, քնն տուր, կրկնում էր
Պետօն անընդհատ, բայց իրօք խիստ զար-
մացած էր ընկերոջ վարմունքի տարօրինա-
կութեան վրայ։ Ասօն կրկին գործի էր կե-
նում, ժամից աւել էր, որ նրանք աշխատում
էին. Ջրերի առաջը փակուած էր արդէն, Պե-
տօն թմբի վրայ կռացած՝ վերջին քարերն
էր տեղաւորում, իսկ Ասօն նրա գլխավերելը
կանդնած՝ հետեւում էր նրա աշխատանքին։
Եթէ Պետօն այդ վայրկենին գլուխը բար-
ձրացնէր և կարողանար խաւարի մէջ տես-

նել, նա կը սոսկար Ասօի գէմքից, կը նկա-
տէր, թէ ինչպէս նա գողղողում է ամբողջ
մարմնով, ինչպէս պինդ սղմել է ձեռքի մէջ
կացնի կոթը։ Պետօն շարունակում էր ան-
տարբերութեամբ աշխատել. Ասօն մի քանի
անգամ յետ քաշուեց, առաջ եկաւ, կրկին
յետ գնաց, էլի եկաւ իր նախկին տեղը, ո՞ր
քանի անդամ գօտկից դուրս քաշեց կացինը,
էլի շտապով տեղաւորեց։ Բոլոր նշաններից
երեսում էր, որ նա մի վճռական և անուղղե-
լի բան անելու վրայ է. մէկ էլ յանկարծ
նա առաջ անցաւ գէպի Պետօի գլխավերելը,
թափով դուրս քաշեց գօտկից կացինը, երկու
ձեռքով բարձրացրեց օդի մէջ, ճօճեց և ա-
հագին թափով իջեցնում էր Պետօի գլխին,
երբ մի ձեռք խաւարի մէջ ուժեղ կերպով
բռնեց նրա դաստակը... Գսպէն էր, որ հէնց
նոյն վայրկենին վրայ հասաւ։ Ասօի ձեռքերը
քաշ ընկան թուլացածի պէս, նա հեռում էր,
գէմքը կատաղի ու այլանդակ։

— Վերջացրիք, համ, ասաց Գսպէն առ-
հարկի սառնարիւնութեամբ, էդ լաւ է, զօ-
րանաք, մենակ ի՞նչ օր պէտք է քաշէի։ Զեմ
էլ հասկանում, թէ ինչպէս է պատահել, որ

թումբը քանդուել է, ցիցերը նոր էին, հաստատուն. հը՛, ի՞նչ կ'ասես, Ասօն

Ասօն առանց պատասխանի դցեց կացինը և փախաւ կորաւ խաւարի մէջ՝
—Եկած, Գսպէ ամի, ասաց Պետօն՝
գլուխը բարձրացնելով.—Հա, պրձանք, զոռաշխատանք էր, հոգիներս հանեց, էնպէս չէ,
Ասօն

—Ասօն գնաց ջրաղաց:

—Ի՞նչ շուտ, տարօրինակ է. Գիտես ինչ, Գսպէ ամի, շարունակեց Պետօն, երբ նրանք ճանապարհ ընկան.—Ես վախենում եմ, որ Ասօին մի վատ բան պատահի, նա կատարեալ գիծ է, ինչ անումէ, գիծի պէս է անում. երկու անդամքիչ մնաց ճիւղերով ինձ ջրի մէջ դլորէր. խօսելիս էլ ձայնը դողդողում էր, շունչը բռնւում, հեռում էր. ուղիղն ասած՝ գիշեր ժամանակ մուժ տեղում լաւ չէ Ասօի պէս ընկեր ունենալ, տընաշէնը ընկնաւորի նման է, խստակ ընկ նաւոր:

—Հա, տարօրինակ է, ասաց Գսպէն մտազբաղ ու լուց, պարզ էր, որ նրան սաստիկ տանջում էր մի միտք, նա շշմածի պէս էր, չէ որ նա հաղիւ փրկեց Պետօին, մի

վայրկեան ուշ հասնէր, Ասօն նրա գլուխը կացնով ջախջախած կը լինէր:—Տէ՛ր Աստուած, մտածում էր ծերունին, ի՞նչ էր լինելու, ինչո՞ւ էր ուզում նա ոճրագործ դառնալ:

—Գիտես, շարունակեց Պետօն, նրան չարք է պատահէլ, հա, անպատճառ չարքի բան է, ես վախենում էի գլուխս բարձրացընել և նրան նայել, սարսափելի էր, հեռցը լսում էի, կ'ասես դեերը խեղդում էին, լաւ որ եկար:

—Հա, լաւ որ եկայ... սիրտս ասաց՝ մէկ վերկաց, գնաց, տես՝ տղերքն ինչ են անում, և վերկացայ, շօշափելով, խարխաշելով եկայ, մուժ տեղը աչքերս լաւ չեն տեսնում, գէ քանի՛ տարեկան եմ, հա, բայց էլի լաւ որ եկայ, փառք Քեզ, Աստուած, լաւ որ եկայ...

Հասան ջրաղացին, Ասօն չը կար:

—Էլի չը կայ, ասաց Պետօն:

—Հա չը կայ, տեսնես՝ ուր գնաց:

—Աստուած աղատէ չարքից:

—Թո՞ղ Աստուած աղատէ:

Նրանք ներս մոտան և անկարող էին լսել հեռաւոր ծառերի տակից լսուող հեծկլտանք

Ները. Ասօն Երեսի վրայ ընկած՝ կուրծքը
չանգուռմ էր ու հեծեծում իր մտադրած
անյաջող ոճիրը այժմ սոսկումով բռնել էր
նրան, նա դողում էր նոյնիսկ իր չիրագործուած յանցանքի մեծութիւնից, սիրտն այլում էր, և նա լուռ խաւարի մէջ մենամենակ լալիս էր, լալիս էր իր անկումը, իր ամօթը, անիծում էր այն անմիտ, անհեթեթոճի միտքը։

— Ասօ, Ասօ։

Գոպէն էր, ջրաղացումհամբերել չը կարողացաւ, դուրս եկաւ և այս ու այն կողմն ընկած՝ փնդրում էր Ասօին, կանչում էր բարձրածայն. բայց նա լուռ էր։

— Ասօ։

Գոպէն առաջացաւ՝ մթութեան մէջ խարխափերով և աննկատելի կերպով Ասօի դլխավերել կանգնեց։

— Ասօ, ինչու ես այստեղ, որդի։

— Հեռու, հեռու ինձանից, ամի Գոպէ, ես ոճագործ եմ, ես մարդասպան եմ։

— Թո՞ղ այդ, որդի, վեր կաց, ջրաղացը դնանք, դուրսը խոնաւ է։

— Ո՞, ես քո շեմքը կը պղծեմ. ինչ էի անում և ինչու. տո՞ւր ինձ մի դանակ, Գոպէ

ամի. թո՞ղ, որ կուրծքս պատռեմև այս անիւծուած սիրտս դուրս հանեմ, չներին գցեմ։ Վառեց, վառեց ինձ, ես մեռնում եմ։

Ասօն թաւալւում էր գետնին, գալարւում էր վիրաւոր օձի պէս։

Գոպէն կռացաւ, հօր պէս գրկեց, բարձրացըրեց նրան ու մեզմութեամբ խօսումէր հետը՝ հանգստացնելու համար. ի զ՞ուր։

— Ես ոճրագործ եմ, կրկնումէր Ասօն. — լոյսի առաջ քեզ նայել, նրան տեսնել չեմ կարող, թո՞ղ ինձ, ամի, չարն իմ ոտքին կապուած է։

Եւ նա դուրս ընկաւ ծերունու ձեռքից ու հեռացաւ շտապով։

— Ասօ, Ասօ։

— Ես ոճրագործ եմ, հեռու ինձանից...

Գոպէն կանգնած՝ նայում էր խաւարի մէջ երկար-երկար, ապա աչքերը սրբեց ու յետ դարձաւ ջրաղաց։

XI

Օրեր էին անցնում օրերի վրայ. աշխատանքի ժամանակ էր. հարեաններն շտապ-շտապ հաւաքում էին իրանց դաշտային բա-

րիքը։ Նունուֆարը տեսնում էր այդ բոլորը ցաւով, տեսնում էր, թէ ինչպէս իր գործը մնում է, աշխատող ձեռներ չը կան, իսկ Ասօն էլ տուն չի դալիս, ասես իսկապէս մուացած՝ թէ տուն ու օջաղ, մայր ու քոյր ունի։ Նունուֆարն իր փոքրիկ Շուշիկի հետ անում էր, ինչ կարող էր, ամբողջ ցերեկը չարչարւում էր դաշտերում, իսկ երեկոները տիսուր ու ջարդուած որտով յետ էր դալիս տուն, նստում բակի դրան առաջ՝ աչքերը յառած մթուժեան մէջ դէպի հեռուն, նայում էր և սպասում, թէ երբ կը յայտնուի Ասօն։ Բայց որդին չը կար ու չը կար, և մայրը լալիս էր խաւարի մէջ, լալիս էր իր խեղճուժիւնն ու անտէրուժիւնը, իր օշաղի որբուժիւնը։ Եւ չորս կողմում՝ ասում էին՝ պատրաստում է մի սոսկալի բան, մի անորոշ, մուժ սարսափի, որ կարծես բարձրացել էր հեռուշեռու և շարժւում, դալիս էր քայլ առ քայլ, և ասում էին, որ այդ սարսափը կը հասնի Ա... դիւզին աշնանը։ Ապրօն զուր չէր ճչում՝ «զուլում, զուլում»...

Եւ մարդիկ շտապում էին...

Եւ նունուֆարը մենակ էր ու անտէր.

Էնչ պիտի անէր, երբ հասնէր սարսափը. ում դիմէր, ով նրան կը պաշտպանէր։

Սև էր պատել նաև Գիւլնազենց տունը։ Լծի վրայ նաւակի մէջ իր աղջկայ ծայրայեղ վիշար տեսնելուց յետոյ նաւօն էլ աւելի մը ուայլուել էր. նրա յօնքերի արանքումմի զոյդ խորը կնճիռներ էին կաղմուել, որ էլ չէին հեռանում ճակատից, ինչպէս աշնանային ամպերը երկնքից։ Ըստ երեսյթին նա իր գործը շարունակում էր առաջուայ պէս, ամեն առաւօտ վեր էր կենում, ուռկանը շալակում, շարժւում էր դէպի լիճը և երեկոյեան վերագառնում, բայց օրաւուր աւելի և աւելի լուսկեաց էր դառնում, և իր աշխատանքն էլ առաջուայ պէս արդիւնաւէտ չէր։ Մի զարհուրելի քէն էր բուն գրել նրա սրտում դէպի շատ բան աշխարհում, դէպի ամեն մի երջանկուժիւն և մանաւանդ՝ դէպի այն ջրաղացը, ուր ապրում էին Գսպէն ու Ասօն, նրա համար երկու հաւասարապէս ատելի արարածներ։ Նրա ատելուժիւնը դէպի Գսպէն հին էր, շատ հին. մի դաղսնիք կար երկու ծերունիների մէջ, որ ծածուկ էր ամբողջ աշխարհից։ Նաւօն էլ շատ տարիներ առաջ սիրում էր այն աղջկան, որի մահուան

պատճառ եղաւ Գոպէի հայրը, և նրանք աշխայեաններ էին: Վրիժառու և կատաղի նաւոն իր հակառակորդին վիրաւորելու համար ամուսնացաւ Գոպէի երկրորդ նշանածիր՝ Գիւլնազի հետ: Այսպիսով նրանք երկու անգամ պատահեցին իրար կեանքի ճանապարհին և երկու անգամին էլ բաժանուեցին անհաշտ թշնամիներ:

Ամուսնանալուց յետոյ նաւոն նկատեց Գիւլնազի կողմից խիստ սառն վերաբերամունք դէպի իրան, նա այդ վերագրեց իր կնոջ տակաւին վառ սիրուն դէպի Գոպէն, և իր ատելութիւնը գագաթնակէտին հասաւ թէ դէպի մէկը և թէ դէպի միւսը: Իր կատաղութեան մէջ նա տարիներ շարունակ ծեծում, տանջում էր Գիւլնազին, և միայն Շողերի ծնունդը մեղմեց նրան և երկու ամուսինների մէջ կապ հաստատեց: Նաւոն այնուհետեւ ամբողջ աշխարհը կետրոնացրեց միայն Շողերի մէջ աշխատում, տքնում, ապրում էր միայն նրա համար: Լուռ էր, սակաւախօս, արտաքուստ սառն ու մուայլ, իր ծնողական սէրը չէր արտայայտում երբէք, բայց նա իրօք պաշտում էր Շողերին: Եւ այժմ տեսնելով թէ ինչպէս օրաւուր մաշ-

առմ է իր աղջիկը, նա կիսում էր յօնքերը և Գոպէի ջրաղացի գունից անցնելիս՝ սղմում էր բուռնցքները և մրթմրթում էր անէծքի խօսքեր և՝ Գոպէին, և՝ Ասօին: Հին ատելութիւնը քնած գաղանի պէս զարթնում և կամաց-կամաց գլուխ էր բարձրացնում, նաւոն սպառնում էր այն մենաւոր ջրաղացին և նրա բնակիչներին:

Շողերը հիւծւում էր օրաւուր, նրա լիքը, կարմրը այտերը գատարկւում էին ու գունատում, լուռ ու արձանացած նա ժամերով մնում էր միւնպին տեղում նստած, հայեացքը մի կէտի սկեռած: Ասօի և Շողերի շուրջը պտտում էին լուրեր, որոնք ալիքների պէս բարձրանում էին և մօտ էին խեղդելու վշտահար, յուսահատ աղջկան: Հազար ու մի բաներ էին փսփսում մէկը միւսից վատ: Հաստատն այն է, հաւատացնում էին ամնքը, որ Ասօն իսպառ թողել է Շողերին, որովհետեւ նա իր մեծ եղբօր նշանածին չի ուղում առնել, բայց հօրը խօսք է տուել և դարդից խենթացել է: Ասում էին նոյնպէս, որ Շողերին Պետոն նրան իսպառ խենթ է տեսել Գոպէի ջրաղացում:

Ինչ էլ լինէր, Գիւլնազն ու Նունուֆա-

ըլ մայրեր էին և անդադար ճար ու հնար
էին վնդրում իրանց զաւակների բախտաւու-
րութիւնը յետ բերելու: Թէև սրբերը չօգնե-
ցին, բայց և այնպէս նրանցից ով մի նոր
սրբի անուն էր յիշում, վազէվազ դնում էր
միւսին յայտնելու, և յաջորդ օրը նրանք ճա-
նապարհ էին ընկնում դէպի նոր ուխտա-
տեղին նոր զոհերով, հին աղօթքներով ու
խնդրուածքով: Եւ այսպէս օրեր ու շաբաթ-
ներ:

Եւ մըրիկը պատրաստում էր կամաց-
կամաց, հեռաւոր սարսափը բարձրանում,
գալիս էր, ինչպէս ու ագռաւների երամը,
որ ուշ աշնանը դաշտից դաշտ է տեղափոխ-
ւում վհատեցուցիչ ամայութեան մէջ: Ա-
սում էին, որ Մրրկի սուրբը կրկին յայտնուե-
լու է իր խաչքարի վրայ, որպէսզի սարսափը
երկրի վրայից անցնի առանց աւերածի: Ծա-
նըր ժամանակներ էին, ծանր օրեր:

Եւ Ապրօն շարունակում էր դիշերները
ոռնալ.

«Զուլում; զուլում...»

XII

Այն երեկոյ նախիրն եկաւ ու փոշու ամ-
պերով դիւղը պատեց. հոտերը բառաչելով
ցած իջան լեռներից, հնձուորները գերան-
դիներն ուսերին տուն յետ դարձան: Նունու-
ֆարն էլ նողերի ձեռքից բռնած՝ մի խուրծ
խոտ շալակին՝ դաշտից տուն եկաւ: Մայր ու
աղջիկ անասունները տեղաւորելուց յետոյ
իրանց սովորութեան համեմատ նստեցին և
սպասում էին: Թէև վաղուց էին դադարել
յուսալուց, բայց էլի սպասում էին, ով դիտէ,
յանկարծ Ասօն խելքի դայ, տուն վերադառ-
նայ, յանկարծ չարքից աղատուի: Դուռը
ճռալով բացուեց, մայր ու աղջիկ շփոթուած
նայեցին, ներս մտնողը Գիւնաղն էր:

— Ասօն էլի չը կայ:

— Չը կայ, քոռանամ ես, պատասխա-
նեց նունուֆարը:

— Թո՞ղ որ ես քոռանամ, Նունուֆար-
խաթուն, մինուճար աղջիկս երկու անդամ
է ու կապում, իմ որ մեղքի համար: Չի ապ-
րի, քուրիկ, չի ապրի, ահաւոր դատաստա-
նին պարտական կը մնայ Ասօն: Եդ ինչ ա-

րեց, ինչ հողը տուեց մեր գլխին։ Ա՛խ, ջը-
րատար Շողեր, չի ապրի ջրատարը. անցեալ
օրը տեսել է...

— Ո՞ւմը։

— Ասօին, ումը. տեսել է լճի ափին.
Ես քեզ չեի ասում, դէ ինչ ասէի, գուրդ չէր
դայ. հիմայ տեսնում եմ, որ պահելով բան
չի դուրս դայ, լաւն էն է ասեմ։ տեսել է
Ասօին ջրի ափին, ինչեր են խօսել, ես ինչ
իմանամ, միայն էն օրուանից ոչ դիշերը քուն
ունի խեղճ երեխաս, ոչ ցերեկը հանդիսատ,
լալիս է, լալիս է, արուն-արցունք է քամում,
մահից է խօսում անդադար։ Կ'երթամ, ա-
սում է, ինձ սարից ցած կը դլորեմ, որ ա-
զատուեմ, իմ ստքն, ասում է, ըէխէր է, ում
հետ կապուեմ, մի չար բան կը պատահի, էն
մէկ ախտերն էնպէս էլաւ, էս մէկն էլ էս-
պէս, հալբաժ մի բան կայ, հալբաժ ճակա-
տիս է դրուած։ Լաւն էն է, ասում է, մի
տեղ թաղեմ սկաւոր դլուխս ու պրծնեմ։
Ինչեր է ասում, նունուֆար-խալթուն, ախ,
որ լսես, քար ըլնի, չի դիմանայ. սիրաս
քամում, աղիքներս դալարւում են ջիգեա-
րիս մռմուփից, մեռնում եմ, էլ քուն չու-
նիմ, ու երազներ, չար ու բարի երազներ

դիշերը հանդիսատ չեն տալիս ինձ։ Իմանաս՝
ումն եմ տեսել էս դիշեր։

— Ո՞ւմը,

— Էն սարի սրբին, Սրբկի սրբին, մեռ-
նիմ իր զօրութեանը։

— Մեռնիմ իր զօրութեանը։

— Երազիս եկաւ ծերունի ճգնաւորը,
մեծ միրուքով, վիառահեղ դէմքով, լալիս
էր, լալիս էր տնաւեր սուրբը, նունուֆար-
խալթուն, ասում էր, ամենքն ինձ մոռացել
են, իմ արիւնոտ խաչքարին ոչ ոք ուխտ չի
դալիս, բայց իմ զօրութիւնն, ասում էր, աշ-
խարհով է։ Դուք էլ էք մոռացել, մեծ ու
փոքր սուրբ ու խաչքար չը մնաց, գնացիք,
տեսաք, մատաղ տարաք, մէկ ես եմ մոռա-
ցուել, լաւ, թաղ ուրիշները ձեր ուխտը կա-
տարեն։

— Հա, իրաւ է, նրան մոռացել ենք։

— Զայրացած էր, նունուֆար, ինչպէս
էր զայրացած, աչքերը չուց վրաս, դլուխն
օրօրեց, երկար մըրուքը թափ տուեց, վա-
խիցս դողացի, զարզանդը բռնեց ինձ, ու
վեր թռայ, երազ էր։ Քրտների մէջ կորած էին
Գնանք, նունուֆար-խալթուն, գնանք սարի
խաչքարի ստքը։

Նունուֆարը լսում էր լուռ ու մտախոհ։
Նա կամ մի ծանր մտքով էր զբաղուած,
կամ հաւատը խախտուել էր դէպի սրբերը։

— Նունուֆար-խաթուն, շարունակեց
Գիւնաղը, մենք ծնկաչոք սողալով, չանդուե-
լով կը բարձրանանք մինչև խաչքարը, մինչև
Մրրկի սուրբը. նա, որ երկինք ու գեաին
երար խառնուած ժամանակ դիտէ փրկել աշ-
խարհը, նա միայն կարող է ազատել Ասօին
շարից, ցաւից։

— Հա, հա, շարից, ցաւից։

— Մրրկի սուրբը, Մրրկի սուրբը, Նու-
նուֆար-խաթուն, շատ է հզօր, շատ է դը-
թած, նրա դուռը ոչ ոք չի դնում, նրան
մատաղ ոչ ոք չի անում, բայց էլի Մրրկի,
փոթորկի ժամանակ՝ ասում են՝ նա է հաս-
նում ամենիս, մեռնիմ նրա սուրբ դօրու-
թեանը։

— Հա, հզօր է, մեռնիմ նրա սուրբ զօ-
րութեանը, կրկնեց Նունուֆարը մեքենայա-
բար։

— Մրրկի սուրբը, Մրրկի սուրբը, Նու-
նուֆար-խաթուն, շատ է հզօր, նա հաղար
ցաւի ճար ու դեղ ունի, նա հաղար դարդի
դարմանը դիտէ, նա ողջ երկինքը կապ-

կապել դիտէ, նա սեւսե ամպերն է հալա-
ծում վերից, խիստ քամիների ակերը փա-
կում, նա հաղար դարդի ճար-դարման ու-
նի, հաղար սրտերի սփոփանք ունի, ինքն էր
ասում, ողորմած սուրբը, մեռնիմ նրա սուրբ
դօրութեանը։

Պառաւները կրկին խաչակնքեցին։

— Գնանք, գնանք նրա սուրբ։

Նունուֆարը լուռ էր և ծունկը դրկած՝
մեղմիւ օրօրւում էր։

— Ինչու չես խօսում, քուրիկ։

— Էէ, ինչ ասեմ, կրակն էնքան մեծ է,
որ էլ ջուր չենք հասցնի. — Նունուֆարը հե-
կեկաց և աչքերը սրբեց. — սրբերն էլ ինչ
անեն։

Գիւնաղը շփոթուած նայում էր, Նու-
նուֆարը նոր բան դիտէր։

— Նունուֆար-խաթուն, էս օրուայ լա-
րդու...

— Թո՞ղ դուշմանս էս արցունքը չը թափի։
— Ի՞նչ ասաց տիրացուն։

— Տիրացուն... ասաց կմկմալով Նունու-
ֆարը. — տիրացուն տանը չէր, ըլ տեսայ,
է՞ն, ինչ տեսնեմ։

— Ի՞նչպէս թէ՝ ինչ տեսնեմ. սուրբը՝

չէ, տիրացուն՝ չէ, բա էլ ի՞նչը, ով, ուր գըշնանք, ում դիմենք:

—Ոչ ոքի, ամեն բան պրծաւ, էլ ճար, փրկութիւն չը կայ:

—Ի՞նչ ես ասում, քուրիկ, բա տիրացուի գրքերը, աղօթքը, վշատի ծառը...

—Բոլորը զուր է, քանի որ նրանց մօտիկ, շատ մօտիկ մի պիղծ, մի անաստուած գործ է կատարուել:

—Ի՞նչ ես ասում, այքուրիկ, երկինքը, հոգիդ մոռացել ես:

—Ոչ երկինքն եմ մոռացել և ոչ հոգիս, բայց տիրացուի գրքերին մօտիկ մի էնպէս բան է կատարուել, որ ասել վախենում եմ, բայց չ'ասել, ծածկել էլ չեմ կարող, Գիւլնաղ. էս գաղտնիքը ցեց գառած՝ կրծում է իմ ներսը, սարսափելի բան է:

—Ի՞նչ է, նունուֆար, անողնոմ, հոգիս հանեցիր, սիրտս կտրեցիր, գէ, զարկ սպանիր մի հետ, էլ ի՞նչ ես մանր~մանր մորթոտում:

—Ախր ասել չի լինում, ինձ թաղես, շարունակեց նունուֆարը փափսալով. —պատերից էլ եմ ամաչում:

—Խեղդւում եմ, անողնոմ...

Երկու կանայք երես երեսի հանդէպ իշրար աջքերի մէջ էին նայում ու հեռում էին յուզմունքով, հեռում էին և սպասում:

—Նունուֆար...

—Տունդ քանդուի, Գիւլնաղ, Ասօն Շուզերին թողնում է, նրա սիրտը կպել է նիրին նենց թազա հարսին՝ Սառային, թառլան Սառային, հէնց տիրացուի գրքերի մօտ:

—Վայ, ճշաց Գիւլնաղը և երեսը ձեռների մէջ առաւ։ Նա երկար մնաց այդպէս և մեղմիւ հեծկլտում էր։

—Գոնէ չիմանան, խալիսը չիմանայ, Տէր Աստուած, մրմնջում էր նունուֆարն ինքն իրան։

Գիւլնաղը գլուխը բարձրացրեց, դադարեց լալուց, ոտքի կանգնեց, ձգուեց իր բուլոր հասակով ու գոշեց սպառնալի.

—«Խալիսը չիմանայ... չէ, ես պիտի ճըշչամ աշխարհովը մէկ, քանի ձայն ունիմ, քաշ նի ոյժ ունիմ, քանի շունչ ունիմ, այ, կը բարձրանամ էն սարի գլուխը և կը կանչեմ՝ «Հարեաններ, ժողովներդ, գեղացիք, Մուրադի Ասօն անամօթ, անպատիւ, անողորմ մարդ է, նա սիրում է ուրիշի կնկան, նա մարդ է, նա սիրում է ուրիշի կնկան, նա թողնում է իր նշանածը»։ Կ'ասեմ, որ նրա

“աքը պիղծ է, նրա կոխած տեղը անիծուած,
թնդ մարդիկ երես դարձնեն, երբ նա ան-
ցընում է, կամ մատով ցոյց տան հեռուից,
ինչպէս մի դե, մի չար ոգիք կ'ասեմ, կ'ոռ-
նամի, կը ճշամ դիւզովը մէկ, սարերով, ձո-
րերով մէկ, թնդ ամենքն իմանան, ամենքը...
— Սնւս, սնւս, Գիւլնազ, Աստծուց վա-
խեցիր:

— Ել ոչ վախ ունիմ, ոչ ամօթ, Նունու-
ֆար, քո տղան երկուան էլ խլեց, իմ որ մեղ-
քի համար, կը հարցնեմ աշխարհին, թնդ դատ
ու դատաստան անեն... Բայց Շողերս, օօ,
հողն իմ դլախին, ինչեր եմ ասում; թէ յան-
կարծ նա էլ իմանայ. չէ, չէ, պապանձուիր,
լեզնւ, չորացէր, շրթունքներ, Նունուֆար,
ես կը լուեմ, թնդ ոչ ոք չիմանայ, ոչ ոք,
միայն Շողերից էլ ծածուկ մնայ, թէ չէ...
ախ, ինչ կ'անի, եթէ յանկարծ իմանայ, Աս-
տուած, Դու ողորմաս, ես մեղաւոր ու ա-
նարժան եմ, Դու էն խեղճ երեխայիս խնա-
յես: Լուռ, լուռ, Նունուֆար, էնպէս չէ:

— Հա, հա, Գիւլնազ, լուռ, մինչև տես-
նենք՝ Աստծուած ինչ դուռ է բաց անում:
Երկու կանայք այնուհետեւ դեռ երկար
վշշումէին ու արցունք թափում, դեռ եր-

կար խնդրում էին իրար փոխադարձաբար
դաղմանի պահել բոլոր խօսածները և չէին
նկատում Շուշիկի բացակայութիւնը, որ վա-
ղուց դուրս էր եկել, գնացել: Գիւլնազը չորս
կողմը նայեց, դունատուեց ու ճշաց.

— Շուշիկը, ուր է Շուշիկը:

— Շուշիկը, կանչեց մայրը:

Փոքրիկ աղջիկը չը կար. Գիւլնազը սաս-
տիկ շփոթուեց՝ հաստատ համոզուած, որ
Շուշիկը իրանց տուն է գնացել:

Զի՞ յայսնիլ արդեօք լամածները...

Գիւլնազն շտապով դուրս եկաւ, վազեց
տուն, իսկ Նունուֆարը մնաց իր տեղում
վշտից քարացած:

XIII

Իրար յաջորդող հոգեկան ծանր ցըն-
ցումները վերջ ի վերջոյ խորտակեցին Շո-
ղերին: Կայտառ ու կենդանի, ապրելու,
վայելու եռանդով լի ջահիլ արարածը դէ-
պի կեանքը նետուեց, որպէս դարնանը մն-
զուն դէպի բուրալից ծաղիկը, և մեղբա-
հիւթի փոխարէն թոյն ծծեց ու գետին ըն-
կաւ փշրուած: Նա էլ տնից դուրս չէր գա-

լիս՝ ինչպէս վշտահար թռչնակ, որը ոյժ չ'ու-
նի հեռանալու իր աւերուած բնից, մի նոր
անկիւն, մի նոր բաղդ որոնելու։ Ժամերով
նստած միենոյն տեղում՝ նա մնում էր ան-
շարժ, չէր լալիս, չէր գանդատում, այլ նա-
յում էր մի կէտի անընդհատ. իսկ երբ վեր
էր կենում, քայլում, շարունակ նայում էր
սաների տակ, կարծես մի շատ թանգարին
կորուստ էր փնդրում։

Լացողը մայրն էր, սգացող, արցունք
թափողը նա էր բոլորի համար։ Զաւակի ցա-
ւը շատ էր ծանր, որպէսզի գժբաղդ մայրը
հանդիստ ունենար, որ ու գիշեր հօգուը Շո-
ղերն էր։ Նաւօն ամեն առաւօտ լիճը գնա-
լիս՝ միայն գաղտագողի աչք էր գցում աղ-
ջըկայ վրայ, գլուխն օրօրում, շրթունքները
շարժւում էին, բայց ոչ ոք չը գիտէր, թէ
նա ինչ է մտածում, ինչ է ասում։ Մայրն
էր, որ ամեն առաւօտ դուրս էր գնում Շո-
ղերի գարդի ճարը փնդրելու սրբերի դրանը։

Եւ ամեն օր, երբ հայրը ուռկանը շա-
լակած գէպի լիճն էր գնում, իսկ մայրը
գէպի սրբերը, Շողերը մնում էր մենակ
իր վշտի հետ, տան լոռւթեան ու ամա-
յութեան մէջ նրա սև մտքերը ընդունում

էին այլանդակ ճիւաղների կերպարանք և
տանջում, տանջում էին նրա։ Բոլոր շշուկ-
ները, գիւղում պտտուող բոլոր չար զրոյցները
Ասօի և իր մասին կամաց կամաց ասես
քամիների թևերով գալիս, ներս էին թա-
փանցում նաւօենց տուն և թանձր, ու
ամպերի պէս բարդ-բարդ նստում էին Շո-
ղերի սրտին, և ամեն օր նրա կուրծքը
ճնշող բեռն աւելի էր ծանրանում, և ա-
մեն օր սիրտն աւելի էր ուռչում, բարձրա-
նում, աղջիկը խեղդւում էր, տառապում։
Նրա ցաւոտ հոգին, նրա ամբողջ գոյութիւնն
այժմ նման էր մի խիստ ձգուած լարի, որ
մօտ է կտրուելուն. աչքերը չոր էին, բայց
սիրտը լալիս էր, մղկտում։

Նախ ասացին, որ Շողերը շատ ուրախ
եղաւ իր առաջին նշանածի մահուան հա-
մար. յետոյ՝ թէ Ասօն ընկնաւոր է, Շողերն
է վախենում, փախչում նրանից. օրեր յե-
տոյ լոււեց մի տեղից ամենանը շշուկը.
—ասում էին, թէ Ասօն ոչ խենթ է, ոչ
ընկնաւոր, այլ հրաժարւում է Շողերից,
որովհետեւ հաստատ չը գիտէ, թէ նա իր
եղքօր նշանածն է եղել, թէ կինը... ահա
այս սպանիչ շշուկն էր քարացրել Շողերին

միւնոյն տեղում: նրան թւում էր, թէ ամբողջ աշխարհը խօսք մէկ արած՝ իր դէմ է, թէ երբ ոտքը դուրս դնի տանից, հազար բերան կը պոռան իր յետելից, և նա խեղդւում էր տան մէջ մենակ, յուսահատ, ոչնչացած: Իր վշտի բոլոր խորութիւնը, ցաւի մեծութիւնը դրել էր այն քարացած հայեացքի մէջ, որ նա սկեռում էր մի կէտի: Իր ամբողջ սկ գոյութիւնն էր խտացրել նա ապակու պէս պաղ աչքերում, որոնք նայում էին անընդհատ, ասես այս աշխարհից դուրս, անհունութեան մէջ, մի այլ աշխարհից ճարշնար էին փնդրում: Կուսական աչքերի կոպերը յետ էին քաշուել ու սառած մնացել՝ ասես վախենալով ծածկել բիբերի մէջ փայլող վիշտը, ինչպէս կապուտակ լծի երկու քնքոյշ ալեակներ, որոնք բարձրանում են ու քարանում միւնոյն տեղում՝ չը համարձակուելով յետ դալ ու խորշուել ջրերի հարթաւասար երեսը, որ թագնում է իր տակ այնքան դաշտնիքներ, այնքան խութ ու խոռոչներ:

Միայնութեան ու վշտի այս սարսափելի ժամերում Շողերի միակ սփոփանքը Շուշիկն էր, Ասօի փոքրիկ քոյրը, որ այնպէս նման

էր եղբօրը, որ միւնոյն ձևով աչքերը թարթել, վիզը կորացնել և ժպտալ գիտէր: Նա սիրում էր Շուշիկին այն անզօր ու խղճուկ սիրով, որ մեծ կորստից յետոյ բաւականանում է մի ժպտով, աւերակից յետոյ՝ մի տաք անկիւնով, փոթորկուած ծովի վրայ օրուում է մի փոքրիկ նաւակում: Շուշիկը նրա սրտի ամայացած անսապատում մի յետին ծաղիկ էր, որի վրայ գեռ չէր վշել մահացու քամիների կիզիչ շունչը: Եւ երբ փոքրիկ աղջիկը դուռը բանալով՝ վագէվազ ներս էր նետուում, Շողերի թախծալից դէմքի վըրայ մի տխուր ժպիտ էր անցնում, ինչպէս թխպոտ երկնքի համատարած մուայլի վրայ արեի մի վաղանցուկ փայլ: Եւ ամեն անդամ Շողերին թւում էր, թէ Շուշիկը եղբօր մի մասն է բերում, միյետին մնացորդը մօր հարթաւասար երեսը, որ թագնում է իր տակ այնքան գեղեցիկ, վարդադոյն յոյսերի: Եւ Շուշիկը նրա մօտ գալիս էր ուրախութեամբ, միշտ ժպտագէմ, իսկ Շողերը անձկանօք էր սպասում նրա գալստեանը, նրանց սէրը խաղարձ էր:

Այն երեկոյ Շողերը դարձեալ մենակ էր մօր հեռանալուց յետոյ, երկու ձեռքով ծընկ-ները գրկած՝ նայում էր անորոշ հայեացքով,

Երբ փոքրիկ աղջիկը դուռը բացեց և ներս
եկաւ։ Այս անգամ Շուշիկը ամենօրեայ աշ-
խոյժն ու խնդութիւնը չունէր դէմքին։ Շո-
ղերը գլուխը բարձրացրեց, ժպտաց ըստ սո-
վորութեան ու գրկեց փոքրիկին։ ապա եր-
կու ձեռքով նրա գլուխը բռնեց, իրանից
մի փոքր հեռացրեց և մի քանի վայրկեան
նայում էր այն մանկական վառ աչքերին, այն
սիրուն դէմքին, երկար խոպոպներին, նայում
էր և չէր կշտանում, այնքան շատ բան ու-
նէր այդ աղջիկն իր եղբօրից։

— Շուշիկ ջան։

Աղջիկը տիսուր էր և իր մեծ աչքերով
նայում էր Շողերին։

— Շուշիկ։

Փոքրիկ աղջիկն այս անգամ հեկեկաց
ու գլուխը թագցրեց Շողերի կրծքում։

— Ի՞նչ կայ, ինչու ես լալիս, Շուշիկ
ջան։

— Քո մայրիկն էլ էր լալիս, իմ մայրիկն
էլ էր լալիս, շատ լաց եղան, ես էլ վերկա-
ցայ, եկայ քեզ մօտ։ Մայրիկս բաներ ա-
սաց, յետոյ լաց եղան։

— Ի՞նչ ասաց, Շուշիկ ջան։

— Ասաց... ասաց, որ Ասօն էլ քեզ չի

ուզում... ասաց՝ Սառային է ուզում... Էն
Շիրինենց Սառային, գիտես... յետոյ քո
մայրիկը երեսը ծածկեց, հեկեկաց, յետոյ
երկսով էլ լաց եղան, ես էլ վախեցայ, եկայ
քեզ մօտ... դու լաց չես լինի, քուրիկ, համ.
որ դու էլ լաց լինես... ես վախենում եմ,
որ լալիս են...

Երեխան գեռ էլի երկար խօսում էր,
պատմում էր, թէ ինչեր արին, ասացին
իրանց մայրերը, բայց Շողերը դադարել էր
լսելուց, հէնց առաջին խօսքերից նա գու-
նատուեց, կծկուեց, սիրու բռնեց թափով
և գլուխը ծնկների մէջ առաւ։

Շողերին թւաց, որ երկինքը ճայթեց
իր գլխին, ու այդ փոքրիկ ձայնը, որ հնչւում
էր նրա ականջի տակ, կարծես նրա մահուան
դատավճիռն էր կարգում։ Սոսկումի, ցաւի
խօսքեր էին արտասանում այն փոքրիկ,
անմեղ շրմունքները, և այն քնքոյշ ձայնը
շարունակում էր հնչուել ահաւոր ու սպառ-
նալի։ Շողերի մօտ էլ Շուշիկը չէր, այլ մի
սալսափելի բան, որ գալարւում, բարձրա-
նում էր նրան խեղդելու։ Նա շարունակում
էր մնալ գլուխը քաշ, կծկուած, ականչնե-
րում հազար ու մի ձայներ, դանդի մէջ ան-
րում հազար ու մի ձայներ, դանդի մէջ ան-

Հասկանալի աղմուկ, նման այն աղմուկին,
որ մարդ զգում է գլխին հասած մի ծանր
հարուածից յետոյ։ Ապա կամաց-կամաց ժա-
մանակն ու տարածութինը խոյս տուին նրա-
նից, Շողերն էլ չը գիտէր, ուր է ինքը, ինչ
է ինքը. յետոյ նրան թւաց, թէ ընկած է
մի մութ, խուլ անտառում, որ վերջ ու սահ-
ման, ճար ու ճանապարհ չ'ունի, և ճիւաղ-
ներ, հրէշներ, գազաններ թփերի տակից,
ճիւղերի արանքից իր վրայ են ուղղել իրանց
գիշատիչ աչքերը, մեկնում են իրանց սոս-
կալի ճիւանները, բռնում են, քաշում են մա-
ղերից, և նա փախչում է, փախչում է բոլոր
ուժով, բայց լսում է իր յետեկոց բազմաթիւ
ստնաձայներ, ողջ աշխարհն է նրա յետեկոց
ընկած հալածում, իրանց բոլոր գիւղը. ինչ-
էր են ասում, ճշում են, ոռնում են, և
այդ բոլոր ձայներից իր մազերն են դիզա-
նում, ոտներն են դողում, բայց նա փախչում
է անընդհատ, ընդհարւում է ծառերին, ընկ-
նում է, վեր է կենում, դարձեալ ընկնում,
և ճշում է բարձրաձայն...

—Քուրիկ, քուրիկ...

Շողերն ուշքի եկաւ, նայեց իր շուրջը
և միայն այժմ տեսաւ Շուշիկին, որ լալիս

էր ու նրան կանչում։ Գունատ ու դողդոջիւն
Շողերը փոքրիկին իր գրկի մէջ առաւ, դու-
խը սղմեց իր կրծքին և մօր պէս օրօրում
ու խօսում էր նրան.

—Մի լար, Շուշիկ ջան, մի լար, չ դու
պղտիկ ես, շատ պղտիկ, դեռ ինչքան ժա-
մանակ ունիս լալու։

—Ախր դու ինձ վախեցրիր, էնպէս էիր
ճշում, ես էլ նրա համար լաց եղայ։

—Այ, էլ չեմ վախեցնի, միայն դու լաց
մի լինիր, մատաղ, ինչու լանք, ես էլ դա-
դարեմ լալուց, նոր ծով շինելու չենք, ծովը
կայ, Աստուած է պատրաստել բոլոր լացող-
ների համար։

—Լացողների համար է ծովը։

—Հա, հա, Շուշիկ ջան, լացողների
համար։

—Ես էլ չեմ լայ, ծովից վախենում եմ։

—Դու մի վախեցիր, մատաղ, քեզ հա-
մար չէ, ինձ համար է, միայն ինձ համար,
ծովը ելաւ, ելաւ բարձրացաւ, ծածկում է
ինձ, Շուշիկ ջան, թնդ ծածկի, ծովի տակը
լաւ է, խաղաղ, հանգիստ...

—Քուրիկ, ախր ես վախենում եմ, որ
դու էղպէս ես խօսում։

—Մի վախեցիր, մատաղ, դեռ շուտ է քեզ համար, ինչքան ժամանակ ունիս, ինձ համար է միայն, ինձ համար քամի էլ կայ, դուման... վչեց քամին, դուման ելաւ, սարու ձոր մթնեց, թուչունի բոյնը քանդուեց...

—Գիտես, քուրիկ, էն օրը մի թուչունի բոյն կար քարափի ճեղքում, մենք չը քանդեցինք, Ասօն ինձ միշտ ասում էր, որ չը քանդեմ:

—Լաւ արեցիք, Շուշիկ ջան, ինչու քանդեք, ուրիշները կը քանդեն. Ասօն էլ էր ասում, Ասօն... օծ, ողորմած Ասօն:

—Ես Ասօին շատ եմ սիրում:

—Լաւ ես անում, Շուշիկ ջան, սիրիր, սիրիր ախազօրդ, միայն ախազօրդ, յետոյ երբ մնածանաս, այն ժամանակ էլ միայն ախազօրդ սիրիր: Ես ախազեր չ'ունիմ, որ սիրեմ:

—Դու էլ ինձ պէս Ասօին սիրիր:

—Ասօին... Ասօին, օծ. Շուշիկ ջան, ես քեզ եմ սիրում, քեզ, էլ ոչ ոքի. և Շողերը կրկին սղմեց կրծքին փոքրիկի դլուխը ու հեկեկաց բարձրաձայն:

—Էլի լացեցիր, ախր ես վախենում եմ. մեռեների վրայ են լաց լինում, ես մեռելից վախենում եմ, քուրիկ:

Շուշիկն էլի սկսեց լալ: —Մի լար, մատաղ, երբ մեռել լինի, այն ժամանակ կը լաս, հիմայ հօ չը կայ, աես, ես կենդանի եմ, քու արցունքը թէ ձեռքիս ընկնի, կ'այրի:

—Կ'այրի:

—Հա, կ'այրի, սիրտս էլ կ'այրի:

—Էլ լաց չեմ լինի, ես կ'երթամ մայրիւ կիս մօտ, դու լաւ չես, լաց ես լինում:

Եւ փոքրիկ աղջիկն աղատուեց նրա գրկից ու դուրս թռաւ, կորաւ դրսի կիսախաւարի մէջ: Շողերը նայեց նրա յետեկից, ապա զլսապուած արցունքները թափուեցին, և խաւարտան մէջ երկար լսում էին նրա հեկեկանք ները: Յետոյ ինքն էլ դուրս եկաւ և շտապով կորաւ խաւարի մէջ: Մութ, գալարուն փողոցներով նա վազում էր դէպի գիւղից դուրս՝ աշխատելով չը պատահել ոչ ոքի. դուրս մութ էր, շատ մութ, և լուսնի շուրջ կարմիր բակ կար կապուած:

Շողերի փոյթը չէր ոչ թանձր խաւարը, ոչ արիւնոտ լուսինը. նա անընդհատ գնում էր խուլ, ամայի փողոցներով: Լճի կողմից վչող հովը կամաց-կամաց զօրանում էր, երավագիտ հետզհետէ ծածկում էր ամպերով, կինքը հետզհետէ

բնութեան մէջ մի անախորժ բան էր պատրաստում; բայց աղջիկն ասես այդ էլ չէր նկատում և քայլում էր անընդհատ: Մի անգամ միայն նա ցնցուեց ու մի վայրկեան կանդ առաւ, երբ հեռում լսուեց Ապրօի սարսափելի ձայնը՝ «զուլում, զուլում... Շողերը լսել էր, որ Ապրօն խենթ է, բայց նա վախենում էր խենթերից, ուստի շատակեցը բեց քայլերը. և հեռում շարունակում էր լսուել նոյն ձայնը.

— «Զուլում, զուլում»...

Գիւղից դուրս, այնտեղ, ուր սկսում էր գէպի լիճ տանող ձորը, Շողերի առաջ ցցուեց մի մարդ, որ սպիտակ կտաւը գցել էր ուսին վերից վար. հէնց նա էր, որ «զուլում» էր կանչում, Ապրօն և գալիս էր գերեզմանատնից: Նա թեսերը բացեց և փակեց Շողերի առաջ:

— Ո՞ւր ես գնում, աղջի, տես, լուսինը կարմիր է, ամպերը սե, գեերը շատ, գիշերը չար... թէ պատան ես ուզում, առ, ահա իմը... Սուրբ Կարապետն ասաց, թողարկը պատան առնեն, գերեզմանները գնացի մեռելահարցուկ, նրանք էլ նոյնն ասացին, ինչքան բաներ ասացին. ես էլ իմ փոսը փու-

րեցի, խոր ու սե, սիպտակ պատանը սե փոսի մէջ շատ սիրուն է. դէ, դարձիր, զաւակս, տես լուսինը, տես գիշերը, տես ամպերը, ոչ մէկը չի ուզում, որ դու գնաս. գնոնում ես, փախչում ես, պօծ...

Շողերը չէր լսում, նա թափով վազեց, անցաւ Ապրօի առաջից ու կորաւ խաւարի մէջ:

— Փախան, խափանուեց... ոգի, թէ մարդ, մնուել, թէ աղջիկ, խափանուեց:

Քամին սաստկանում էր, ամպերը կուտակւում էին, խաւարը թանձրանում, և համատարած, խեղդող գիշերուայ մէջ լսում էր.

— «Զուլում, զուլում»...

Նաւօն դեռ չէր վերադարձել, Գիւղնազը մենակ ճշում էր փողացներում, Շողերին էր փնդրում, այս ու այն դուռն էր թարկում, վախլուկ ստուերների պէս մի երկու հոգի դուրս էին գալիս, մօտենում էին Գիւղնազին, վնդրում էին միասին այս ու այն կողմէ, կանչում էին՝ Շողեր, Շողեր, պատասխան չը կար, և հեռուում շարունակում էր լսուել Ապրօի ձայնը.

— «Զուլում, զուլում»...

Փոթորկոտ, սոսկալի գիշեր էր...

XIV

Այն երեկոյ ձկնորս Նաւօն լճակի վրայ շատ ուշացաւ։ Մի ամբողջ շաբաթ էր, ինչ նա անընդհատ աշխատում էր կողովների վրայ և այսօր հաւաքում էր իր վաստակի պտուղը. ձկները շատ առատ էին։ Սրել մայր մտաւ. թեթև հովը փոքրիկ կնճիռներ շինեց լի հայելանման մակերեսոյթի վրայ։ Բազմաթիւ մանրիկ ալիքներ իրար հրճելով եւ կան քսուեցին կղզու ափերին, լիզեցին լսը ճերն ու ժայռերը, քրքջալով յետ ընկան, բայց գեռ Նաւօի նաւակն այնտեղ էր։ Սպիտակ, փոքրիկ առադաստը կամացուկ ուռչում էր, մեղմիւ օրօրւում և իր հետ տարութերում էր նաւակը ջրերի վրայ։

Հաւալուսները, ձկնկուլները, վայրի բաղերն ու այլ ջրային թռչունները այս երեկոյ շուտ հեռացան, շամբուաններում էլ վաղ լուեցին այնտեղ ծուարած թևաւորների ձայները։ Լեռներում, ձորերում հովիւները մնջեցին։ Սինակայ սարերի հսկայ ստուերները ձգուեւով հասան լին, մի պահ երերացին թըրթուն ջրերի երեսին և ապա լուծուեցին։

Երեկոյեան համատարած, միապաղաղ մառախուղի մէջ։ Լուսինը բարձրացաւ Մասսի թիւկունքից, արծաթազօծեց ծեր հսկայի ալեղարդ կատարը, նրա ցոկերը իջան ժայռերի վրայ, մութ մառախուղը ցրեցին, աստղերը մէկիկ-մէկիկ փայլեցին ու թարթեցին իրանց աչիները կապուտակ լծի մէջ. բայց նաւակն այնտեղ էր, գեռ օրօրւում էր ջրերի վրայ, գեռ առագաստը խաղում էր քամու հետ։ Նաւօն հանդարտութեամբ շարունակում էր ջոկջկել ձկները և առանձին-առանձին պարկերի մէջ տեղաւորել։ Նա նոյն իսկ գլուխն էլ չէր բարձրացնում, հանգիստ էր, քանի որ նա սովոր էր նոյն իսկ շատ աւելի ուշ վերադառնալ տուն։

Եւ նրա խաղաղութիւնն ու վստահութիւնն անհիմն չէին. նա գիտէր, որ երեկոյեան հովը միշտ փշում է Սինակայ լեռներից գէպի իրանց գիւղը, և փոքրիկ առագաստը բացած՝ նա մի կէս ժամում արագութեամբ կտրում էր ջրերի տարածութիւնը և տուն հասնում։

Լուսինն արգէն բաւական բարձրացել էր, երբ Նաւօն իր գործն աւարտեց, ուռի կանը հաւաքեց, նաւակի մէջ տեղաւորեց,

այդ ժամանակ միայն վերև նայեց լուսնին
և երկիւղից քար կտրեց։ Լուսնի կարմրը
բակը խիստ չարագուշակ էր. հովը սաստկաւ
նում էր, իսկ Սինակայ լեռների վրայ մը սե-
ամպ էր խտացել, որ աճում էր հա աճում։
Նաւօն փորձով դիտէր, որ այդ ամպը լաւ
նշան չէ։ Պէտք էր շտապել։ Նաւօն տեսաւ-
անհանդստութեամբ, թէ ինչպէս նաւակն
օրօրւում է աւելի ու աւելի սաստիկ, ինչպէս
առագաստն ուռչում է, լայնանում, և ցցին
կապուած պարանը ձգձգւում ու ճարճա-
տում։ Նա շտապով ջուախները նաւակի մէջ
տեղաւորեց, առագաստը պնդացրեց, պա-
րանն արձակեց, և ըստ երկոյթին յաջող հով-
մը նրա նաւակը տաշեղի պէս մղեց դէպի-
դիւզ, լաւ էր։

Նաւօն արագութեամբ տարւում էր ու-
ռած ալիքների վրայով և միենոյն ժամա-
նակ հայեացքը չէր հեռացնում Սինակայ
սարերից։ Այն ու ամպը չը լայնանայ, հովմն
իր ուղղութիւնը չը փոխի, մտածում էր նաւ-
օն, մնացածը հեշտ է։ Լուսնի բակն էլ չա-
րագուշակ էր։ Բայց նաւակը սլանում էր կա-
տաղի արագութեամբ, առագաստն ուռած-
էր, թիակներն էլ հարկաւոր չէին։ Ամեն ինչ

մոռացած՝ նաւօն աչք չէր հեռացնում ուեա-
թոյր ամպից։

Նա զգում էր, որ պէտք է շտապել։ Ա-
հա նա լճակի կիսումն է, էլի մի փոքր այս-
պիսի քամի, և նա ափին կը հասնի։ Բայց
ու ամպը լայնացաւ, լայնացաւ, վիշապի պէս
հաղար դլուխ շինեց և ձգուեց առաջ դէպի
ասողերը, դէպի լուսինը։ Առագաստն այն-
պէս է ուռած, որ մօտ է տրաքուելու, պա-
րանները ճարճատում են, կայմը ճռուում է
ցաւով, և նաւակը լեռնացած ալիքների վրայ
տարուբերւում է ահաւոր կերպով։ Նաւօն էլ
ինչ անելը չը դիտէ, նա կ'ուզէր գոնէ առա-
գաստն իջեցնել, բայց դա այնքան էլ հեշտ
չի, փոքրիկ անհաւասարութիւնը, որևէ պա-
չի, բայց անհաւասարութիւնը, որևէ պա-
չի, փոքրիկ առաջակուելը կարող է
բանի մի փոքր ուշ արձակուելը կարող է
նաւակը թեքել ու խորասուղել։ Նաւօն կանգ-
նաւակը թեքել է դեկը, շփոթուած նայում է,
նել, բռնել է դեկը, շփոթուած նայում է,
թէ ինչպէս ծռուում ու ճռուում է փոքրիկ
կայմը։

Ահա երկինքն արևմուտքում խոպառ
ծածկուեց, բայց լուսինը դեռ փայլում է
արեւելքում, ափը հեռու չէ, և նաւօն ցաւով
ու անհանդստութեամբ է նայում այն տա-
րածութեամբ, որ բաժանում է նրան ափից։

Ալիքները բարձրանում, դիղանում են, զարկ-
ւում են նաւակին, որ խաղում է անդունդ-
ների գլխին, մերթ ծովում, առագաստըքը-
սում է ջրերին՝ ասես չափելով խորութիւնն
եր գերեզմանի, մերթ կրկին բարձրանում,
տնքում ու ճոնչում։ Նաւօն մէկիկմէկիկ
ջուրը թափեց ձկնով լի պարկերը, իր ամբողջ
շաբաթուայ աշխատանքը, իղուր, նաւակը չը
փրկուեց և նա տնքում է ու ճօճւում, կը-
ռանում է ու բարձրանում անդունդների
վրայ։ Բայց մօտ է ափը, շատ մօտ, Նաւօն
տեսնում է եղրը, տեսնում է դաշտերը, Նա-
ւօն նշմարում է նոյն իսկ այն բարձր ցիցը,
որից սովորաբար կապում է իր նաւակը։
Ելի մի փոքր, և նա կը հասնի։ Բայց յան-
կարծ քամին փոխեց իր ուղղութիւնը, նա
փչում է հակառակ կողմից, ափը և գիւղն իր
ճրագներով արագութեամբ փախչում են
Նաւօն աչքերից և շուտով կորչում խաւարի
մէջ։ Նաւակն այժմ տարւում է գէպի լճա-
կի հակառակ կողմը, գէպի այնաեղ, ուր
գահավիժւում է ջրվէժը, և այնպիսի արա-
գութեամբ, որ Նաւօն գլուխն է պտտում։
Նա գցեց վերջին պարկը, գանակը հանեց,
պարանները կտրտեց, առագաստը փլաւ,

իսկ ինքը թիակները ձեռք առաւ և թիաշ
վարում է դէպի գիւղը, դէպի մօտիկ ափը
բոլոր ուժով։ Խղճւր, նաւակը տարւում է
գլուխ շշմեցնող արագութեամբ ուղիղ դէպի
ջրվեժը, որ այժմ սարսափելի է. ալիքների
թափից նրա ջրերը վար են գլորւում հսկայ
յործանքներով ու ահագին աղմուկով։ Մե-
նակ է նաւօն երկնքի և երկրի մէջ, կա-
խուած անդունքների վրայ, օրօրւում է լեռ-
նացած ալիքների վրայ, թրջուած, գողալով,
բայց դեռ կռւում է բնութեան դէմ, դեռ
աշխատում է փրկուել։ Աստղ չը կայ, քամին
մոնչում է կատաղի թափով, իսկ խաւարը
թանձրանում է հա թանձրանում։

Այժմ նաւօն մօտ է հակառակ ափին,
մօտ ջրվէժինչ նաւօն նայում է սարսափած
այն կողմը, ուր բացւում է ահաւոր ջրվէժի
մահաբեր երախը, նայում է և դողում է
ամբողջ մարմնով, ել ոյժ չունի մաքառելու
տարերքի դէմ. թիսկներից մէկը վաղուց
փշուել է, իսկ միւսը վար է ընկնում թու-
լացած ձեռքից, նա այժմ մոտածում է՝ որ-
պէս վերջին, գերագոյն փորձ, վերջին յու-
սահաս ճիգ՝ ջրվէժին հասնելուց առաջ նե-
տուել ալիքների մէջ և լողալով ափին հաս-

նել, թողնելով որ նաւակը խորասուզուի ջրվէժի առաջ նա լաւ լուզորդ է, այդ տաշը ածութիւնը կարող է կտրել, յոյս ունի կը բռել. նա արդէն աչքով չափում է ջրային ճանապարհը, նայում է այն կէտին, ուր ինքը հաւանականաբար ափ դուրս կը դայ:

Յանկարծ կայծակը ճայթեց երկնքում ահռելի որոտից յետոյ, փայլակը լուսաւորեց շրջակայթը մի վայրկեան, և նաւօն սարսափով նկատեց ափին մի ստուեր, մարդ, թէ դե, այդ նա ասել չի կարող, բայց մի երկայն, կասկածելի ստուեր, որ նաւօն լաւ նշմարեց իր սրատես աչքերով: Եւ այն ստուերը հէնց այնտեղ է, ուր հաւանականաբար պէտք է դուրս դայ նաւօն, աւելի հեռուն ջրվէժն է: Նաւօն մտահոգ է, նա չը գիտէ ինչ անել, ինչպէս դուրս գալ այդ կասկածելի ստուերի մօտ, ով գիտէ, ինչ է այն, հրէշ, դէմ... թէ չէ այս սարսափելի քամիին մարդն այնտեղ ինչ գործ ունի: Նաւօն գիտէ, որ չար գիշերներին այրերից ինչոր աև բաներ են դուրս գալիս և վազվլում լին շուրջը, ճչում, ոռնում ու հրձւում մրրկի հետ: Կայծակը նորէն ճայթեց, փայլակը կրկին լուսաւորեց, նաւօն կրկին

անեսնում է սոսկալի ստուերը, որ վազվլում է ափերով, գնում է դէպի ջրվէժը, յետ է գալիս:

Նաւօն երկու կրակի մէջ է, մի կողմից ջրվէժն է մօտենում, իսկ միւս կողմում կառկածելի ստուերն է, և նա նայում է մերթ մէկին, մերթ միւսին, նայում է ու դոզում: Նա պարզ լսում է ջրվէժի շառաչիւնը, լսում է նրա ալիքների ձայնը, կրկին նայում է ափին, խաւար է, էլ ոչինչ չի նշմարում: Փոթորիկը ոռնում է, ջրերը լեռնանում են, էլի մի քանի վայրկեան, և նաւօն իր նաւակով կը գահավիժուի ջրվէժի բարձրութիւնից, ուստի նա կանգնում է, երեսը խաչակնքում, նետում է ջրերի մէջ և լոզում դէպի ափը:

Նա մերթ կորչում է ալիքների տակ, մերթ յայտնուում է, թե կը ձգձգում, տաշը ածում և լոզում բոլոր ուժով: Եւ վերեսում որոտում են սև ամպերը, ճայթում է կայծակը հրեղէն ակօսներով, ալիքները լեռնանում ու փրփրում են՝ սսես կատաղած, որ իրանց գէմ այդ ահաւոր ժամին մաքառող մէկը կայ: Մօտ է ափը, մօտ է փրկութիւնը, և նաւօն լարում է իր վերջին ոյժերը, փրփուրէ բլուրները պատռում է ու

լողում առաջ Յանկարծ նա զգում է յրերի
մէջ մի մութ, սև զանդուած, որ մերթ
զարկում է իրան, մերթ ալիքների թա-
փով հեռանում Նաւօն սոսկում է, սև զան-
դուածը մարդկային մարմին է, նրան թւում
է նոյն խալ, որ նա կենդանի է, որ փոր-
ձում է բռնել իրան՝ գուցէ անդունդները
վար քաշելու համար Յետին ճիգերն է հա-
ւաքում Նաւօն և ձգւում է առաջ այդ սար-
սափելի արարածից աղատուելու համար և
նոյն վայրկենին զգում է, թէ ինչպէս մի
ձեռք կախուեց իր ոտքից Նաւօն սոսկումնվ
բռնուած՝ ոտքի մի ուժգին հարուածով յետ
է մղում այդ ձեռքը, փորձում է կրկին լոդ
տալ, և նոյն ձեռքը այս անդամ մի յուսա-
հատ ճիգով գրկում է նրան, այս անդամ
սկսում է մի չը տեսնուած պայքար այս
խորհրդաւոր մարմնի և Նաւօի մէջ, վերջինս
աշխատում է աղատուել նրանից, ցնցում,
դալարում է, միւսը կախում է նրանից
բոլոր ուժով, և խեղդուում, քաշըշում են
իրար այս երկու մարմինները փրփրած ա-
լիքների մէջ, մինչդեռ կայծակները վերից
ճայթում են նրանց գլխին, ամպերը որոտում
խլացուցիչ թափով։ Զրի չար ոգի է, թէ մի

հրէշ, Նաւօն այդ չը դիտէ, բայց զգում է,
որ խորհրդաւոր մարմինը աշխատում է նրան
քաշել իր հետ դէպի անդունդները. բայց
Նաւօն հմուտ է և ուժեղ, նա ուզում է
ապրել, ափն էլ մօտ է. նա յոյս ունի փըր-
կուել. ուստի մի վերջին անդամ աղատուում
է այդ սարսափելի էակից, ոտի մի ուժեղ
հարուածով մղում է նրան դէպի անդունդ-
ները ինքը ալիքների թափով նետում դէ-
պի ափը և գետին ընկնում ուշաթափ-
իչ ափը և գետին ընկնում ուշաթափ-
իչ նոյն վայրկենին նրա վրայ կուանում է
մի մարդկային ստուեր, գրկում, բարձրացը-
նում է, մռմռում է ինքն իրան, ի վերջոյ
շալակում է կիսամեռ Նաւօին և խաւարի
մէջ քայլում է՝ որչափ կարելի է արագ-
կայծակները շարունակում են ճայթել եր-
կընքում, ամպերը որոտում են անընդհատ,
անձրել քամու ուժեղ թափով շփում է շեշ-
տակի, բայց մարդը քայլում է հա քայլում
խաւարի մէջ։

տերը խողանների վերածուած՝ մրջօրէի տօշթին լեռնալանջերի վրայ երևում էին որպէս մեծամեծ դեղին բժեր, և բարակ, թափանցիկ փոշին ամպ կապած, անշարժ կանգնում էր ճանապարհներին մօտիկ դաշտերի վրայ։ Հեռաւորութեան մէջ, մի լեռնալանջում, մի ձորում, մի հովտում երբեմն երբեմն երևում էր որեւէ անասուն, մի կով, մի եղ կամ մի հորթ մննակ արածելիս, կամ անշարժ կանգնած միենոյն տեղում, կիսախուփ աչքերով, որ կարծես երազում էր՝ մթնոլորտի մէջ հոտոտելով մօտեցող աշունը։ Մի բարձած սայլ էր յայտնւում հեռու ճանապարհի վրայ, գիւղացին քշում էր եղները, խակ կինը հետեւում էր աղութի փոշու մըջից։ Նրանք բերում էին դաշտից իրանց վերջին բարիքը։ Երկնակամարը առաւտուեան և երեկոյեան ծածկում էր թափանցիկ թուխպերով, որ միջօրէի արեը իր տակաւին կիզիչ շողերի խուրձերով աւելում, սրբում էր՝ փոքրիկ, մուժ ամպային կոյտեր կազմնլով հորիզոնների վրայ բարձր լեռնակատարներին։ Թըռչումների ճիչ ու ճուռղիւնի մէջ պակասում էր դարնանային եռանդը, նրանց երդերի մէջ մի շեշտ էր հնչւում, որ յոդնած բնոււ-

թեան մրմունջը լինէր ասես։ Սարեակներն էլ առանձին զոյգեր չէին, բնութեան անհասկանալի և նուիրական օրէնքը կատարուած էր, մի ամբողջ նոր սերունդ էր առաջ եկել նրանց կենակցութիւնից, և այժմ ըները թողած՝ ահագին երամներով ծածկում էին գեղնաւուն խողանները կամ թըռչելով վաղանցուկ սև ամպ կապում արևի պայծառ շողերի առաջ։

Վհատութեան, անորոշ անհանդստութեան պէս մի բան կար մթնոլորտի մէջ, որ յեղյեղում, տարածւում էր ամեն կողմ, հոսանուտ ծալքերով պարուրում էր ամեն ինչ, փափսում էր ծառերի մէջ, կարկաչում էր ափերին քսուող ջրերի հետ, մրմնջում էր գիշերները հեծեծող հովերի հետ, և կենդանական բնապդը մի յետին փութկուկենդանական բնապդը թափ առած՝ բոլոր աշխատանքառութիւններին տալիս էր զգուշաւոր տենդոսութիւններին տալիս էր զգուշաւոր տենդոսութիւններին տապում էին նրանք, որոնց կալերում տանտապում էին նրանք, որոնց կալերում էր, կաւին ցորենի գեղեր կային, շտապում էր, ով իր արմուկը դաշտից տուն բերած չէր, ով իր բնակարանի կտուրը կարկատած, ով իր բնակարանի կտուրը կարկատած, պատերը պնդացրած, ճեղքերը գոցած չէր. շտապում էին խոտերը, որոնց արմատների շտապում էին խոտերը,

մէջ մի յետին կենսունակութիւն կար, մի յետին ծիլ, ցողուն դուրս մզելու. շտապում էին ծաղիկները իրանց վերջին կոկոնները բանալու. արեկ տակաւին ուժեղ շողերի փայն ու չերմը գողանալով՝ շտապում էին ձորերն ու հովիանները կանաչի մի վերջին սփռոց ձգելու իրանց մերկացած թիկունքներին, որ ծիւնի հաստ շերտի սառնութիւնը մահացու չը լինի: Շտապում էր ամբողջ բնութիւնը, բայց յոդնած ու ծեր հսկայի պէս իր անզօրութիւնը զգալով՝ գունատ, անփայլ մի ժպտով հեռում էր, հանդարտ սպասելով իր վերջալուսին՝ գերագոյն ճակատագրից խուսափելու մի ցաւոտ անկարութեամբ:

Մէկ Գոպէն չեր շտապում և շտապեալք էլ չունէր. քանի այսպիսի ամառներ ու աշուններ էին բոլորել նրա գլխով, քանի քանի անդամ թռչունները չուել էին ու վերադարձել, և ծեր ջրաղացպանն այնտեղ էր, միենոյն քարի, միենոյն չախչակի առաջ, ուր նա ամեն ինչ ունէր: Գոպէն դարձեալ չեր շտապում, բայց անհանդիստ էր, աւելի տիսուր, աւելի մուայլ, քան երբեկցէ: Անցած օրերի մոռացութեան մոխիլների տակ

նա վազուց թաղել էր իր երիտասարդութեան ցաւը. թաղել էր նաև իր կեանքը և յոյս ունէր իր բոլոր կրածների փոխարէն խաղաղ ու հանգիստ վախճան ունենալ միայնութեան մէջ, յոյս ունէր, որ ոչինչ և ոչ ոք չի գայ խռովելու նրա կորած կեանքի վերջալուսի խաղաղութիւնը: Զէ որ նա ոչ ոքի վնաս չէր տուել իր երկար կեանքի ընթացքում, չէ որ եղել էր բարի, ճշմարտասէր, երկիւղած, արդար, չունեորները, խեղճերը միշտ վայելել էին նրա գթասրտութեան, առատաձեռնութեան պտուղները, անցորդները, ճանապարհորդները, ուխտաւորները, նոյն խոկ աւազակները նրա գրանը, նրա հինաւուրց ջրաղացում հանգիստ և ուտելիք էին գտել տարուայ բոլոր եղանակներում. այսքանը բոլորովին բաւական պիտի լինէր, որ Գոպէն իրաւունք ունենար հանգիստ խղճով փակել աջքերը՝ իր խղճի վրայ ճանրացած հին բեռից ազատուած: Միթէ երկինքն այնքան վրէժինդիր է, որ յանցաւոր գլխի վրայից անէծքի բեռը երբէք և ոչնչով չի վերցնում, մըթէ մահկանացուներին անդամ ծանօթ անյիշաշարութիւնը երկնքին հաճելի, սովորական չէ:

Այս խորունկ հարցերի պատասխանը Գոպէն չը գիտէ, նրան անյայտ են երկնքի խորհութեան ները, միայն նա անորոշ կերպով զգում է, որ իր ծեր օրերին, իր ծեր գլխի շուրջը մի բան է պատրաստում, թէ ինչ, նա ասել չի կարող, բայց հաստատ հաւատացած է, որ դա մի չարագուշակ, մի ահաւոր բան է, մի փոթորիկ: Գոպէն ցաւով է մտածում այդ անորոշ սարսափի մասին, չէ որ նա ծեր է, յոդնած կեանքից, աշխարհից, չէ որ նրա կորացած մէջքը, մաշուած ոսկորներն էլ չեն կարող տանել մի նոր բեռ: «Ասօ, Ասօ», մըր միջում են նրա շրթուքները, նա բերեց այդ բեռը, նա եկաւ, մոխիրների տակից հանեց հին օրերի մորմոքող ցաւը:

Ո՞ւր գնաց նա. ջրաղացի վերջին գիշերային գէպքից յետոյ Ասօն էլ չը յայտնուեց, գնաց ու գնաց: Օրեր անցան, նաև շաբաթներ, Ասօն չը կար. գիւղում էլ չէր, նրա ուր լինելը ոչ ոք չը գիտէր, նրան ոչ ոք չէր տեսել: Նունուֆարն ու Գիւղաղը մի անգամ եկան ջրաղաց, Գոպէն երկար բարակ հարց ու փորձ արին, աղաչեցին ասել, թէ նա ուր է, ինչու գնաց, Գոպէն ճշմարտութիւնն ասաց, նա չը գիտէր՝ ուր է Ասօն,

բայց երկու կանայք վերադարձան դժգոհ. նրանց թւում էր, թէ Գոպէն մի բան է թագացընում, մի ծանր գաղտնիք գիտէ: Ջրաղացի գրանը կանգնած՝ նա երկար ժամանակ նայում էր, թէ ինչպէս երկու պառաւները գնում են յուսահատ, և սիրտը ցաւից ճմլւում էր նրանց համար, Ասօի համար, նուզերի համար: Ո՞ւր գնաց արդեօք. նա յիշեց այժմ, որ Ասօն այն գիշեր ասաց, թէ ինքը ոճրագործ է, թէ գնում է գէպի սրբերը, թէ ուխտ է գնում: իր յանցանքը քաւելու... ուխտ... նոյն բանն ասացին այն ուխտաւորները, Գոպէն մնաց մտածկոտ... ուխտաւորները, միթէ գնաց, գտաւ նրանց, միթէ նրանց հետ ու կարապետ գնաց, ինչպէս իմանալ, ում հարցնել. «Փեղծ կանայք, ջրատար նողեր»... կրկնում էր նա անգադար:

Ջրաղացի յետեւում ուռիների մէջ բուն գիշերները շարունակում էր վոյշվոյը. Գոպէն կ'ուզէր, որ քարն աւելի ուժգին գառնայ, չախչակն աւելի բարձր չմկշմկայ, փառն աւելի թափով աղմկի ջրերը, որ այդ անիծուած թռչունի ձայնը չը լսի, բայց իդուր, ամեն գիշեր կէս գիշերից սկսած՝ բուն

Ճայնը հնչւում էր նրա ականջներում, և
շախակի նիրհեցնող կանչուոտոցը, ջրաղացի
ամբողջ օրօրող աղմուկը անկարող էին նրան
քուն տալ: Լուսաբացին նա դռւրս էր դալիս
մի հաստ փայտ ձեռքին, կուզեկուզ թափա-
ռում էր ուռիների տակ, ծեր աչքերով
պրապում էր ծառերի սաղարթները՝ աշխա-
տելով գտնել և սպանել ատելի թռչունին,
բայց նրա ջանքերն իզուր էին անցնում:
Յոդնած ու յուսահատ յետ էր դալիս, նըս-
տում ջրաղացի թմբի վրայ, ալեղարդ գը-
լուխը կրծքին կախած՝ մտածում էր Ասօի
մասին, վերջին անցքերի Էմասին, մումտում
էր հաղար ու մի սե բաներ, և չիբուխի
ծուխը անընդհատ բարձրանում էր քուլայ-
քուլայ: Սյամ աւելի՝ քան երբեկցէ՝ Գոպէն
կարօտում էր կենդանի արարածի, խօսակցի,
կարօտում էր մի տաք սրտի, բայց դաշտե-
րում մարդիկ սակաւանում էին օրաւուր,
անցուգարձը նուազում էր, և Գոպէն ան-
վերջ նայում էր դէպի հեռաւոր ճանապար-
հը, դէպի դիւղը, դէպի դաշտերը: Երջա-
կայքը ամայի էր:

Աստուածածնի տօնը մօտենում էր, նա
որոշել էր այդ օրն անպատճառ եկեղեցի

գնալ, իւչ-Քիլիսէի վանքից մի վարդապետ
պիտի գար, պատարագ էր լինելու, վերջում
քարոզ: Ջրաղացի դրանը նստած՝ նա մտա-
ծում էր այժմ, թէ դիւղը որքան պիտի գար-
մանայ, երբ Գոպէն յայտնուի եկեղեցում.
ամենքը գիտէին, որ ծեր ջրաղացպանը մի-
այն Մրրկի սրբի խաչքարն է ճանաչում, միայն
այնտեղ է աղօթում: Բայց Գոպէի փոյթը չէ,
նա կ'երթայ անպատճառ, նա ուզում է քա-
րող լսել:

Արել թեքուեց դէպի հորիզոնը, երեկոյ
էր արդէն, ու դեռ Գոպէն նայում էր հե-
ռուն՝ յուսալով մի կենդանի ստուեր ջոկել:
Նրա յոյսերն ի գերեւ չ'ելան, հեռուն՝ ճանա-
պարհի վրայ՝ մի մութ կէտ յայտնուեց, որ
գնալով մեծացաւ և մարդկային կերպա-
րանք առաւ: Ծերունին ձեռքը ճակատին
դրեց, աչքերը ըստ իր սովորութեան թար-
թել սկսեց որոշելու համար, թէ ով է
եկողը: Քայլուածքից, զգեստից երեսում էր,
որ կին է, միթէ դարձեալ նունուֆարն է,
մտածեց Գոպէն անհանդստութեամբ. նա
կ'ուզէր, որ նա չը լինի, այդ դժբախտ կնոջ
ցաւը, սրտի մորմոքը տանելու էլ կարողու-
թիւն չ'ունէր: Ստուերն էլի առաջացաւ.

Գոսպէն շարունակում էր նայել ուշադրութեամբ, նա ճանաչեց. սևազգեստ այդ կինը կոյս-Գուլէն էր. Բայց ուր է դնում նա այժմ, արդեօք՝ դէպի վանք, թէ ինձ մօտ է գալիս, մոտածեց Գոսպէն. օրուայ այդ ժամին վանք անկարելի է դնալ, մութը վրայ կը հասնի, թէ Գուլէին ինչ, շարունակեց ինքն իրան խօսել Գոսպէն, նա որ ուզի, գիշերով էլ կ'երթայ, միայն օրը լաւ չէ. Տէ՛ր Աստուած, արևմուտքում ամպեր կան և այն փոթորկաբեր. չէ, Գոսպէն չի թողնի, որ խեղճ պառաւը գնայ թրջուի, նա նրան յետ կը դարձնի անպատճառ։ Սյս մոքերն արագութեամբ անցնում էին ծերունու դլսով, մինչդեռ սևազգեստ կինը դանդաղ քայլուածքով առաջանում. էր դէպի ջրաղացը։

XVI

Կոյս-Գուլէն Ա... գիւղի ժամհարը և կին-մեռելլուացողն էր միաժամանակ. Գիւղում քչերը գիտէին նրա դլսի հետաքրքիր անցքը, և այդ քչերից մէկն էր Գոսպէն։ Եւ այժմ, երբ այդ սևազգեստ կինը առաջանում էր դէպի ջրաղացը, այդ կեանքն իր բոլոր տա-

բօրինակութեամբ գալիս՝ անցնում էր Գոսպէի աչքի առաջից։ Նատ տարիներ առաջ, իր ջահիլութեան օրերում Գուլէն՝ կամ ինչպէս նրան այն ժամանակ անուանում էին՝ Գիւղի-զարը մի սիրուն, կենսալի աղջիկ էր, մէկն այն հազւագիւտ երջանիկներից, որոնց յաջողում է երբեմն գիւղերում իրանց բաղդը կապելսիրած տղամարդի հետ։ Դա մի նախանձելի ամուսնութիւն եղաւ շատ և շատ աղջիկների համար։ Բայց Գիւղիզարի երջանկութիւնը երկար չը տեսեց. բախտը նրան վերապահել էր ամուսնութիւնից յետոյ մի զարհուելի հարուած։ Երջանիկ Գիւղիզարի հարսնութիւնից հազիւ մի քանի ամիս էր անցել, երբ նախ փափսուկով, զգուշութեամբ, ապա կամաց-կամաց աւելի բարձրածայն՝ գիւղում անսպասելի լուր տարածուեց, թէ Գիւղիզարի ամուսինը առնականութիւնից զուրկ է, թէ ծնողները կարծում են, թէ թշնամիները թլիսմով կապել են, բայց հազար ու մի միջոցի են դիմել, թուղթ անել զար ու մի միջոցի են դիմել, թուղթ անել տալ, ուխտ գնալ, ոչինչ չի օգնել։ Առաջին տարին սակայն այս լուրը համարեցին բամարին սակայն այս լուրը համարեցին բամարին սակայն այս լուրը համարեցին բամարին սակայն կասկածելի, երբ բասանք, երկրորդ տարին կասկածելի, երբ բորդ և չորրորդ տարին՝ մանաւանդ կանայք

Հաստատապէս պնդել սկսեցին, նոյն իսկ ասողներ եղան, թէ Գիւլիզարը ուզում է թողնել և վերադառնալ հէրանց տուն։

Ահա այդ ժամանակ մէջ ընկաւ գիւղի ծերունի քահանան։

—Գիտես, որդի, ասաց նա մի խոստուվանութեան ժամանակ. ահա երրորդ տարին է, ինչ ամուսնացած ես, բայց երեխայ չ'ունես, ի հարկէ՝ դա Աստծու կամքն է, բայց ինչ որ բաներ են ասում գիւղում, ես քո հոգեսոր հայրն եմ, պարտական եմ իմանալ... հաշիւ ու համար ունիմ տալու Աստծու առաջ, ես եմ պատկել...

Քահանան սպասում էր, թէ Գիւլիզարը պիտի սաստիկ շփոթուի, նեղուի, և պատրաստում էր Ս. Գրքից վկայութիւններ ճարել նրան համոզելու, խօսեցնելու համար։

—Ինչ որ ասում են, ճշմարիտ է, տէր հայր, պատասխանեց յահիլ կինը ամենայն համարձակութեամբ։ Յուզուած ու շփոթուած քահանան ճակատից քրտինքը սրբեց, գլուխը բարձրացրեց և կրկնեց։

—Տէր, ողորմեան։

Լուսութիւն տիրեց, Գիւլիզարը գլուխը քաշ, ծնկաչոք՝ քահանայի առաջ, իսկ վեր-

յինս աչքերը սեղանին յառած, յուզուած ու քրտնաթոր ճակատը սրբելով։

—Տէր, ողորմեան, որդի, ուրեմն ամուսինդ...

—Ամուսինս մարդ չէ, մարդութիւնից զուրկ է, շեշտեց կինը նոյն համարձակութեամբ։

Բարիքահանան իսպառ շփոթուեց, գլուխը կորցրեց։

—Բայց դու ինչ գիտես, որդի... Քահանան շարունակել չը կարողացաւ զգալով, որ անմիտ բան է ասում։

Գիւլիզարն այս անգամ լուռ էր, գլուխը բարձրացրեց, նայում էր և սպասում։

—Տէր, ողորմեան, Տէր, ողորմեան, մեղայ Քեզ, Աստուած, մեղայ, շարունակում էր քահանան. նրա ձայնը կերկերաց, արցունքը թափուեց աչքերից և գլորուեց խորշումած այտերի և ճերմակ միրուքի վրայով. նա երկու Ճեռքով ծածկեց երեսը։

—Մեղաւոր եմ, Տէր, կորաւ իմ հոգին մեղքի մէջ... գեհեն... գժուխք...

Գիւլիզարը սաստիկ յուզուած՝ բռնեց քահանայի արցունքու աջը, ծածկեց այն համբոյրով։

Հաստատապէս պնդել սկսեցին, նոյն իսկ առղներ եղան, թէ Գիւլիզարը ուզում է թողնել և վերադառնալ հէրանց տուն։

Ահա այդ ժամանակ մէջ ընկաւ գիւղի ծերունի քահանան։

—Գիտես, որդի, ասաց նա մի խոստովանութեան ժամանակ. ահա երրորդ տարին է, ինչ ամուսնացած ես, բայց երեխայ չ'ունես, ի հարկէ դա Աստծու կամքն է, բայց ինչ որ բաներ են ասում գիւղում, ես քո հոգեսոր հայրն եմ, պարտական եմ իմանալ... հաշիւ ու համար ունիմ տալու Աստծու առաջ, ես եմ պատակել...

Քահանան սպասում էր, թէ Գիւլիզարը պիտի սաստիկ շփոթուի, նեղուի, և պատրաստում էր Ս. Կրքից վկայութիւններ ճաշրել նրան համոզելու, խօսեցնելու համար։

—Ինչ որ ասում են, ճշմարիտ է, տէր հայր, պատասխանեց ջահիլ կինը ամենայն համարձակութեամբ։ Յուղուած ու շփոթուած քահանան ճակատից քրտինքը սրբեց, գլուխը բարձրացրեց և կրկնեց.

—Տէր, ողորմեան։

Լութիւն տիրեց, Գիւլիզարը գլուխը քաշ, ծնկաչոք՝ քահանայի առաջ, իսկ վեր-

յինս աչքերը սեղանին յառած, յուղուած ու քրտնաթոր ճակատը սրբելով։

—Տէր, ողորմեան, որդի, ուրեմն ամուսինդ...

—Ամուսինս մարդ չէ, մարդութիւնից զուրկ է, շեշտեց կինը նոյն համարձակութեամբ։

Բարի քահանան խօսառ շփոթուեց, գլուխը կորցրեց։

—Բայց դու ինչ գիտես, որդի... Քահանան շարունակել յլ կարողացաւ զգալով, որ անմիտ բան է ասում։

Գիւլիզարն այս անգամ լուռ էր, գլուխը բարձրացրեց, նայում էր և սպասում։

—Տէր, ողորմեան, Տէր, ողորմեան, մեղյ Քեղ, Աստուած, մեղյ, շարունակում էր քահանան. նրա ձայնը կերկերաց, արշունքը թափուեց աչքերից և գլորուեց խորշումած այտերի և ճերմակ միրուքի վրայով. նա երկու ձեռքով ծածկեց երեսը։

—Մեղաւոր եմ, Տէր, կորաւ իմ հոգին մեղքի մէջ... գեհեն... դժոխք...

Գիւլիզարը սաստիկ յուղուած՝ բռնեց քահանայի արցունքոտ աջը, ծածկեց այն համբոյրով։

— Տէր հայր, աջլու մեռնեմ, ոչ դու ես
մեղաւոր, ոչ ես և ոչ իմ ամուսինը. անկա-
րելի է ջնջել այն, ինչ դրուած է այստեղ: Նա
ցոյց տուեց իր ճակատը:

— Ճակատագիրը... հա, որդի, Աստծու
բանն է, բայց... չէ որ ես պսակեցի, ես
միացրի ձեր աջերը... ով կարող էր իմա-
նալ, ով կարող էր կասկածել... Նա մի
փոքր կանգ առաւ, գլուխը ձեռքերի մէջ
առաւ, մոռածեց և յանկարծ մի գիւտ արա-
ծի պէս բացականչեց.

— Աա, կաց, որդի; հնարը կայ, հնարը,
ես ինչպէս էի մոռացել, դրոց աշակերտ
եմ... ես եմ արել, ես կը քանդեմ, ձեր
կապը խղուղղներից է, ես մի հոգի չեմ
կորցնի, եկեղեցին արդար է, ձեր պսակը
պէտք է լուծել:

— Մեր պսակը չի լուծուի, հայր ջան:

— Օ՛, դու չը գիտես, որդի, ես գի-
տեմ, կը լուծուի:

— Ես գիտեմ, տէր հայր, բայց չը պէտք
է լուծուի:

— Ո՞վ կարող է արդելել, ամուսինդ:

— Ոչ, մի ուրիշը կայ, որ կ'արդելի այդ:

— Ո՞վ:

— Ես:

Քահանան գլուխը բարձրացրեց և զար-
մացած նայում էր:

— Դու չես կամենայ:

— Այն, հայր ջան, ես չեմ ուզում, ես
չեմ կարող, իմ պսակը չը պէտք է լուծուի.
Ես սիրում էի նրան ինչպէս ամուսին, այժմ
սիրում եմ և կը սիրեմ ինչպէս եղբօր. Եր-
բերեւ մարդ ու կին կապուեցինք իրար հետ,
այժմ ապրում ենք ինչպէս քոյրեղբայր, մի-
թէ Աստծուն այդ անհաճոյ կը լինի, միթէ
նրա կամքով չեղաւ այդ:

— Բայց, որդի, ամուսինների պտղաբե-
րութիւնը երկինքն է օրհնել, Տէր Աստուած
ինքն է ասել՝ «աճեցէք և բազմացարուք»:

— Վարդապետները... կոյսերը...

— Բայց ամուսնացած կոյս...

— Մենք քոյր ու եղբայր ենք. գուցէ
լաւն այս է, հայր ջան, ով կարող է հասկա-
նալ երկնքի կամքը. ամեն մի երկունք մի
մահ է, ամեն մի զաւակ մի ցաւ, հոգսի
աղբիւր. գուցէ նա կամեցաւ աղատել ինձ
երկունքից ու զաւակից՝ ուրիշների արցունքը
որբելու, — չէ արցունք շատ կայ աշխարհում,
ուրիշների ցաւերը քաշելու, — չէ ցաւերով

լի է կեանքը, այդ դու էլ ես միշտ ասում
քո քարոզների մէջ։ Ես այլ ևս կին չեմ, այլ
տղամարդ, անտէր մեռելների աչքերը ես
կ'երթամ փակելու, որբերի արցունքը ձեռ-
քովս կը սրբեմ. ես կոյս եմ, և իմ կուսու-
թիւնը երկնքին է պատկանում. իմ պսակն
անլուծելի է, երկինքն է այդպէս կամեցել-
երբ մազերս խսպառ ճերմակեն, և մէջքս կո-
րանայ տարիների բեռի տակ, դիւզը երեկ
կը տայ ինձ մի ապաստան, և երբ աչքերս
փակեմ, մի փոս փորող միշտ կը ճարուի։

Քահանան ձեռքը նրա գլխին դրեց,
պահպանիչ ասաց, և երբ Գիւլիզարը գուլու
գնաց եկեղեցուց, նա մօտեցաւ սեղանին,
կրկին ծունկ չոքեց և երկար-երկար աղօ-
թում էր։

Գիւլիզարը տուն գնաց և երկար մտա-
ծելուց յետոյ՝ այդ օրուայ խոստովանու-
թիւնը հազորդեց ամուսնուն։

— Քահանան իրաւուք ունի, լաւ է
ասում, ինչու ես ջահիլ արևեդ սեացնում ինձ
համար։

— Քանի դու կենդանի ես, ես քեզանից
անբաժան եմ, պատասխանեց Գիւլիզարը։

— Իսկ եթէ մեռնեմ։

— Այդ Աստծու ձեռքն է, կարելի է
ես եմ վաղ մեռնում։
— Ընդունենք, թէ Աստուած կամեցաւ,
և ես յանկարծամահ եղայ, յետոյ։
— Զը դիտեմ, թնդ միայն Աստծու
կամեցածը լինի։

Ամուսինը պատասխան չը տուեց. Նա
մտազբաղ էր աւելի, քան երբեկցէ։ Երե-
ւում էր, որ կնոջ պատասխանը նրան չէր
գոհացնում։ Նա մինչեւ այժմ երբեք այդպէս
խորը կերպով չէր մտածել այդ հարցի մա-
սին, նրան թւում էր, որ երբ կինը հնա-
զանդ իր ճակատագրին՝ տանում է այդ ան-
քընական կենակցութիւնը, այլ ևս ոչ մի ան-
պատեհութիւն, անարդարութիւն չը կայ։ Այս
օրուայ խօսակցութիւնից յետոյ նրա աչքերը
կարծես բացուեցին, իրերն այլ կերպարան-
քով ներկայացան նրան։ Կինը մնում է մի-
այն իր համար, թէ ինքը յանկարծ անյայ-
տանայ, ի հարկէ՝ Գիւլիզարը երջանիկ կը լինի.
ինչու, ինչ իրաւունքով սեացնել նրա կեան-
քը, ինչու այդքան ծանր մեղք յանձն տռնել
կապից, որպիսին իրանց պսակն է։ Եթէ

կինը չի ուզում պսակի լուծումը, ուզի, չուզի, ամուսնալոյն կը դառնայ, երբ ինքը վերանայ մէջտեղից Եւ նոյն գիշեր նա Գիւլիզարին քնած թողեց, տնից անյայտացաւ Գիւլում և շրջակայքում ոչ ոք չիմացաւ, թէ նա ինչ եղաւ. ընդհանուր կարծիք կազմուեց, թէ նա լիճը նետուեց կամ մի այլ տեղ վերջ տուեց կեանքին՝ ամօթից աղատուելու և դժբաղդ կնոջը աղատութիւնը վերադարձը նելու ցանկութիւնից դրդուած։

Հարուածը ծանր էր. Գիւլիզարը սկաց, արտասուեց երկար, բայց յամառաբար վճռեց իր ուխտը կատարել և այդ գնով ձեռք բերած աղատութիւնից չօդտուել։ Ամուսնու հեռանալուց մի քանի տարի յետոյ, երբ նրա վառ այտերը խամրեցին, և ճակատին առաջին խորչոմները ու մազերի մէջ առաջին ճերմակները երեւացին, նա էլ սգի զգեստը լը հանեց, եկեղեցու բակի փոքրիկ խցի մէջ տեղաւորուեց, այնուհետև նա ժամանակը էր և կինսմեռել լուացով։ Գիւլիզարը դարձաւ կոյս-Գուլէ և նուիրուեց եկեղեցուն։ Տարիներ անցան, հին սերունդը մոռացութեան տուեց Գուլէի զարմանալի պատմութիւնը, նոր սերունդը իսպառ անձաւ

նօթ մնաց, բայց ամենքը գիտէին, որ եկեղեցու բակում մի կին է ապրում, մի բարի, արդարասէր կին, որ ծանր հիւանդի հետ գիշերները լուսացնում է, սգաւորների ալշնից ամենից ուշ է հեռանում, ամեն մի մեռելի համար մի կաթ արցունք ունի, ամեն մի չունեորի համար զգեստի մի կտոր ունի մեռելների կողոպուտից, որի դուռը կարելի է թակել գիշեր թէ ցերեկ, երբ պէտք լինի լաց լինել կամ արցունք սրբել։ Կոյս-Գուլէն ոչ միայն հիւացմունքի, այլև ընդհանուր զարմանքի առարկայ էր։ Նա անգիր գիտէր ամբողջ ժամասացութիւնը, ի հարկին օգնում էր քահանային, կամ եթէ հարկ չը կար, կանգնում էր իր որոշ տեղում, դրան մօտի սեանը յենուած և ցած ձայնով քաղում էր բոլոր աղօթքներն ու շարականները։ Ոտքից գլուխ սե, բարձրահասակ ու պատկառելի, նա այդ ժամանակ սքանչելի էր, կառելի, նա այդ ժամանակ սքանչելի էր, մի սրբակրօն, երկիւղած կոյս։ Նա վախ չունէր ոչ մեռելներից և ոչ կենդանի մարդկանցից։ առաջինները նրա մշտական ընկերներն էին, իր կեանքի ընթացքում նա քանիսի երեսքաշն էր յարդարել ուշ գիշերով եկեղեցում մենամենակ,

Երբ գնացել է մոմերը փոխելու, քանիսի՞ն
էր լուացել և գերեզման առաջնորդել, քա-
նիսի՞ աչքերը իր ձեռքով փակել։ Երբ նա
շրջում էր գերեզմանատանը հողաթումը երի
և ժայռակտուր դամբանաքարելի մէջ, կար-
ծես մի հովիւ լինէր, որ նայում էր իր մա-
կաղած հօտը, նա տէր էր այնտեղ և իր
շուրջը՝ ննջեցեալների այդ յաւիտենական
ընակարանների վրայ այդ ժամանակ կարծես
նուիրական խաղաղութիւն էր սփոռում։ Կեն-
դանի մարդկանցից էլ չէր վախենում, որով-
հետեւ ամենքը, անդամ այլազդիները, քըր-
դերը, թափառական վրանաբնակները, ան-
դամ աւաղակները պատկառում էին նրա-
նից, երբեմն նոյնիսկ վախենում էին, երբ
տեսնում էին հեռուից այդ գերեզմանների
«ջիննուն», ինչպէս ասում էին նրանք, և աշ-
խատում էին հեռուից շրջել։ Երես առ երես
հանդիպելիս՝ խոնարհ գլուխ էին տալիս և
շտապով հեռանում էին։ Շրջակայ աւազա-
կաբարոյ ցեղերի մէջ հազար ու մի պատմու-
թիւններ էին պատմում գերեզմանների
ջիննու մասին։

Գուլէն գիւղից դուրս երկու տեղ ու-
նէր գնալու, նախ՝ շաբաթը մի անդամ կի-

րակնամտին բարձրանում էր Մըրկի սրբի
խաչքարը, ձէթ ածում և վառում, իսկ կիւ-
րակէ օրերը երբեմն ոտքով իւշ-Քիլիսէ էր
գնում՝ վանկի վանահօր աջը համբուրելու-
եւ նա գնում էր միշտ մենամենակ, անվախ
ու համարձակ, ամենքը պատկառում, ա-
մենքը քաշում էին նրանից։ Վաղուց, շատ
վաղուց նա արդէն մոռացութեան էր տուել
իր ամուսնուն, համոզուած նոյնիսկ, որ նա
մեռել է, երբ մի օր յանկարծ լուր տարա-
ծուեց, թէ նա կենդանի է, թէ երկար թա-
փառելուց յետոյ՝ վերջիվերջոյ նա գարձել
է ս. Կարապետի վալադ, և թէ զանազան
երկրներից ուխտաւորները նրա առաջնոր-
դութեամբ են՝ գնում հուչակաւոր ուխտա-
տեղին և վերագառնում։ Այս լուրը միկ-
թարական էր Գուլէի համար, չէ իր ամու-
սինը նոյնպէս սուրբ գործով էր զբաղուած։
Նա կ'ուզէր գէթ մի անդամ տեսնել նը-
րան մահից առաջ ասելու համար, թէ նա
լաւ չ'արեց, որ այնքան ցաւ պատճառեց
իրան, և որ այնուամենայնիւ ներում է նը-
րան։

Կոյս-Գուլէի ուխտը կատարուեց. — Ապ-
քօն, նրա նախկին ամուսինը յանկարծ յայտ-

նուեց Ա... գիւղում, թէ ինչու, այդ ոչ ոք չիտեր, բայց ամենքը գիտէին, որ նա է սարսափը բերել, նա է գիշերները կանչում «զուլում, զուլում»... Գիւղում խօսում էին երկու ամուսինների տեսակցութեան մասին, հազար ու մի պատմութիւններ սարքում, բայց իրօք Գուլէն սպասում էր, և Ապրօն նրան գէթ միանդամ տեսնելու չէր եկել։ Պառաւ կոյսը զարմացած էր և սպասում էր.. Ապրօի այդ վարմունքը բացատրել չէր կարողանում, ինչպէս և չէր հասկանում և այն, թէ նա ինչու է կանչում «զուլում», ինչու է պատանով շրջում։ Իսկ մինչև այդ նրան պէտք եղաւ Գապէի ջրաղացը գնալ:

XVII

Գսպէն անչափ ուրախացաւ, որ եկողը
Գուլէն է, կոյս-Գուլէն։ Բարձրահասակ ու
սեազգեստ այդ կինը իր օրօրուն ու հան-
դիսաւոր քայլուածքի, իր գլուխ բռնելու ձե-
ւի, ձեռքերի շարժելու մէջ, իր ամբողջ պատ-
կառելի արտաքինի մէջ մի անբացատրելի
բան ունէր միշտ, որ այնքան հաճելի էր
Գսպէնն, և որի անունը նա սակայն տալ չէր

կարող, եթէ մէկը հարցնելու լինէր։ Գսպէն
գիտէր միայն, որ ամեն տեղ, ուր յայտ-
նըւում էր այդ խորհրդաւոր կինը, սփռում
էր իր շուրջը մի անօրինակ քաղցրութիւն ու
խաղաղութիւն, խոռվուած սրտերը սփռի-
ւում, այրուած հոգիները հանդստանում
էին։ Կարծես թէ նա կենդանի արարած
չը լինէր, այլ մի սգաւոր ոգի, որ մարդկա-
յին գոյութեանը կապուած անխուսափելի
չարիքի ցաւն էր կրում իր սրտում և իր
կեանքի օրինակով այնուամենայինիւ քարո-
զում էր անսահման հնազանդութեան և
անվերջ զոհաբերութեան անողորմ անհրա-
ժեշտութիւնը։ Կրել, շարունակ կրել տառա-
պանքի հաղար ու մի ձեւերը, որովհետե-
նրանց աղբեւկը, պատճառը, ծագումը բա-
ցատրել անկարող է ողորմելի մարդը, Փըր-
կութիւնը համբերութեան և զոհի մէջ է։
Եւ միիթարութիւնը, որ այդ միշտ մոռյլ,
միշտ սղաւոր, բայց քաղցրատես կինը կա-
րողանում էր ներս տանել սգի տները, թա-
փել վշտացած հոգիների վրայ, ոչ այլ ինչ
էր, եթէ ոչ ճակատագրին, դիպուածին, եր-
կընքի կամքին անծայր հնազանդութեան
գաղափարը, արցունքի, ցաւի անհասկանա-

լի, բայց անխուսափելի անհրաժեշտութիւնն
աշխարհում է Երբ երկինքը կամեցել է, որ չա-
րիքը ստուերի պէս ընթանայ մարդու հետ՝
ամեն վայրկեան նրա առաջը ոտ դնելու
համար, էլ ուր փախչել, ինչպէս ազատուել
ցաւոտ ճակատագրից. ինքը չը փախաւ իր
բաղդից, այդ միշտ խաղաղ, բայց այնքան
տանջուած կինը չը բողոքեց, չ'անիծեց եր-
կընքի խստարտութիւնը և անծայր հնա-
զանդութեան մէջ դատաւ իր հոգու գերա-
դոյն խաղաղութիւնը. Սգաւորների և տա-
ռապողների այդ մայրը չը գիտէր շատ ան-
գամ, թէ ինչ սփոփիչ է իր ներկայութիւնը,
թէ իր քնքոյշ կանացիութիւնը սրտի զգայու-
նութեան հետ միացած ինչքան հմայիչ է, չը
գիտէր անշուշտ և այս ժամին, թէ ինքն
ինչ է բերում այս մենաւոր ծերունու խոռո-
ված հոգու համար. նա բոլորովին մօտ էր,
ահա անցաւ շրաղացի առաջի կամուրջը,
ահա բարձրացրեց գլուխը, և դէմքն ընդու-
նեց այն գրաւիչ արտայայտութիւնը, որ յա-
տուկ էր նրան, երբ մօտենում էր խօսելու
մէկին:

— Բարի աջողում, ամի Գապէ:

— Բարնպ եկար, հազար բարի, դու,

Գուլէ քուրիկ, պատասխանեց Գապէն և ոտ-
քի կանգնելով՝ առաջացաւ դէպի մօտեցող
կինը:

— Ես բնիդ մէջ թառած՝ գեռ սաղ-
սալամաթ ապրում ես էլի, ծեր արծիւ:

— Արծիւ... ինչու չէ բայդուշ, Գուլէ
քուրիկ, բայդուշն ինձ աւելի սազ կը գայ:

— Ասում են, որ արծիւներն են մեն-
մենակ ապրում ժայռերի կատարներին, իսկ
և իսկ քեզ պէս անդարդ ու աղատ:

— Արծիւներն իրանց ոյժի, կարողու-
թեան վրայ վստահ՝ մենակ են ապրում, օդ-
նականի կարօտ չեն, իսկ ես իմ անզօրու-
թիւնից, իմ խեղճութիւնից եմ կծկուել էս-
տեղ: Հէ՛, քուրիկ, էս աշխարհը մի լայն ու-
փշոտ մէյլան է, ուր բաղդն է ցրուած, մար-
դիկ էլ մրցողներ. ես էլ մէջ ընկայ բաղդո-
սկելու, բայց յաղթուեցի, մէջքս կոտրուեց,
և ոտների տակ չը տրորուելու համար՝ սո-
ղալով՝ սողալով գուրս քաշուեցի կուողների
միջից ու էստեղ կծկուել եմ: արծիւն ափսոս
է, որ ինձ նման լինի, ես բայդուշ եմ:

— Օհօ, էդ ում հետ ես զրոյց արել, որ
էսպէս իմաստուն ես դարձել, հալիւնր:

— Բամիների ու ջրերի:

— Լաւ խօսակիցներ են:
 — Քամիները երկնքի բաներն են ինձ
 պատմում, ջրերը՝ գետնի տակի:
 — Ապա գետնի երեսի բաներն ով կը
 պատմի քեզ. թէ դու էլ էս աշխարհից չես:
 — Եդ էլ երեսի դու կը պատմես, Գուլէ
 քուրիկ, քամիների ու ջրերի մումոցը լաւ
 չի, նրանք լաւ բան չեն ասում; իմ չորս
 կողմն էլ լաւ չի, սար ու ձորն էլ լաւ չի,
 այ էն հեռուն էլ դուրեկան չի, մօտեցող
 աշունն էլ չար է. Էհ, թողնենք իմ լամա-
 ները, դու այն ասա, իրիկուան դէմ էսպէս
 մւր ես գնում, իւշ-Քիլիսէ երբ կը հասնես:
 — Իւշ-Քիլիսէ չեմ գնում, քեզ մօտ եմ
 եկել, զօնաղ չես ուզիւ:
 — Ինձ մօծտ... հաղար բարի գաս,
 բայց էլի խէր լինի:
 — Խէր ու բարին վրադ, ցասման ժամ
 կայ Աստուածածնի շաբթին...
 — Յասման ժամամ...
 — Հա, ցասման ժամ: դու լաւ ես
 դլուխ առել, փախել գիւղից, ցասումը մօտ
 է, զուլումն էլ հետը էէ, ինչ ասեմ, ամի
 Գապէ, մեղքներս աշխարհովը մէկ է դար-
 ձել, էլ երկնքի աչքը մեզ վրայ քաղցր չի,

ճար պէտք է, չէ, այդ ճարը, դու դիտես,
 ցասման ժամն է, պապերն են կտակել: Սաղ-
 մուն էլ է ասում: «Զմեղս քո ողորմութեամբ
 քաւիցես», լսել ես, բայց դու ժամ չես գա-
 լիս...

— Զուլում... ցասման, մրմնջաց Գսպէն:
 Կոյսը երեսի չը լսեց ու շարունակեց.

— ... Դէ, գիտես, ցասման ժամին որ-
 քան բազմութիւն կը դայ շրջակայ գիւղե-
 րից, թափօր է լինելու, նշխարք շատ հար-
 կաւոր կը լինի, ասացի՝ գնամ, տեսնեմ սաղ,
 թէ մնուած է Գսպէ ամին, մէկ էլ իմանամ
 նշխարքի համար պատրաստի շարմաղ ալիւր
 ունի, թէ պէտք է աղալ: Այժմէն պէտք է
 հոգալ, թէ չէ յետոյ չի հասնի, վաղուանից
 կ'սկսեմ նշխարք պատրաստել:

Գսպէն էլ չէր լսում, նա մտազբազ էր:
 Երբ առաջին անգամ նա հեռուից տեսաւ
 կոյս-Գուլէին, միներքին ուրախութիւն զգաց,
 նա հաւատացած էր, որ այդ արդար, սրբա-
 կրօն կինը միսկթարութիւն, խաղաղութիւն
 է բերում իր հետ, որ նրա խօսքերը մեղ-
 մացնող կաթիլների պէս պիտի ընկնեն իր
 յուղուած հոգու վրայ, բայց սա ինչ ապշե-
 ցուցիչ զուգագիպութիւն է իր մտքերի, իր

անքուն, անհանդիստ գիշերների հետ, նա
էլ է խօսում ցասումից ու զուլումից:
—ինչո՞ւ շուարեցիր, ամի՞ Գապէ. ալիւր
չունիս:

—Բանն ալիւրը չէ, կայ՝ որքան կա-
մենաս, ժամի տուրքը միշտ պատրաստ է,
և ես վաղը կը բերեմ:

—Հապա էլ ինչ:

—Դու ցասումից ու զուլումից ես խօ-
սում:

—«Բանը» քեզ յայտնի չէ:

—Չեմ հասկանում ասածներդ:

—Ուխտաւորներն անցեալներում այս-
տեղից են անցել:

—Յետո՞յ:

—Դու հաց ես տուել:

—Յետո՞յ:

—Նրանք են վիրաւորել նաւել բէդին,
աւազակապետ նաքիրի որդուն:

—Յետո՞յ:

—Վիրաւորը մեռաւ:

—Մեռաւ... Գսպէն այնպէս բացական-
չեց, որ կարծես ուզեց ասել, թէ երբ բէդը
մեռաւ, ուրեմն մի վատ բան կարողէ լինել,
և ինքը շատ բան հասկանում է:

—Անցեալ օրը վանքն էի գնացել, շարու-
նակեց Գուլէն, խեղճ վանահայրը՝ Գէորգ-
հայր-սուրբը գլուխը կորցրել է: Նաւելի աղ-
դականները եկել էին մօտը, այնպիսի բաներ
են ասել, բըսագ, բըսագ, խօմ գիտես էլլի
նրանց բըսագը, գիւղի գլխին զուլում է պա-
տըրաստում: Վարդապետը կարողացել է
խոստաւմներով նրանց հանգստացնել և ճա-
նապարհ դնել. ինձ տեսաւ թէ չէ, սիրալ
լցուեց, «ցաման ժամ արէք, քուրիկ, ասաց,
ցաման ժամ արէք», և աջերից արցունքը
հեղեղի պէս թափուեց:

Գսպէի գլխում մտքելը երեխնոյն թափով
և նոյն ուղղութեամբ չէին ընթանում, ինչ-
պէս Գուլէն էր խօսում: Նա կանգնել էր գեռ-
կոյսի պատմութեան առաջին մասի վրայ,
մտաբերում էր այն խօսակցութիւնը, որ տեղի
ունեցաւ իր և ս. Կարապետի ուխտաւորների
մէջ, այնուհետև իր և Ասօի մէջ: «Մեռած-
ենք, թէ կենդանի», այս խորհրդաւոր հարցը
նա այժմ լաւ հասկանում է, և եթէ այժմ
հարցնեն, նա կը պատասխանի վճռական ձե-
ռով: «Մենք մեռած ենք»:

—Դու գրեերի, սազմոսի, շարականի,
աւետարանի հետ դլուխ ունիս, Գուլէ քուրիկ,

ի՞նչ կ'ասես, մենք մեռած ենք, թէ կենդանի:
— Քեզ չեմ հասկանում, ամբո՞ Գսպէ,
այսօր դու տարօրինակ ես և տարօրինակ բաշ-
ներ ես ասում, երկի այս էլ քեզ քամիներն
ու ջրերն են ասել:

— Գսպէն լոեց և քիչ յետոյ՝ կարծես
խօսքը փոխելու համար՝ յանկարծ ասաց.

— Բայց մեր գիւղն ի՞նչ անի, որ ճաւէշը
մեռաւ:

— Մեր հանդերուն են վիրաւորել:
Ծերունին դառն կերպով ժպտաց:

— Հա, իրաւ է, ի՞նչ յիմարն եմ, այդ-
խօմ ես էլ գիտէի, մտածեց Գսպէն ու կրկին
լոեց:

— Լաւ մարդիկ էին, ասաց Գսպէն բաշ-
ւական լոռովիւնից յետոյ և ասես ինքն
իրան խօսելով:

— Ո՞վքեր:

— Ուխտաւորները:

— Աստուած իրանց հետ, բայց թողած
հետքերը մեզ համար լաւ չի երկում:

— Նրանք մեղաւոր չեն, եղները կը տա-
նէին:

— Տանէին՝ աւելի լաւ էր, քան էս օրը,
ես ցասումը:

Պատասխանը ջախջախիչ եղաւ Գսպէի
համար, նա լոեց, գլուխը քաշ ձգեց և դուրս
քաշեց գօտկից իր ահագին չիբուխը, սկսեց
պատրաստել, ինչպէս անում էր միշտ, երբ
շատ ծանր հարցեր գալիս էին պաշարելու
նրա ծեր գլուխը, և նա ելք ու լուծում չէր
կարողանում գանել: Գուլէն հետևումէր նրա
բոլոր շարժումներին, տեսաւ, թէ ինչպէս
ծերունին պինդ լցրեց չիբուխը կոտորած
թիւթիւնով, ինչպէս վառեց և ծուխը բարդ-
բարդ արձակեց դէպի վեր՝ իր ճերմակ գլուխ
վրայ ամպեր կազմելով:

— Ի՞նչ ես մտածում, Գսպէ ամի՞:

— Ես մտածում եմ իմ ու քո մասին:

— Ամեն բան պըճաւ, մնացինք մենք:

— Հա, քուրիկ, ես տեսնում եմ այժմ,
որ ես ու դու՝ երկու չոր գլուխներ մեր վե-
րան՝ աշխարհի իսկական ընակիներ ենք: Մին-
չեւ այսօր շատ անդամ տիրովթեանս ժա-
մերին ես անիծել եմ իմ բաղդը, իմ կեանքը,
իմ օրը, որ աշխարհում այսպէս մենակ եմ, ինչ-
պէս ծովի ալիքներով տարուող մի փշուած-
նաւակ, աննպատակ, անտէր: Այժմ տեսնում
եմ, քուրիկ, որ ես գանդատուելու իրաւունք
չունիմ, որովհետեւ էլի ես լաւ եմ, դու էլ ինձ

հետ, որովհետեւ մենք մենակ ենք, և մեզանից
յետոյ ոչ ոք չենք թողնում աշխարհում։ Երբ
այսքան ցաւ ու գարդ կայ մարդուն պահած,
երբ մեր գլուխ վրայ միշտ ծանրացած է մի
չար ճակատագիր, երբ անտէրութեան ու խեղա-
ճութեան մէջ սողում ենք, ինչպէս ողորմելի
ճիճուներ, որոնց ով կամենայ՝ կը ճիշի, երբ
մեր ծնուած օրից մեղ չետ ծնուռմէ չա-
րեթը երահագին բեռով, լաւ է բոլորովին չը
ծնուել, իսկ ծնուելուց յետոյ՝ յանցանք է
ուրիշ արարածների կեանք տալ։ Ամուլ, թող
ամուլ գառնայ մեր աշխարհը, ինչպէս եսու
դու ենք, մեր գաշտերն ամուլ, մեր արտերն
ամուլ, մեր անսասուններն անսպուլ գառնան։
Երկինքը թող պղնձուի ու էլ ցող չը տայ,
երկինքը քարանայ ու էլ ծիլ չ'արձակի, բոլոր
արդանդները թող ամուլ գառնան, կեանքն
ու ծնունդը գալարի, մահն ու անապատը
իշխեն մեզանում։ Մեր գլուխն ծանրացած
այս սե երկինքը, որ խեղդում է մեղ, գուցէ
այն ժամանակ բացուի ու պարզուի։ Ուռի
տերեւների պէս գողում ենք ճիւղերի վրայ
թեթև հովի առաջ, հազար անգամ լաւ չի
մի փոթորիկ բրդի և սրբի, տանի, աղա-
տուենք իսպառ։

Ծերունին լուեց յուղուած ու յոդնած,
միայն թաւ յօնքերի տակից փայլող աչքերը
գեռ շարունակում էին պահել վշտի խորունկ
արտապատճեն:

Գսպէս ամր, թնդ այդ, թնդ այդ, մի
ասիր, երկնքի դէմ մի խօսիր, մենք այն ենք,
ինչ որ Աստուած է կամեցել, և կը լինենք,
ինչ դարձեալ նա կը կամենայ, ցասումն էլ,
ողորմութիւնն էլ վերից են դալիս, մեղ մի-
այն հաւատն է մնում, հաւատը դէպի Աս-
տրծու անսահման գթութիւնը, դէպի նրա
անհուն ողորմածութիւնը: Նա որ կամենայ,
այս ցասումն էլ կ'անցնի, ինչպէս շատ շա-
տերը եկել են ու անցել:

Հաւատ, հաւատ, մեռանք հաւատա-
սվ, էլ հաւատի տեղ չի մնացել:

— Գոպէ ամի, այդ ինչ ասացիր, մեղաց
լիք, Աստուած, մեղաց Քեզ Գուլէն ոտքի
կանգնեց, արևն խսպառ իշտ դէպի հո-
րիզոնը, ուր նրանից վար մի սե ամպ էր
խտանում կամաց-կամաց։ Ամպը չարագուշակ
էր, նա սեանում էր ու լայնանում, արևի
փայլուն սկաւառակի կէսը արդէն կախուել
էր նրա մէջ, և մնացած կէսը դողդողալով

հաւաքում էր իր շողերը լեռնակատարներից
շտապով՝ խոյս տալու համար:

— Նայիր այն կողմը, ամի՞ Դապէ, նայիր
այն ամպին. Գուլէն ձեռքը մեկնեց դէպի
արևմուտք:

— Այն ամպը... հա, հա, փոթորկաբեր
է երեսում, շնոր գնա, քուրիկ, խօսքով ըն-
կանք, ուշացար, անձրեի չը բռնուես:

Գուլէն կարծես չէր լսում ծերունու ձայնը,
շարունակում էր կանգնած մնալ միենոյն դիր-
քով, միշտ երեսը դիպի արևմուտք, որտե-
ղից ծածկուող արեսի վերջին շողերը ընկել էին
նրա վրայ՝ իրանց ոսկեգոյն ցողքերի մէջ պա-
րուրելով նրա ամբողջ հասակը. լոյսի մի գեղ-
նաւուն խուրձ խաղում էր կոյսի դէմքի վրայ,
շոյսում էր նրա գունատ այտերը, առանձին
փայլ էր տալիս նրա տիրամած աչքերին,
ոսկեզօծում էր նրա ձիւնի պէս մազերի հիւ-
սերը, որոնք վայելզօրէն կիսաշրջան էին
կազմել երեսի երկու կողմից: Լոյսի այդ-
ծովի միջից նա շարունակում էր նայել ա-
րևմուտքին՝ ասես սպասելով այնտեղից, այն
մութ ամպի տակից մի գերբնական երևոյթի,
մի հրաշքի: Դապէն զարմացած ու բերանա-
բաց՝ աչք չէր հեռացնում նրանից. կոյսը

լոյսերի մէջ ողողուած՝ նրա աչքում կամաց-
կամաց ասես կերպարանափոխում էր, բար-
ձըրանում, եթերանում՝ արևի ցողքերի հետ
խառնուելու համար: Ապշած ծերունուն թը-
ւաց, թէ էլի մի վայրկեան, և ահա այդ տա-
րօրինակ արարածը թափ կ'առնի և այդ լրյուի
ոսկեգոյն սիւնի միջով կը բարձրանայ դէպի
երկինք, դէպի անհունութիւնը: Ծերունին
այլես արևմուտքին, մութ ամպին, շողշողուն
արեկին չէր նայում, այլ այս հրաշալի երե-
ւոյթին, այս լուսաթաթախ կնոջը, որ կար-
ծես խաղում էր արևի շողերի և ամպերի
հետ, որ կարծես վերց էր գալիս կամ վեր
հետ, որ կարծես վերց նա էլ ոչինչ չէր տեսնում,
էր ուզում գնալ: Նա էլ ոչինչ չէր տեսնում,
ոչինչ չէր լսում, բացի այս սքանչելի պատ-
ուշինչ կերը, լոյսերի մէջ լողացող այս զարմանալի
կինը:

— Նայիր այն մութ ամպին, շարունակեց
Գուլէն՝ ձեռքը միշտ մեկնած պահելով դէպի
արևմուտք. դու ասում ես, թէ նա փոթոր-
արևուութէ, կարող է լինել, դուցէ նոյնիսկ
կարեր է, կարող է լինել, գուցէ նոյնիսկ
մենք այս գիշեր փոթորիկ, մրրիկ ունենանք,
մենք այս գիշեր փոթորիկ, մրրիկ ունենանք,
մենք այս այնուամենայնիւ չի կարող ոչնչա-
բայց նա այնուամենայնիւ չի կարող ոչնչա-

վախով, դողդողալով կորչում է նրա մութ
ծոցում:

— Հա, հա, իրաւունք ունիս, լոյսն ան-
մահ է, արել չի կարող ոչնչանալ:

— ...թող լայնանայ ու խտանայ այն
ամպը, որքան կամենում է, թող ուռչի եր-
կընքովը մէկ և ճայթի հաղար տեղից, թող
մըրիկը մռնչայ մեր ցաւոտ աշխարհի, մեր
տառապած գլուխների վրայ, թող հեծեն
ծառերը նրա թափի տակ, անտառները
ճռնչալով՝ սուդ անեն, սարերն իրանց այ-
րերով ու ժայռերով անքան, թող ողջ բնու-
թիւնը երկնի՛ ասես հաղար գլխանի հրէշ
ծնելու համար, արել վազը գարձեալ կը
փայլի՛ Չէ մենք հաւատում ենք, որ մըրկի
ժամին մեր սուրբը յայտնում է մութ ամ-
պերի վրայ, չէ մենք հաւատում ենք, որ
նրա սուրբ ստների տակ երկինքը պարզում
է, և ցաւը մեղմանում աշխարհում: Նա կը
գայ, հաւատանք, որ նա գարձեալ կը գայ:
Մըրիկը, մշտական, անվերջ լինել չի կա-
րող, մութ ամպերն իրանց ծանրութեան
տակ ագամորդուն խսպառ խեղդել չեն կա-
րող, իսկ երկնքի և երկրի ցաւերից փրկուելու
յոյն ու հաւատը յաւիտենական են: Ես հա-

ւատում եմ, որ նա կը գայ, մըրիկը հալածող
սուրբը և նա... կը գայ... մնաս բարի:
Երբ Գոպէն ուշբի եկաւ, արևի շու-
զերն արդէն մարել էին, կոյս Գուլէն հե-
ռու էր:

XVIII

Կատաղի փոթորիկը սոնում էր շղթա-
աղերծ եղած հողմերը ահաւոր մոմոցով
լցրել էին ողջ բնութիւնը: Մութ երկնքում
կայծակը ճայթում էր անընդհատ. նրա վայր-
կենական փայլի տակ լեռներն ու գաշտերն
կենական փայլի տակ լեռներն ու գաշտերն
ասես սարսում, դողում էին երկնքի բոցերի
հետ և կրկին ծածկում թանձը խաւարի
մէջ: Սև ամպերն իրար յետելից ճարճատում
ու որոտում էին լճի վրայ, թւում էր, թէ
Սինակայ լեռները մըրկով տեղահան եղած
տարւում են երկնքի երեսից, դարկում են
իրար և շուտով վար կը թափուեն՝ իրանց հըս-
կայական զանգուածի տակ կեանք և կենդա-
նութիւն ճխլելու, ոչնչացնելու համար: Լիճը
ալեկոծ ու որոտալի, թափ առած՝ փախչում էր
իր ափերից, ուր էլ հանգիստ չ'ունէր, և ա-
իր ափերից, ուր էլ հանգիստ չ'ունէր, և ա-

կըռտող գաղանների պէս ձգւում էին հեռու-
հեռու, զարկում էին ժայռերին ողբ ու հե-
ծեծանքով, կամ իրարից կախլսուած՝ կար-
ծես փորձում էին լեռն ի վեր բարձրանալ,
ապա յետ էին ընկնում խացուցիչ աղմուկով,
եռում, փրփրում, կրծոտում իրար։ Հողմա-
ծեծ անձրել թափում էր անընդհատ, մը-
թութեան մէջ լսում էր ջրային յօրդ կաթիշ-
ների շրփոցը, որ խառնում էր քամիների
մումոցի, ալիքների գոռոցի, ամպերի որոտի
հետ՝ կաղմելով բնութեան կրծքից դուրս
պութկացող մի անհասկանալի, մի խեղդող
մոնչիւն։ Կղզու ու զանգուածի տեղ կայծա-
կի փայլը երբեմն-երբեմն ցոյց էր տալիս միայն
փրփուրի մի ահագին գէղ. այնտեղ ալիքների
կուին աւելի կատաղի էր, կարծես նրանք
գժգոհ էին, որ իրանց անօրինակ տագնապին
ու ցաւին վկայ է այդ փոքրիկ ցամաքը, և
աշխատում էին քանդել, թաղել նրան իրանց
անդունդներում։ Բնութիւնը հեծում էր եր-
կունքով բռնուած, և երկինքը ժամառժամ
իջնում, կախում էր երկրի վրայ իր բոլոր
ծանրութեամբ։

Սյս բոլորը սակայն այն մենաւոր մար-
դը կարծես չէր զգում, չէր տեսնում, մի-

անօրինակ, ու զանգուած թիկունքին, մեծ
գժուարութեամբ, սայլթաքելով, տնքալով,
մումուալով՝ նա քայլում էր լճի ափի նեղ արա-
հետով։ Երբ ալիքներն իրար հրհրելով սղմում
էին գէպի ափը, իրանց ցնցուղներով ծած-
կում մենակ ուղեսրին՝ ասես Ներս քաշելու
համար, նա կանգ էր առնում մի վայր-
կեան, ապա ջրերից աղատուած՝ քայլում էր
կրկին միւնոյն ճանապարհով, միւնոյն բեռը
մէջքին։ Քամին նեղում էր, անձրել ծեծում,
բայց նա խարխափելով, օրօրուելով՝ քայլում
էր հա քայլում։

— Ամհ, զուլում գիշեր է, զուլում,
մումոււմ էր նա՝ թիկունքի բեռը վար ձգելով։

Հեռու հարթավայրի վրայ թանձր խա-
ւարի միջից մի նուազ, գունատ լոյս էր փայլ-
փլում. մարդը միայն այն կողմն էր նայում,
գէպի այն պլազան ճրագն էր գնում։ Այնտեղ
է Գսպէի ջրաղացը, այդ նրա ջրաղացի լոյսն
էր, կենդանութեան միակ նշանը համատա-
րած սարսափի ու մթութեան մէջ։

Գսպէն կոյս-Գուլէին ճանապարհ գնես-
լուց յետոյ արևմուտքի չարագուշակ ամպին
մէկ էլ նայեց, գանդաղութեամբ անցաւ ջրա-
զացի յետեր, բարձրացաւ ամբարդակի վրայ,
զացի յետեր, բարձրացաւ ամբարդակի վրայ,

ուշադրութեամբ դիտեց նաւը, առաջը
հաւաքուած ճիւղերն ու տերեները յետքա-
շեց, ապա գնաց մընչեւ սաւաղը, մի փոքր
լայնացրեց ու յետ եկաւ, ներս մտաւ ջրա-
զաց, դուռը կողպեց։ Արդէն մուլթ էր, ճրադը
վառեց, նստեց իր անկիւնում ու սկսեց ընթը-
րիքը։ Ծեր աստամներով մերթ ծամում էր,
մերթ բերանաբաց, անշարժ ականջ էր գնում
դրսի ձայներին։ Բուն լուել էր այն երեկոյ,
բայց նրա փոխարէն քամին վզվզում էր ջրա-
զացի պատերի բացուած քններից, ուռիները
հեծեծում էին, իսկ ջրտունի տակ փառի
աղմուկն աւելի խլացուցիչ էր դառնում։

Դարձեալ մի չար, մի վատ գիշեր էր.
Ճերունին հաւաքեց իր հացը, հին թաշկինակի
մէջ կապեց և դրեց դարակում, ուտելչէր լի-
նում. իր սովորականի համեմատ աչքը քա-
րին ու չախչակին յառած՝ լուռ մտածում էր։
Գուլէի տխուր, հոյակապ պատկերը, երե-
կոյեան լոյսերի մէջ լողացող այն հրաշալի
դէմքը, նրա ձեռքի հանդիսաւոր շարժումը
գեռ Գոպէի աչքի առաջն էր։

«Նա կը գայ... նա կը գայ... այն Մրրկի
սուրբը»... գեռ հնչուում էին Գոպէի ական-
ջում։ «Հա, հա, մտածում էր ճերունին, նա

կը գայ, ես էլ եմ հաւատում. բոլոր մրրիկ-
ների ժամանակ ամպերը նրա ոտների տա-
կեց չքանում են, և քամիները լուսում. բայց
թող նա գայ այն միւս մրրկի համար, այն,
որից հայշքրիստոնեան գողում է օրացերե-
կով, պարզ ու պայծառ երկնքի տակ, ան-
մեղ, անարդար տեղը»։

«Նա կը գայ... նա կը գայ»...

Եւ կատաղի փոթորիկը մոնչում էր դըր-
սում, և ուռիները հեծեծում էին ու լալիս,
և խաւարը թանձրանում էր, շրջակաքը
խեղդում, մեռնում էր, մէկ Գոպէն էր կեն-
դանի, մէկ նրա ճրագն էր գեռ պլառում
համատարած, հոգեհան մթութեան մէջ։

«Նա կը գայ... նա կը գայ»...

Թըրը՛խկ, թըրը՛խկ

Գոպէն նստած տեղում ցնցուեց. Ջրա-
զացի դուռն էր։

Թըրը՛խկ, թըրը՛խկ.—ճերունին դունա-
տուեց ու ոտքի թռաւ, բայց մնաց իր տե-
սակ կանգնած՝ ինչ անելը չիմանալով. բայց
գուցէ քամին էր, գուցէ...

Թըրը՛խկ, թըրը՛խկ, այս անդամ աւելի
թափով, աւելի երկար։ Կասկած չը կար, քա-
մին լինել չէր կարող։ Գուցէ մի ուշացած ճամ-
մին լինել չէր կարող։

բորդէ, փոթորկի տակ մնացած մի թշուառ,
չէ որ այդ շատ է պատահել, ի՞նչ կայ անօս
րինակ, ի՞նչ կայ վախենալու, Գոպէն կամա-
ցուկ մօտեցաւ դրանը և կանդ առաւ՝ շունչը
բռնած:

— Ո՞վ է:

— Զուլումն է, զուլումը, Գոպէ ամի, բաց
դուռը:

— Ապրօ:

— Բաց, բաց, սաղ աշխարհը քանդուել,
վազում է դէպի գերեզմանատուն, փոս են
փնտրում ծածկուելու համար:

Դուռը բացուեց. Ապրօն ներս ընկաւ
հեալով, տնքալով, քրտինքի մէջ կորած և
ձգեց յատակի վրայ մի դիակ, մի կիսամեռ
մարդ: Գոպէն յետ փախաւ սարսափած:

— Տունդ քանդուի՛, Ապրօ, էս ի՞նչ է,
ո՞վ է:

— Մի փախիր, Գոպէ ամի, ոտի վրայ
շրջող մեռելներից մէկն է սա, որ այժմ
ընկած է հոգեվարք, մինչեւ այստեղ ջուր էր,
շարունակեց Ապրօն՝ ցոյց տալով իր կոկորդը,
դարձել էր տիկ, թափ եմ տուել, էլ ջուր ըք
կայ մէջը, բայց հալը հալ չի. արագ ունիս,

փէտացել է, տես, շնուտ արա, ծերոց գաւա-
զան կ'ունենաս դու, Գոպէ ամի:

— Կայ, կայ:

Գոպէն քանդեց անկիւնները, մի փոք-
րիկ շիշ դուրս քաշեց սպիտակ հեղուկով,
ծրագն առաւ, մօտ եկաւ, նայեց:

— Ճօ, էս նաւօն է, տնաքանդ, ի՞նչ չես
ասում:

— Անւս, սնուս, ժամանակը չի խօսելու,
շորերը քանդի:

Երկսով արագ-արագ քանդեցին նաւօի
թաց շորերը, դուրս քաշեցին վրայից և ոկը-
սեցին մարմինը շփել օղիով:

— Ապրօ, ախպէր, ախր դու էլ ես թըր-
ջուած, դողում ես:

— Անւս, սնուս, ժամանակը չի, շփիր, դու-
լումը որ եկաւ, մենակ չի դայ, ընկերով կը
դայ. չար գիշեր է, դեռ էր, թէ աղջիկ, ես
ի՞նչ գիտեմ, վազում էր, աներևոյթ եղաւ,
ի՞նչ գիտեմ, վազում էր, իսկ ես նրա
դուցէ իր գերեզմանը դտաւ, իսկ ես նրա
յետեկից գնացի, սրան դտայ, լիճը կուշտէր
երեխ, նաւակը կուլ տուեց, բայց սրան փըս-
երեխ, նաւակը կուլ տուեց, պայց այդ նաւա-
կեց, նաւօն մարսուող պատուղ չի, այդ նաւա-
կիտէր: Ո՞վ դիտէ, դեռ ի՞նչ է լինելու:

բորդէ, փոթորկի տակ մնացած մի թշուառ,
չէ որ այդ շատ է պատահել, ի՞նչ կայ անօ-
րինակ, ի՞նչ կայ վախենալու։ Գսպէն կամա-
ցուկ մօտեցաւ դրանը և կանգ առաւ՝ շունչը
բռնած։

— Ո՞վ է։

— Զուլումն է, զուլումը, Գսպէ ամի, բայց
դուռը։

— Ապրօ։

— Բայց, բայց, սաղ աշխարհը քանդուել,
վազում է դէպի դերեղմանատուն, փոս են
փնտրում ծածկուելու համար։

Դուռը բացուեց. Ապրօն ներս ընկաւ
հեալով, տնքալով, քրտինքի մէջ կորած և
ձգեց յատակի վրայ մի դիակ, մի կիսամեռ
մարդ։ Գսպէն յետ փախաւ սարսափած։

— Տունդ քանդուի, Ապրօ, էս ի՞նչ է,
ով է։

— Մի փախիր, Գսպէ ամի, ոտի վրայ
շընող մեռելներից մէկն է սա, որ այժմ
ընկած է հոգեվարք, մինչև այստեղ ջուր էր,
շարունակեց Ապրօն՝ ցոյց տալով իր կոկորդը,
դարձել էր տիկ, թափ եմ տուել, էլ ջուր չը
կայ մէջը, բայց հալը հալ չի. արագ ունի՞ս,

վիշտացել է, տես, շնոր արա, ծերոց դաւա-
զան կ'ունենաս դու, Գսպէ ամի։

— Կայ, կայ։

Գսպէն քանդեց անկիւնները, մի փոք-
րիկ շիշ դուրս քաշեց սպիտակ հեղուկով,
ճրագն առաւ, մօտ եկաւ, նայեց։

— Ճօ, էս նաւօն է, տնաքանդ, ի՞նչի չես
ասում։

— Ենւս, սնւս, ժամանակը չի խօսելու,
շորերը քանդի։

Երկառով արագ-արագ քանդեցին նաւօի
թաց շորերը, դուրս քաշեցին վրայից և ոկը-
սեցին մարմինը շփել օղիով։

— Ապրօ, ախալէր, ախր դու էլ ես թըր-
ջուած, դողում ես։

— Սուս, սնւս, ժամանակը չի, շփիր, դու-
լումը որ եկաւ, մենակ չի դայ, ընկերով կը
դայ. չար գիշեր է, դէ՞ էր, թէ՞ աղջիկ, ես
ի՞նչ գիտեմ, վազում էր, աներեսոյթ եղաւ,
դուցէ իր դերեղմանը դտաւ, իսկ ես նրա
յետեկից գնացի, սրան դտայ, լիճը կուշտէր
երեխ, նաւակը կուլ տուեց, բայց սրան վըս-
խեց, նաւօն մարսուող պառուղ չի, այդ նալաւ
դիմէր։ Ո՞վ գիտէ, դեռ ի՞նչ է լինելու։

Գսպէն շփում էր և շատ բան չը հասկացաւ Ապրօի տարօրինակ պատմութիւնից, բացի այն, որ նաւօի նաւակը խորտակուել է, բայց նա ազատուել է:

— Գսպէ ամի, զուլում գիշեր է, մեռելների ու դեերի գիշեր, սուրբն էլ է փախել:

— Ի՞նչ ես ասում, Ապրօ, Աստծու գէմ ես խօսում,

— Տնաշէն, չար գիշերին Աստուած իր սիրածին գուրս չի թողնի, սուրբը խօմ նրա սիրելին է: Երկնքից ադամորդու գլխին կրակ է մաղլում, բաց աչք չը կայ դրառում: Ապրօն, գէ, Ապրօի բանն ուրիշ է, նա անիծուած է ծննդի օրից, երկինքն է անիծել նրան գեռ մօր արգանդի մէջ. որտեղ զուլում է, Ապրօն այնտեղ է, որտեղ խաւար է, նա մէջն է, որտեղ բեռ կայ, նրա մէջքին է, որտեղ ցաւ կայ, նա իր բաժինն ունի: Քամիներն ինչ քան են ծեծել ողորմնի գլխիս, ես ու մըրսիկը եղբայր ենք և գերեզմանների լեզուն գիտենք: Տես, այս գիշեր իմ անիծուած գլուխը փոթորկի, քամու, անձրեկ տակն էր: Կենդանի մեռելները կծկուած են իրանց բներում, այս մէկն էր շակել, դուրսը մնացել,

այն էլքերեցի: Ամպերը սարսափելի են, իջան, իջան, խեղդում են երկիրը, սուրբը փախել է, Մըրկի սուրբը, զօրաւոր սուրբը, կենդանի մեռելների բարեկամը... փախել է:

— Նա կը դայ... նա կը դայ...

— Եփիր, շփիր, տես, սա էլ էր ասում՝ «նա կը դայ»... բայց նա չ'եկաւ, ես եկայ, այս ողորմելու սուրբը հիմայ ես ու դու ենք. թէ փրկութիւն ունի, մեր ձեռքին է, մեր զօրութեան մէջն է, շփենք, շփենք, Գսպէ ամի, այսօր ես ու դու զօրաւոր սուրբ ենք, շատ զօրաւոր, թնջ զարթնի, սա էլ կ'ասի:

— Մեղայ Քեղ, Աստուած, մեղայ Քեղ:

Նրանք խօսում էին և տրորում նաւօի սառած մարմինը. ձկնորսը կամաց-կամաց ուշքի էր գալիս. նրա շնչառութիւնը հետըզ-հետէ զօրանում էր, անդամները ցնցւում, իրար գալիս, գունատ դէմքը կարմրում, և փակուած աչքերը բացւում, խիւում էին:

— Նաւօ, այ նաւօ, կանչում էր Ապրօն:

Նա աչքերը բացեց, նայեց մի վայրկեան առանց բան հասկանալու, ապա կրկին ծածկեց. թմրութեան նման մի քուն էր, որի մէջ ընկաւ նրա թուլացած, ուժասպառ մարմինը: Գսպէն ծածկեց նրան իր լայն մազէ

աբայով, յետոյ տարաւ, չորացրեց շորերը թռնը վրի վրայ: Քիչյետոյ ձկնորսը շորերը հաղած՝ նստած էր, ապուշապուշ նւյուռմ էր չորս կողմը և կարծես ոչինչ չէր հասկանում: Գսպէն ու Ապրօն նրա առաջը կանդնած՝ նայում էին:

—Ես որտեղ եմ:

—Գսպէի ջրաղացում, ախպէր նաւո, պատասխանեց Ապրօն:

—Երաղ է:

—Չէ, զուլում էր, անցաւ. բան ուտել կուղես:

—Ո՞վ բերեց ինձ այստեղ:

—Մրրկի սուրբը, իջաւ, վերցրեց ու բերեց:

—Նաւս ուր է. նա կամաց-կամաց յիշում էր իր հետ պատահածը:

—Սուրբը տարաւ:

—Ապրօն:

—Հա, ես եմ, հանդիստ կաց, պառկիր, ախպէր նաւո:

—Ո՞վ է նա, միւսը:

—Չես ճանաչում, Գսպէն է, նրա ջրաղցն է այս:

—Գսպէն, Գսպէն:

—Հա, ես եմ, ախպէր նաւո:
 —Ելի պատահեցինք, էլի, էլի: իրերը պարզուեցին նաւոի համար, նա այժմ լաւ հասկանում էր բոլորն, ինչ կատարուել է, հասկանում էր, որ Ապրօն է բերել իրան այստեղ ուշաթափ: Եւ նա գժգոհ էր, որ գտնում է իր ոխերիմ թշնամու բնակարանում: Խստասիրտ, քինաւ խընդիր ձկնորսը կամաց կամաց զարթնում էր: Նա գեռ երբէք այս ջրաղացը ոտք կոխած չէր, ուստեղ էր երբէք ոտք չը կոխել, մանաւանդ որ վերջին ժամանակները նա իմացել էր, թէ Ասօն միշտ Գսպէի ջրաղացումն է, նրանք միշտ միասին են գիշեր թէ ցերեկ: Նա հաւատացած էր, որ իր աղջկայ գժբաղ գութեան մէջ էլ Գսպէն մաս ունի, որ Ասօն նրան է լսում: Թէ ինչ պիտի ասած լինէր Գսպէն, և Ասօն ինչն պէտք է նրա խորան հըրդին հետևէր, այդ չէր քննում նաւոն: Նա գիտէր միայն, որ այդ ատելի շէնքի մէջ, այս պիտէր միայն, որ այդ ատելի շէնքի մէջ, այս անիծուած ջրաղացում նրանք միշտ միասին են. այսքանը բոլորովին բաւական էր, որ երակսով էլ իր համար թշնամի գառնան, և այս ջրաղացը՝ գժբաղդութեան բուն:

—Ապրօն, լաւ չ'արիր, լաւ չ'արիր, կրկնեց

Նաւօն, գլուխը քաշ ձգեց կրծքին և մնաց
մտախոհ։

Լուսաբաց էր, և փոթորիկը դադարում
էր։ Լուսոյ ցնցուղները փայլեցին արևելքում։
ամպերը պատառապատառ ցրիւ եկան երկըն-
քում, ջրաղացիյետեսում ուռիների վրայ թըռ-
չունների առաջին ձայները լսուեցին։ Նաւօն
դեռ շարունակում էր գլուխը քաշ մնալ, լուս,
անշարժ։ Նա ոչինչ չէր ասում, բայց երեսում
էր՝ ծանր մտքերով էր պաշարուած։ Իր սար-
սափելի արկածի մանրամասնութիւններից
մէկը, ամենից անհասկանալին, ամենից խոր-
հըրդաւորը նրան սաստիկ զբաղեցնում էր, և
նա ամեն բան մոռացած, անդամ Գապէի և
Ապրօի ներկայութիւնը, աշխատում էր ճշշ-
տութեամբ մտաբերել ալիքների մէջ իր մզած-
անօրինակ պայքարը այն զարմանալի էակի
հետ։ Ո՞վ էր, ինչ էր այն։ Փոթորիկ էր,
նա մենակ ջրերի վրայ, առադասատը պա-
տառապատառ ընկաւ, զեկը կորաւ, նա տար-
ւում էր դէպի հաստատ մահ, դէպի ջրվէժը,
որի բերանը գաղանի երախի պէս բացուած-
քաշում էր նրան ալիքների հետ։ Նա դիմա-
դըրել՝ իհարկէ՝ չէր կարող, երկնքի ու ջրերի
մէջ նա մենակ էր կախուած, եթէ չը

տուէր ալիքների մէջ, նաւի հետ կը կորչէր
ջրվէժի տակ։ Նա յիշում էր, թէ ինչպէս
ակղբում մօտեցաւ ափին, ինչպէս յետոյ արե-
մըտեան հողմը նրան յետ մղեց և քշեց դէ-
պի լճի խորքը, ապա դէպի հակառակ ձայ-
րը, ինչպէս նա փորձեց թիավարելով աղա-
տուել առագաստի ընկնելուց յետոյ, ինչպէս
ապա զրի մէջ նետուեց։ Այս բոլորը նա լաւ
յիշում էր, այս բոլորը հասկանալի, բնական
էին փոթորկի ժամանակ։ Բայց այն, ինչ նա
դտաւ ալիքների մէջ, որ փաթաթւում էր,
բունում էր նրան, ով էր, ինչ էր, մարդ, թէ
մի հրէշ, ջրային կենդանի, թէ մի ոգի։ Ահա
այս էր, որ նա նայնպէս մտաբերում էր, բայց
հասկանալ չէր կարողանում։ Այդ պայքարից
զգացած սարասին այնքան մեծ էր, որ այ-
ժըմ, երբ կամաց կամաց ուշքի էր դալիս, նա
նորից վախենում էր, նորից սարսում ու
կծկում։ Եւ քանի մտածում էր այդ մասին,
դէպքի միւս մանրամասնութիւնները մաշ-
տում, չքանում էին նրա գլուխից, մնում էր
միայն ինքը՝ նաւօն այն հրէշի հետ։ Երար
խեղդուելիս փրփրած ալիքների մէջ և կրկին
մոռանում էր իր ուր լինելը, ինչ լինելը։
Գապէն ջրաղացի դուռը բացեց, անձրևից

թարմացած դաշտային սառն օդը լայն հուսանքներով ներս թափանցեց, ջրաղացի փոշութ մթնոլորտը փոխուեց. Նաւօն ցնցուեց և գլուխը բարձրացրեց:

—Ապրօ, գիշերը դու ինչու էիր այնտեղ։
—Ես ինչ գիտեմ... Ես երբէք չեմ իմաստում, թէ ինչու որեւէ տեղ եմ լինում. այնպէս, պատահում է. շատ անգամ չեմուզում, բայց գնում եմ, դէ, այդպէս է, ախալէր, մարդու կեանքը անհասկանալի գէպքերի շարք է. ինքդ էլ՝ իհարկէ՝ չէիր ուղի այժմ այտեղ լինել, այլ քո տանը, բայց տես, նստած ես Գոպէի ջրաղացում։

Նաւօն յոյս ունէր մի բան հասկանալ Ապրօի պատասխանից, լուսոյ մի շող ձգել եր հոգին տանջող այն մութ առեղծուածի վրայ, բայց այդ տարօրինակ մարդը երբէք որոշ պատասխան չէր տալիս, նրա հետ խօսելիս՝ ամենքը դլուիները կորցնում էին։ Յուսահատուած լոեց, գլուխը կրկին քաշ ձգեց, այժմ նրա մոքելն այլ կերպարանք ընդունեցին. Նա յիշեց կոսջը, յիշեց նողերին, ամբողջ գիշերն անշուշտ նրան սպասել են, սարսափելի՛ գիշեր և նրանց համար։ Կինն այնքան էլ նրա փոյթը չէր, նա երբէք քըն-

քոյշ չէր եղել դէպի իր ամուսինը, բայց աղջիկը, այն գժբաղդ, յուսահատ աղջիկը, «խեղճ նողեր», մրմնջաց նա, «խեղճ նողեր»։
—Գիւղից բազմութիւն է գալիս, ասաց Գոպէն՝ ներս գալով. —շատ են։

—Քո հաւարին են գալիս, ախալէր նաև, գնում են գիտելի վնտրելու, բայց լուացողի պէտք չի լինի, հըլ... թէ թաղելու լինինք, լու լուացուած են։

Արդարև գիւղը քանդուած՝ գալիս էր, համոզուած էին, որ ձկնորսը խեղդուել է. գնում էին գէպի լիճը՝ ափերի վրայ գիտել վնտրելու. բայց այդ չէր բոլորը, նողերն էլ չը կար նախընթաց երեկոյից։

Բազմութեան առջեից համարեա վազում էր Գիւնապը, գլխակապը քանդուած, շորերը թաց, տանջուած դէմքը գունատ, ձնկներին խփելով, գլխին տալով, որպէս մի դիւահար, որ փախչում է դաշտերում առանց գիւտակի։ Ողջ գիշերը նա այդպէս թափանպատակի։ Ողջ գիշերը նողուցներում, անձրեի, քամուռել էր գիւղի փողոցներում, անձրեի, քամուռել էր գիշերը յուսահատ կանչել էր առաջ, ողջ գիշերը յուսահատ կանչել էր ամուսնուն և միակ գաւակին։ Այժմ նրան հետեւում էին հարեանները։

—Վերկաց, նաւօ, էլ նազ մի արա, խեղճ

է կնիկդ, տես, ի՞նչ հալի է, ցեխերի միշտ դվաբն տալով դալիս է, վերկաց, դռւրս արի, թնդ սիրտը հանդատանայշ եւ նա բռնեց նաւօի երկու թեւերի տակից, վեր բարձրացրեց, նրանք կամացուկ դուրս եւ կան ջրաղացի դուռը:

— Նաւօն, նաւօն, ճշաց բազմութիւնը միաձայն՝ տեսնելով ձկնորսին: Եւ ամենքը հաւատացին, որ նա փոթորկից խոյս տուել, ստիպուած ջրաղացումն է անցկացրել դիշերը: Ամուսնուն տեսնելով՝ Գիւնազը կարծես մի քիչ ոյժ առաւ, նա այժմ գոնէ մենակ չէր, անտեր չէր, աւելի թափով առաջացաւ, հեկեկալով կախուեց նաւօի ուսերից:

— Մարդ, տունդ աւերուի, դիշերն էս տեղ ես եղել, հէջ չես ասում Շողերն ուր է...
— Շողերը... Շողերը... նաւօն ցնցուեց, դողաց կանդնած տեղում ու աչքերը չուց սարսափած:

— Երեկ իրիկուանից չը կայ, ու դիշերուան մէջ կորաւ բալաս, ախ...

— Ապրօ, Շողերը, դու տեսամը, չես տեղ, դարձաւ նաւօն դէպի Ապրօն, որ նոյն պէս քարացած մնաց: Այս երկու մարդն իրարից անկախ մտածում էին իրանց տեսած-

ների մասին, մտածում էին և սարսափում: Բազմութիւնն սպասում էր. Ապրօն լուռ էր: Նա յիշում էր, որ հետեւեց այն աղջկան, ուզում էր բռնել յետ բերել կամ իմանալ, թէ ուր է գնումմենակ այն չար ժամին, բայց աղջիկը կորաւ նրա վրայ լծի ափին, Ապրօն զուրաշատեց իմանալ, թէ ինչ եղաւ: Ապրօն այն ժամանակ հեռուից կիսախաւարի մէջ նշմարեց ձկնորսի նաւակը, հասկացաւ նրան սպառնացող անխուսափելի վտանգը և լծի ափերին սպասեց, վազեց նաւակի մօտ, և դտաւ կիսամեռ նաւօին ու փրկեց: Միթէ դուր գողերն էր, ուր դնաց, ինչու, այն աղջիկը Շողերն էր, ուր դնաց, ինչու, Ապրօն ասել չէր կարող և լուսում էր:

— Գսպէ, Շողերը, դարձաւ նաւօն դէպի ծերունին, տարիներից յետոյ առաջին անդամն էր, որ նա երես առ երես խօսք էր ու զլում էր հակառակորդին, վիշտը ընկճում էր խըստափրտ ձկնորսին: Շշկլած Գսպէն աչքերը թարթեց երեխայի պէս, նայեց չորս կողմը՝ ասես Շողերին փնտրելով, չթունքները դող մութեանը, նայեց այս յուսակտուր ծնողներին: Եւ այդ հայեացքը, նրա ամբողջ դէմքն այդ վայրկենին այնքան խղճալի, այն-

պէս ողբարձելի էին, որ կարծես ծերունին ներդութիւն էր խնդրում բազմութիւնից, որ ինքը չի տեսել Շողերին, ոչինչ չը գիտէ, չի կարող այս ցաւին ճար անել:

Կրկին տիրեց մի քար լուսվթիւն, որ
խանդաբառում էր միայն Գիւնազի հեծկը-
տանքներով։ Շուարած գլուխներից վեր կար-
ծես աներեւոյթ կերպով սաւառնում էր մա-
հը, ամենքն զգում էին նրա շունչը, որի սառ-
նութիւնը թափանցում էր բոլոր հոգիների
խորքը, սառսուեցնում էր մարմինները, անու-
րոշ անհանգստութեան, ցաւի արտայայտու-
թիւն տալիս աչքերին, բայց և այնպէս ոչ
ոք չէր խօստովանում իր միտքը, ոչ մէկը
միւսին չէր բաց անում իր գաղտնի զգաց-
մունքը։ Առանց գագաղի՝ յուղարկաւորներ
էին սակայն և լուռ էին։ Եւ այդ լուսթիւնը
խեղդում էր ամենքին։ Մի խօսք, մի ձայն,
մի նոր կարծիք, մի դէպք գոնէ, որ այս
կացութիւնը փոխէր, այս էին մտածումամեն-
քը և սպասում էին՝ իրար նայելով։ Եւ այդ
դէպքը յայտնուեց. ջրաղացը յանկարծ լուեց,
քարը կանգ առաւ, չախչակը պապանձուեց։

—Ի՞նչ պատահեց:

Գոպէն առաջինը նկատեց այդ և կա-

մացուկ գնաց ջրաղացի յետել, բայց մի
վայրկեան յետոյ գունատուած յետ եկաւ,
Ապրօի թելք քաշեց, երկսով գնացին, մինչ-
դեռ բազմութեան մի մասը դիմում էր դէպի
լիճը, միւս մասը դէպի դաշտերը, իսկ ոմանք
էլ շուտարած, ինչ անելները չիմանալով կանգ-
նած մնացել էին իրանց տեղուած անշարժ
ու մտամոլորչ:

— Նայիր, ասաց Գողեն՝ Ապլօի թեից
քաշելով։

— 0', զուլում, զուլում բան է, ճշաց Ապրօն այնպիսի ձայնով, որ ամենքը վաղեցին գէպի ջրաղացի յետել և սասանուած մնացին. Շողերը փռուած էր ջրերի վրայ և իր մարմնի լայնութեամբ փակել էր նաև անցքը, որից և ջրաղացը կանդ առաւ Երկայն սև մազերի մի մասը փռուել էր գէմքին, իսկ միւս մասը փալթուել պարանոցին, ձեռքերից մէկը կրծքին, միւսը կախ ընկած ջրի մէջ. կանաչ մամուռ, ջրային զանազան ծաղիկներ, խոտեր կախկախուել էին նրա զգեստներից, հիւսուել էին նրա մազերին՝ մահուան պսակ կազմելով կուսական գլխի շուրջը. Սոսկումի մի ճիչ էր, որ թռաւ բոլոր արթունքներից, երբ նրան դուրս հանեցին ջրից և դրեցին ափին՝

ուռիների տակ։ Գիւլնազը նրա վրայ ընկաւ սրտապատառ աղաղակով, իսկ նաւօն իր տեղում երերաց, բոլոր հասակով փռուեց գետին. ապա ծունկ չոքեց, ձեռքերը բարձրացը եց և ճշաց.

Եմ եմ խեղդել, ես խեղդեցի աղջկաս, հարեաններ, հայքրիստոնեաններ, նայեցէք, սրան ես եմ խեղդել, էս չորացած ձեռներովս, ճում խեղդեցի. երկինք, Աստուած, չես տեսնում, չը տեսամ, հայրն իր սեփական զաւակին խեղդեց. դէ, ճայթիր, զարկ, զարկ էս նզովուած գլխիս, ինչու թողիր, որ ես աղատուեմ։

Բազմութիւնը ոչինչ չէր հասկանում, ոմանք կարծեցին, թէ նաւօն մօտէ խելագարուելու, ուրիշներն աչքերը սրբելով իրար էին նայում։

— Օ՛, սիրուն բալա... Շողեր ջան, խոտ ու ծաղիկ ով ցանեց վրադ... ով այսպէս զարդարեց քեզ... մազերդ ով այսպէս սիրուն փռեց ճակատիդ... հարսանիքի համար է... հարսանիք... թնդ սաղ աշխարհը պարի, հարեւաններ, պարեցէք, գեօնդ բռնեցէք, Շուդերիս հարսանիքն է... տեսէք, խոտ ու ծաղկով կանաչշկարմիր է կապել։

Բազմութիւնը հեկեկումէր. Նաւօն անարշունք ու սարսափելի աչքերով նայեց լացողներին, ապա աղջկայ գիւլին, թաւ բեկերի տակ շրթունքները դոզդոզացին, դէմքը ձրդ ձգուեց, ծամածուեց, ու յանկարծ իր ահագին ցաւը կրծքում պարտկելու անկարող նամոնչաց, վաղուց հետէ սրտումկուտուած տուփիշը կարծես քանդեց պատուարը և աչքերից յորդ արցունքի ձեռվ գուրս թափուեց։ Դա լաց չէր, այլ ուռած կրծքի աւելրած և հեկեկանքի փոխարէն իրար յաջորդող անընդհատ աղեխարշ տնքոցներ։ Այդ լուակեաց, ընդհատ աղեխարշ տնքոցներ։ Այդ լուակեաց, մուայլ, խստագէմ ծերունին, որի արցունքը դեռ ոչ ոք չէր տեսել, իր սգի, իր ահագին վշտի մէջ սոսկալի էր։ Տարիներ շարունակ զապուած ու հապարտ, երբէք թուլասիրտ, զափակուտ ու փոքրոգի, ծեր ձկնորսը մի վախկոտ ու փոքրոգի, ծեր մինորսը կաղնու պէս, որ ընկնում է անհինաւուրց կաղնու պէս, որ ընկնում է անօրինակ փոթորկի տակ ահագին շառաչով, օրինակ փոթորկի տակ ահագին շառաչով, այժմ ընկճուած, վշրուած էր. տեսարանը վեհօրէն սոսկալի էր։ Բազմութիւնն այժմ ամեն ինչ մոռացած նայուած էր միայն այս անօրինակ սուգին, և ամենքի հայեացքի մէջ կումբաւորի փակ հոգին բաց տեսնելու սոսմերձաւորի փակ հոգին բաց տեսնելու սոսկումի հաճոյքն էր փայլում։ Իսկ նաւօն փրկումի հաճոյքն էր փայլում։

ոռւմ էր ամենքի առաջիր տանջուած հոգին,
ասես ուխտել էր ցոյց տալ աշխարհին, որ իր
մոայլ արտաքինի տակ նոյնպէս ծածկուած
կայ մի մարդկային զգայուն սիրտ, որ այժմ
իր լացի հետ կարծես մաս-մաս դուրս էր
թափւում:

Նա գալարւումէր աղջկայ դիակի վրայ,
երեսը արորում էր նրա մարմինը ծածկող
խոտերի ու մամուռների մէջ, գժի պէս ջղայ-
նօրէն հոտոտում, համբուրում, կրծոտում էր
սև ու երկայն հիւսերը և կամցաւից ու զայ-
լոյթից եղունդներով չանգուսմ էր գետինը՝
կարծես իր մեռած զաւակի հետ միասին թա-
զուելու համար: Բազմութիւնից ոչ ոք չէր
համարձակում մօտենալ, բարձրացնել նա-
տօին, վերցնել դիակը, շրջան էին կազմել, և
սուդը շարունակում էր: Յանկարծ յետին
շարքերն իրար անցան, փսփսացին, կենդանի
պատը պատառուեց, բացուեց մի ճանապարհ,
և այնտեղ յայտնուեց Գուլէն: Հանդիսաւոր
ու խաղաղ նա առաջացաւ՝ աջ ու ձախ նա-
յելով, մօտեցաւ դիակին, կանդ առաւ նաւօի
առաջ, նայեց նրան իր վշտոտ, գթոտ հա-
յեացքով, ապա ծունկ չոքեց, կուացաւ մեռած
աղջկայ վրայ, մնաց մի փոքր այնպէս, երբ

դլուխը բարձրացրեց, երկու կաթիլ արցունք
կախուած էին նրա թերթերունքերից, միայն
երկու կաթիլ, աշխարհի համար լացովը մի
դժբաղդի վրայ թափելու այնքան արցունք
հազիւ էր պահել:

—Վերցրէք, դարձաւ նա գիւղացիներին:
Նաւօն լուռ նայում էր, դիակը վերցրին,
առաջ ընկան, մի երկու հոգի նաւօին բար-
ձրացը թե երի տակից, և բազմութիւնը
շարժուեց: Կամուրջի վրայ վշտից կիսախելա-
դար ձկնորսը յետ դարձաւ, բուռնցքը բար-
ձրացը օդի մէջ դէպի ջրաղացը:

—Անէծքի բուն, վերան դառնաս, վե-
րան, ինչպէս իմ կուրծքն է: Զկնորսի շփո-
թուած գլխում յրաղացը, Գուլէն, Ասօն, Շո-
ղերի մահն իրար էին խառնուել, իրար հետ
կապուել այնպէս, որ էլնա զատել չէր կա-
րողանաւմ մէկը միւսից, նա սպառնում էր
քինոտ ու զարհուրելի: Նա էլ չէր հեկեկում,
չէր լալիս, լուռ էր և յանկարծ բարձրաձայն
քրքջաց մահասարսուռ ծիծաղով, յուղարկա-
ռորների մարմնով սարսուռ անցաւ: Ամենքը
կանդ առան, յետ նայեցին, իսկ նաւօն
շարունակում էր իր քրթիջը և քայլում՝ «վէ-
րան, վերան» գոչելով:

Գսպէն կանգնած նայում էր հեռացող յուղարկաւորներին, որ եկան, իր ջրաղացից մահը շալակեցին, գնացին, նայում էր ցաւից խեթը կորցրած ծեր ձկնորսին, որի սպանիչ ծիծաղը դեռ հնչում էր դաշտերի մէջ չոր ու անողում. և երբ բաւական հեռացան, նստեց իր թմբի վրայ, ծեր գլուխը ձեռքերի մէջ առաւ ու բարձրաձայն հեկեկաց. Արցունքը թափում էր խորշոմած այտերի վրայով, թըրջում էր ալեզարդ միրուքը, կուրծքը, և նրա հեծկտանիքները յուսահատ ու խեղճ կորչում էին շրջակայքի ամայութեան մէջ, որպէս անապատում մոլորուած մի դժբաղզի օգնութեան աղաղակները: Ինքը Գսպէն նոյնպէս մի մոլորուած չէր կեանքի մեծ անապատում, ուր միայն ցաւեր ու սեեր տեսաւ: Ինչո՞ւ համար է այս զարհուրելի զուգադիպութիւնը, ինչո՞ւ համար նրա երիտասարդութիւնն ու ծերութիւնը այսպէս նմանում, կապում են երար երկու մահերով: Եւ ձկնորսը նրան էր սպառնում, դուցէ և բազմութիւնը նրան էր անիծում: Ինչո՞ւ, իր ո՞ր յանցանքի համար: — Ներիր, Տէր, մրմնջում էին նրա շրթունքը, ինայի՞ր այս իմ ալիքներին, իմ ծերօրերին, թնդ որ գոնէ այսուհետեւ թեթև.

Խղճով աչքերս փակեմ, որ գոնէ գերեզմանի մէջ հանդիսատ դանեմ: Թէյանցաւոր, մեղաւոր եմ, այսքանն էլ բաւական չէր Քո ողորմութեանն արժանանալու, չէ Դու դժած, երկայնամիտ, ողորմած ես: Մենակ եմ, Տէր, Դու այդպէս կամեցար, Քեզնից բացի ոչ ոք չ'ունիմ, իմ անտէրութիւնը, իմ ծերութիւնը ինայի՞ր: Եւ մեղաւոր ու վշտացած ծերունին աղօթում էր երկար-երկար, և արցունքը թափուում էր անընդհատ, սիրով թեթևանում էր: Ապա նայիշեց Ասօին, նրա առաջին խոստովանութիւնը, իր տուած խորհուրդը... «և Նաւօն ինձ էր անիծում», մոտածեց նա, և շրթունքը ները ցաւոտ ժպիտ ձևացրին: «Ասօ, Ասօ, այս ինչ արիր», մրմնջաց ծերունին, կասես նա իր առաջը կանգնած լինէր: Ո՞ւր էր Ասօն, ծերունին այդ չը գիտէր:

— Տէր, Դու իննայիր նրան, ամենքին, աղատիր զուլումից, ցաւից, Տէր:

XIX

Լիճը եզերող լեռների կատարները կաշմաց-կամաց ծածկում էին ձիւնով, և վրանաբնակ թափառականներն իրանց հօտեսով

յածէին գալիս գէպի հարթավայրերը։ Նրանց
հետ միասին ցասումը մօտենում էր, շէն գիւ-
ղերը կծկում ու դողում էին։ Խնչպէս Սինակայ
սարերի կոծքերից գէպի լիճը գլորուող վտակ-
ներն ու աղբիւրներն իրանց մօր ճակատը
կնծում էին, այնպէս էլ շրջակայքից հասնող
լուրերը սև ագռաւների երամների պէս ծա-
նըրանում էին գիւղերի վրայ և խորշոմներով
պատում անհոգ գէմքերը։ Ոչ ոք չէր կարող
ասել, թէ ինչ, բայց ամենքը, համոզուած
էին, որ մի բան է մօտենում հանդարտ, բայց
հաստատ, անողորմ քայլերով։

Մէկ նաւօն էր անհոգ, մէկ նրա փոյթը
չէր։ Աղջկայ այնքան եղերական մահից յետոյ
նա խապառ լոեց, անդամ կինն այլևս նրա
ձայնը չէր լսում։ Հին նաւակի տեղ նորը ձեռք
բերեց, հին առագաստի տեղ նորը պատրաս-
տեց և առաջնուայ պէս ամեն օր գնում էր
լիճը վաղ առաւօտից, երբ գեռ գիւղի փո-
ղոցներում մութ էր, և նրան ոչ ոք տեսնել
չէր կարող, նստում էր նաւակի մէջ և բաց
անում առագաստը։ Ոչ ոք չը գիտէր, թէ նա
երբ է յայտնում լծի վրայ և երբ վերադառ-
նում։ Սկզբում կարծում էին, թէ նաւօն
վերսկսել է իր պարապմունքը, որ նա կամաց-

կամաց մոռանում է աղջկայ մահը, բայց յե-
տոյ պարզուեց ուրիշ բան։ Նաւօն այն մարդ-
կանցից մէկն էր, որոնք ապրում են միայն
ներսից, ծածուկ և խորապէս, այն հոգիներից
մէկը, որոնք նման են հրաբուսոտ լերան, որ
սակայն երբէք չի ժայթքում, եռում է խորքե-
րում, պատառոտում, աւերում սեփական
կուրծքը, առանց որ արտաքուստ այդ ներքին
երկունքի, աւերածի նշաններն երևային-
բայց համսում է ճգնաժամն, այլևս անկարելի
է գառնում զապել ներքին տագնապը, այն
ժամանակ ժայթքումը զարհուելի է, աւերածն
անուղղելի։ Մի այդպիսի, հրաբուսային ճըդ-
նաժամ ապրեց նաւօն, նրա հոգու, սրտի
աւերածն այլևս անդարմանելի էր։ Մէր, քէն
ու վիշտ նաւօն զգում էր հաւասարապէս
խոր, հաւասարապէս ուժգին։ Այժմ առաջինն
այլևս չը կար, աղջկայ մահը ջնջեց այն և
նրա փոխարէն էլ աւելի զօրացըեց ցաւն ու
քէնը։ Նրա փշրուած սիրալ լուռ մխում էր
այդ ցաւից, ինչպէս մեծ հոգեհից յետոյ
ծխացող աւերակները, և հոգին ամբողջապէս
բռնուած էր վրէժի, ոխի զգացմունքով, գլւ-
խում մնացել էր մի հատիկ միտք, —ուրիշներին
խում մնացել էր մի հատիկ միտք, —ուրիշներին
արցունք ու կոկիծ պատճառելու միտքը։ Նա

չէր խօսում ոչ ոքի հետ, որովհետև ատում
էր ամենքին, չէր երևում ոչ մի տեղ, որովհ-
հետև իր վայրենի միայնութեան մէջ ոչինչ
չէր խանգարում իր էութեան ոչնչացումը, որ
նրան հաճոյք էր պատճառում։ Մեծ ցաւի
ծանրութիւնը նրան դէպի ինքնասպանու-
թիւն չը մղեց, նա շարունակում էր ապրել
և իր անպէտքացած գոյութիւնը մասմաս
ջնջել և կարծես ինքը ճաշակում էր այս
դանդաղ ինքնասպանութեան, սեփական
աւերածի սոսկալիքաղբութիւնը։ Նա ատում
էր ասես մինչեւ իսկ ինքն իրան։

Դեռ երբէք նաւօի նաւակն այնքան գե-
ղեցիկ և նրա առագաստն այնքան սպիտակ,
այնպէս գրաւիչ չէր, ինչպէս այն աշունը։
Մենակ իր նաւակի վրայ, մենակ լճի վրայ,
երկնքի և երկրի մէջ կախուած, այդ ան-
օրինակ ձկնորսը տարւում էր կապոյտ ջրերի
վրայով կատաղի արագութեամբ, դէպի ուր
նրան տանում էին աշնանային հովերը։ Լիճը
խաղաղ էր, թէ ալեկոծ, ալիքներն ուռած
էին, թէ գեղածիծաղ, այդ նաւօի համար մի-
ևնոյն էր, նրա առագաստը միշտ բաց էր, նրա
նաւակը միշտ ուանում էր դէպի որևէ կողմէ
իր խելագար ընթացքի մէջ նա երբեմն

երբեմն բարձրացնում էր իր թին և ահա-
գինթափով զարկում էր ալիքներին, երբ որևէ
մեծ ձուկ կամ ջրային այլ կենդանի էր յայտ-
նուում ջրերի մակերեղյթին։ Եւ երբ զոհի
դիակը փուլում էր ալիքների վրայ, նա նա-
դիակը յումէր վայրենի հաճոյքով և քրքջում էր իր
չոր, սարսափելի ծիծաղով։ Երբ ուժեղ հող-
մերի առաջ լիճը փոթորկում էր, երբ ա-
լիքները լեռնանում, վրփիրում էին, գիւղացիք
հեռուից սարսափով էին նայում ծեր ձկնորսին՝
ամեն վայրկեան սպասելով, թէ նա կուլ կեր-
թայ անդունդներին, բայց ահաւոր վտանգը,
մեծ վիշտը կարծես կրկնապատկել էին ձըկ-
նորսի բազուկների ոյժը։ Նա անհոգ կերպով
խաղում էր կատաղի ալիքների հետ, և նա-
ւակը տարւում էր այս ու այն կողմ տաշեղի
ակը տարւում էր այս ու այն կողմ տաշեղի
պէս, մերթ յայտնուում, մերթ ծածկում
վրփուրէ բլրակների մէջ։ Կարելի էր կար-
փակութէ բլրակների մէջ։ Կարելի էր կար-
փակութէ բլրակների մէջ։ Կարելի էր կար-
փակութէ բլրակների մէջ։ Կարելի էր կար-

Ամեն անգամ, երբ դիպուածով կամ
գուցէ տիրոջ ցանկութեամբ այդ մենաւոր
նաւակը համառում էր այնտեղ, ուր հայրն այն
սարսափելի գիշերն իր բաղուկներով յետ
սարսափելի գիշերն իր բաղուկներով յետ

մղեց գուցէ փրկութիւն փնտրող իր աղաջրկան, երբնրախախտուած երեակայութիւնը էլի միյետին թափով պատկերացնում էր այն անողորմ պայքարը մի հօր ու խեղդուող աղջկայ մէջ, նաւօն կանգ էր առնում, կախուում էր նաւակից գուրս, նայում էր ջրերին երկար-երկար և ապա յանկարծ քրքջում էր խելագարի անմիտ ծիծաղով։ Յետոյ նաւակը շարժում էր, առագաստն ուռչում էր, և նա գնում էր դէպի հակառակ կողմը նոյնպէս արագ, կրկին կատաղի թափով։ Լայնարձակ լճի վրայ, բիւրաւոր ալիքների խորշերի մէջ կարծես թէ նա տեղ էր փնտրում իր ցաւը մաս-մաս թաղելու և գտնել չէր կարողանում։

Գիւղացիք վերջի վերջոյ հասկացան, որ նաւօն այլես ձուկ չի որսում, որ նա միայն խելագարի պէս թափառում է լճի վրայ։ Եւ երբ հեռուից նշմարում էին այն սպիտակ առագաստը, այն սիրուն նաւը, էլ սիրով չէին նայում, այլ մի ներքին ցաւով ու սոսկումնվ. զարմանալի ձկնորսն իր վարմունքով ճնշում էր ամենքին, թւում էր, թէ ինքը մահն է խաղում լճի վրայ ու ծրագրներով։ Այդ ճնշող զգացմունքն այնպէս էր զօրանում օրաւուր, որ եթէ մի փոթորկոտ օր նաւօն իր

նաւակով, առագաստով կուլ գնար ալիքներին, էլ ոչ ոք չէր ցաւի, որովհետեւ այսպիսով գիւղը կ'աղատուէր այդ չարագուշակ երեսյթից, և ձկնորսի ցաւն էլ վերջ կ'առնէր։ Բայց փրկիչ փոթորիկը չը կար. խորհրդաւոր գարձած նաւակը լողում էր լճի վրայ, և ձկնորսի քրքիջը հնչում էր ալիքների շառավի հետ գիւղի ցաւը սակայն միայն նաւօն չէր։ Երջակայքից «բաագ-բաագ»-ը սաստկանում էր, և գրա հետ միաժամանակ չորս կողմից հրդեհները բաղմացան։ Նախ գիւղի երեք ծայրում մի մութ գիշեր միաժամանակ երեք դէղ բռնկուեցին բոցերով, մարել անկարելի եղաւ, և երեք ընտանիքյորդ օրը նստեցին մոխիլների վրայ։ Յետոյ սկսեցին վառել մարդկները գիւղից գուրս։ Համարեա իւրաքանչիւր գիշեր չարագուշակ բոցերի արիւնագոյն փայլը լուսաւորում էր գիւղի իրճիթները, և անզօր, ողորմելի բնակիչները կանանց ու երեխաների լացի ուղեկցութեամբ վազվում էին այս կողմ՝ գլուխները կորցրած, էին այս ու այն կողմ՝ գլուխները կորցրած, չիմանալով ինչ անել։ Միենոյն ժամանակ գիւղից վեր բլրի կրծքին հնչում էր միշտ ձըկ-գիւղից վեր բլրի կրծքին հնչում էր միշտ ձըկ-նորսի գիւղից ծիծաղը, որ խառնում էր նորսի գիւղից ծիծաղը մոնլոցի հետ։ Կասկած չը կար, հըր-բոցերի մոնլոցի հետ։

Դեհը ձգում էին գիւղի թշնամիները, լեռնաւ-
բընակ թափառականները, որոնք ուխտել էին
երեխ այսպիսով վրէժ լուծել ուխտաւորների
կատարած այն մի հատ սպանութեան հա-
մար։ Յերեկները լճի վրայ ալացող այն մե-
նաւոր նաւակը, գիշերներն իրար յաջորդող
հրդեհները, բրի վրայից հնչող անողորմքը՝
քիջը, հեռուից համնող «բսագի» ձայները
յուսահատութեան էին հասցնում գիւղա-
ցիներին։ Այս բոլորի հանգէպ ճարը ցասման
ժամն էր, ասում էր վարդապետը իւշ-Քիլի-
սէից, ցասման ժամ, կրկնում էր կոյս-Գուլէն
և նրա հետ տիրացու դրբացը։ Ա. Խաչի պասն
էր, և մեռելոցի օրուայ համար պատրաստու-
թիւնները տեսնուում էին շտապշտապ։ Բոլոր
թոնիրները հաց էին թխում, կոյս-Գուլէն
պատրաստում էր նշխարները Գոպէի բերած
շարմաղ ալիւրով։

Եւ սակայն ով էր այս ցասումի պատ-
ճառը, ինչու համար օրուաւուր աճող այս
ցաւերը, որոնք սպանում էին խեղդել
գիւղը, ով բերեց այս զուլումը։ Մարդիկ
մտածում էին, մարդիկ փնտրում էին յան-
ցաւորին և գտան վերջապէս շնորհիւ իմաս-
տուն դրբաց-տիրացուի։

Ապրօն, այդ պատանով շրջող, զուլում
ճշացող մարդը։

Ուղը բէխեր է, նրա եկած օրից ամեն
բան փոխուեց։ Գիւղի հանդերում արիւն
թափուեց, ծողերն իրան լիճը նետեց, նրա
հայրը խելագար թափառում է, հրդեհները
բռնել են գիւղը, մի աներեւոյժ ձեռք բոց
ու արիւն է սփոռում չորս կողմում, «բսագի»
ձայնից սրաներն են դողում։

Ապրօն, հա, Ապրօն, նա է բոլորի պատ-
ճառը, զուլում է ճշում մուժ գիշերներին,
այդ գեռ քիչ է, գեռ ծաղրում է ցասման
ժամը, չի հաւատում սրբերին, հեղնում է
Մրրկի խաչքարը։ Ապրօն թնդ գնայ, հեռանայ
գիւղից, թնդ ուրիշ տեղ կանչի զուլում, նրա
ոտքը չար է, գ-ժբաղդութիւնն իր հետ ման
է ածում։ Այսպէս մտածեցին գիւղացիք, և
մի օր Ապրօն կանչուեց հրապարակ։ Տիրացուն
բազմել էր կենտրոնում, աջ ու ձախ գիւղի
միւս իշխանները։

— Ապրօն, հեռացիր մեր գիւղից, ասաց
տիրացուն՝ առանց գլուխը բարձրացնելու։

— Հեռանամի։

— Հա, հա, հեռացիր, ոտքդ չար է, բէ-

խեր, քո դալուց յետոյ մենք էլ դադար,
հանգիստ չ'ունենք։
— Հեռացիր, հեռացիր, կանչեցին միւս
ները։

Ապրօն լուռ էր։

— Ես խօսում եմ աւետարանից, սուրբ
դրբից, մարդարէների, առաքեալների բերանից. քանի Յովսան մարդարէն նաւի վրայ
է, փոթորիկը չի անցնի, հեռացիր։

— Յասման ժամին դու չես հաւատում,
մենք ցասման ժամ ունինք, դու այսաեղ չը
պէտք է լինիս, շարունակեց տիրացուն։

— Յասման ժամը մեզ կը փրկի, հեռացիր։

Ապրօն գլուխը բարձրացրեց, նայեց
իրան շրջապատողներին, կտաւն զգուշութեամբ ցած բերեց ուսից, փռեց առաջը։

— Նայեցէք, ասաց նա, դուք դողումէք
սրանից, իսկ ես ման եմ ածում ինձ հետ,
որովհետև մահից չեմ վախենում։ Ես կ'երա-
թամ, որ ձեր ցասման ժամը զօրաւոր լինի... Եւ նա կտաւը կրկին ձգեց ուսին ու
շարժուեց։

— Գնա, գնա։

— Զուլում, զուլում, վերջին անգամ

կանչեց Ապրօն հեռանալիս, և այդ ձայնը
որպէս մահուան, աւերածի մի ճիչ, տարա-
ծուեց դիւղի վրայ ու մեռաւ խրճիթների
կտուրներին։

Եւ Ապրօն գնում էր մենակ, գլխակոր ու
ջարդուած։ Գնում էր ու մտածում։ Այս եր-
կըրորդ անգամն էր, որ նա այսպէս ճնշուած
սրտով հեռանում էր հայրենի դիւղից, մէկ
երիտասարդութեան ժամանակ, մէկ էլ այժմ,
այս ծեր օրերին։ Առաջին անգամ նա թողեց
իր յարկն ու իր օջաղը, յուսալով այսպիսով
ազատել իր կնոջը՝ Գիւլիզարին, երազած
երջանկութիւնը չը գտնելով ամուսնութեան
մէջ՝ փախաւ, որ գոնէ մի ուրիշը— իր կինը
կարողանայ երջանիկ լինել, նա ուղեց չէն-
ջուել՝ ուրիշին տեղ անելու համար։ Այժմ
ինքը կամաւ չի գնում, նրան քշում են,
բայց դարձեալ ուրիշի երջանկութեան հա-
մար, դիւղը կարծում է, թէ առանց Ապրօն
նա երջանիկ կը լինի։ «Թող լինի, թող լի-
նի», մըմնջում էր նա և քայլում շարունակ։
Բանի տարի էր նա այսպէս քայլում դիւ-
ղոց-դիւղ, քաղաքից-քաղաք, լեռնից-լեռ,
ձորից-ձոր։ Նրա գլխին ծանրացած անէծքը
ասես էլ վերջ առնելու չէր։ Նա այնքան

բան էր տեսել իր սև, թափառական
կեանքի ընթացքում, այնքան ուխտաւորներ
տարել-բերել սուրբ Կարապետ, այնքան
գժբաղդների, թշուառների գանգատները
լսել: Ապրօն բաց աչքերով էր տեսել մեծ
ցաւը, զուլումը, ճաշակել էր նրա բոլոր գառա-
նութիւնը և իբրև կեանքի վերջին հարկ,
վերջին պարտականութիւն, նա եկել էր
հայրենի գիւղին իր գիտեցածն ասելու,
եկել էր քնած, անհոգ հոգիներին զար-
թեցնելու պատրաստուող մեծ ցասումի
հանդէպ, որից ժամ ու պատարագով աղա-
տուել անկարելի էր, եկել էր նաև իր ծեր
օրերին տառապած գլուխը հայրենի գիւ-
ղում թաղելու: Բայց իր ծննդավայրը նրան
մերժեց, մի մարդ, մի տանջուած, անհան-
գիստ հոգի միայն հասկացաւ նրա ասած
զուլումը և գնաց... նա Ասօն էր: Ամբողջ
գիւղում միայն Ապրօն գիտէր, թէ ուր է
Ասօն, միայն նա էր, որ չէր անիծում անհետ
կորած երիտասարդին նողերի մահուան հա-
մար: Ասօից յետոյ Ապրօի սրտում տեղ էր
բռնել նաև մի ուրիշը, այն ծեր, պատկա-
ռելի ջրաղացպանը՝ Գողէն: Ասօն կապում
էր այդ երկու ծերերին իր անձնաւորու-

թեամբ. նա օղակ էր նրանց հոգիների մէջ-
Ապրօն սիրում էր այն ջրաղացը գիւղից
գուրս, սիրում էր ուռիների երկու շարքը,
սիրում էր մանաւանդ այն մենաւոր բար-
ձրահասակ ծերունուն, որ ժայռի պէս
կանգնած էր կեանքի ձախորդութիւնների
հանդէպ: Նրա համար Գողէն մի խմաստուն
էր, որ գիտէր, հասկանում էր ամեն բան,
որ ամենքի համար մի բարի խորհուրդ-
ունէր և որ սակայն իր գիտցած, տեսած
զուլումի գէմ անզօր էր:

Ապրօն յիշեց նաև Գուլէին, և սիրու
ցաւով լցուեց: Նա չը կարողացու տեսնել
նրան, խօսել հետը և նրանից թողութիւն
խնդրել: Մի քանի անդամ եկեղեցում
տեսաւ, սպասեց մինչև ժամասացութեան
վերջը, բայց երբ մնաց բոլորովին մենակ,
վերջը, բայց երբ մնաց գուղովին մենակ,
զգեստ կնոջը, որ էլ ոչնչով նման չէր իր
թողած Գիւղիզարին: Եւ սակայն այդ սկը,
կեանքի անվերջ սուգը իր՝ Ապրօի գործն
էր, իր պատճառով էր եղած: Մի քանի
անդամ մտածեց գնալ, նրա փոքրիկ խուցի
գունակը թակել գիշեր ժամանակ և միայն
երկու բառ ասել՝ «ներիր, Գիւղիզար», բայց

երբ մօտենում էր այդ նուիրական տնաւկին, երբ տեսնում էր հեռուից նրա պլազմող ճրագի լոյսը, յետ էր փախչում վախեցած, սպասելով՝ որ մի առիթ ներկայանայ: Եւ առիթը ներկայացաւ այժմ:

Գուլէն դալիս էր հէնց Ապրօի հանդէպ: Երբ հեռուից նա նկատեց սպատոր կնոջը, սիրտն սկսեց բարսխել, կանդ առաւ մի վայրկեան, բայց ոյժ դործ դրեց ու քայլեց: Նրանք կանգնած էին դէմ յանդիման: Լուռ էին: Առաջինը խօսեց Գուլէն:

— Լաւ չ'արիր, Ապրօ, լաւ չ'արիր, մենք կապուած էինք Աստծու առաջ:

— Հա, ես էլ դիտեմ; որ լաւ չ'արի, բայց ուշ իմացայ, ներիր:

— Օ՛, ներողութիւն խնդրելու դու կարիք էլ չունես, երևի այս էլ ճակատագիր էր. մեր ճանապարհները տարբեր էին, ինչպէս և այս ժամին, երբ ես դալիս եմ իւշ-թիլիսէի վանքից, իսկ դու գնում ես՝ ով դիտէ ուր:

— Ճանապարհներս տարբեր, նպատակներս մէկ եղաւ, Գուլէ, չէ ես էլ ուխ-

տաւորների վալադ էի, ինչպէս դու սդաւորների:

— Հա, հա, իրաւունք ունիս, մենք իրար պարտ չենք, դու էլ իմ պատճառով չուերն ընկար, իսե զն, տանջուած մարդ: Վշտոտ կնոյ աշքերը թացացան, այտերի վրայ քաշ ընկան արցունքի կաթիլներ: Ապրօն էլ հեկեկաց, մօտեցաւ, և տարիներից յետոյ առաջին անդամ նրանք համբուրուեցին քոյլը ու եղբօր պէս ամայի դաշտում, երբ աշնանային հովը խաղում էր չոր տերեների հետ, շփում, հաւաքում էր իրար վրայ, ապա ցաք ու ցրիւ փոռում դաշտերում, ձորերում, որպէս մեռած յոյզեր, անցած երազներ:

— Մնաս բարի՞, Գուլէ:

— Էլի ուր:

— Նայիր այն տերեներին, որ քամին տանում է մերթ մեծ ճանապարհների վրա յով, մերթ երկնքի երեսից. նրանք երբեք ասել կարմոլ են, թէ ուր են գնում ես էլ մի չորացած տերեւ եմ, իսկ իմ ճակատագիրը մի աշնանային հողմ, որ մերթ փշում է կատաղաբար, մերթ թողւ նում է, որ մի քարի, մի թմբի, մի ծառի

յենուեմ, հանդիստ առնեմ։ Գիւղն ինձ
հալածեց, Գուլէ, ասում են, որ իմ ոտքը
բէխեր է... իրաւունք ունին, ես էլ այդ
դիտեմ և փախչում եմ հեռուհեռու, որ
զուլումից ազատ մնան անմեղները. մնաս
բարի՛, մեր ճանապարհները տարբեր են։
— Գնաս բարի։

Եւ նրանք գնացին զանազան կողմեր,
մէկը գէպի գիւղ՝ ցասման ժամի վերջին
նշխարները թխելու, իսկ միւսը գէպի
մութ անյայտը։

XX

Աշնանային մռայլ, խեղդող գիշեր էր,
որ մի մառախլոտ օրից յետոյ առանց վերա-
ջալուսի իջաւ Գայլատուայ լծի և շրջակայքի
վրայ։ Գապէի ջրաղացն իր ծեր տիրոջ հետ
նախ կծկուեց այդ թանձր խաւարի մէջ,
ապա կարծես երկիւղից մաշուեց, չքացաւ։
Ամենասրատես աչքն անդամ չէր կարող նրա
սկ զանդուածը որոշել մռայլ ամայութեան
մէջ. միայն նեղիկ լուսամուտից գեռ թար-
թում էր ճրագի լոյսը, համատարած լուսու-
թեան խաւարի վրայ հսկող միակ աչքը, կեան-

քից ու կենդանութիւնից խօսող միակ նը-
շանը։

Դեռ առաւոտից սկսուած անձրել շա-
րունակում էր, և այժմ խաւարի հետ նրա
մանրամազ կաթիւներն իջնում էին երկնքից
սկ, խեղդող հոգսերի պէս, միակերպ, ան-
վերջ, ասես էլ երբէք չը գաղարելու համար։
Զուր, չուր էր բռնել ջրաղացի չոլո կողմը,
չուր վերելից, չուր ներքելից, և բոլորը միա-
սին ողողում էին փոքրիկ շէնքի խղճուկ պա-
տերը, լիզում, քերում էին նրան կամաց-
կամաց։ Գապէն անհանդիստ էր, ցերեկով
նա մի քանի անդամ արդէն գիտել էր ջրա-
ղացի յետեկի ամբարդակները, բայց և այն-
պէս ուշ երեկոյեան նա նորից դուրս ե-
կաւ, անձրեկ տակ, ցեխերի միջից երերա-
լով գնաց գէպի նաւը. ծեր աչքերով փոր-
ձում էր գիտել կազմուածքի ամրութիւնը,
ոտքով խփում էր այս կամ այն կողմը՝ ձայ-
նից հասկանալու համար, թէ որքան հաս-
տատ է թօւմքը։

Վերջին անդամ նա վերադարձաւ ջրա-
ղացի յետեւից՝ սիրտն անորոշ սարսափով
բռնուած։ Այնտեղ՝ խաւարի մէջ նա մարդ-
կային ոտնաձայն լսեց. նրան թւաց, թէ մէ-

կըն իր երեալուն պէս շտապով հեռացաւ
ամբարդակի վրայից և կորաւ ուռիների
տակ: Ո՞վ կարող էր լինել. խէրով, անվասա
մարդն այս չար գիշերին, անձրեի տակ,
սարսափելի խաւարի մէջ ինչ գործ ունէր:
Միենոյն ժամանակ բուն հեռուից սկսեց իր
«վուշվուն»: Գոպէն բարւոք համարեց շտապով
յետ գալ և ջրաղացի դուռը ներսից պինդ
փակել: Սակայն նա չը հանդստացաւ. կանգնած
մնաց իր տեղում՝ հեալով, ականջը
ձայնի: Փառը դառնում էր, չաղչակն ան-
ընդհատ լրիւխիսկում, ջրաղացը որոտում էր,
բայց և այնպէս Գոպէին թւաց, թէ նորից
լսում է նոյն ոտնաձայնը, այժմ աւելի մօտ,
հէնց ամբարդակի վրայ, հէնց ջրաղացի պատի
տակ, դրան առաջ:

Նոյն իսկ մի մարդու ոտնաձայն չէ, այլ
շատերի, երկու, հինգ, տաս, քսան... Տէ՛ր
Աստուած:

—Վուշվու, վուշվու...

Գոպէն մօտեցաւ, չաղչակը բարձրացրեց,
որ կարողանայ աւելի լաւ լսել. ոչ, դրսում
միայն մի մարդ էր, ահա նա անցաւ ջրաղացի
յետել, ահա բարձրացաւ ամբարդակի վրայ:
Գուցէ և մարդ չէ, այլ դաղսն, մտածեց

Գոպէն, չաղչակը ձեռքից թողեց քարի վրայ,
դնաց իր անկիւնում կծկուեց: Վերջին միտ-
քը նրան թւաց այնքան հաւանական, որ նա
նոյն իսկ իր նախկին երկիւղը ծիծաղելի հա-
մարեց: Բայց նոյն վայրկենին՝ հէնց ամբար-
դակի վրայից նա մի թրմիոց լսեց, ոտքի
թռաւ. կրկին չաղչակը լուեցրեց, ականջները
սրեց՝ ամբողջապէս լսողութիւն գարձած,
բայց իզնւր, այլևս ոչ մի ձայն: Գոպէն կըր-
կին նստեց իր տեղում:

—Վուշվու, վուշվու...

—Ա՛յ, անիծած բայզուշ, մումուաց նա
ատամների արանքից:

Զը դուրս գալ արդեօք, մտածեց Գըս-
պէն, բայց վախենում էր. այն հազւագիւտ
գիշերներից մէկն էր, երբ ջրաղացում ոչ ոք
չը կար գիւղից: Այնուամենայնիւ նա վեր-
ցըրեց կացինը, մօտեցաւ դրանը, զգուշու-
թեամբ բաց արեց և դուրս եկաւ: Առանց
աղմուկի անցաւ ջրաղացի յետել, նայեց,
խաւարի մէջ նա ոչինչ չը նըշմարեց, բայց
կրկին լսեց նոյն ոտնաձայնը... մէկը փա-
խաւ և անյայտացաւ ուռիների տակ թանձր
մթութեան մէջ: Քաղցած գայլ է, մտածեց
Գոպէն և յետ եկաւ, ներս մտաւ ջրաղաց,

գուռը վերստին խնամքով փակեց, ճրագին նայեց, ձէթը քիչ թւաց, միտք չ'ունէր քը նելու, տարաւ ձէթ աւելացրեց, որ անընդհատ վառուի մինչև լուսաբաց, ապա գնաց կծկուեց անկիւնում:

Եւ դրսում անձրեը մաղւում էր անընդհատ, և նրա ճղիխնը ջրտան միակերպ որոտի հետ դառնում էր նիրհեցուցիչ Ոտնաձայնն էլ չէր լսում. Գոպէն հանդըստացաւ, այժմ նա համոզուեց, որ քիչ առաջ դրսումքայլովը դադան էր և իր երեալով թողեց հեռացաւ: Քարը դառնում էր՝ շուրջն սպիտակ ալիւր վշելով, չաղչակը ցատկրառմ, ճրագը, հին օրերի այդ սեւացած փոքրիկ կտուցաւոր ճրագը պլազում էր մի հատիկ ծուռ սիւնից երերուն ստուեր կազմելով: Այդ ստուերը... Նա էլ Գոպէի ընկերն էր, տարիների ընկերը: Գոպէն վագուց ուսումնասիրել էր նրան ըոլոր մանրաւմանութեամբ: Սիւնը կենարոնում մի ուսուցիկ հանդոյց ունէր, ստուերի մէջ այդ հանդոյցն ուղտի սապատի ձեռվ ընկնում էր միշտ քարի աջ շրթունքին: Նրանից վար սովորաբար կախուած էր լինում հացի պարկը՝ միներից աղատ մնալու համար: Գոպէն

լսւ յիշում է, որ պարկի սոսուերն ընկնում էր սկզբում չաղչակի վրայ, այդ նրան գուր չեկաւ, կուզէր միշտ տեսնել փայտեայ այդ փոքրիկ լեզուակը, որ ասես խօսում էր իր տիրոջ հետ, ուստի Գոպէն պարկի աեղը փոխեց: Ծերունին նայում էր այժմ սեանը և ստուերին և ինքն էլ չիմանալով ինչու յիշում էր այս բոլոր մանրամանութիւնները: Ամենից շատ նրան այսօր հետաքըրբում էր թանձր փոշով ծածկուած այս քըրբում էր թանձր փոշով ծածկուած այս կոր սիւնը: Գոպէին թւում էր, թէ նա էլ կոր պէս ծերացել, կռացել է տարիների եր պէս ծերացել: Քարձել բանի տարի է, մակել, ալեզարդ է դարձել: Քանի տարի է, ինչ միասին են Գոպէն և այն սիւնը: Մէկը ինչ միասին իր կեանքից, իսկ միւսը լրադացի յոգնել է կեանքից, և դեռ կըում են իրանց բեռը:

Շատ գիշեր անցաւ: Կէսքուն կէսարը թուն Գոպէն իր նստած տեղում նզզում էր, երբ յանկարծ չաղչակը կանդ առաւ, և ջրադացի յետից լառեց մի ահագին հարուած: Պահի յետից լառեց մի ահագին հարուած: Ենքն ամբողջապէս ցնցուեց ասես երկաւ շարժից, սիւնը երերաց իր ստուերի պէս, գերազագութեամբ կախուած տեղից դուրս թռաւ, եր-

կուքարեն իրար զարկուեցին ահապին շրջաւ-
կոցով, և ծերունին սարսափած՝ հաղիւ կա-
րողացաւ վաղել և դուռը բաց անել։ Դրսից
լւտում էր ահոելի որոտ, ամբարդակին ամ-
բողջապէս փուլ եկաւ, նուրը պոկուեց և ա-
հագին թափով զարկուեց ջրաղացի հիմքին,
ջրտունը քարուքանդ եղաւ, ջրերը հեղեղե-
ցին ամեն ինչ։ Դրան առաջ դողդողալով
կանգնած՝ ծերունին տեսաւ, թէ ինչպէս
քարերը գոգոսով կուլ գնացին, ջրտան
վրայ յատակը երերաց, ծումուռեց ու փլաւ
միանգամից, կոր սիւնը ճռնչաց ցաւով, եր-
կուտակ ծալուեց, կտուրն իջաւ, ճրագը մա-
րեց, խաւարի մէջ լսուեց ջրերի որոտն ա-
ւելի ուժին, աւելի ահաւոր։ Գոպէն փա-
խաւ աւելի հեռու, նայում էր և էլ չը գի-
տէր, ուր է ինքը, ինչ է կատարում իր
շուրջը, քնած է, թէ արթուն, բոլորը երաղ
է, թէ իրականութիւն։ Իսկ այնտեղ, ջրա-
ղացի յետեւում ահագին ամբարդակը քանդ-
ւում էր հա քանդւում, հեղեղ էր գալիս,
կարծես Գայլատուայ լիճն ամբողջապէս թափ
առած՝ վաղում էր այս ողորմելի շէնքի
վրայ, մռմռալով, լիզելով աւերում էր անո-
դորմ կերպով։ Ջրտան անցքը նեղ էր ջրերի

ահագին քանակութիւնը պարտկելու համար,
ալիքները բարձրացան, փրփրուն ու կատա-
զի, նրանց միահամուռ թափի տակ ջրա-
ղացի յետեւի պատը ծռուեց, կախուեց և
ընկաւ որոտով։ Նաւն ու փառը, չաղչակը,
պատերն ու ամբարդակն իրար խառնուեցին,
և ալիքները մոնչալով առան այդ բոլորն ու
առաջ քշեցին։ Գոպէն չէր տեսնում այդ,
միայն լսում էր խլացուցիչ որոտը և զգում
էր աւերածի բոլոր սարսափը։ Քառասուն
էր աւերածի բոլոր սարսափը էր այդ
տարուայ նրա գոյութիւնը փլչում էր այդ
սարսափելի զիշերին, քառասուն տարուայ
նրա կեանքը մասմաս դնում էր ալիքների
հետ։ Վասնդի մեծութիւնը մոռացած՝ նա մի
վայրկեան նետուեց գէպի ամբարդակը։ Նրան
թւում էր, թէ մի բան կարելի է անել, մի
մնցք փակել, մի քար գլորել, մի թումբ
պնդացնել. վաղեց և կանդ առաւ քարա-
պնդացնել. ամբարդակի տեղ բացուած էր մի ա-
ցած. ամբարդակի տեղ բացուած էր մի ա-
հագին վիճ, սե ու սարսափելի, ուր տա-
րերային թափով ալիքները մղում էին իրար
բերային թափով ալիքները մղում էին իրար
աւերածի անյագուրդ կատաղութեամբ, ըըր-
աւերածի անյագուրդ կատաղութեամբ, մի
փում, ոռնում և խաւարի մէջ վայլիլում մի
տեսակ մութ մահասառուռ խորհրդաւորու-
աւերածի մութ մահասառուռ խորհրդաւորու-

միայն մի լայն ջրանցք, որի երկու կողմերում գեռ բարձրանում էին պատերի երկու խղճուկ կտորներ, ասես աւերածի սարսափը կատարեալ դարձնելու համար. Զարդուած, յուսահատ ծերունին երեսը դէպի դիւղը դարձրեց և որպէս մի յետին փորձ՝ բոլոր ուժով կանչեց.

— Օդնութիւն...

Զայնը տարածուեց ամայութեան ու խաւարի մէջ և անպատասխան մեռաւ հեռւում, և յանկարծ բոլորովին մօտիկ, ուռիների տակից լսուեց մի բարձրածայն քըրքիոց, մի դիւային ծիծաղ, որ կարծես հեղանում էր օդնութիւն աղաղակող մնաւոր ծերունուն, հեղնում էր նրա մեծ ցաւը Գոպէն լսեց այդ քրքիջը և իր դժբաղդութիւնը մոռացած վայրկենապէս՝ բոլոր ուշադրութիւնը դէպի նա դարձրեց.

— Օդնութիւն...

Քրքիոցը կրկնուեց աւելի մօտ, աւելի չոր ու դժոխային: Գոպէն լսեց, ճանաչեց այդ ձայնը, ցնցուեց և այս անդամ օդնութեան փոխարէն կատաղաբար ճշաց.

— Օ՛, անողորմէ:

Նաւճն էր... Գոպէի ոխերիմ թշնամին,

ծեր ձկնորսը: Գոպէն յիշեց բոլորը, յիշեց նրա սպասնալիքը նողերի մահուան օրը, յիշեց դիշերը լսուած ոտնաձայները, յիշեց ու հասկացաւ... Նաւօն վրէժխնդիր եղաւ, իր խելագարութեան մէջ բոլոր զայրոյթը թափեց Գոպէի վրայ: Ամբարդակը նա էր քանդել, ինչպէս և դիւղի դէպերը նա էր հրդեհում, ցերեկը լծի վրայ, ալիքների հետ մի անվերջ, անխորհուրդ պայքարի մէջ, դիշերը սարսափելի ծերունին դուրս էր ընկնում որպէս մի չար ողի և մահ ու աւերած սիուում իր շուրջը: Նրա խախտուած գլխում ամեն ինչ տակն ու վրայ ու այլանդակ, մի միտք սակայն մնում էր պարզ ու րոշ, քանդել, քանդել, քանդել... իսկ վրշրուած սրտում բուռն ատելութեան զգացմունք դէպի աշխարհը, մարդիկ, և նա քանդում էր...

Գոպէն նետուեց դէպի ուռիները, որտեղից լսում էր այն դիւային քրքիջը, որտեղ ծածկուած էր իր զարհուրելի ախույնը: Եյս անդամ նաւօն չը փախաւ, նայենուած էր ծառին և նայում էր մթույնուած էր ծառին ապահով: Գոպէն բուռնցըները սղմած՝ բոլորովին մօտեցաւ.

Երկու ախոյեաններն այժմ դէմառդէմ էին,
խաւարի մէջ երկսի աչքերն էլ փայլում էին,
և տաք շնչերն այրում երեսները փոխա-
դարձաբար:

— Դու ես, դու, ես այդ դիտեմ, ա-
նաստուած, մռնչաց Գսպէն, ես տեսնում
եմ քո դիւային աչքերը, ճանաչեցի անիրաւ
ձայնդ, աւերիչ, մարդասպան...

Պատասխանի փոխարէն նաւօն միայն
քրքջաց. այդ սարսափելի ծիծաղն իսպառ
զինաթափ արեց Գսպէն, նա զգաց, որ իր
առաջ կանգնած է մի խելագար, յետյետ
քաշուեց, մինչդեռ նաւօն շարժուեց և վա-
զէվազ անյայտացաւ: Հեռուից դեռ երկար
լսում էր նրա ծիծաղը, մինչդեռ Գսպէն
դնաց դէպի ջրաղացի աւերակը, կիսափուլ
պատի տակ ծեր դլուխը ձեռների մէջ ա-
ռաւ և հեկեկաց, դառն արցունքները թա-
փուեցին մարած աչքերից, նա էլ ոչ տուն
ունէր, ոչ գլուխ գնելու տեղ, այժմ բոլո-
րովին մենակ, բոլորովին անտէր էր ծեր
ջրաղացպանը: Եւ նա լալիս էր երկար, եր-
կար իր բնի, իր ջրաղացի աւերածը, և բուն
վերևից վայում էր նրա հետ.

— Վուզվու, վուզվու, վուզվու...

Լոյսը բացուեց: Գսպէն վերկացաւ, մէկ
էլ նայեց աւերածին և ինքն իրան զարմա-
ցաւ, որ այդ բոլորից յետոյ ինքը դեռ ապ-
րում է: «Ո՞ւր փախայ և ինչու համար,
մտածում էր նա, լմւ չէր լինի, եթէ կը-
տուրն այս անիծուած գլխիս իջնէր և տան-
ջուած մարմինս ջրերի մէջ թաղէր. այսու-
հետև ուր գնամ... ում դուռը թակեմ՝ մի
անկիւն, մի կտոր հաց մուրալու...

Նա քայլում էր ձեռքը ծոցը, գլխաբաց
և աչքերը դետին յառած. յանկարծ նա
կանգ առաւ, և դառն ժպիտ խաղաց ծեր
շլթունքներին. նա իր ոտքերի տակ տեսաւ
չաղչակը, որ ջուրը դուրս էր ձգել ափը:
Բաղդի դառն հեգնութիւն, ջրաղացից էլ
ոչինչ չը կար, ոչ փառ, ոչ քար, ոչ նաւ,
բայց մնացել էր այս չաղչակը, փայտի այս
ողորմելի կտորը՝ որպէս մի կիզիչ յիշողու-
թիւն իր մեծ դժբաղդութեան:

Իր ջրաղացի փառքի և դժբաղդութեան
հետ կապուած փայտի փոքրիկ կտորն այնու-
ամենայնիւ թանգ էր նրա համար, ուստի
կոացաւ վերցրեց և խաղացնում էր ձեռ-
քի մէջ, նայում էր զանազան կողմերից,
շլթունքները շարժում էին, կամացուկ խօ-

սում էր նրա հետ: Յետ դարձաւ, դէպի
ուռենիները դիմեց, այնտեղ, ուր դիշերը
հնչում էր նաւօի քրքջոցը, ուր վայում էր
բուն: Սաւաղին հասնելով՝ նա կանդ առաւ
մի վայրկեան, նայեց ու մումուց ատամնեւ-
րի արանքից.

—Անիրաւ, խելագար...

Նաւօն ինսամքով փակել էր սաւաղը և
բոլոր ջրերը դէպի ջրաղացը մղել՝ ամբար-
դակը քանդելու համար:

Գսպէն շարունակեց ճանապարհը դան-
դաղութեամբ և միևնոյն ժամանակ ուշիու-
շով նայում էր ծառերին. նա կարծես վըն-
տրում էր մէկին:

—Կը գտնեմ; կը գտնեմքեղ, մումուռմ
էր նա:

Այսքան շարիքի, այսքան դժբաղդու-
թեան փոխարէն նա էլ մէկին պէտք ունէր՝
իր վրէժինդրութեան թոյնը նրա դիմին
թափելու, որ դոնէ սիրտը մի փոքր հովա-
նար, և այդ մէկը բուն էր, այն շարագու-
շակ բայզուշը: Այն օրուանից, որ այդ ա-
նիրաւ թոչունը սաւառնում էր ուռիների և
ջրաղացի վրայ, շարիքը Գսպէից չէր հեռա-
նում: Ասօն, Շողերը, նաւօն փոթորկութ դի-

շերին, Ապրօն զուլումով, ուխտաւորներն
իրանց բերած ճակատագրով և սրանց բոլո-
րի վրայ բուն, նրա վույշ-վույշ:

—Կը գտնեմ, կը գտնեմքեղ, անի-
րաւ, կրկնում էր նա՝ մտածելով անցեալի
մասին:

Եւ գտաւ:

Ծեր բազուկի բոլոր թափով նետեց
չաղչակը դէպի վեր, դէպի ուռենին, և սգա-
ւոր թոչունը թրպրտալով ընկաւ նրա ոտ-
ների տակ: Գսպէն կատաղաբար վրայ պըր-
ծաւ, բռնեց ոտներից, բարձրացրեց վեր և
խելագարի պէս ճօճում էր թոչունին օդի
մէջ, ապա բոլոր ոյժով խփեց գետնին բուր-
արիւնաթաթախ ու ջախջախուած դիակը:
Թոչունը մի վերջին վայիւն արձակեց և մե-
ռաւ: Գսպէն կրկին մօտեցաւ և նայում էր
արիւնոտ մսի այդ այլանդակ կտորին, որ
ընկած էր իր ոտների առաջ:

—Վայի, դէ, վայի, անիրաւ, բացական-
չեց նա, ապա վշտից խենթացածի պէս
քայլեց թոչունի դիակի վրայ, ոտներով հա-
րուածում, տրորում էր: Ոսկորները բաժա-
նուեցին իրարից, փետուրները ցաք ու ցրիւ
եկան, բայց կատաղած ծերունին՝ մաղերն

արձակ, միրուքը խճճուած, աչքերը սարսափելի՝ դեռ շարունակում էր հարուածել ու տրորել: Երբ նա ուշքի եկաւ, ոտների տակ էլ ոչինչ չը կար բացի մի երկու կտոր ուկորից և մի քանի խղճուկ փետուրներից: Գոպէն նայեց երկար-երկար, դէմքը ծածկեց և հեկեկալով փախաւ հեռու-հեռու աւերակ ջրաղացից և իր ձեռքով բգկտուած, ճխլուած բուից. երկուսն էլ սարսափելի էին, երկուսն էլ անդառնալի, մէկը նաւօն արեց, միւսն ինքը՝ Գոպէն: Ինչու, ինչու... պատասխան չը կար. ուխտաւորներն ասում էին, թէ աշխարհում որ կողմը նայես, մէկը միւսի ճակատագիրն է:

Եւ ծերունին քայլում էր անընդհատ...

—∞—

Գոպէն դիւզը չը մտաւ, այլ դաշտերով ու ձորերով ամբողջ օրը թափառեց և երեկոյեան դէմ յոդնած, ուժասպառ հասաւ Մրրկի սրբի բլրին: Այստեղ աննպատակ չ'եկաւ նա, կ'ուզէր էլի մի անդամ տեսնել խաչքարը և վերջին անդամ հարցնել, թէ ինչու է այս բոլորն այսպէս: Նա կ'ուզէր

իր ամբողջ կեանքը փուել նահատակի առաջ և հարցնել, թէ ինչ անուն ունի այն: Զէ որ ինքը հաւատում էր... Հարցնել, իմանալ այդ բոլորը, և յետոյ ինչ ուզում է՝ թնդինի, ամեն ինչ վերջացած է:

Արել ծածկուեց սարերի յետեռում, լուսինը բարձրացաւ Պայազէտի կողմից Բարդողեան լեռների թիկունքից և ահագին ստուերներ շինեց բլուրներից ու բարձր լեռնակատարներից: Ծերունին քայլում էր լեռնային արահետով, մերթ նստում հանդստանում էր մի քարի վրայ, ապա կրկին շարունակում ճանապարհը: Վերեկը քանի գնում դժուարանում էր, տեղադրել ժայռեր ու մացառներ փակում էին նրա առաջը, Գըսպէն չանդուելով, սողալով պտոյս էր գործում ու կրկին բարձրանում: Քնած էր Ջրաջակայքը, լեռնային հովն էր փչում սլալով, ցուրտ էր. բայց ծերունին բարձրանում էր անընդհատ, նա պէտք է խօսէր սրբին և յետոյ... անդունդներն ու բարձրաբերձ ժայռերը շատ էին նրա չորս կողմում, մի մաշուած կեանք ամեն տեղ կարելի է թաղել, մտածում էր նա:

Մօտ էր կատարը:

Հեռուից երեսում էր արդէն հսկայ խաչքարը՝ թևերը վեհօրէն տարածած աշխարհի վրայ, որպէս իր սաների տակ ծնկաչոք փռուած ժողովրդի դլխին ազօթող ծեր անտապատական։ Նրա ստուերը կախուել էր կատարից, և ծերունին մի սրբազն երկիւղով բռնուած՝ նայում էր այդ նուիրական ստուերին, որ կարծես ցած էր կախուել իւմանալու, լսելու համար, թէ ինչ է կատարում ներքեում աշխարհի վրայ։ Գոպէն նայում էր և էլ քայլել չէր կարողանում. Նրան սարսափելի էր թւում գիշերով հասնել այնտեղ, ուր իշխում էր մի երկնային գաղտնիք, որ արարածների բազգերը շալակած իր մութ ծալքերում խաղում է անհունութեան մէջ։ Գոպէն գողում էր Յերեկով այսպէս չէր։ Այժմ կարծես սուրբ ճգնաւորն ինքն ազօթում է այն խաչի յետեւում ու ասում է զարմանալի բաներ։ Լուսինը փայլում էր՝ պաղ ճաճանչներով, նրա արծաթագոյն լոյսի միապաղաղ ցոլքերի մէջ լեռ ու դաշտ շողում էր և ամեն ինչ արծաթէ քող իջած վրան՝ փսփում էր այն խաչի հետ։ Կատարը՝ ուր ցցուած էր խաչքարը, ուռչում, բարձրանում էր և կարծես

ձգւում էր վերև համբուրուելու լուսնի հետ ։ Ծերունուն թւում էր, թէ այստեղ, այս նուիրական վայրում ամեն ինչ խօսում է, քամին փսփում է քարերի հետ, մացառները լուսնի շողերի հետ, խաչքարը՝ ճգնաւորի հետ, և ամենքը միասին նայում են վերև, ուր աստղերը թարթում են մեղմիւ, ուր երկնքը յօրանջում է վեհօրէն։

Լուսինը բարձրացաւ աւելի վեր, նա արդէն խաչքարի կատարին էր, և Գոպէն զարմանքով տեսաւ, որ նրա շուրջը կարմիր բակ կար։ Չար նշան, նա էլ է խօսում ցաւից ու արիւնից, մտածեց ծերունին։ Երկնքի պատկերը համապատասխանում էր նրա սրտին։ Ծերունին ընկճուեց, այնուամենայնիւ պէտք էր բարձրանալ, նա իր վերջին ժամերն էր քաշում դէպի վեր, նա իր վախճանն էր փնտրում այս խորհրդաւոր վայրերում։ Շարժուեց տեղից և խկոյն վայրերում։ Շարժուեց տեղից մէկը միւսի կանգ առաւ, խաչքարի շուրջը մէկը միւսի յետեւից յանկարծ կարծես գետնից բռւմենեւ լով շարուեցին տարօրինակ մարդկային ըստուերներ, մէկը մէկից մեծ, մէկը մէկից սարսափելի։ Ո՞վքեր են։ Լուսնի շողերի տակ նրանք դալարուում, ձգւում, մեծանում, ապա

կազմում են մի երկար շարք։ Լուռ են։ Ահա
կանդնեց մէկը, ըստ երևոյթին մի ծերունի,
բարձրահասակ ու յաղթանդամ և դարձաւ
միւսներին.

—Մի տրտնջաք, դաւակներս, յոդնած
ենք, տանջուած ենք ու քաղցած, բայց
մեր ճակատագիրն ունեցող մարդիկ ուրիշ
կերպ լինել չեն կարող։ Վանահայրը մեր
առաջ փակեց վանքի դռները, դիւլը մեղ
մերժեց մի անկիւն ու մի կտոր հաց—ցաս-
ման ժամից առաջ վճռել են արդար մնալ
—ծերունու հիւրասէր ջրազացն էլ աւերակ
դտանք։ Հարթավայրի վրայ ամենքը տեղ
ունին, դազանները լեռների այրերում ու
խոռոչներում որջ ունին, իսկ մենք թա-
ռում ենք լեռների կատարներին, մենք
նզովուածներ ենք, ասում են՝ մեր ոտներին
կապուած են անէծքն ու աւերածը։ Սյս
խաչքարը մի հին աւերածի նշան է, բայց
մենք ճգնաւորներ չենք, այլ նզովուածներ
բոլոր նրանց համար, որոնք լիզում են հին
մամուապատ քարերը։ Ուխտաւորներ էինք,
մեղ դարձրին գիշերային դեեր։

—Մենք նզովուածներ ենք, ասացին մի
քանի ձայներ։ աւազակներն անէծքի ծնունդ-

են, ուխտաւորներ էինք, մեղ դեեր դարձր-
ին, և մենք կը քրքջանք այժմ դեերի հետ
տանջուած ու քաղցած։ թող այդպէս լինի։

—Մըրիկը մօտենում է, շարունակեց
առաջինը. նայեցէք, ահա լուսնի շուրջն ա-
րիւնէ բակ է կապել. մենք մեղաւոր չենք,
լուսինն աւազակ չէ, բայց ճակատին արեան
պսակ ունի, ով ստիպեց նրան արիւնը զարդ-
ընտրել այս լեռներով անցնելիս... Մըրիկը
մօտենում է, իսկ մենք լեռների կատարին
ենք թառել, ով էր տեսել ուխտաւորների
երեսին փակուելին դռները։ Հարթավայրը
տափակ է. նա խլէզի պէս գետնին է կըպ-
չում, երբ զարկում է մըրիկը, և լիզում է
մամուապատ քարերը. մեր ճակատը մենք
առւել ենք սարսափելի հովերին, ինչ մեղա-
ւոր ենք, միթէ լեռների արդանդից մենք
նզովքի երկունքով դուրս վիժուեցինք, կամ
գուցէ մեր հայեացքից առաջին անդամ ա-
րիւնոտ լուսինը թարթեց, ու ձորերն իրանց
խոռոչներում քար-քարի զարկեցին ու կայ-
ծեր տուին։ Մենք մերժուածներ ենք, բայց
մեղաւորներ չենք, երբ երկնքում լուսինն
էլ արիւնն է ընտրել իր ճակատին պսակ,
իսկ մեռելները հողի տակ նրա գեղեցկու-

թիւնով հմայուած՝ ոսկորէ թաթերով ծափ
տալիս ու հրճում այս զարմանալի երկրում:

—Մենք մեղաւոր չենք, որ լուսինը ա-
րիւնէ պսակ ունի, կրկնեցին նախկին ձայ-
ները:

—Լսեցիք, այսօր վարդապետն ասաց,
որ այս աշխարհը երկնքի հովանու տակն է:
Ամեն անդամ, երբ մըրիկն է բռնում այս
կողմերում, սուրբը գալիս է ամպերի հետ,
կախում է այս խաչքարի թևերից, լալիս է,
լալիս, և նրա հետ միասին լալիս է ամբողջ
աշխարհը: Եկեղեցիների կատարներից զան-
դակները բերանաբաց ու յուսահատ ողբում
են, հարթավայրը տափականում է, մինչև
փոթորիկն անցնին: Մի ժամանակ եղել է
գուցէ, երբ սրբի լացով ու զանդակների
մրմունջով մըրիկն անցել է, երբ այս խաչ-
քարի ու երկնքի մէջ ճանապարհը բաց է
եղել դողդողացող սրտերի համար, բայց
այժմ լուսինն իր կարմիր պսակով փակել է
սրբի ճանապարհը, և մըրիկը չի անցնի, նա
մշտական է, ահաւոր, աւերիչ:

—Մըրիկը կը գայ ահաւոր ու աւերիչ,
ձայն առւեց մի ուրիշը, բայց սուրբը չէ
գայ. աշխարհում ամեն բան փոխուել է:

Մենք էլ մեզ համար մեր սուրբն ունինք.
մըրիկի ժամանակ տղամարդի լայն կուրծքն
ու մոլորուած գնդակը եղբայրներ են: Մեր-
ժուած ու հալածուած ուխտաւորներ ենք,
բայց կը ժպտանք լուսնի արիւնոտ պսակին,
մենք մըրիկի զաւակներ ենք դարձել՝ նզովքի
երդը շրթունքներիս...

—Ե՞ն, դուք նզովեցէք մըրիկն ու ժըպ-
տացէք լուսնին, իսկ Ապրօն այստեղ իր
պատանը կը փոխ և վրան կը պառկի հան-
գըստանալու, մինչև Ասօն հաց բերի դիւղից:
Վալադն ամենից շատ է յոդնում, այնպէս չէ,
ընկերներս:

Խօսողն Ապրօն էր, Գաղեն ճանաչեց
ձայնը, լսեց նաև Ասօի անունը, ամեն բան
պարզում էր նրա համար.—ո. Կարապետ
գնացող ուխտաւորներն էին, որոնք այժմ վե-
րադարձել են:

—Ապրօն, բայց եթէ վարդապետը մեր
մասին լուր տուեց թափառական վրանա-
բընակներին, ինչպէս որ սպառնաց այսօր,
գուցէ այն ժամանակ սյդ քո պատանը
տակդ փուելու տեղ վրադ կը փուենք, ու կը
քնես յաւիտեան, ինչ կ'ասես:

—Ապրօն համար միենոյն է թէ էսօր,

թէ էդուց Քիչ առաջ լաւ ասաց մեր ընկերը — «մրրկի ժամանակ տղամարդի լայն կուրծքն ու մոլորուած գնդակը եղբայրներ են». Է՞հ, մենք խօմ վաղուց ենք մրրկի մէջ, թնդ գայ...

Մարդկային ոտնաձայներ լսուեցին բուլորվին մօտիկ, Ապրօն խօսքը կիսատ թռղեց, լոեց:

— Ո՞վ ես, ձայն տուին միանդամից մի քանի հոգի:

Բլրի վրայ, խաչքարի հանդէպ յայտնուեց մի պատկառելի ծերունի իր հասակի բոլոր վայելչութեամբ, գլխարաց, ծերմակ մաղերն ու փառահեղ միրուքը լուսնի շողերով արծաթափայլ հոփհարում էին դիշերային քամու առաջ, և նա լուռ քայլում էր դանդաղութեամբ, ասես մի ծանր բեռի տակ ճնշուած, կամ մի անհնարին գաղտնիք իր սրտում: Ապա նա կանդ առաւ, նայում էր հակայ թևատարած խաչքարին, ուխտաւորների շփոթուած խմբին և կամ դէպի վեր՝ կարմրատակած լուսնին: Նա կասձես մի ողի լինէր, որ դերեզմաններից դուրս էր ընկել ուշ դիշերով աստղերի հետ փսփալու համար, կամ ինքը Մրրկի սուրբը:

— Ո՞վ ես, կրկին ձայն տուին ամենքը սուրբի ելնելով և իրար անցած:

— Զեզ պէս մէկը, խօսեց խորհրդաւոր անձանօթը. — անտուն ու անտէր, որ էլ գըշտուխ գնելու տեղ չ'ունի աշխարհում և որ եկել է Մրրկի սրբին հարցնելու, թէ ինչու այսպէս, ումն է հարկաւոր, որ մի ծերունի իր մաշուած սակորները քաշ առյ գոնէդուու, գողայ խաւարի մէջ և իր տանջուած գլուխը գնելու տեղ չը գտնի: Եկայ բողոքելու սրբին, բայց դուք ասացիք, թէ նա էլ չի գայ, էլ չի գայ... Կոյսն ասում էր, թէ նա կը գայ, կը գայ... որիդ հաւատանք, ով է ճշմարիտն ասում... վաղուց, շատ վաղուց է, որ միշտ այսպէս է եղել, թէ երկնքում, թէ երկրի վրայ խեղճերը դատ ու արդարութիւն փնտրեցին ու չը դատան, և թափառում են անտէր անտիրական, էլի փնտրում են, իսկ մրրիկը չորս կողմից մօտենում է օրաւաւուր...

— Ո՞վ ես, ծերունի, ասա վերջապէս, խօսեց գլխաւորը, ինչ կարող ենք անել քեզ համար:

— Ոչինչ, ոչինչ չեք կարող անել... Ջրաւացը տեսմք...

— Օ՛, իմ խեղճ բարեկամ, այդ դժու ես,
ծեր ջրաղացպանը... ով աւերեց քո բունը»

— Ճակատագիրը, չէ՞ դուք ասացիք, որ
ջրվէժն իմ ջրաղացի ճակատագիրն է, եկաւ
ու քանդեց, այժմ փնտրում եմ իմ ճակա-
տագիրը»

— Գսալէ ամի, ցուրտ է այստեղ, լաւ
չէ գիւղը գնաս:

— Դժու ես, Ապրօ... հա, դու էլ անսուն
ես, իրաւունք ունիս այստեղ լինել: Լաւը
դժու ես անում... բայց իմ տեղն այստեղ չէ.
Չէ՞, մնաք բարի, բարեկամներ, հալածուած
ու մերժուածներ էք, բայց էլի մի նղովէք
այս աշխարհը, որի վրայ լուսինն էլ արիւնէ
ցողեր է թափում: Խեղճերի, անձարների
երկիր է այս, վաղուց հետէ նղովուած, հին
միրիկները շատ են ծեծել, լալկանները շատ-
շատ են այստեղ, ժպիտ չը կայ: Թա՞ղ Աս-
տուած դարձեալ ծեր ուխոն ընդունելի
անի... իմ բեռը մենակ իմն է, ես մենակ
կը տանեմ... մնաք բարի, այժմ ես կ'երթամ
գլուխս զնելու մի տեղ ճարելու, որպէսզի
յաւիտեան հանգստանամ, թէ այստեղ չը
լինի, ջրաղացիս յետևում մի մեծ վիճ կայ,
մնաք բարի:

Ծերունին մէկ էլ նայեց խաչքարին,
գլուխն օրօրեց վհատուած, ձեռքերը վերեւ
բարձրացրեց, մի բան մրմնջաց, ապա յետ
դարձաւ և նոյն դանդաղ, հանդիսաւոր քայ-
լուածքով սկսեց ցած իջնել բլրից ինչպէս մի
մարգարէ, որ իր մենաւոր անկիւնից ցած
էր գնում՝ աշխարհին մեծ ճշմարտութիւն
ասելու:

Մի առ ժամանակ գեռ հեռուում երեւ-
ուում էր ծերունու հոյակապ հասակը, ծեր-
մակ մաղերը հողմահարւում, փայլվիում էին
լուսնի շողերի տակ, ապա նա ծածկուեց
ժայռերի յետեռում, և կամաց կամաց ոտ-
նաձայնն էլ մեռաւ հեռաւորութեան մէջ:
Շուարած ուխտաւորները գեռ շարունա-
կում էին նայել նրա յետեկից դէպի այն
կում էին նայել նրա յետեկից դէպի այն
ժայռերը, որոնք ծածկեցին ծերունու յու-
ղիչ պատկերը, նայում էին և կարծես չը
դիտէին վազել, յետ բերել նրան իրանց
մօտ, թէ թողնել, որ հետեկի իր ճակա-
տագրին: Ծերունու յայտնուելն ու հեռա-
տագրին: Ծերունու յայտնուելն ու հեռա-
տագրին այնքան անսպասելի, այնպէս յանկար-
նալն այնքան անսպասելի, այնպէս յանկար-

ժակի եղաւ, որ ամենքին շփոթեց:

XXI

Սուրբ Խաչի կիրակնամուտ երեկոն էր։
Նունուֆարն ու իր փոքրիկ Շուշիկը լուս
կծկուել էին թոնրի վրայ, բայց իւրաքանչ
շիւրն իր առանձին խոհերն ունէր։ Աղջիկը
մտածում էր վաղուայ տօնի մասին։ Յաս-
ման ժամ էր, ասում էին՝ պատարագ է լի-
նելու, գրառմ թափօր. այդ բոլորը փոքրիկ
աղջիկը չէր համանում, այս պատճառով
վաղուայ օրը նրա համար գարձել էր մի
գրաւիչ խորհրդաւորութիւն, նա երևակայում
էր առնուազն, որ զատկի ճրագալոյցի պէս
ժամում շատ մոմեր կը վառուեն, տէրտէրն
ու տիրացուները ճոխ շորեր կը հագնեն, և
յետոյ երեկի մի բան էլ աւելի։ Ընկերուհի-
ները բոլորը գնալու էին, այդ նա գիտէր,
ինքն էլ կ'ուղէր գնալ, բայց չէր իմանում
ինչպէս ասել մօրը, որ չը վշտանայ։ Երե-
խաները մի քնքոյշ մտահոգութիւն ունին
ծնողների համար նրանց վշտի, դժբաղդու-
թեան ժամանակ։ Շարունակ մօր մօտ, ա-
կանջը նրա անվերջ ախուվախերին, աղջիկը
մօրը միմիթարելու համար իր հնազանդու-

թիւնը հասցրել էր կատարեալ ինքնամուռա-
ցութեան, այդ փոքրիկ սիրան ապրում էր
ասես միմիայն այդ վշտահար պառաւին մը-
խիթարելու համար։ Նունուֆարը վաղնւց,
Շողերի մահից յետոյ էլ ոտքը եկեղեցի չէր
դնում, նոյն իսկ աշխատում էր փողոցում
չերեալ, նա միշտ վախենում էր, թէ որդու
մասին դրսում մի վատ բան կը լսի անէծք
կամ բօթ։ Այժմ Շուշիկը մտածում էր՝ ա-
սել, թէ չ'ասել մօրը, որ իրան եկեղեցի
տանի։

Մայրն էլ մտածում էր Գոպէի ջրա-
զացի անցքի մասին։ Առաւոտը վաղ գիւ-
ղում լուր տարածուեց, թէ չարագործ մար-
դիկ, երեկի էլի նրանք, որոնք գիւղում այն-
քան գէղեր այրեցին, քանդել են թմբերը և
Գոպէի ջրազացը ջրերի բերանը տուել։ Հա-
ւատացնում էին, որ դժբաղդ ծերունին էլ
թաղուել է աւերակների տակ, միայն զար-
մանալին այն էր, որ նրա գիտակը դեռ ոչ
մանալին այն էր, որ նրա գիտակը դեռ
չէր տեսել։ Ամբողջ օրն այդ փոքրիկ
փոշոտ ջրազացի այն ալեզարդ պատկառելի
ծերունու պատկերը Նունուֆարի աչքից չէր
հեռանում։ Եւ դա իր պատճառն ունէր,
հեռանում։ Եւ դա իր պատճառն ունէր,

վասրանդի զաւակին, յիշեցնում էր վաստաբաղդ նողերի զարհուրելի մահը, իր օջաղի վրայ թափուած արինը, իր անտէրութիւնը, իր խեղճութիւնը:

—Մայրիկ, էգուց ես էլ կը դամ քեզ հետ:

Նունուֆարը թողեց իր մաքերը և նայեց աղջկան, որ մանկական պարզ խորամանկութեամբ մատնում էր իր դազանիքը:

—Ո՞ւր, Շուշիկ ջան, հարցրեց մայրը չը հասկանալու տալով:

—Ժամ, «ցասումը» տեսնելու, էգուց ժամում ցասում պէտք է անեն, չէ, մայրիկ, սիրուն կը լինի:

—Ո՞, ցասումի տէրը մեռնի, բալաջան, ես չեմ գնում ժամ, ցասումը չեմ ուզում:

Փոքրիկ աղջկայ փորձն անյաջող անցաւ, այդ ցասումը, այդ խորհրդաւոր բանը նրան այնպէս գրաւում էր, և մայրը պիտի զրկէր նրան այդ հաճոյքից:

—Ամենքը գնում են ցասումին թամաշա, մոմուաց նա քիչ յետոյ լացակումած ու դլուխը քարշ ձգեց:

Մայրը չը լսեց կամ չը լսելու տուեց:

Դարձեալ լուռթիւն տիրեց խրճիթում, և նրանցից իւրաքանչիւրը շարունակեց իր մոքերը, նուշիկը «ցասումով» էր զբաղուած, իսկ մայրն իր զաւակի ճակատագրով:

Դուռը ճռալով կամացուկ բացուեց, շէմքի վրայ յայտնուեց մէկը. Նունուֆարը դլուխը բարձրացրեց վախեցած ու շփութուած. Ասօն էր...

—Ախպէր ջան, ճչաց նուշիկը դէպի նա վազելով, մայրը յուզմունքից տեղումը քարացաւ մնաց, որդին հասաւ և նրա պարանոցով ընկաւ հեկեկալով:

—Ներիր, իմ խեղճ մարէ, ներիր ինձ...

—Քեզ մատաղ մարէն, Ասօն ջան... Գըլ խովդ պատոյտ դամ, բալաջան... կոխած հունիդ էլ մատաղ, զարիբ բալա... ուր էիր, որ չոլերը, որ ձորերը, ինչի էսպէս արիր, ձեռքս չոր գետինը, թաց աչքս դրանը...

—Ներիր, ներիր, մարէ, դարդ ունիմ, դարդ հաղար ծովի չափ:

—Ա՛խ, քոռանամ ես, էլի դարդ... ծովարիւնը տունս բռնեց, բալաջան, էշովարիւնը տունս բռնեց, բալաջանից թարուած սրտերի մորմոքը, հաղար բերնից թարուած անէծքը ու ամպ կապին օջաղիս վրայ, էլի՛ դարդ... աւարական ջրերը իւը-

մեցիր, չոլերն ընկար էս սև օրերին, դուշ
լումի մէջ մօրդ թողիր անտէրանտիրական,
էլի գարդ... նշանածդ՝ ջահիլջիւան վարդ-
աղջիկը քո ցաւից գլուխը մահին տուեց լճի
մէջ ու իր արիւնը փռեց քո ճանապարհին,
հայրը՝ ջրատար նաւօն գիշերցերեկ պը-
տոյտապտոյտ է անումջրերի վրայ, մինու-
ճար զաւակի դարդից մահ է կանչում, մէ-
րը առաւօտից երեկոյ բայզուշի պէս կը-
տրանը թառած՝ մոխիր է ցանում երկնքի-
երեսին, դատ ու դատաստան խնդրում Աս-
տըծուց, էլի գարդ... ախ, քանիսին գու-
դարդ եղար, որդի ջան, քանիսի մեղքը վը-
զիդ առար, անբաղդ բալա. ու բոլորն ինչի-
համար, ես ամաչում եմ ասել... իմ ո՞ր
մեղքի համար, ողորմած Աստուած, ինձ էս-
քան ցաւ, էսքան ամօթ բաժին տուիր... ո՞վ
էր տեսել խաչաւետարանով նշանուած
մարդը գնար ուրիշի կնկան աչք դնէր... էդ
էլ դու արիր...

Եւ խօսքերը թափւում էին նունու-
ֆարի շրթունքներից հեղեղի պէս. ամիս-
ներով կուտուած կոկիծը և ամօթն էր այն,
որ սրտից բղիսելով փռւում, ծովանում էր
որդու առաջն նա գրկել էր իր զաւակի

դլուխը, տանջուած ու թափառական, համ-
բուրում, գուրդուրում, արտասւում և մի-
ւնոյն ժամանակ գանդատւում բաղդից, եր-
կլնքից, որդուց։ Այս վշտահար տղամարդը,
իր յոյս ու ապաէնը և իր ծով-ցաւերի
աղբիւրն էր, իր սև օրը և երջանկութիւնն
էր, իր կեանքը և իր մահն էր։ Եւ նա չը-
դիտէր ինչպէս վերցնել մէկն առանց միւ-
սի, ինչպէս բաժանել իրարից այդ երկուսը,
որ Ասօն այնպիսի յամառութեամբ միացրել
էր իր մէջ։

Եւ գանդատւում էր մայրը և վշտում
էր իր ցաւոտ անկարողութեան մէջ։ Զը
կար մէկը գոնէ, որին կարողանար անի-
ծել այդ անարդար տեղը տառապած կինը,
ծել այդ անարդար տեղը տառապած կինը,
որի գլխին կարողանար թափել իր կրած-
կոկիծի, ամօթանքի թոյնն առանց խղճա-
հարուելու... նրա առաջ իր որդին էր, նոյն-
պէս տանջուած, նոյնպէս դժբաղդ, որքան
մայրը։

Ասօն գլխակոր և լոռութեամբ լսեց մօր-
բոլոր ասածները, նա թողեց, որ այդ տան-
ջուած կինը գուրս թափի սրտի բոլոր ցաւը,
ապա քնիքութեամբ բոնեց նրա խորշումած
ձեռքը, տարսաւ իր արթունքներին։

—Մարէ ջան, ասաց նա, ներիլ ինձ
իմ անցեալը, բայց ես էլ էն չեմ, քո ասած
դարդից վազուց եմ բժշկուել, եթէ իմ ցա-
ւը մի կին լինէր, ես քո երեսը դարձեալ
չէի դայ, մարէ, և իմ ձեռքով իմ գերեզ-
մանը կը փորէի: Ներիր ինձ նողերի հա-
մար, ես կարծում էի, թէ միայն ինձ եմ
զոհ բերում ուրիշներին, դուրս եկաւ, որ
նողերն էլ կապուած է ինձ հետ բազդով և
դնաց այնտեղ, ուր շատերն են գնում ան-
դառնալի կերպով: Մեր ժամանակը դարձել
է մի սև անդունդ, ուր զոհերը թափւում
կուտում են իրար վրայ, տեսնենք իրք կը
լցուի...»

—Սառա, Սառա, ինչու չար աչքը քեզ
չը դիպաւ:

—Մարէ, հաւատա՞ որդուդ, իմ խեղճ
մարէ, վազուց, շատ վազուց ինձ համար ոչ
Սառա դոյութիւն ունի, ոչ նողեր, նրանք
երկումն էլ անդառնալի կերպով չքացել են
իմ մտքից ու սրտից, և նրանց աեղը բռնել
է մի ուրիշը—սարսափելի, և՛ գեղեցիկ միա-
ժամանակ:

—Ո՞վ է, որդի, հիմայ ո՞վ է քո դարդի
աղբեւը:

Մայրը չէր հասկանում որդուն:
—Կին չէ, մարէ, այլ մի ուրիշ բան,
ահաւոր և գրաւիչ... դու ինձ ասացիր, որ
ես գեղեցիկն ու արդարը սիրեմ. հոգիս ան-
տառներում մոլորուած ճամբորդի պէս շատ
թափառեց, մինչև դտաւ, դու ասացիր,
մարէ, քեզնից սովորեցի: Ծառիկը ծաղկեց
է սիրուն, սարը՝ սարից, ձորը՝ ձորից, կի-
նը՝ կնոջից, կայ մի ուրիշ բան, որ այս բո-
լորից էլ սիրուն է... եթէ մեռնիմ, մարէ,
դարձեալ մի լար:

—Անիծում են, որդի, անիծում են,
ախ, մայրերի անէծքը, ես վախենում եմ, ես
դողում եմ. օջաղիս վրայի արիւնը...

—Դու միայն մի անիծիր, ինձ բաւա-
կան է...

—Պապանձուեմ, պապանձուեմ:

—Այնքան մայրեր են լալիս, մարէ ջան,
այնքան հայրեր սարսափից խելագար, այն-
քան զաւակներ անտէր մորմոքալիս: Մեր
ժամանակի սև վիճը դեռ չի լցուել, զոհեր,
զոհեր, նողերն էլ մէկը նրանցից:

—Խեղճ նողեր, խեղճ ջիւան, ախ, Ասօ-

—Դարդ կայ փոքրիկ, դարդ կայ ահա-
գին, կուծքս քանդեցի իմ ձեռքով, դէն

Ճգեցի փոքր դարդը, այժմ այնտեղ մի դարդէ
է բուն դրել հաղար ծովի չափ Երեխայ էի
պստիկ դարդի առաջ, շատ ապրեցի, հսկայ
ցաւից էլ չեմ դողում:

—Ցաւի, դարդի տէրը մեռնի, արար-
աշխարհի մէջ աչքը մենակ քեզ տեսաւ:

—Արար-աշխարհը հէնց ցաւի բուն է,
մարէ:

—Աշխարհի դարդը խօմ բոլորը քեզ
չեն տուած, որդի. տան ու օջաղի տէր ես,
ցանք ու հանդի տէր ես. աշունը դուռը կո-
խեց, ձմեռը յետեկից է դալիս. ամենն ի-
րանց դործին են...

—Մարէ, այդ մնա, հաց ունիս տանը:

—Ախ, քոռանայ մէրդ, չեմ էլ մտա-
ծում, որ քաղցած կը լինիս. ցնդուել եմ,
ցնդուել:

—Ուտելու ժամանակ չ'ունիմ, մարէ:

—Էլի...

—Հա, դնում եմ, մարէ, ճանապարհի-
վրայ եմ:

—Ասօ ջան, խեղճ եմ, անտէր-անտի-
րական, պառաւ, աչքիս լոյսը պակսած, տես
քոյրդ, թէ ինձ չես խղճում, նրան խղճաւ
Մայր ու աղջիկ հեկեկացին:

—Մարէ ջան, կը դամ, կը դամ յետոյ...
—Ուր, որդի, դօնէ տեղդ ասա, որ
էս սեւաւոր որբի ձեռքից բռնեմ, աշխարհէ
աշխարհ հաց մուրալով քո յետեկից դամ:
—Կը դամ, կը դամ, կրկնում էր Ասօն՝
հացերը կապելով:

—Ախր, որդի, ինչի ես դնում, ում հա-
մար ես գնում:

—Լացողների համար, մարէ, լացողների:

—Իմ արցունքը... քոռացած աչքիցս
թափում է... ապա մօր արցունքը... թող-
նում է մօր արցունքը...

—Քո արցունքը թող ցող դառնայ, մա-
րէ ջան, զաւակիդ ցաւոս գլխին, քո ար-
ցունքը սուրբ է, իմ խեղճ մէրիկ, բայց ես
պէտք է դնամ...

—Ասօ, Ասօ:

—Մնաս բարի, մարէ, մնաս բարի, քոյ-
րիկ ջան, կը դամ, կը դամ:

Ասօն դուրս գալով դռնից՝ շտապով կո-
րաւ խաւարի մէջ։ Մայրն ու քոյրը նրա յե-
տեկից հեծ կլուալով դուրս եկան բակը, կանդ-
առան խաւարի մէջ անտէր ու մենակ, դեռ
երկար նայում էին դէպի այն կողմը, ուր
ծածկուեց Ասօն, լսում էին նրա կամաց-

կամաց հեռացող ոտնաձայնը. երբ ամեն
բան լուց, կողք կողքի սղմուած՝ յետ դարա-
ձան տուն, գուռը փակեցին ու նորից կըծ-
կուեցին իրանց տեղերում. նրանք դարձեալ
մենակ էին:

— էլի՛ մենակ մնացինք:

— Հա, բալա ջան, էլի մենակ ենք.

քնիր, քնիր, մեզ մնաց Աստուած:

Ուշ գիշեր էր. փոքրիկ աղջիկը կամաց-
կամաց նղղեց ու քուն մտաւ, իսկ նունու-
ֆարը դեռ ծնկները դրկած՝ օրօրուում էր
ճրագի պլալան լոյսի առաջ և մտածում էր
այն մութ անյայտի մասին, որի մէջ գնաց
կորաւ իր զաւակը, այն ծով դարդի մասին,
որ բռնել էր իր Ասօի սիրալը. Ինչե՞ր ասաց,
ուր գնաց և ինչու... Նունուֆարը հասկա-
նալ չէր կարողանում, և սիրալ ճմլում,
քամւում էր մի անորոշ, խեղդող կասկածից,
և հոգին, մայրական տանջուած, ալեկոծ
հոգին չէր կարողանում կրել իր վրայ այդ
խորհրդաւոր անյայտի ահագին ծանրու-
թիւնը:

— «Դարդ կայ փոքրիկ, դարդ կայ ա-
հագին», ասում էր Ասօն, միթէ իմ դարդից
էլ մեծը կայ, ՏէրԱստուած. ասում էր, հալ-

բաթ կայ... Ասօն էր ասում...սե, վէրան
ժամանակներ, ինչ էք պատրաստում մեր
գլուխն, մըմնջում էին նրա վրթունքները:

Եւ մայրը շարունակում էր օրօրել իր
ծեր ու յոդնած դլուխը, և նրա հետ միասին
սե մտքերն օրօրուում, խօսում էին նրա ա-
կանջին:

— «Աւ փոսը դեռ չի լցուեր... այն ինչ
փոս է, որտեղ է այդ անիրաւ փոսը. Ասօ,
Ասօ, ախ, թառլան որդի, գնալուցդ առաջ
ինչի՞ գոնէ սկաւոր մօրդ էն «փոսի» մի
անկիւնը չը ձգեցիր, կամ ինչու...

Նունուֆարը ցնցուեց ու գունատուեց.
Ները դիւղում միահամուռ ձայնով ունալ
սկսեցին, շարագուշակ ու այլանդակ: Հեռու,
հեռու լեռներից կ'ասես սարսափելի ձայներ
էին գալիս, որոտ, պայթիւն, հարայ. ինչ-
որ մի տեղ, ամայի լեռներում կատարուում
էր մի ահաւոր բան: Նստած տեղում նու-
նուֆարը դողում էր իր զաւակի համար:

— Տէր, Դու վրկես, Դու հասնես, ողոր-
մած Աստուած:

Զայները սաստկացան. հրացաններ էին
պայթում: Հների ոռնոցը դարձաւ խացու-
ցիչ. դիւղն էլ կծկուեց, դռներն աւելի պինդ-

փակուեցին, թէ ճրագներ կային՝ մարեցին,
գիւղը մեռնում էր երկիւղից խաւարի մէջ,
մէկ նունուֆարի ճրագը դեռ պլալում էր:
— Տէր, Դու փրկես, մրմնջում էին նրա
շրմունքները:

Նրան թւում էր, թէ այդ բոլոր ձայ-
ները գալիս են այն մուժ, ճնշող անյայտից,
որով պաշարուած է իր հոգին, դէպի որը
գնաց իր որդին: Մահուան սարսափի ձայնն
էր գալիս այնտեղից, այն մուժ, խորհրդա-
ւոր անյայտն էր մռնչում, և որդին գնաց...
— Տէր, Դու փրկես:

XXII

Կուսինը մայր մտաւ, երկիրը կորաւ խա-
ւարի մէջ, հեռու ձորերից լուսող կասկա-
ծելի ձայներն ու որոտը լուեցին, բայց Ասօն
դեռ շարունակում էր վազել հերին դաշ-
տերի, արտերի, ձորերի միջով: Երկու ան-
դամ նա կորցրեց ճանապարհը, երկու ան-
դամ դուրս եկաւ Զկնդետի առաջ, մնաց
մոտամոլոր, լայն շունչ առաւ և ապա կրկին
վազեց դէպի խաչքարի բլուրը: Զայներն
այնտեղից էին լուսում:

Այդ ձայները... մի գերագոյն վայրկե-
նում՝ զարհուրելի տագնապի մէջ մռնչացող
զայրոյթներ լինէին կ'ասես, որոնք ամենքը
միասին խաւարի դրկում եղբայրացած դա-
լարուեցին, փաթաթուեցին իրար վրէժինդիր
օձերի պէս և մեռան՝ սոսկումը փռելով ի-
րանց շուրջը:

Ո՞վ կարող էր ասել, թէ ինչ էին ա-
սում նրանք, այն խորհրդաւոր ձայները, ա-
նիծում էին, թէ արտաւում, օգնութիւն
աղաղակում, թէ քրքջում դիւային ծիծաղով,
բայց Ասօնին թւում էր, թէ նրանք ամենքն
իրան կանչեցին բարձր-բարձր և մեռան
անպատասխան:

Եւ Ասօն վազում էր անհանդիսա, սիր-
ու ի անորոշ սարսափով, հոգին տագնա-
պով բռնուած. նա զգում էր, որ այս խա-
ւարն իշաւ և մի բան ծածկեց, մի անդառ-
նալի բան, մի ոճիր, և ինքը գուցէ էլ ոչինչ,
ոչինչ չի կարող անել սոսկալի իրականու-
թեան հանդէպ:

«Ուշացայ, ուշացայ, և նրանք սոված,
էին, մրմնջում էր նա. յոդնած ու սոված,
էլ ինչ կարող էին անել... ուշացայ...»
Բլրի ստորոտում նա մի վայրկեան կանդ-

առաւ. ուղիղ իր հանդէպ մարդիկ էին դաշլիս և խօսում էին բարձրածայն։ Նա յետքաշուեց ու ծածկուեց մի քարի յետեւ Եկուզը մի հոգի էր, մի ստուեր, որ արագութեամբ ցած էր իջնում բլրից, խօսում էր ինքն իրան՝ ձեռքերն սպառնագին շարժելով.

—Դէ հիմայ հանգստացիր, նաւօ, ասում էր խորհրդաւոր ձայնը. ուխտդ ընդունելի եղաւ, մեռար ձուկ կոտորելով, մինչև ուխտաւորներն եկան, եկան ու նրան էլ բերին. Շողերը թնդ դինջանայ, նշանածն էլ դնաց հասաւ։

Ապա նա քրքջում էր բարձրածայն, մի վայրկեան լուսմ, կրկին շարունակում.

—Աղատուի՞... չի աղատուի, ոչ ոք չ'աղատուեց, դէ հանգստացիր, նաւօ։

Կիսախելագար, վրէժինդիր նաւօն սարսափելի իրականութիւնն էր պատմում խաւարին և հրճում դիւային քրքիջով, որ ուխտաւորները ջարդուել են, և որ Ասօն էլ նրանց հետ զոհ էր դնացել. Ուրեմն էլ ոչինչ չը կար փրկելու, ոչինչ չը կար անելու. միակ բանը, որ գեռ հնարաւոր էր, չափազանց ողորմելի, չնչին էր. Ասօն կարող էր արգե-

լել այդ քինոտ հրճուանքը, կարող էր թոյն խառնել կիսախելագար նաւօի երջանկութեանը, մի ձայն, մի խօսք, կենդանութեան մի նշան։ Բայց ինչ օդուտ, ինչ օդուտ. թող հրճուի, խելագարի հրճուանք. գուցէ և նա իրաւունք ունի, վշտացած ծնողի իրաւունքը սահմանել գժուարէ, երբ գերեզմանը ծածկում է նրա վերջին յոյսը, գշտում է նրա սիրտը։

Նաւօն մի յուսահատ, մի դառնացած, վրէժինդիր ծնող էր, որ իր թափած արցունքի փոխարէն արցունք ու արիւն էր պահանջում։

—Երթամ, երթամ կանդնեմ կտրին, շարունակեց նաւօն. Հերթկից կանչեմ. «Նունուփար խաթուն, պրծաւ, պրծաւ, հաւասար ենք, քո ծուխն էլ մարաւ. ուե, ուե՝ էլ Ասօն չը կայ»...

Ասօն ցնցուեց. մայրը... այս խելագարը չի խնայի նրան։

—Ասօն կենդանի է, նաւօ, նունուփարի ծուխը չի մարել, ասաց նա՝ գուրս ցատկելով քարի յետեւից։

Նաւօն սարսափից յետյետ քաշուեց, կանգ առաւ մի վայրեկան, ապա կարծես

ուշքի եկած՝ բացագանչեց ահագին ձայնով.

—Փախար, փախար, կտրիչ Ասօ, ասաց ու քրքջալով կորաւ խաւարի մէջ:

Վշտացած երիտասարդն իր տեղում քարացած՝ նայում էր խուսափող ատուերի յետելից, ապա առաջ շարժուեց՝ այժմ աւելի վհատուած, աւելի անյոյս:

Խաչքարի լեռը ցցում էր նրա առաջ իր սե, անորոշ զանգուածով մի խորհրդաւոր, ահագին հրէշի նման, որ նստել է մի սարսափելի գաղտնիքի վրայ, նստել է ու լըռելը Ասօն այժմ բարձրանում էր գանդաղութեամբ. լերան խուլ լուսութիւնը հասկանում էր, խաւարի ծածկած գաղտնիքը գիտէր:

Լեռնալանջի կէսին հասած՝ նա կրկին կանգ առաւ և լսողութիւնը սրեց: Իրանից քիչ հեռու նա պարզ ու որոշ կերպով լսում էր մի տնքոց: Ասօն քայլերը փութացրեց՝ ոտների տակ նայելով. տնքոցն աւելի սաստկացաւ. նրա սիրտը ճմուեց ցաւից: Իր ոտների տակ ընկած՝ մէկը գալարւում, մոլնչում էր ցաւից: Ասօն կուացաւ, նայում էր:

—Ո՞վ ես:

Վիրաւորը պատասխանի փոխարէն տընքում էր. Ասօն երկու ձեռքով բռնեց բարձը՝ րացրեց նրա գլուխը:

—Ո՞վ ես, կրկնեց նա իր հարցը:

—Մէկը... որ պէտք է... մեռնէր և որ... մեռնում է... թնդինձ...

—Գսպէ ամի՞... գու այստեղ, այս վիճակում...

Ծերունին ցնցուեց, փորձում էր բարձը՝ բանալ, ձայնը ծանօթ էր, բայց երևի գըմուարանում էր յիշել:

—Գսպէ ամին, հա, հա... ով ես դու, այս արիւնէ մրրկի մէջ... գնա, որդի... գնա, հեռացիր... թող ինձ... ով և լինիս...

—Ասօն քեզ թողնի, Գսպէ ամի, էս օրին. Տէր Աստուած, Տէր Աստուած:

—Ասօն... Ասօն... Գսպէն իր բոլոր ուժով ձգուեց, բարձրացաւ աջ արմունկի վրայ, և ձախ ձեռքը երիտասարդի պարանոցը ձգեց: Եւ խաւարի մէջ երկար ժամանակ լսում էին նրանց համբոյրները, նրանց հեկեկոցը, նրանց կարօտալի հեքը:

—Այժմ ես կը մեռնեմ... հանգիստ, որ գի... վիրաւոր, ծեր եղջերուն կը հանգստանայ... էս լեռներում... ճանապարհից հեռայ...

ունւ, հեռու... աշխարհից հեռու... դնւ
ապրիր...

— Բայց դու այստեղ, Գոպէ ամի, էս
սարի վրայ, էս գիշերին, վիրաւոր, մենակ...

— Հէ որդի... ես եկայ վինարելու այն...
ինչ որ գտայ... շատ ապրեցի... ես ոչինչ...
ես ոչինչ... ինձանից վերև... այ էնտեղ...
զուլում էլաւ... արիւնէ մրրիկ զարկեց...
Մըրկի սուրբի վրայ... և... նա չ'եկաւ, չ'ե-
կաւ... Շատ էին անօրէնները, ջարդեցին...
ջարդեցին... ով ազատուեց, ով փախաւ,
մէկ Աստուած գիտէ... վէրան երկիր... սև
ժամանակ... ինչ լաւ է մեռնելը... ապ-
րելն էսպէս չէր...

— Զէ, չէ, Գոպէ ամի, եկ քեզ շալաւ
կեմ և գիւղ հասցնեմ. վէրքդ կը կապեմ,
ես քեզ չեմ թողնի այստեղ մենակ ու ան-
տէր:

Ծերունին գլուխը թափահարեց:

— Ես գտայ այն... ինչ վինարում էի,
որդի... դնւ էիր պակաս... դու էլ եկար...
էս տառապած գլուխս դիր ծնկիդ...

Ասօն զգուշութեամի նրա ալեզարդ գը-
լուխը գրեց իր ծնկին:

— Այսպէս լաւ է... ինչ լաւ է մեռնե-

լը... թաղքեզ համար... որդիս, ապրելը լաւ
լինի... բողորի համար... աշխարհի համար...
նաւօի համար էլ... իսկ ես... նա չը կա-
րողացաւ շարունակել. ծանր հաղը ճնշեց
նրա կոկորդը, և թանձր, մուգ հեղուկը
դուրս ժայթքեց բերանից, ծածկեց ալեզարդ
միրուքը: Վիրաւորը մի փոքր լուեց, հանգըս-
տացաւ ու շարունակեց:

— Բունս քանդուեց... եղջերուն էլ մեռ-
նում է... Նաւօն քանդեց, որդի... իրաւունք
ունէր... իր բունն էլ է քանդուած... Ասօ,
Ասօ, Շողերի արիւնը... երանի թէ ես հա-
տուցանեմ... Բայց էլ բայցուշը չը կայ... երբ
մրրիկն անցնի, շինիր ջրաղացը, որդի: Կը
շինես...

— Հա, Գոպէ ամի, կը շինեմ, մէջքովս
քար կը կրեմ, կը շինեմ և քեզ պէս դուռը
լայն բաց կը թողնեմ անցորդների առաջ:

— Աստուած օրհնէ քեզ, որդի... ինձ
պէս հին էր ջրաղացը... ինձ պէս խարիսխած...
ալիքներն եկան, տարան երկսիս էլ... դու
նոր շինիր, հաստ պատերով, նոր սիւնե-
նը... թաղ շախչակն էլի ցատկրտի... էլի
նը... Թաղ շախչակն էլի ցատկրտի... էլի

դացի քարի պէս է...դառնում է հա դառնում... հալբաժ մի օր էլ չարխի ֆալագն էս վերան երկրի վրայ կը դառնայ... հալբաժ մի օր էլ մեր սև սարերին արե կը ծագի... հինը խարխլած էր... նոր ջրաղաց... նոր ջրաղաց. թնդ որոտալով աղայ քարը... նոր ջրաղաց...

Նրա ձայնը նորից խզուեց, հազը կրկին սեղմեց կոկորդը, մուգ հեղուկը մէկ էլ ժայթքեց, ծերունին ամբողջ մարմնով ցընցուեց, բերանը մի քանի անգամ ուժով բաց-խուփ արեց, ապա հանդարտ ձգուեց ու լռեց. Գսպէն մեռաւ... Ասօն հեկեկալով՝ կրկին կրացաւ նրա վրայ, դլուխը վար դրեց, ծունկ չոքեց ծեր բարեկամի դիակի առաջ և լալիս էր խաւարի մէջ:

Ոտքի կանդնեց, բայց հեռանալ չէր կարողանում, էլի ուշադրութեամբ նայում էր իր ծեր բարեկամի դիակին, որ ձգուած էր խաւարի մէջ այս լեռնալանջին՝ արիւնոտ վէրքի վրայ պատան ունենալով միայն մութ դիշերը:

«Էս լեռներում ճանապարհից քիչ հեռու...» Ասօն մտարերեց Գսպէի սիրելի երդը, և ուրիշ էլի շատ բան յիշեց նա այս

խորհրդաւոր ծերունու կեանքից, որ ապրեց ճիշտ այնքան ժամանակ, որքան իր ջրաղացը, որ աշխարհը չը սիրեց, բայց սգաց, ցաւեց նրա համար, և որ մեռաւ կարծես այն պատճառով, որ էլ չէր կարող նայել պտտուող քարին և խորհել, էլ չէր կարող իր դռնից անցնող մուրացկաններին, ճանապարհորդներին և մանաւանդ ուխտաւորներին կերպակրել։ Ջրաղացը և Գոգէն Ասօն երկակայութեան առաջ ներկայանում էին որպէս երկու եղբայրներ, երկուսն էլ կենդանի, երկուսն էլ խորհրդաւոր, որոնք այնքան տարիներ բուն դրած մեծ ճանապարհի վրայ՝ պայցարում էին չարկիքի դէմ, որ սուզում, գալարւում էր նրանց չորս կողմում, և իվերջոյ յոդնած, ուժասպառ երկուսն էլ մի օրում ընկան՝ տեղ տալով ուրիշներին, որ շարունակեն նոյն պայքարը, և այսպէս անվերջ...

«Նոր ջրաղաց, նոր ջրաղաց...» յիշում էր Ասօն ծերունու վերջին խօսքերը։
«Հա, նոր ջրաղաց, մտածում էր նա, թնդ քո կամքը լինի, իմ խեղճ բարեկամ, նոր ջրաղաց կեանքի մեծ ճանապարհի վրայ, և ջրաղաց կեանքի մեծ ճանապարհի վրայ, և թնդ քարը դառնայ թափով ու ալիւր շփի

շուրջը, և թող անցորդները և մանաւանդուխտաւորներն ապաստան ու հանգիստ դըտնեն, մինչև որ չարխի-վալագը մի օր էլ էս մեր վէրան վաթանի վրայ դառնայ. չէ՞ դու ասացիր, որ աշխարհում ամեն բան զրադացի քարի պէս է, դառնում է հա դառնում...

Ասօն թողեց իր մեռած բարեկամին լեռնալանջի վրայ և շարունակեց բարձրանալ: Նա գեռ շատ բան ունէր տեսնելու այս աշխաւոր գիշերին, կարծես էլ վերջ առնելու չէր: Լերան կատարին նա կանդ առաւ քըրտնաթոր, բորբոքուած ճակատն ու այտերը հովին տուեց, նայեց... սիրու ճմլուեց ցաւից: Խաչքարն էլի այնտեղ էր թեատարած ու համր՝ ինչպէս միշտ, իսկ նրա շուրջը փոռուած էին գիտակներ, գիտակներ... այստեղ էր ուխտաւորների հոյակապ առաջնորդը, նա փոռուած էր իր հասակի բոլոր վեհութեամբ և հովանաւորողի, պաշտպանողի գիրքով. աջ ձեռքն իջել էր իր կողքին պառկած պատանու, փոքրիկ Մուշօի կրծքի վրայ. հինաւուրց կազնի լինէր կարծես այս ծերունին, որ մըրկից խորտակուած ընկել էր և իր տակ ճխել մատղաշ սոտը, իր եղբօր որդուն:

Այստեղ իրար կողքի անկենդան փոռուած

էին և' ուրիշ շատերո, պայքարի և մահուան մէջ եղբայրացած, և բոլորի վրայ երկնքից աստղերը թարթում էին իրանց աչքերը սառն ու անտարբեր, և խաչքարը տարածում էր իր թեառները նոյնքան անհոգ, որքան այն ժամանակ, երբ մարդկային բարեպաշտ հօտը փուռում էր նրա սաների տակ և լիզում նրա պատւանդանը աղօթքի մրմունջներով:

Ապրօն չը կար. Ասօն իզուր իր յուզարկաւորի քայլերով անցաւ զանազան կողմեր, իզուր վինտրեց ժայռերի յետեռում, ականջ գրեց վիրաւորի տնքոց լսելու, Ապրօն չը կար ու չը կար: Եւ Ասօն չը գիտէր նոյնիսկ ուրախանալ, թէ՞ ոչ, որ Ապրօի գիտկը չը կար, երբ ամենքն ընկան, անգամ Մուշօն, որ իր հօր կտրատուած մատներն էր կրում կրծքին՝ որպէս արդարադատութիւն պահանջող նուիրական նշան, և այդ պատահին իր կեանքի արշալուսին ընկաւ ազնիւ պայքարի մէջ. Ապրօն ինչու ապրի, մտածում էր Ասօն: Բոլորը, բոլորը, վիճը սարսափելի լայն է, պէտք է լցուի, բոլորն ընկել են, Ապրօն էլ կարող էր ընկները, մըռմուռում էր նա:

Քայլելով-քայլելով՝ առանց նկատելու՝

նա կրկին եկաւ, Գոպէի դիակի առաջ կանգ տռաւ։ Շատ էր յոդնած, կամացուկ նստեց մի քարի վրայ։

Լուսաբացը մօտ էր. արևելքում, հորիշ զօնի մօտ աստղերը կամաց՝ կամաց գունաւուեցին ու ծածկուեցին. շուտով արեւմուտքումն էլ խաւարի քօղը մաշուեց ու թափանցիկ գարձաւ։ Վաղորդեան աղջաւ մուղջի մէջ լիճը քնից զարթնող կոյսի պէս սարսում, թրթում էր թեթև հողմի զով չնչի առաջ, և նրա շուրջը եղերող լեռներն իրար ուսերի վրայ ընկած՝ կարծես աշխաւտում էլն դիտել նրա կուսական մերկութիւնը և իրանց առաջին ժպիտը նրան ու զարկել։

Դիւն էլ զարթնում էր, ցասման ժամի օրն էր. ծխի ամպերը պալան-պալան բարձը բացան. եկեղեցու բակում մեծամեծ կաթսաների տակ պատրաստուած օջաղներն էին, որ մէկն վառուեցին. մի քանի եղներ էին մորթուած, որ պէտք էր եփել։ Ասօն նայում էր այդ ծխի պտոյտներին և ակամայ յիշեց ուխտաւորների առաջին այցելութիւնը Գոպէի ջրաղացին և տեղի ունեցած խօսակցութիւնը. Այնտեղ դիւղը սողում է եկեղեցում,

աղօթում է, լալիս, այսաեղ լերան վրայ փոռած են գիտեները, մտածում էր նա. ով է կենդանի, ով մեռած, նրանք, թէ սրանք. ում համար արտասուել, սուդ անել, նրանց, թէ սրանց։

«Նոր ջրաղաց, նոր ջրաղաց...» Գոպէի այս խօսքերը կրկին հնչուեցին նրա ականցում։

— Քնեցէք հանգիստ, քնեցէք, հատիկ-ների պէս փշուեցէք հին ջրաղացի քարի տակ, և թող ուսեն քաղցածներ։ Նոր ջրաղաց, ում հետ շինել, ինչպէս շինել, երբ հեղեղը քարերն էլ տարաւ, և շէնքի տեղ ահագին փոս է։ Ասօն դեռ երբէք իրան այսքան մենակ, այսպէս մերժուած չէր պդացել։ Գոպէն փոռուած էր նրա առաջ անկենդան, ընկերները ցաքուցրիւ ընկած ժայռերի տակ, Ապրօն կորած, և զիւղը ցաման ժամով էր զբաղուած։

«Նոր ջրաղաց, նոր ջրաղաց...» Ասօն նայում էր Գոպէի դիակին, և նրան թւում էր, թէ նրա կապտած շրթունքները դեռ մրմիջում են, այս խօսքերը։ Եւ երիտասարդն իր միայնութեան մէջ զդում էր, թէ ինչպէս մի ահագին բեռ ճնշում է խորտակելու չոփ,

և իր շուրջը չը կայ մէկը, որ սիրտ տայ,
քաջալերի. նա մենակ էր այս բարձրութեան
վրայ, իսկ այնտեղ ներքեռւմ, նրա ոտների
տակ բազմութիւնը եռւրւմ, շարժւում էր,
նրանք շատ էին և ցասման ժամ էին ա-
նում:

«Եսր ջրաղաց, նոր ջրաղաց...»

Երիտասարդն էլի նայեց Գոպէին, նրա
արիւնոտ կըծքին, սիրտը նորից փղձկաց, նա
գլուխը ձեռքերի մէջ առաւ, և յորդ ար-
ցունքները թափուեցին աչքերից: Նա լալիս
էր ոչ միայն նրանց համար, որոնք փռուած
էին իր չորս կողմում անկենդան, այլև նրանց
համար, որոնք հեռու հարթավայրերի վրայ,
այն կծկուած, դողացող գիւղում աղօթում
էին ու սողում, ողորմութիւն էին մուրտում
պղնձուած երկնքից:

Եւ լի վրայ յայտնուեց նաւօի սպիտակ
առադաստը, մէկ նա էր անմասն ցասման
ժամից, նա ցասումն իր կըծքումն էր կրում:
Ծեր ձկնորսն էլի տարւում էր ալիքների
վրայ, էլի նրա թին բարձրանում և իջնում
էր ձկների մէջքին: Գիշերուայ անցքերը նրան
չէին դոհացրել, Ասօն կենդանի էր, վրէջի
ծարսաւն անյագուրդ նաւօի սրտում:

«Խեղճ մարդ, խեղճ մարդ...» մըմնջաց
Ասօն՝ նայելով լճին:

Եւ ծուխը շարտնակում էր բարձրանալ
գիւղից պալան-պալան. ցասման ժամ էր, և
նաւակը տարւում էր լճի վրայ մեն-մենակ,
իսկ Ասօն լերան կատարին լալիս էր բոլորի
համար, լալիս էր և էլ չը գիւղը՝ ուր գը-
նալ, ուր տանել, ուրմ հետ բաժանել իր ծով
դարդը:

XXIII

Այն գիշեր լեռներից հնչուող աղաղակ-
ները, մահից, սարսափից ու յուսահատ պայ-
քարից խօսող այն ձայները ոտքի չը հանե-
ցին Ա... գիւղացիներին. խրճիթներում ճը-
րագ չը վառուեց, դռներ չը ճըռոացին,
փողոցներում մարդ չը յայտնուեց: Մէկ Գու-
լէի փոքրիկ խցում գեռ ճրագ կար, մէկ նա
էր ոտքի վրայ և ականջ էր դնում գրաի
ձայներին, հասկանալ էր ուզում խաւարի
լեզուն:

Յաջորդ օրը պատարագ ու ցասման
ժամ էր, կոյսը նշխարներ էր պատշաստում
և մերթընդմերթ դադարեցնում էր աշխա-

տանքը, ուշադրութեամբ ականջ դնում՝ գըշ
լուխը մի փոքր գէպի լուսամուտը կամ գու-
ռը թեքած։ Աշխատանքը վերջացրեց, ուշ
գիշեր էր, բայց նա գեռ չէր քնում, այլ
կատարում էր մէկն այն հսկումներից, որոնք
անակնկալների հեռաւոր սարսափներից ան-
հանգիստ հսդիների համար գերագոյն պա-
հանջ են։

Պատի վրայ փորուած էր փոքրիկ խաչ-
քար, և նրա առաջ պլազմէն վառվում էր
կանթեղը. կոյսը վերկացաւ, սեազդեստ ու
հոյակապ կանգնեց նրա հանգէպ և ազօ-
թում էր. Երկար ժամանակ նա ծունք էր
դնում և բարձրանում, և նրա հետ միա-
ժամանակ պատի վրայ խազում էր իր սոսուե-
րը միշտ միենոյն տեղում, միենոյն ձևով։
«Տէր Աստուած, ասում էր նա, զուլումը
մեր չորս կողմը բռնել է, ցաւը խեղդում
է մեզ. անճարների և խեղճերի Աստուած,
արժանի ենք, մեղաւոր ու յանցագործ ենք,
բայց չէ Դու գթած ես ու երկայնամիտ,
մեղմիր Քո ցասումը գոնէ անմեղների, ար-
դարների համար, ների՛ր, ների՛ր... աղատիր
այս սեաւոր աշխարհն արիւնոտ մրրկից,
շատ ենք տեսել, շատ ենք կրել, բաւական

համաշխիր։ Սե ամպերը շաբան-շանան կա-
խուել են մեր գլխին, ով Դու փոթորիկնե-
րի, մրրիկների և հողմերի Տէր, քաղցրացրու-
թո սուրբ աչքը, մի շող, մի ցնկը կաթեցրու
այս սե Երկնքից...» Նա աղօթքն ընդհա-
տեց և լսում էր... ի՞նչ ձայներ էին. Աղօթ-
քը վերսկսեց աւելի յոյզով, աւելի երկիւ-
քը պատութեամբ։ Դեռ երբէք նրա հսդին այս-
զածութեամբ։ Դեռ երբէք նրա հսդին այս-
պիսի անորոշ սարսափով պաշարուած չէր,
ինչպէս այս գիշեր։ Լսուող ձայներից իւրա-
քանչիւրը խաւարը պատռելով՝ դալիս էր
հեռուից, ներս էր թափանցում նրա նեղիկ
լուսամուտից, և կոյսը հասկանում էր բոլորը,
լուսամուտից էին խօսում։ Եւ կոյսը մրմնջում էր.
«...Անճարների ու խեղճերի Տէր, ա-

ղատիր զուլումից...»
Դուռը կամացուկ թրըխկաց, կարծես
այն ձայներից մէկն էր, որ եկաւ, դրանը
դիպաւ։

«... Քո ողորմութիւնն անհուն է...»
Դուռը թրըխկաց աւելի բարձր։
«... Դու միայն կարող ես, Քեղանից
բացի էլ ոչ ոք չ'ունենք...» Նա լոեց։
Մի ձեռք ծեծում էր դուռը։

— Ո՞վ է:

— Հաղորդութիւն ուզող կայ, լսուեց
դրսից կամացուկ:

Կոյսը դուռը բացեց. մէկը ներս մտաւ,
միաց դրան առաջ, ստուելում կանդնած
լուռ ու անշարժ:

— Ո՞վ ես:

— Դարձեալ ես եմ:

— Ապրօ...

— Սուս, սուս, Գուլէ. այդ անունը մի
տար, անիծուած է, եթէ քարերը լսեն՝ կը
ճաքեն, կենդանի մարդիկ լսեն՝ կը մեռնեն,
մէկ խաւարը նրանից չի դողում, մէկ էլ
մահը, որոնցից մէկն ընկերս է, միւսն էլ
հեռու չէ. լսեցի՞ր, հասկացար ձայները:

— Հա, հա, լսեցի, Ապրօ, լսեցի. Տէր
Աստուած, այն ինչ էր, ինչ պատահեց լեռ-
ներում. գու այնտեղ էիր, ինչու, որտեղից
ես գալիս, ուր էիր, ուր գնացիր:

— Պրծաւ, պրծաւ, սուրբ տեղերում,
խաչքարի թեւերի տակ արիւնը հեղեղի պէս
վաղեց, հապա, հեղեղի պէս. Իւչ-Քիլսէի
վանքում վարդապետն ասաց, թէ կը հոգայ
ուխտաւորների մասին, եթէ նրանք շուտ չը
հեռանան, և հոգաց.

— Վարդապետը, Ապրօ...

— Հա, Գուլէ, քո սուրբ հայրը. Նա լուր
տուեց անօրէն մարդասպաններին. այսքան
տարի ես ուխտաւորների վալագ էի, այս
պիսի բան չէի տեսել. հովիւն իր հօտը
տուեց գայլերին. աահ, այս ժամանակիներն
ամեն բան տարօրինակ է, Գուլէ, քիչ է մը-
նում՝ մարդիկ թաթերի վրայ քայլեն՝ ու
խոս արածեն: Քանի՞սն ընկան. հազիւ մի
երկու հոգի ինձ պէս խաւարի միջից սողա-
ցին՝ անէծքի գործը քնածներին պատմելու:

— Տէր Աստուած, Տէր Աստուած...

— Օ՛, երանի թէ մենակ այդ լինէր,
Գուլէ, մեծ մրիկկը յետոյ է գալու. և ես
դրա համար եմ գետինը չանգռելով այս
տեղ հասել:

— Էլ ինչ, Ապրօ, ինչ սև է գալու մեր
գլխին:

— Վաղը ցասման ժամ է:

— Հա, լուսաբացին վարդապետն այս
տեղ կը լինի:

— Վարդապետն իրաւունք ունի, լաւ
պատարագիչ է. այս գիշեր արիւնի հակում
կատարել տուեց, բայց ցասումը չի անցնի,
և..., ցասման ժամը արիւնի ժամ կը լինի:

—Ապրօ, Ապրօ, այդ ինչ տառցիր, աւրիւնի ժամ, ես սարսափում եմ քո խօսքերից:

—Սարսափելն անօդուտ է, ճար ու հնաց է պէտք, վաղը գիւղի վրայ զարկելու է նոյն մրրիկը, ինչ որ այս սարի գլխին, ես անիշտուած եմ ու հալածուած այս գիւղից, ես բէխեր եմ, գնւ գուրս արի և ճշա կտուրների վրայ, խոկական ցառումը գալիս է, ճար, հնար:

—Ճա՛ր, հնա՛ր, Տէ՛ր Աստուած, ողորմա՛ծ երկինք, գու...—կոյսը ձեռքերը գէպի երկինք տարածեց:

—Ազօթում ես... էլի՞... նա չի գայ, ճար ու հնար գտիր, նա չի գայ...

—Նա կը գա՛յ, նա կը գա՛յ, այն Մըրկի սուրբը, այս ու օրերին նա մեղ չի թողնի:

—Լսիր, Գուլէ, մի անգամ գոնէ լոիր ինձ... Ապրօի ձայնը գոզգոզում էր, նա կարծես շտապում էր վերջացնել տաելիքը...—Լսիր ինձ, աղաչում եմ, շարունակեց նա, ինձ ասում են խենթ ու բէխեր, գու գիտես գոնէ, որ ես ոչ մէկն եմ և ոչ միւսը. տես, ես տանջուած, սոզալով քո գուռն եմ եկել ասելու այն, ինչ մերելներն էլ են պո-

ռում: Ազօթիր՝ ոչքան կ'ուղես, բայց ճար ու հնար մատածիր, գիւղի գլխին փոթորիկ է գալիս և ինչպիսի փոթորիկ: Ես քարերի տակ էի թագնուած, ես լսեցի անօրէնների խօսակցութիւնը, նրանց կորուստն այս դիշեր սարսափելի մեծ է, և գիւղի վրայ պիտի թափեն իրանց կատաղութիւնը: Գոնէ նրանք կենդանի լինէին, այն լերան վրայ ընկածները: Ասա ժողովրդին, ասա ոյն սուրբ վարդապետին, որի մասին այժմ գիտեները խօսում են աստղերի հետ իրանց չռած աչքերով, ասա, թաղ ցասման ժամի ճաշն ուտեն՝ որքան կամենում են, բայց մրրիկը, արիւնոտ մրրիկը չը մոռանան: Դու կարող ես, քեզ կը լսեն, ասա, նա, այն մրրիկը գալիս է արագ-արագ, իսկ այն միւսն, այն մրրիկի սուրբը... էհ, թաղ այն էլ այս գիտերը վկայի, թաղ... խաւարը... խօսի... թաղ... շերը վկայի, թաղ... խաւարը... խօսի... թաղ...

Ապրօն էլ չը կարողացաւ շաբունակել, նա կանդնած տեղում երերաց և յանկարծ փուռեց յատակի վրայ իր ամբողջ հասակով: Կոյսն այժմ միայն նկատեց, որ նրա ձախ կոյսն այժմ միայն նկատեց, որ նրա ձախ քունքի վրայ ահագին վէրք էր բացուած, քունքի վրայ ահագին վէրք էր ծորալով և բոռուեղից արիւնը հոսում էր ծորալով և բոռուեղից գոյնով ներկում ուսը, կուրծքը, շոշուացին գոյնով

բերը։ Կանթեղի ազօտ, պլալան լոյսն ընկաւ վիրաւորի գունատ, մաշուած դէմքի վրայ, բիբերը կորան վերին կոպերի տակ, իսկ սպիտակուցը լայն բացուեց, միայն կապտած շրթունքները հաղիւ շարժւում էին.

— Զեմ... կարող, էլ չեմ... կարող...

Եփոթուած կոյսը վրայ պրծաւ, դրկեց, բարձրացրեց նրա գլուխը, շիեց աչքերը, կանչում էր ականջին, վէրքը մի ձեռքով փակեց, ապա միւս ձեռքով շտապով քանչեց իր գլխակապը, արագալրադ փաթաթեց վիրաւոր ճակատը, յետոյ ջուր բերեց, ցանեց դէմքին, մօտեցրեց շրթունքներին, շիեց ձեռները, կուրծքը, ցնցեց, նորից կանչեց։

— Զեմ կարող... էլ չեմ կարող... մեռնում եմ...

— Ապրօ, Ապրօ, կանչում էր Գուլէն։

• • • • • • • • • .

— Զուր։

Կոյսը նորից ջուր մօտեցրեց նրա շրթունքներին, վիրաւորը խմեց, աչքերն այս ու այն կողմը գարձրեց։

— Բոլորն ընկան, բոլորը, և ես մնացի... կեանք է համ... երբ է վերջանալու...

— Սնւս, Ապրօ, Աստուած լսում է։ Կոյսը վերկացաւ, շոր բերեց ու դրեց հիւանդի գլխատակը, բայց չը գիտէր ինչպէս բարձրացնել նրան յատակից և տեղաւորել։ Նա անհանգիստ էր, Ապրօի կացութիւնը նրան երկիւղ էր ներշնչում։ Ի՞նչ անել ուշ գիշերին։ Գուլէն յիշեց քահանային։ Կամաց-կամաց հիւանդը մի փոքր հանդլատացաւ, այն ժամանակ Գուլէն գուրս գնաց մեղմով և դիմեց դէպի քահանայի տունը։ Կէս ժամ յետոյ նա շտապշտապ գալիս էր գիւղի նեղ, մութ փողոցներով, և նրան հետեւում էր մի ուղիւը անքալով, հազարով և տրանջալով խաւարից։ Քահանան էր։ Երբ նրանք հասան և գուռը բացեցին, կանթեղն էլի պլալում էր իր տեղում, և Ապրօն կիսակենդան՝ լողում էր արեան մէջ։ Նա իր ձեռքով քանդել, դէն էր շպրտել գլխի վիրակապը, բաց էր արել մահացու վէրքը, և բակապը, բաց էր արել մահացու վէրքը, և այնտեղից հոսում էր կեանքի վերջին մնացորդը։

Ապրօն մեռնում էր։ Կոյսն ու քահանան մնացին քարացած իրանց տեղերում։

— Ներիր ինձ, ասաց մեռնովը, այս բէն խել ու անիծուած գլուխս՝ ուղեցի ով քո

յարկի տակ հանդստանայ... Ազօթիք նրանց
համար... որոնք ցասման ժամ ունին... իսկ
ինձ ազօթք պէտք չէ... միայն մի անիծիք...
իմ խեղճ, իմ արդար Գուլէ...

Կոյսը մօտեցաւ, ու կռացաւ նրա դէմ-
քը, և բռնեց մեռնողի սառը ձեռքը:

— Ենորհակալ եմ, իմ խեղճ ընկեր...
Իմ քոյլ... շնորհակալ եմ... թափառական
քամին հանդստացաւ... հալածական ամպը
դադար առաւ... երկինքն անսահման էր...
երկիրը լայն... և նրանք տեղ չունեին...
այժմ հանդստանում եմ քո յարկի տակ...
քո աչքի տակ... քո ոտքերի տակ... սնւրը
կին... մնաց բարի...

Նա փակեց աչքերը և մնաց անշարժ:
Լոռութիւն տիրեց...

— Անհանդիս, թափառական գլուխ,
որպիսի վախճան, մարդ չը հասկացաւ, թէ
ինչ էիր փնտրում այս աշխարհում, ասաց
քահանան ինքնիրան:

Գուլէն լուռ էր ու կռացած հեկե-
կում էր:

— Գլուխ վէրքը... շարունակեց քահա-
նան, անաշէնը, էլլ ողորմի իր հոգուն, ու-
րիշների պէս չէր, մարդ վախենում էր հե-

տը խօսել, ուրիշ բաներից էր խօսում, ան-
հասկանալի բաներ, կասես երազի մէջ լի-
նէր...

— Հա, երազ, երազ է այս բոլորը,
առաց կյան առանց գլուխը բարձրացնելու.
— մենք էլ ենք սարսափելի երազի մէջ, նրա-
նը գոնէ սիրուն էր... իսկ մէրը... մէրը...

XXIV

Այն առաւօտ եկեղեցու բակը ներկայա-
ցընում էր մի հազւագիւտ տեսարան: Մե-
ծամեծ, ու կաթսաները շարան-շարան կա-
խուած էին վառման օջաղների վրայ, և նրանց
շուրջը կերակուր եփողների հետ մէկտեղ
վստում էր փոքրիկ մանուկների ահազին
վստում էր փոքրիկ մանուկների ահազին
րիները կը վառում կամ միս լցնում
կաթսաները, կային որ պարզապէս հետեւում
էին կատարուածներին, և ամենքը խօսում
էին կամաց, համարեա փսփսալով: Ցասման
ժամ էր, ուրախութիւն չը կար. կարծես
օջաղներից բարձրացող թանձր ծխի հետ
միասին երկնքի զայրայթը կախուած էր այդ
ամբոխի ղլմին:

Եկեղեցում պատարագը վաղուց էր լսակուած, մի հանդիսաւոր ու ճնշող պատարագ։ Այդ օրը գիւղը վճռել էր մի գերադոյն ճիղով Աստուծոյ ուշագրաւթիւնը գրաւել, նրա գիւղութիւնը խլել երկնքից։ Ճներն ամայացել էին. ամենքն այստեղ էին—կամ օջաղների շուրջը, կամ ներսում։ Պատարագից իւշ-թիլիսէի վանահայր վարդապետն էր, որ յատկապէս եկել էր իր հօտի խռովուած սիրաը միսիթարելու։ Ծեր տիրացուներ, որոնք տասնեակ տարիներից ի վեր արդէն իրանց անատամ բերանները բացած չէին եկեղեցում երգելու, այսօր եկել էին զանազան կողմերից և խոնաւ խորանի անկիւններից դուրս էին քաշել հին ճմռած ժամաշապիկները, հագել և դողդողալով կանգնել սեղանի առաջ։ Դասը ներկայացը նում էր ճաղատ կամ ալեղարդ ծեր գլուխների մի ամբողջ խումբ. կռացած կամ ծոռուած մէջքեր, մերկ, սեացած ոտներ, և այդ բոլորի վրայ զանազան գոյնի ժամաշապիկներ, մէկինը երկար՝ մինչև գետին, միւսինը կարճ՝ մինչև ծնկերը։ Գիւղերի բոլոր իմաստութիւնն ու գարդը, որ տարիներ շարունակ փայլում էր սաքուններում ու հրապա-

րակներում, այստեղ էր, և ամեն գիւղ ու զարկել էր, ինչ որ ունէր, ժամատորները մատով էին ցոյց տալիս հեռուներից եկած այդ պատկառելի տիրացուներին, որոնք, ասում էին, զարմանալի բաներ գիտեն, իսկ ձայները քաղցր են լացացնելու չափ։ Սակայն այդ բոլոր իմաստուն գլուխներից և ոչ մէկը չէր կարող մրցել տիրացու Մարտիրոսի հետ, որ կանգնել էր խմբի կենտրոնում, իշխում էր ամենքի վրայ իր պատկառելի հասակով, իր հարուստ, սպիտակ միրուքով և մանաւանդ՝ իր ժամաշապիկով, որի թիկունքին հեռուից երեսում էր մեծ, կարմիր խաչը Տիրացու Մարտիրոսի փառքի և յաղթանակի օրն էր այս. որքան աշխատել այս ցաման ժամը յաջողեցնելու համար, քանի՛ քանի խորհրդակցութիւններ քահանաների, վարդապետի, իշխանների, նաև կոյս Գուլեհի հետ և այժմ հաւաքուած օտարների, մանաւանդ իր ընկերակից տիրացուների առաջ նա այս որ ցոյց պիտի տար իր իմաստութեան, ժամասացութեան մէջ իր հմտութեան բոլոր փայլը նա տիրացու Մարտիրոսն էր, որ կորեկ էր հանում սիւնը, ասողը երկնքից ցած բերում։ այսօր պատարագի, ցաման

ժամի վեհութիւնը կատարեալ դարձնելու
համար էր միայն, որ նա յանձն էր առել
ժամաշապիկ քաշել իր թիկունքին:

Հանդիսաւորութիւնը կատարեալ էր:

Տիրացուները դասից, իսկ սարկաւագ-
ները սեղանից մրցում էին իրար հետ լալ-
կան ոլորուն ձայներով, և փոքրիկ եկեղեցին
թնդում էր անսովոր համերգից: Եւ ամեն
անգամ երբ սեղանից հնչում էր՝ «օրհ-
նեա, տէր...» պատարագիչը, ծեր, կարճիկ
ու հաստ մի հոգեսրական, յետ էր դառ-
նում, ձեռքը հանդիսաւոր կերպով բարձր-
րացնում աղօթող հօտի վրայ և խաչակնքում.

«Խաղաղութիւն ամենեցուն»:

Անմիջապէս տիրացու Մարտիրոսի գլու-
խը ցնցւում էր, նրա խռապոտ ձայնը հնչում
էր առաջինը, միւսները յետ չէին մնում, և
մի բազմազան աններգաշնակ մռնչոց ներ-
քեից պատասխանում էր. «Եւ ընդ հոգւոյդ
քում». և նոյն վայրկենին բազմութիւնը եր-
կիւղածութեամբ փռւում էր գետին մակա-
ղած ոչխարների պէս, կնճռոտ ճակատները
քսւում էին խռնաւ գետնին, անյօյս մարած
աչքերը փակւում էին, բոլոր շրթունքները
մրմնջում էին, բոլոր ճնշուած կրծքերից միա-

ժամանակ դուրս էր գալիս միատեսակ խուլ
մռմռոց, որ վեր էր բարձրանում և խառ-
նըւում սեղանից հնչուող «խաղաղութեան»
հետ:

Սարկաւագը եռանդով խնկարկում էր
վերից, բուրվասի շղթան նրա ձեռքում մեղ-
մով շաչում էր, անսուշահոտ ծռւխը որպէս
երկնային ողորմութիւն բարդ-բարդ իջնում
էր աղօթողների դլախն, մի ուրիշը ցնցում
էր ծնծղան, բայց տիրացու Մարտիրոն էլի
գոհ չէր, նա կուպէր, որ սեղանից աւելի
աղմուկ լինի, որ ծնծղան ու բուրվառը շա-
ռաչեն, որ եկեղեցին կորչի ծխի մէջ իր
անհանդստութիւնն ու դժգոհութիւնը նա
արտայայտում էր կուանալով մերթ դէպի աջ,
մերթ դէպի ձախ ընկերը, ապա կարծես
այդ պակասը լրացնելու համար իր հերթին
երգում էր բոլոր ուժով, ամենքը լուսում էին,
երգում էր այնի վերջին խաղերը գեռ հընչ-
քայց նրա ձայնի վերջին խաղերը գեռ հընչ-
քում էին՝ տարածուելով եկեղեցու հեռաւոր
անկիւնները: Նա տեսնում էր ամեն ինչ,
խորհուրդ էր տալիս, կարգադրում. մինչև
իսկ մի քանի անգամ հրամայող շարժումով
ձեռքը դէպի սեղանը մեկնեց:

Պատարագն այն օրն ասես վերջ չու-

նէր, ամենքը յափշտակուած էին հանդիւ
սաւոր արարողութեամբ։ Տիրացուներն ու
սարկաւագները իրանց ձայների ամենա-
նուրբ, ամենայուղիչ խաղերն էին վնարում՝
կրօնական երգերին աւելի ուժգնութիւն ու
խորհրդաւորութիւն տալու, պատարագիչը,
որպէս մարմնացած հեղութիւն, աչքերը խո-
նարհ, գանգաղութեամբ էր քաղում՝ խոր-
հրդատեարը, գողգոջուն ձայնով էր ասում
«խաղաղութիւնը», իսկ ժողովուրդը եկեղեցու
կիսախաւարի ու ծխի հետ լուծուած՝ մըռ-
մուում էր ցաւով։ Կրօնական այս մթնոլոր-
տում, անհասկանալի խորհրդաւորի բեռի
տակ ճնշուած՝ մարդիկ վերացել էին մի ան-
ծանօթ աշխարհ, մոռացուել էր ցասումն
ու զուլումը, մոռացուել էին սև օրերը,
միայն աղօթում էին աղօթքի համար։ Եր-
կիւղած աչքերը սեղանին յառած՝ նրանք
մրմնջում էին և սպասում, թէ երբ կը
բարձրանայ այն սուրբ մարդու ձեռքը, երբ
կը հնչուի նրա գողգոջուն ձայնը, երբ սար-
կաւագը կը ձգի բուրփառը, այն ժամանակ
մի խորհրդաւոր զօրութիւն անցնում էր գը-
լուխների վրայով, բոլոր ծնկները ծալւում
էին, բոլոր գլուխները խոնարհում, բոլոր

ճակատները քսուում գետնին, ինչպէս յան-
կարծական քամու առաջ կռացող հասկեր։
Կոյս Գուլէն իր սովորական, կիսախա-
ւար անկիւնում էր, աջ խորանի գրան առաջ՝
Այսօր երբ նա ներս եկաւ եկեղեցի, ամենքի
ուշադրութիւնը գրաւեց, նա աւելի նիհար
էր, աւելի գունատ, քան երբեկցէ։ Առանց
աջ ու ձախ նայելու՝ կոյսն առաջացաւ ամ-
բոխի միջից, հասաւ խորանի գրանը և ու-
ժասպառ ընկաւ ծնկների վրայ, աղօթում
էր։ Նատերը նկատեցին, որ կոյսն այսօր
աղօթում է առանց գլուխը բարձրացնելու։
Գուլէի գէմուգէմ պատի վրայ կախուած
էր Ստեփաննոս Նախավկայի պատեկերը՝ մա-
շուած ու սեւացած ժամանակից։ Սուրբը
աղօթում էր ծնկաչոք, աչքերը գէպի երկինք
յառած, իսկ չորս կողմից քարերը աեղում
էին նրա գլխին։ Քունքի վրայ բացուել էր
արդէն մի լայն վէրք, որտեղից կարմիր ա-
րիւնը ցայտում էր ու պատում դէմքն ու
կուրձքը։ Գունատ ու տանջուած նահատակը
մեռնում էր աղօթելով։ Գուլէն երկու ան-
գամ աչքերը բարձրացրեց, նայեց այն հեզ
ու մարող աչքերին, տեսաւ լայն բացուած
վէրքն ու արիւնը, ապա շապառով գլուխը

քաշ ձդեց։ Այսօր առաջին առաջամն էր իր ամբողջ կեանքում, որ նա վախենում էր նայել իր սիրած, պաշտած սէբին։ Նրան թւում էր, որ այնտեղ, պատի վրայ մեռնուզը քրիստոնէութեան առաջին նահատակը չէ, այլ ինքը Ապրօն, վիրաւոր ու տանջուած մարդը։ Նա գիտէր, նա համոզուած էր, որ Ապրօի սառը գիտին այժմ պառկած է իր խցում, որ քահանայի հետ խօսք մէկ արած՝ նրանք թագցնում են այդ մահը, մինչև ցաման ժամը վերջանայ, բայց և այնպէս նա վախենում էր վերև նայել, վախենում էր տեսնել այդ տանջուած դէմքը։

Եւ այդ պատառուած քոնքը... ճիշտ այդպէս էր Ապրօի վէրքը, դէմքի նոյն դունատութիւնը, աչքերի նոյն տիսուր, յետին փայլը, որպէս մեռնող վերջալոյսի վերջին շողեր, նոյն շրթունքները, դունատ ու դող դոջուն։ Գուլէն չէր կարողանում ազատուել այդ պատկերից, նա նրա աչքի առաջն էր. կ'ուզէր վեր կենալ, միւս խորանի առաջ գնալ, բայց ոյժ չ'ունէր ձարը կտրած՝ փորձեց հաշտուել իրականութեան հետ, վճռեց ճիգ դործ գնել, նայել, նայել յամառաբար այդ դէմքին՝ համոզուելու համար, որ դա

նախավկան է և ոչ թէ Ապրօն, ինչպէս կարող է Ապրօն լինել։ Եւ գլուխը բարձրացրեց մի վերջին անգամ, աչքերը սեեռեց հէնց արիւնահոս վէրքին, այն մարող աչքերին... բայց դա տեսեց միայն մի վայրկեան, շարունակել անկարելի էր—այդ վէրքը... միենոյն չափով, միենոյն քունքի վրայ, այդ շաղուած աչքերը, որոնք այլևս աշխարհը չեն տեսնում, այլ յառել են անհունութեանը... Օ՛, նա է, նա է, Ապրօն է։ Նոյնպէս տանջուած, նոյնպէս նահատակուած մի մեծ դաղափարի համար։ Կոյսին մի վայրկեան թւաց նոյնիսկ, թէ նրա շրթունքները շարժւում են, և նա կամացուկ փափսում է այնպէս, ինչպէս անցած գիշեր՝ «աղօթում ես... էլլի... նա չի գայ»...

Ի՞նչպէս կարող է չը դալ, մտածում էր Գուլէն, այսքան ազօթքը, այս պատառագը, այս ցաման ժամը, վառուող օջաղները, միթէ այս բոլորը բաւական չեն երկընքի գոները բաց անելու, որ ողորմութեան մի շող կաթի։

«Նա կը գայ, նա կը գայ, այն փրկիչը»։ Վարագոյրքաշեցին, սեղանը ծածկուեց աչքերից, վրայ հասաւ այն ժամը, երբ այլևս

ոչ թէ պէտք էր օրհնել ու գովաբանել տիեզերքի Արարջն, այլև պէտք էր ըոլոր պաշտամունքի, ինքնառջնութեան համար մի վարձարութիւն խնդրել, երբ պէտք էր աղաջել, հայցել, որ նա ողորմի յանցաւոր աշխարհին, իր ստեղծածներին:

«Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա»... Այս
անդամ երգովը միայն տիրացուներն ու սար-
կաւագները չեին, այլ ամենքը, բոլոր ժա-
մաւորները, անդամ եկեղեցու պատերը կար-
ծես մռմռում էին՝ «Տէր, ողորմեա, Տէր,
ողորմեա»։ Տիրացու Մարտիրոսի ձայնն այլևս
մեն-մենակ չէր իշխում, նա էլի ցնցում էր
գլուխը, էլի բարձր էր բոլորից, բայց հա-
րիւրաւոր բերաններ էին կանչում «Տէր, ողոր-
մեա»։ Մի ամբով ժողովուրդ էր լալիս երե-
խայի պէս։

Եւ այդ ողորմութիւնը ծածկուած էր
ազօթոցների աչքերից, ամենքին թւում էր,
թէ նա այն վարագոյրի յետևումն է: «Ճէր,
ողորմեա, Ճէր, ողորմեա... լեռ օգնական
ազգիս Հայոց,» մռնչում էր եկեղեցին, և
բոլոր հայեացքները յառած էին այն վար-
մանալի վարագոյրին, որ ծածկում էր Աս-
տուծոյ գթութիւնը և որի վրայ մի անյայտ

արուեստագէտ մի քանի գոյնով փռել էր
երկնքի բոլոր գաղանիքը—չարիքի և բարիի
պայքարի բերդ պատկերը, հանդերձեալ
կեանքը իր բոլոր սարսափներով:

Գուլէն այժմ այլևս նախավկային չէր
նայում, նա շատ էր յիշեցնում Ապրօին, իսկ
Ապրօն իր պատռած քունքով սարսափելի
իրականութիւնն էր, անողոք աշխարհը Կոյ-
սը երկինքն էր ուզում, հեռաւորն ու ան-
յայտը, որտեղից նա պիտի գար, այն վըր-
կութիւնը Եւ նայում էր այժմ այս խորհրդաւ-
որ վարագոյրին, որի իւրաքանչիւր ծալքում
երեսում էին սուրբերի գլուխներ, ձեռներ,
ստներ, ազօթողներ, լացողներ, նահատա-
կուողներ, կատաղի սատանաներ և պատճող
հրեշտակներ: Ամենից աւելի կոյսի ուշագրու-
թիւնը գրաւում էր վարագոյրի կենտրոնը,
ուր բազմած էր Քրիստոս իր տաճներկու-
առաքեալներով. նրանց ստների տակ մարդ-
կային ճակատագրի անգառնալի լուծումն
էր, այնտեղ գժողքն էր եռում, և սատա-
նաները երկաթէ կեռերով մղում էին մե-
ջաւոր հոգիներին դէպի յաւիտենական տաճ-
ջանքի անգունդները: Կային, որոնք կախվա-
խուել էին Գաբրիէլ հրեշտակապետի փէշե-

րից, դժութիւն, ներումն էին հայում,— «Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա»... բայց երկընքի վճիռն անդառնալի էր, և նրանք գլուխում էին դէպի անյատակ սե վիճը, և Քրիստոսը նայում էր վերից նա նայում էր նաև եկեղեցու յատակի վրայ փոռւած աղօթող բազմութեանը, հայեացը, դէմքի արտայայտութիւնը նոյնն էր։ Տէր, ներիր,— մրմնջում էին Գուլէի շրմունքները, — ներիր ամենքին, նրանց էլ այն մեղաւորներին էլ ներիր։» Գուլէն թողեց դժողքը, այժմ նա նայում էր վերեսում բազմած մարդարէներին և այլ բազմաթիւ սրբերին, որոնք ամենքն էլ վարագոյրի հետ դողդողում էին և կարծես աղօթողների հետ կրկնում. «Տէր, ողորմեա, Տէր, ողորմեա»; Վարագոյրը շարունակում էր ծածկել այդ ողորմութիւնը, և բազմութիւնը շարունակում էր թակել երկնքի դռները՝ «... Լէր օգնական ազգիս հայոց, Տէր, ողորմեա...» Իսկ Գուլէն յափշտակուած այդ բոլորով, հանդերձեալ կեանքից խօսող տեսարաններով, նոյն իսկ մոռացել էր Ապրօի վերջին խօսքերը, նրա գուշակած արիւնոտ մրրիկը, նրա վերջին խնդիրը, կտակը:

Վարագոյրն իր սրբերով, սատանաներով ու դժողքով կրկին ծալուեց, սեղանը բացուեց. պատարագը վերջանում էր, Գուլէն ոտքի կանգնեց, պատրաստում էր դուրս գնալ դէպի կաթսաները կարգադրութիւն անելու, բայց քարացած մնաց իր տեղում. Եկեղեցում մի անօրինակ իրարանցում կարչ Կոյսը զարմանքով տեսաւ, որ աղօթաւոյների առաջին շարքերը շտապով դուրս գնացին, ապաջին շարքերը շտապով դուրս գնացին, ապա լսեց բակից լսուող անսովոր, տագնապալից աղաղակները»

«Մրրիկը, մրրիկը... Ապրօն ասում էր, միթէ եկաւ. այս միտքը վայրկենապէս անցաւ Գուլէի գլխով. նա շարունակում էր նայել Եկեղեցում մնացածներն էլ դուրս գնացին, կանանց դասում լսուեցին վհատեցուցիչ, յուսահատ ծչեր, շփոթը կատարեալ ցիչ, յուսահատ ծչեր, շփոթը կատարեալ ցարձաւ. Գուլէն դեռ իր տեղումն էր, նայում էր, ականջ էր դնում և չը գիտէր ի՞նչ անել. Այս դրութիւնից նրան հանեց կազմուած նել. Այս դրութիւնից նրան հանեց կազմուած նել. Այս դրութիւնից դէպի դուրս խաթափորը, որ շարժուեց դէպի դուրս խաթափորը, խաչվառներով, ծնծղաներով և տիշերով, խաչվառներով, ծնծղաներով և տիշերովի միահամուռ երգեցողութեամբ: Բացուների միահամուռ երգեցողութեամբ: Գուլէն գլուխը քաշ, սիրտն անհանդիստ, հոգին աղմկուած՝ հետեւց թափորին:

Եկեղեցու բակում տաղնապն ու շփոթը
կասարեալ էր։ Մարդիկ գլուխները կորցրած
վազում էին այս ու այն կողմ, ոմանք դէպի
տներն էին վազում ու յետ դալիս, ուրիշները
փայտեայ սանդուղքով՝ բարձրանում էին ե-
կեղեցու կտուրը, ձեռքերը ճակատներին
դրած՝ նայում էին դէպի հեռաւոր հորիզոնը,
որտեղից փոշու մի թանձր ամպ խաղում էր
դէպի գիւղը դանդաղութեամբ, բայց սպառ-
նալի կերպով։ Այդ ամպի ինչ լինելը յայտնի
էր հովիւների պատմածներից, որոնք հերհե-
տալիս էին դաշտերից։ Վազուց լսուող «բըսագ-
բըսագ»-ը իրագործում էր, վայրենի լեռնա-
կանները դալիս էին հաշիւ պահանջելու գիւ-
ղից նրա չը դործած յանցանքի համար։

Թափօրը դուրս եկաւ և քարացած մնաց
իր տեղում, տիրացուների ձայնը լսեց, նրանց
լեզուները քիմքերին կպան, զգեստաւորուած
և շփոթուած վարդապետը ինչոր բաներ
էր ասում ժողովրդին, բայց էլ լսող ու հաս-
կացող չը կար, կանայք լալիս էին, երեխա-
ները ճշում բարձրածայն, կաթսաները մնա-
ցել էին առանց ուշագրութեան, օջաղների
փայտերի վերջին կտորները ծխալով վառ-
ում էին ու մարում։

Արիւնոտ մրրիկն էր դալիս։
Ընդհանուր իրարանցման, ընդհանուր
շփոթի մէջ յանկարծ եկեղեցու զանդերը
հնչեցին. տիրացու Մարտիրոսն էր, որ ա-
ռաջինը մտածեց, թէ երկնքի ուշադրու-
թիւնը սլէտք է հրաւիրել այս տաղնապի
ժամին։ Նա բոլոր ուժով ձգձգում էր պա-
րանները կարծես աշխատելով պղնձի լալկան
զօղանջիւնը երկինք հասցնել։ Ամենքը ճար
ու հնար էին փնտրում. երկնքից բացի ու-
րիշը կայ... և տիրացուն հնչեցնում էր զան-
դերը, որպէս տառապող աշխարհի ցաւագին
մրմունջներ, և այդ ձայնը ձգւում տարած-
ում էր սարսափած գիւղի վրայ, բայց փո-
շու ամպը դալիս էր հա դալիս, ինչպէս մի
աւերիչ վիշապ։

Սոսկալի բաներ էին պատմում. ասում
էին, որ աւաղակները կոտորելու են գիւղի
ջահիներին, իսկ գիւղը պիտի հրդեհն ու
կողոպտեն՝ առեանդելով մատաղահաս կա-
նանց ու աղջիկներին։ Կողոպտւաին ու հրդե-
հին սովոր էր գիւղը, բայց կոտորածը... ա-
ռեանդնւմը... եւրաքանչիւր ծնող դողում էր
իր որդու համար։ Ամենքն իրանց անզօրու-
թեան մէջ նայում էին. վարդապետին, նրա

շրթունքներին, սպասելով մի փրկարար խորշ հուրդ. չէ որ նա, այն սուրբ մարդն ամեն ինչ գիտէ: Եւ հոգեոր հայրը խօսեց. — Գիւղն ամբողջապէս փախչել չի կարող, թող երիտասարդները խոյս տան դէպի լեռները, իսկ ինքը՝ վարդապետն իշխանների հետ ընդառաջ կը գնայ աւազակներին, կը խնդրի, կ'ազերսի, ընծաներ կը տայ, գուցէ մեզմանան, գուզէ զուլումն անցնի:

Սուրբ մարդ, Աստուած խօսեց իր բերանով, մտածում էին ամենքը: Զանգակաները շարունակում էին հնչել մելամաղձոտու անյոյա, ինչպէս յուղարկաւորութեան ժամանակ, կանայք ծեծում էին կուրծքերը, փոշու ամպը հեռու չէր, դաշտից նոր հասնողները սարսափներ էին պատմում մօտեցող «ջարդից», բայց երիտասարդները դեռ իրանց տեղումն էին, որը դէնքով, որը անզէն, որը մի մահակ ձեռքին, որը մի գործիք, և չէին շարժում:

— Փախէք, գոչում էր վարդապետը:

— Փախէք, ճշում էին ծնողները: Իզուր:

Երիտասարդները կանգնել էին անշարժ: Առողջ, կենսալից այդ կրծքերի, հուժկութազուկների, լայն թիկունքների տէր այդ

տղամարդկանց համար ծանր էր փախչել, նրանք ի ներքուստ ամաչում էին այդ անարդ փախուստից, ամաչում էին աւազակների կատաղութեանը յանձնել իրանց ծնողներին, քոյրերին, կանանց և սեփական դլուխներն աղատել:

Անխուսափելի մահից, այդ մօտեցող արիւնոտ մրրկից շատ աւելի ծանր մի բան կար, որ նրանց քարացրել էր իրանց տեղերում, որ ծալում էր նրանց ծնկները, թուլացնում էր մէջքերն՝ անկարող դարձնելով մի քայլ անել: Այդ ամօթալի պայմաններով դէպի լեռները քաշ տուած կեանքի բեռը չափազանց ծանր էր երիտասարդների համար, որպէսզի նրանք ընդունել կարողանային: Եւ վայրկեան առ վայրկեան դրութիւնը դառնում էր խեղդող. փոշու ամպը մահաբեր հրէշի պէս ձգւում, մօտենում էր, ամբոխը — ծերերի, կանանց և տիրացուների ամբոխը միաբերան կանչում էր՝ «փախէք», և երիտասարդները վիշապի բաց երախի առաջ կանգնած զոհերի նման ոչ բողոքում էին, ոչ խոյս տալիս, նրանք քարացել էին: Լուռ էր կոյս Գուլէն. բազմութիւնից հեռու առանձին կանգնած այդ սեազգեստ,

գունատ ու մաշուած կինը կարծես այս աշխարհից չէր, կարծես չէր լսում, չէր տեսնում, թէ ինչ է կատարում իր շուրջը: Նա իր խոր ընկած, անփայլ աչքերը դարձրել էր երկնքին, նայում էր դէպի վեր այնպիսի ուշադրութեամբ, որ ասես սպասում էր մէկին, սպասում էր այն փրկութեանը, որին հաւատացել էր միշտ, որի համար ազօթում էր տարիներ և որի գալստեանը հաւատում էր նաև այժմ:

«Նա կը գայ... նա կը գայ»... մրմնջում էին նրա շրթունքները, և դէմքը պայծառանում էր վայրկենական փայլով, յուսոյ շողերով:

Ո՞վ պիտի գար... արինի մրրիկը գալիս էր ահա, երիտասարդները կանգնել էին ուխտուած նոխաղների պէս, ուր էր Մրրկի սուրբը, նա, որ մեզմում էր փոթորիկները, ցրում էր շանթալից ամպերը, նա, որ ցաւոտ օրերին լողում էր երկնքի անսահմանութեան մէջ տառապող երկրի վրայ և իր ոտների տակ սփռում խաղաղութիւն ու սփռփանք:

Սպասնալից փոշու ամպից վեր երկնքի երեսին լողում էին մի քանի ուրիշ սեւթոյր

ամպիկներ, որոնք հորիզոնից բարձրացան և յոգնած կարաւանի պէս անցնում էին դըժքաղդ, դողացող գիւղի վրայով: Կոյսը նայում էր այդ ամպերին, նայում էր և մտածում, արդեօք նրանք չեն ծածկում Մրրկի սուրբը, արդեօք փրկութիւնը նրանց մուժծալքերում չէ: Վերի ամպերը սակայն շուտով ցրիւ եկան պատառապատառ և կորան երկնքի անսահմանութեան մէջ, մինչդեռ միւսը՝ այն մահաբերը գալիս էր աւերածի բոլոր թափով:

«Միթէ նա չը պէտք է գայ... մտածում էր կոյսը, միթէ այս օրին էլ նա թողնելու է մեղ...»

Եւ յանկարծ այս ընդհանուր տագնապի, այս ճնշող անորոշութեան մէջ հնչուեց մի անօրինակ ձայն, հրամայող ու ահաւոր, ինչպէս որոս.

— Փախէք, թշուառականներ, փախէք շուտով, նայեցէք, ահա գալիս է նա, այն յաղթանակող ու աւերիչ մահը, որին և աչմէկդ արժանի չէք, փախէք...

Ասօն էր... քար լոռութիւն տիրեց. ամբոխը սասանուեց ու մնաց բերանաբաց. տիրացու Մարտիրոսը թողեց դանդերը, կոյսը

ձգուեց առաջ դէպի նորելը, որ քրտինքի մէջ կորած, հեալով, այտերը՝ բոյ, աչքերը՝ շանթ, գողգոջուն բազուկները դէպի երիտասարդները տարածած, կանգնել էր հարիւրաւոր ամբոխի առաջ, ինչպէս մի տարերային ոյժ, իշխում էր ամենքի վրայ, լնկճել էր ամենքին, իր միայնութեան ու զայրոյթի մէջ գեղեցիկ, ինչպէս մի կատաղած առիւծ, որ մոնչում է վտանգի հանդէպ: Լեռան կատարից նա տեսել էր հայրենի դիւզին սպանացող վտանգը, և վաղէվազ եկել մի գերագոյն ճիդ թափելու ուշակորոյս ու խեղճ այս բազմութիւնը փրկելու համար: Երիտասարդների պատրաստուող փախուատը նրա հոգին լցրեց աննկարագրելի դառնութեամբ, և ոյժմ նա դուրս էր թափում այդ դառնութիւնը կծու հեգնութեամբ համեմուած:

— Մրրկի սուրբը, Մրրկի սուրբը, շարունակեց Ասօն, նա կը փրկի ձեր դիւզը, փախէք, տարէք ձորերում թաղելու ձեր անպատիւ գլուխները, ձեր հաստ պարանոցները, ձեր լայն թիկունքները: Խորը, խորը թաղուեցէք այրերի մէջ, որ հառաջանքները ձեր ականաջին չը հասնեն, բայց նախ խլե-

ցէք այս կանանց լաշակները և ձգեցէք ձեր դլուխների վրայ. իսկ սրանք—աւելացրեց նա՝ ցոյց տալով հարս ու աղջիկներին— գլխաբաց ու հերարձակ աւելի գեղեցիկ, աւելի գրաւիչ կը լինին նրանց համար, որոնք գալիս են, դէհ, շուտ փախէք...

Զայրացած ու վշտոտ երիտասարդի շըրթունքներից ընկած բառերը թոյնի կաթիլներ լինեին կ'ասես, որոնք փորում էին ունկընդիմների սրտերը: Սարսուռ անցաւ նրանց մարմնով. քարացած բազմութիւնը կենդանանում, շարժում էր, երիտասարդների գունատ պյտերը կարմրեցին, նրանց փակուած շրթունքները բացուեցին՝ աւելի լայն շունչ առնելու համար: Մի անհասկանալի ու խուլ մումուց բարձրացաւ, իսկ Ասօն շարունակում էր զատ-զատ հեգնել իր ծանօթընկեր երիտասարդներին:

— Հը՛, դու էլ այստեղ, դարձաւ նա դէպի Պետօն, դու իրաւունք ունիս, փախէիր ամենից առաջ, թառլան Սառան շատ տէր կ'ունենայ, նայիր, նրանք դալիս են... Իսկ ես մի խենթ եմ, ահա գնում եմ դէպի այն արիւնաբեր ամպը, լեռնակատարի մեռելներն իրանց պաղած աչքերով վերստին

կարտասուեն, եթէ թշնամիներն այս գիւղում մի հատ տղամարդ չը տեսնեն առանց կանացի լաշակի: Փախէք, փախէք...

Եւ Ասօն մի սպանիչ, արհամարհական ակնարկ նետելով շփոթուած երիտասարդների խմբին՝ առաջ վազեց փոթորկաբեր հողմի պէս դէպի այն կողմը, որտեղից դալիս էին լեռնականները:

— Նա է, նա է, գոչեց կոյսը, Մրրկի սուրբն ինքն է, որ մենակ վազում է մրրկի հանդէպ:

Փախուստը մոռացուեց, ամբոխի խուլ մումոցը դարձաւ միահամուռ, ահաւոր մոնչոց:

— Գնանք, գնանք:

Եւ բազմութիւնը շարժուեց Ասօի յետից.

— Կացէք, կացէք, ճշում էր վարդապետը բոլոր ուժով, բայց լազ չը կար. նա մնաց մենակ տիրացուների հետ: Եւ բազմութիւնը ալեծածան ծովի պէս ուռած ու փրփրուն, տարերային թափով տարւում էր առաջ, գլուխներից վեր սպառնագին ճօճեւով այն բոլորն, ինչ որ խաղաղ, աշխատասոր գիւղը մի գերագոյն ճիգով, մի գերա-

գոյն ժամում կարող է գուրս բերել իր փըրկութեան համար: Մարդ, կին, ծերեր ու երեխաներ խառնիխուռն, այլանդակ խուժանով մղում էին իրար դէպի մօտեցող մութ ամպը, գնում էին կարծես զայրոյթի թափով ձուլուելու նրա հետ, կամ ցրիւ բերելու պատառ-պատառ: Մարդիկ չէին, գլուխներ ու բազուկներ չէին, որոնք գնում էին թշնամուն բազիսուելու, այլ մի կենդանի, հսկայական զանդուած, որ տեղահան եղած լերան պէս խուլ դրնդիւնով ու մռմռոցով տարւում էր դաշտերով: Ժողովսուրդն էր այն իր ըմբոստ ու խենթ մի վայրկենում, որ գնում էր մեռնելու ոչ սողալով, ոչ ճիճուի պէս տրորուելով կրունկների տակ, այլ ոսկի վրայ, առանց արցունկի:

Նրանցից շատ առաջ, հեռու հարթավայրի վրայ երեսում էր Ասօն աւազակների ահազին բազմութեան առաջ: Նա կանգնել էր մենամենակ, մազերը գլխին ցրիւ, աջ ձեռքը բարձրացրած հրամայող շարժումով: Եւ երբ թշնամիները բոլորովին մօտեցան, նա ճաց իր բոլոր ձայնով:

— Կացէք, էլ ոչ մի քայլ, այս գիւղում գեռ մի մարդ կայ:

Վայրենիների խուժանը կանդ առաւ զարմացած. այս մենակ մարդի յանդգնոււթիւնը նրանց յուղեց ու ապշեցրեց Խենթչ արդեօք, մարդ է, թէ ուրուական։ Մի առժամանակ կանդնել էին իրար հանդէպ այս անօրինակ հակառակորդները, մէկը՝ այն բաղմութիւնը, կարծես ամաչումն էր յարձաւ կուել, միւսը՝ այդ մի հատիկ մարդը տեղի տալ չէր մտածում։ Եւ նոյն վայրկենին գիւղի կողմից լսուեց ահագին մռմոց, Ասօն էլ մենակ չէր, հազար դլսանի ժողովուրդն էր դալիս հեղեղի պէս աւերիչ, և նրա հետ վազում էր կոյսը, «Գերեզմանների ջիննին», սեազգեստ, սդաւոր լալկանը, որ այդ օրը լալու ցանկութիւն չ'ունէր։

Եւ զարկուեցին...

Ընդհարումը սարսափելի եղաւ, դիմադրութիւնն անօրինակ, լեռնականներն այդպիսի բան չէին տեսել, չէին սպասում։ Անէծք, հայհոյանք, մռնչոց, տնկոց խառնուեցին իրար, և վիրաւորներն ու մնուածները արորւում էին կռւողների ոտների տակ։ Խաղաղ, հնազանդ գիւղը կրակ էր կըտրել վիրաւոր գաղանի պէս և փախչելու ցանկութիւն չ'ունէր, յարձակուող աւազակ-

ները սարսափից ապուշ էին կտրել, էլ կռիւ չէր կարծես, այլ մի ուրիշ սոսկալի բան, ուր հակառակորդների նպատակը յաղթութիւնը չէր, այլ ոչնչացումը։ Երբ մարմինները դալարւում էին իրար կատաղի օձերի պէս, այդ ժամանակ գործում էին և՛ բազուկները, և՛ մատները, որ սղմում էին կուկորդը, և՛ ատամները, և՛ ոտները, և ապա փլչում էին իրար վրայ խորտակուող պատերի պէս։

Այս անօրինակ պայքարի ամենաստաք վայրկենին, երբ Ասօն դառնում էր թշնամիների մէջ աւերիչ հողմի պէս, նա յանշակարծ տեսաւ, թէ ինչպէս Պետօն՝ Սառայի ամուսինը կուրծքը բռնեց և ընկաւ։ Եւ նոյն վայրկենին իր սիրած կնոջ գրաւիչ պատերը ցցուեց Ասօի աչքերի առաջ իր բոլոր հմայքով, իր բոլոր գիւթիչ կանացիութեամբ, որ այնպէս աղմկել էր նրա դոյտթիւնը։ Նա տեսաւ նաև իրան՝ Սառային, չքնաղ Սառային, որ վաղէվաղ հասաւ ու կռացաւ մեռնող Պետօի վրայ։ Ասօի աչքերը միմնեցին, ոտները գողդողացին, հին դգացմունքն իր սրտի խորքում, մսխիլների տակից մէկ էլ զարթնեց անօրինակ ուժգնութեամբ...

այժմ Սառան ազատ էր, Սառան այրի էր...

Մինչդեռ իր շուրջը, իր ձայնով, իր օրինակով թշնամու գէմ գուրս եկած գիւղ զարկւում, մորթուտում էր, մարդիկ ընկառում էին ոռնոցով ու անէծքով, Ասօն ճակատը բռնած, աչքերը խուփ, մնացել էր անշարժ. Սառան այրի էր, հմայիչ Սառան ազատ էր...

Եւ ամիսների կեանիքը վայրկէնապէս եկաւ, ներկայացաւ նրա աչքին, պատկերաներն արագութեամբ իրար յաջորդեցին, մի այլանդակ ժխորով եկան ու անցան, մնաց դարձեալ ամննից գրաւիչը, Սառայի չքնաղ գէմքը, նրա վառ այտերը, նրա բոց աչքերը: Ասօն այժմ վախենում էր նայել գէպի այն կողմը, ուր Սառան էր, Պետօի վրայ արտասուող այն հրեշտակը: Եւ Սառան ազատ էր, Սառան այրի էր...

Կռիւը շարունակւում էր, մարդիկ վշըրուած հասկերի պէս փուլում էին գետին, և Ասօն թւում էր, թէ ամենքը զարկւում են և ընկնում միայն Սառայի համար, որ կուլում են միայն նրան ազատելու, նրա պատիւն ու գեղեցկութիւնը փրկելու թշնամիներից:

Մի ամբողջ ժողովուրդ մեռնում է մի հատ կնոջ համար: «Օ՛, դա սնւտ է, սնւտ է», մրմնջացին նրա շրթունքները, և նոյն վայրկենին նողերի տանջուած, գունատ պատշկերը ցցուեց նրա աչքի առաջ և ծածկեց Սառային: «Սնւտ է, կրկնեց նա, նողերը անճարների զոհն է և ոչ Սառայի»... Եւ նա ճակատը թողեց, աչքերը բարձրացրեց, նայեց Սառային, և իսկոյն երեսը դարձրեց, աչքերը բռնեց. Սառան ազատ է, այրի է...

«Օ՛, մոնչաց նա ցաւով, սիրտս, սիրտս»...

Եւ նոյն վայրկենին մէկը մօտեցաւ նրան, կռացաւ ուսին և կամացուկ փսփսաց աշկանջին.

—Վախենում ես... էլի վախեցար, կըտրիչ Ասօն:

Նաւօն էր...

Ասօն օձից խայթուածի պէս ցնցուեց, ճակատը թողեց, գլուխը ցնցեց՝ կարծես մի անախորժ միտք հալածելու համար. Սառան ազատ էր... բայց գիւղը նրա համար չէր զարկւում, Ասօն նրա համար չէր կուրծքը գէմ տուել մահին:

—Վախենում եմ... Օ՛, սուտ է, սուտ է, ես չեմ վախենում, Նաւօն:

այժմ Սառան ազատ էր, Սառան այրի էր...

Մինչդեռ իր շուրջը, իր ձայնով, իր օրինակով թշնամու գէմ գուրս եկած գիւղը զարկւում, մորթուուում էր, մարդիկ ընկանում էին ոռնոցով ու անէծքով, Ասօն ճակատը բռնած, աչքերը խուփ, մնացել էր անշարժ. Սառան այրի էր, հմայիչ Սառան ազատ էր...

Եւ ամիսների կեանքը վայրկենապէս եկաւ, ներկայացաւ նրա աչքին, պատկերաներն արագութեամբ իրար յաջորդեցին, մի այլանդակ ժխորով եկան ու անցան, մնաց դարձեալ ամենից գրաւիչը, Սառայի չքնաղ գէմքը, նրա վառ այտերը, նրա բոց աչքերը: Ասօն այժմ վախենում էր նայել գէպի այն կողմը, ուր Սառան էր, Պետօի վրայ արտասուզ այն հրեշտակը: Եւ Սառան ազատ էր, Սառան այրի էր...

Կռիւը շարունակւում էր, մարդիկ փշը րուած հասկերի պէս փռւում էին գետին, և Ասօին թւում էր, թէ ամենքը զարկւում են և լնկնում միայն Սառայի համար, որ կռւում են միայն նրան ազատելու, նրա պատիւն ու գեղեցկութիւնը փրկելու թշնաւմիներից:

Մի ամբողջ ժողովուրդ մեռնում է մի հատ կնոջ համար: «Օ՛, դա սուտ է, սուտ է», մրմնացին նրա շրթունքները, և նոյն վայրկենին Շողերի տանջուած, գունատ պատշկերը ցցուեց նրա աչքի առաջ և ծածկեց Սառային: «Սուտ է, կրկնեց նա, նողերը անճարների զոհն է և ոչ Սառայի»... Եւ նա ճակատը թողեց, աչքերը բարձրացրեց, նայեց Սառային, և խկոյն երեսը դարձրեց, աչքերը բռնեց. Սառան ազատ է, այրի է...

«Օ՛, մռնչացնա ցաւով, սիրտս, սիրտս»...
Եւ նոյն վայրկենին մէկը մօտեցաւ նրան, կռացաւ ուսին և կամացուկ փսփսաց ականջին.

— Վախենում ես... Էլի վախեցար, կրտս րիչ Ասօ:

Նաւօն էր...

Ասօն օձից խայթուածի պէս ցնցուեց, ճակատը թողեց, գլուխը ցնցեց՝ կարծես մի անախորժ միտք հալածելու համար. Սառան ազատ էր... բայց գիւղը նրա համար չէր զարկւում, Ասօն նրա համար չէր կուրծքը գէմ տուել մահին:

— Վախենում եմ... Օ՛, սուտ է, սուտ է, ես չեմ վախենում, նաւօն:

Եւ նա նորից նետուեց առաջ, այս անգամ աւելի թափով, աւելի վճռաբար ու կատաղի. կամ պէտք էր մեռնել, կամ փրկել դիղը: Կոխուն այնուհետեւ էլ երկար չը տեսց. լեռնական վայրենիները անակնկալ ու անօրինակ դիմադրութիւնից և իրանց տուած զոհերի բազմութիւնից սարսափած տեղի տուին և ցաք ու ցրիւ փախան դաշտերով:

Դիւղը փրկուած էր...

—○—

Ելի դիշեր էր:


—Ո՞ւր, որդի, ասում էր Նունուֆարը:
—Փոսը մեծ է, շատ մեծ, մարէ, պատասխանեց որդին, դէպի դուռը քայլելով.
—Պէտք է լցնել, որ ջրաղացը շինուի, նոր ջրաղաց, մեծ ճանապարհին... Ամեն բան աշխարհում ջրաղացի քարի պէս է, դառնում է հաւաքառում... Սառան սիրուն է, շատ սիրուն, իմ դժբաղդ մարէ, բայց ես ուրիշ

դարդ ունիմ, դարդ՝ հազար ծովի չափ, պէտք է գնամ:

—Ասօ, իմ որդի, իմ մինուճար...

—Դարդ ունիմ, դարդ՝ հազար ծովի չափ, լոււեց խաւարի միջից:

Նունուֆարն ու Շուշիկը դարձեալ մնացին մենակ, իսկ Ասօն վերստին գնաց դէպի մուլթ անյայտը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0329708

18.479